

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
ՆԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՍԵՐՆԴԻ ՁԱՅՆԸ

Գրական
ասեղծագործությունների
ժողովածու

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՍԵՐՆԳԻ ՉԱՅՆԸ

Գրական ստեղծագործությունների
ժողովածու

ԵՐԵՎԱՆ

ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

2023

ՀՏԴ 08
ԳՄԴ 94
Ա 596

*Հրատարակության է երաշխավորել ԵՊՀ Շ. Ազնավուրի անվան
մշակույթի կենտրոնի Երիտասարդ գրական սրեղծագործողների
ակումբը:*

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒԲԴ

Սամվել Մուրադյան
Կարինե Դավթյան

Ա 596 Անկախության սերնդի ձայնը: Գրական ստեղծագործությունների ժողովածու/ խմբ. խորհուրդ՝ Սամվել Մուրադյան, Կարինե Դավթյան: Երևանի պետական համալսարան. Շառլ Ազնավուրի անվան մշակույթի կենտրոն, Եր.: ԵՊՀ հրատ., 2023, 256 էջ:

Ժողովածուն ընդգրկում է «Անկախության սերնդի ձայնը» երիտասարդ ստեղծագործողների ու կատարողների հանրապետական ուսանողական բիենալի գրական մրցույթում պարգևատրված մասնակիցների ստեղծագործությունները:

ՀՏԴ 08
ԳՄԴ 94

ISBN 978-5-8084-2584-2

- . ԵՊՀ հրատ., 2023
- . Կազմողի համար, 2023



Հավաքական կամքի արտահայտության շնորհիվ անշրջելի իրողություն դարձած անկախությունը մեր ժողովրդի կարևորագույն ձեռքբերումն է: Անկախությունը կարողություն է, որը թույլ է տալիս սահմանել սեփական նպատակները, երազանքներն ու այն քայլերը, որոնցով կարելի է հասնել դրանց իրագործմանը:

Երևանի պետական համալսարանն այն կարևոր հանգույցն է, որը կարող է ստեղծել համապատասխան ներուժ և միջավայր, որոնք կնպաստեն մեր երկրի անկախության և ինքնիշխանության պահպանմանն ու ամրապնդմանը: ԵՊՀ-ն նաև մեր մշակութային արժեքների պահպանման ու կերտման գլխավոր հարթակներից մեկն է, ուստի պատահական չէ, որ համալսարանում ավելի քան 15 տարի հաջողությամբ գործում ու իր կարևոր առաքելությունն է իրականացնում Շառլ Ազնավուրի անվան մշակույթի կենտրոնը:

Դառնալով ԵՊՀ ուսանողների մշակութային ունակությունների զարգացման, նրանց գեղագիտական ճաշակի ձևավորման ու ամրապնդման, ինչպես նաև ինքնաբացահայտման հարթակ՝ կենտրոնն ընձեռում է լայն հնարավորություններ՝ ստեղծագործելու և տաղանդը դրսևորելու համար: Այդպիսի հնարավորություն է նաև արդեն ավանդույթ դարձած մրցույթ-փառատոնի իրականացումը, որն անցկացվում է տարբեր խորագրերի ներքո ու բացա-

հայտում տաղանդավոր ու ստեղծագործ ուսանողներին: Միջոցառումն այս անգամ բացահայտել է գրականության, կերպարվեստի ու կիրառական արվեստի ոլորտներում ստեղծագործող ուսանողներին, որոնց լավագույն աշխատանքները տեղ են գտել այս ժողովածուում:

«Անկախության սերնդի ձայնը» խորհրդանշական անվանումով այս ժողովածուն ներկայացնում է մեր երիտասարդների ձայնը, որոնք խոսում են արվեստի լեզվով ու գեղարվեստական շնորհներով դրսևորում իրենց խոհերն ու զգացմունքները: Այս տեսանկյունից անչափ կարևոր են ժողովածուի դերն ու նշանակությունը. այն հիանալի հնարավորություն է երիտասարդների աչքերով տեսնելու իրականությունը, հասկանալու նրանց արձագանքը մեր շուրջը կատարվող դեպքերին ու իրադարձություններին և, ինչու չէ, իմանալու, թե ինչպիսինն են ապագայի վերաբերյալ նրանց պատկերացումներն ու երազանքները:

Ջերմորեն շնորհավորում ենք ժողովածուում տեղ գտած աշխատանքների հեղինակներին՝ նրանց մաղթելով ստեղծագործական ներշնչանքի անսպառ աղբյուրներ ու նորանոր հաջողություններ:

Հովհաննես Հովհաննիսյան
պատմական գիտությունների դոկտոր,
Երևանի պետական համալսարանի ռեկտոր



*Մշակույթը կողավորված իմաստություն է:
Վանգարի Մասուրայի*

Յուրաքանչյուր սերունդ իր իմաստության ժառանգությունը թողնում է մշակույթի միջոցով, այստեղից էլ բխում է «մշակութային ժառանգություն» արտահայտությունը: Երևանի պետական համալսարանի Շառլ Ազնավուրի անվան մշակույթի կենտրոնը, որն արդեն գործում է տասնվեց տարի, հետևողականորեն իրականացնում է սերունդների մշակութային դաստիարակությունը: Դա կատարվում է տարբեր ձևաչափերով, ինչպես, օրինակ, կենտրոնում գործող մշակութային խմբերի, բազմաբնույթ ծրագրերի, դասախոսությունների, այցելությունների, փառատոների, մրցույթների, մշակույթի մեծամուն գործիչների հետ հանդիպումների միջոցով: Այդպիսի ծրագրերից մեկն է նաև «Անկախության սերնդի ձայնը» խորագիրը կրող «Երիտասարդ ստեղծագործողների հանրապետական ուսանողական բիենալեն», որն իրականացվում է 2016 թվականից սկսած՝ երկու տարին մեկ անգամ: Համաշխարհային համավարակով պայմանավորված՝ այս անգամ մրցույթը իրականացվել է հեռավար ձևաչափով: Մրցույթին մասնակցել են Հայաստանի Հանրապետության,

ինչպես Երևան քաղաքի, այնպես էլ տարբեր շրջանների համալսարանների ուսանողներ: Մրցույթի արդյունքում արհեստավարժ ժյուրիի ընտրությամբ համապատասխանաբար առանձնացվել են առաջին, երկրորդ, երրորդ տեղեր և գլխավոր մրցանակ՝ հետևյալ անվանակարգերում՝ գրական մրցույթում՝ «Լավագույն բանաստեղծություն», «Լավագույն արձակ» և «Լավագույն էսսե», և արվեստի մրցույթում՝ «Գեղանկարչություն», «Լուսանկարչություն» և «Կիրառական արվեստ»: Այս ժողովածուն ներառում է այդ անվանակարգերում հաղթողների լավագույն ստեղծագործությունները: Ցանկանում են շնորհավորել մասնակից ու անվանակարգեր զբաղեցրած բոլոր ուսանողներին և մաղթել նորանոր հաջողություններ, կրթական և աշխատանքային բազում հազեցած տարիներ, ստեղծագործական հաջողություններ՝ ի նպաստ հայ մշակույթի զարգացմանը և մեր երկրի առաջընթացին:

Կարինե Դավթյան

*ԵՊՀ Շառլ Ազնավուրի անվան մշակույթի կենտրոնի տնօրեն,
«Համալսարանական» թատրոն-սրահայի
գեղարվեստական ղեկավար*



«Անկախության սերնդի ձայնը» խորագրով սույն ժողովածուն ընդգրկում է Երևանի պետական համալսարանի Շառլ Ազնավուրի անվան մշակույթի կենտրոնի կազմակերպած երիտասարդ ստեղծագործողների մրցույթում հաղթած ուսանողների՝ վերջին տարիների չափածո և արձակ ստեղծագործությունները՝ բանաստեղծություններ, արձակ էջեր:

Հարափոփոխ կյանքի ընթացքը բնական փոփոխություններ է առաջ բերել ինչպես իրականության մյուս բնագավառներում, այնպես էլ նոր սերնդի գեղարվեստական մտածողության՝ թե՛ աշխարհընկալման և թե՛ պատկերավորման ոլորտներում, որոնք նորագույն հոսանքների տեսքով դրսևորվում են գեղարվեստական դասական ուղղությունների արանքում կամ նրանցից հետո: Հայաստանի անկախությունն իր հետ բերեց անցումային նոր շրջան՝ հին արժեքների վերագնահատման և նոր արժեքների ստեղծման պատմական անհրաժեշտություն, որի կենսագործմանն է իրեն նվիրել գրական նոր սերունդը: Ստեղծագործելու բնական ձգտումն էլ ի հայտ է գալիս ոչ միայն հասարակագետների, գրական գրագիտություն յուրացրած երիտասարդների, այլև բնական և ճշգրիտ գիտությունների ոլորտում մասնագիտացող երիտասարդների մեջ:

Նոր աշխարհընկալումը, օտար լեզուների իմացությամբ գեղարվեստի համաշխարհային նորություններին նաև արդի տեխ-

նիկական իջոցներով անմիջաբար հաղորդակցվելն ստեղծում են մաս մտավոր առաջընթացի նոր հնարավորություններ: Մա լուրջ առավելությունն է անկախության սերնդի, որը հնչեցնում է իր թարմ մտածողությունը, իր սեփական ձայնը՝ անկախ նրանից, թե որքանով է այն ընդունելի այժմ և որքանով ընկալելի ու գնահատելի կլինի գալիք սերունդների համար:

Գեղարվեստի բնագավառում փոփոխությունները նկատվում են հատկապես գրական ամենից զգալուն, ճկուն ու դյուրաբեկ ժանրաձևի՝ բանաստեղծության ոլորտում, ուր մանավանդ բովանդակությունից չբխող ու ինքնանպատակ, դասականին համադրվող ու հանդիպադրվող ձևական նորությունները դառնում են հաճախադեպ: Այդ «մանկական հիվանդությունը» բռնկումներ է ունենում հատկապես անցումային շրջաններում: Այդպես էր 1920-1930-ական թթ.՝ դարի գերհանճար Չարենցի ժամանակներում, երբ իրենց ձևական նորարարությամբ պարծենում, հոխորտում ու նոր արվեստի հիմնադրի դեմ միասնական ճակատ էին կազմում նրա երբեմնի գրչընկերներ ու ապագա հակառակորդներ, իրենց պրոլետգրող հռչակած ոչ ապաշնորհ Ազատ Վշտունին, Գևորգ Աբովը, Նաիրի Չարյանը, Վահրամ Ալազանը և մյուսները: 100 տարի հետո ո՞վ է հիշում նրանց ձևական ծամածռություններն ու ոչ մնալուն գործերը: Բայց Չարենցն իր մեջ տեղնուտեղը ուժ էր գտնում հաղթահարելու «վտանգավոր սայթաքումները» և ստեղծելու իր հանճարին վայել գեղարվեստական բացառիկ արժեքներ:

Նորարարության խնդիրը բուռն թափով արձարծեց մաս 1960-ականների բանաստեղծական սերունդը, որն ընդվզեց խորհրդային կադապարների, անհատի պաշտամունքի շրջանում՝ Պ. Սևակի բնորոշմամբ՝ «իր ձայնը կեղծելով գբաղված» տաղանդավոր սերնդի դեմ, և ձախողումների, խտտանի հետ միասին ստեղծեց ոչ քիչ մնալուն արժեքներ:

Սույն ժողովածուում ընդգրկված են մրցույթի «բանաստեղծություն» անվանակարգի երեք մրցանակակիրների՝ Գոհար Գրիգորյանի, Աիդա Հարությունյանի և Ալբերտ Սաֆարյանի ստեղծագործությունները: Նրանք, մանավանդ առաջին երկուսը, ամերիկյան, եվրոպական, ռուսական, հայկական նորագույն բանաստեղծների հետևողությամբ գրում են տեխնիկական ձևական նորություններով, բառակեսերում թվեր ներմուծելով, առանց կետադրության ու հանգավորման, անսովոր պատկերավորությամբ: Հենց այն, որ նրանք իրենց սեփական ոճն ու ձայնն ունեն, որով տարբերվում են մյուսներից, արդեն արժանիք է, բայց և անողոր ժամանակը ցույց կտա, թե նրանց ստեղծագործությունները որքանով են մնայուն և արժեքավոր:

Յուրատեսակ աշխարհընկալում և պատկերավոր ուրույն մտածողություն են դրսևորել նաև արձակագիրները՝ Սոֆյա Մարտիրոսյանը, Լուսիկ Մուրադյանը, Էլեն Խաչատրյանը, Մարգարիտա Ղազարյանը, որոնց խոսքը տպավորիչ է ու ներգործող: Հետաքրքրությամբ են ընթերցվում նաև Լաուրա Սեկոյանի, Վալտեր Բերբերյանի, Մերի Գևորգյանի էսսեները:

Թե՛ բանաստեղծները, թե՛ արձակագիրները իրենց ստեղծագործություններին վերաբերվել են լրջագույն պատասխանատվությամբ, և խմբագրական խորհուրդը ընտրանք ընթերցողին է ներկայացնում նրանց ստեղծագործություններն այն համոզումով, որ նրանցում ժամանակակից ընթերցողը կգտնի իր զգացմունքների ու խոհերի գեղարվեստական արձագանքը:

Սամվել Մուրադյան

*Բան. գիյր. դոկտոր, պրոֆեսոր, ԵՊՀ ակադ.
Հր. Թամրազյանի անվան հայ գրականության պատմության
ամբիոնի պատվավոր վարիչ*

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ



Գոհար Գրիգորյան

Ծնվել է Շիրակի մարզի Գյումրի քաղաքում: 2007-2016 թթ. սովորել է Համո Սահյանի անվան թիվ 38 դպրոցում: Այնուհետև ուսումը շարունակել է Գյումրու «Ֆոտոն» վարժարանում: Ակտիվ մասնակցություն է ցուցաբերել ներդպրոցական ու արտադպրոցական միջոցառումներին: 2016 թ. դպրոցական թիմով մասնակցել է «Հայ ասպետ» հեռուստախաղին՝ արժանանալով երկրորդ կարգի մեդալի: Մասնակցել է առարկայական տարբեր օլիմպիադաների. 2017 թ. «Հայոց լեզու» առարկայի հանրապետական օլիմպիադայում արժանացել է երկրորդ կարգի դիպլոմի, իսկ 2018 թ.՝ գովասանագրի: 2015-2016 թթ. զբաղվել է կամավորական աշխատանքով «Art» հասարակական կազմակերպությունում, 2018-2019 թթ.՝ «Կազա» շվեյցարական մարդասիրական հիմնադրամի «Էսպաս» երիտասարդական կրթամշակութային կենտրոնի «Երիտասարդների հզորացում քաղաքացիական կրթության և միջմշակութային հաղորդակցության միջոցով» ծրագրի շրջանակում: Կամավորական սկզբունքով թարգմանություններ է կատարել նաև «Ֆրեսկո» արդի արվեստի և հոգևոր ֆիլմերի 7-րդ փառատոնի շրջանակում: Ներկայումս «Հայկական Կարիտաս» բարեսիրական ՀԿ-ի «Նպաստել Հայաստանում բոլորի համար ներառական և համապատասխան որակյալ կրթության կայացմանը» ծրագրի համագաղափարակիր է: 2019 թվականից սովորում է

րում է Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի թարգմանության և միջմշակութային հաղորդակցության ֆակուլտետի «Թարգմանչական գործ» (անգլերեն-հայերեն) բաժնում: 2021 թ. ճանաչվել է «Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան» հիմնադրամի 2020-2021 ուսումնական տարվա «Լավագույն ուսանող» մրցույցի հաղթող: Մեծապես ներառված է եղել ներհամալսարանական կյանքում տեղի ունեցող իրադարձություններին: 2020-2021 թթ. եղել է ԲՊՀ ՈՒԽ մշակույթի և սպորտի հանճնաժողովի անգլերենի ակումբի (English Club) պատասխանատուն: Ցուցաբերած ակտիվության համար արժանացել է մի շարք հավաստագրերի ու շնորհակալագրերի:

Նվագում է կիթառ: Ունի մի շարք հեղինակային երգեր ու բանաստեղծություններ: Մասնակցել է «Հուսո առագաստ» միջազգային երգի փառատոնին. «Լավագույն տասնյակ» անվանակարգում հայտնվելու համար արժանացել է պատվոգրի: Հեղինակային բանաստեղծությունները և այլ հեղինակներից կատարած թարգմանությունները տարբեր խորագրերով հրատարակվել են «Գրանիշ» գրական համայնքի օնլայն հարթակում: 2019 թ. տպագրված «Կրակե ձայների խեցին» անթոլոգիայի համահեղինակներից մեկն է: 2022 թ. մասնակցել է «Armenian Genocide Essay Contest» խորագրով էսսեների ամենամյա մրցույթին և զբաղեցրել առաջին տեղը:

«Անկախության սերնդի ձայնը» երիտասարդ ստեղծագործողների հանրապետական ուսանողական մրցույթի գրականության ուղղությամբ «բանաստեղծություն» անվանակարգում զբաղեցրել է առաջին պատվավոր հորիզոնականը:

ՈՉ ՈՔ

Դժվար է
ոչ ոքի մասին չգրելը,
ավելի դժվար է
գրելը ոչ ոքի մասին...
Քայլի ճաքած քարտեզների վրայով, որի ցամաքները բառադիր
են
ու կզգաս սեփական գոյությանդ մաշկի վրա,
որ
մի կարճ անվերջություն վատնել ես՝
փակ աչքերի տակից նույն մանուշակագույն էկրանին նայելով,
դժվար է սպասելը ոչ ոքի,
ավելի դժվար է
ոչ ոքի չսպասել կարողանալը,
մինչ անձանոթ կատուները փնտրում են իրենց մահը՝ անիվների
լողովելով,
ձեռքդ դիր ցանկացած Լուսնայան ուսին
ու կզգաս սեփական անտարբերության
մաշկի վրա,
որ մի անգույն տարբերությամբ
ես գտել եմ իմ մահը,
դժվար է ոչ ոքի չսիրելը,
ավելի դժվար է սիրելը ոչ ոքի...

ՊՐԵՍԿԵՎՅՈՒ

Պրեսկեվյու 2-1

Ես մենակ քաղաք եմ մենակ քաղաքում:

Ես ավելի եմ մենակ, քան քաղաքը...

Նորից պրեսկեվյու:

Ինչ-որ իքՍԵՐ լեզվիս ծայրին եմ (է):

Մենակ քաղաքում իքս մարդիկ իրար

վրա իքս ՍԵՐ են նկարում,

իսկ քաղաքում պատասխԱԱԼ չկա...

Ռադիոլաները բլյուզ են փշրում փողոցներին:

Բլյուզը մենակ քաղաքների մասին է...

Իմ մասին է,

Բլյուզը երբեք չեկաժ գնալու մասին է,

փնտրելով կորցնելու ու կեսից դրվող վերջակետի մասին է:

Ես ասում եմ բլյուզը:

Այն մի տեսակ հիշեցնում է ինձ իմ նախկին եսը, որն այդպես էլ չգտնվեց:

Պրեսկեվյու 1+1

Բարդ է ես լինելը,

ավելի բարդ է լինել ոչինչ:

Դու մենակ ոչինչ ես մենակ ոչնչում:

Դու ավելի ես մենակ, քան ոչինչը:

Նորից պրեսկեվյու...

Ինչ որ կիքՍԵՐ լեզվիս ծայրին է (են):

Մենակ ոչինչներում մարդիկ կիքս ՍԵՐ են փնտրում ու դառնում պատասխԱԱԼՍՏՈՒ:

Պատեֆոններից ջազ

է մաղվում փողոցներին:

Ջազը մենակ ոչինչների մասին է:

Քո մասին է:

Ջազը երբեք չտված ինքդ քեզնից գողանալու մասին է,
ինքդ քեզ լքելու ու բացակայությունից կախված պարանների մա-
սին է:

Ես ասում եմ ջազը:

Այն ինձ մի տեսակ քո նախկին եսն է հիշեցնում, որն այդպես էլ
չգտնվեց:

Նորից պրեսկեվյու:

Ես մայթերին թափառող մենություն եմ,

ծիծաղող ցավ

չլինելու արդարացում

ու մի զսպաշապիկ լռության համար...

Դու սկսվում ես վերջակետից այն կողմ,

իսկ ես կապույտ եմ մի գիշերվա տարբերությամբ,

ես հավատում էի

մահից հետո քո գոյությանը,

իսկ հիմա փնտրում եմ ներքև

կայունության կետ`

թաց տիեզերքում գոյությունս խզբզելու համար:

Ես քայլերից վերքոտվող հեռու եմ

դատարկության գույն

խելագարությամբ ծանրացած երակ

ու մի զսպաշապիկ լռության համար:

18-ՐԴ ՄԵՂՔ

Ամեն օր քրքրվում եմ
մենՈՒԹյան

տատերն ու գումարվում քաղաքի կիսատ
պաստալիաններին:

Մենճյան պալոխանը 18 է:

Այսօր գործեցի իմ 18-րդ մեղքը:

18-րդ մեղքը կարող է միայն լավ ներվել, եթե հորինածդ մեղքերի
մեջ վերջինն է:

Քայլում եմ մեծությանս վերքերի միջով ու զգում, որ բացակայում
եմ ինձնից:

Քայլում եմ իմ եսերի վրայով, որ վերջապես դուրս գամ այն վեր-
ջաբանից, որ կոչվում է

18-րդ մեծության արտուրդ:

Իմ վերջաբանի կոյուղիներից մարդկանց հոտ է գալիս:

Իմ վերջաբանը չունի հոմանիշներ:

Իմ վերջաբանը կիսատ հետերոնիմներ է:

Իմ հորինած 18 հետերոնիմների մեջ դու վերջինն էիր:

Իմ հորինած 18 եսերի մեջ առաջինը:

Մինչ մեծությունս քարշ եմ տալիս քանդվող գոյությանս մեջ,
դու կգողանաս ինքդ քեզնից ու կթաքցնես սխալ քաղաքում:

Ես պարզապես սխալ վերջաբանում եմ ծնվել:

Ես պարզապես մոռանում եմ մեռնել:

Ամեն օր քրքրվում եմ
մենՈՒԹյան

տատերն ու գումարվում քաղաքի կիսատ
պաստալիաններին:

Մենճյան պալոխանը 18 է:

ՇՐՈՂԻՆՁԵՐԻ ԿԱՏՈՒ

Քայլում եմ՝ կարդալով քաղաքը:
Փողոցային գրականություն...
Մի անկյունում բառեր են համբուրվում,
մյուսում արդեն ծնվել է բանաստեղծությունը:
Ես գողացա այդ բանաստեղծությունն
ու լռեցի քո մասին:
Քաղաքը նորից ինձ է ապտակում:
Ես չգիտեմ՝ մեռած եմ, թե ծնվել եմ քո մահում:
Իմ հերոսները բան առ բան քանդվում են այս քաղաքից,
խսկ գրելն ու սիրելը՝ գնալով դժվարանում:
Պարզաջրել է պետք կորցրածը:
Պարզաջրվել է պետք կյանքից:
Միևնույն ժամանակ լինել մեռած ու կենդանի
քաղաքի վրա:
Խեղդվելով մակերեսին՝ զգալ քո թողած արագության հետքերը:
Երևի չարժե պարտվել վաղվան՝ գրավ դնելով բոլոր երեկները:
Միևնույն ժամանակ լինել մեռած ու կենդանի:
Քաղաքից հոտն է փչում մարդու:
Հեռվում փնջում է Շրողինգերի մի կատու:
Քաղաքին մոտ, այդքան էլ հեռու
մահը ծիծաղում է հերձված բառերի վրա:
Իմ Շրողինգերի կատու...
Ես գիտեմ՝ դու ծախում ես բառերդ:
Դեռ չգիտես՝ մեռած ես, թե կես բաժակ կյանք ես խմել:
Իմ Շրողինգերի կատու...
Ես գիտեմ բառերդ ես ծախում...
Ու դա հերիք է՝ քեզ չկարդալու համար,
Միևնույն ժամանակ լինել մեռած ու կենդանի
քաղաքի վրա:

Խեղդվելով մակերեսին՝ զգալ քո թողած
լուծյան հետքերը:
Տեսնել դեպի ոչ մի տեղ գործող պատասխանները:
Ինձնից հեռու, հեռու...
Կիսամեռ իմ Շրոդինգերի կատու...

**ՄԵՆՔ ԵՐՔԵՔ ՊԵՏՔ ՉԵՆՔ ՆՐԱՆ,
ՈՒՄ ԵՐՔԵՔ ՊԵՏՔ ՉԵՆՔ ԼԻՆԻ**

օրացույցների մեջ սիրելը դժվար է,
ավելի դժվար, քան կարող էիր մոռանալ մոռացածդ,
և իրոք քանի անգամ է պետք մոռանալ մի կարգին բանաստեղծու-
թյուն գրելու համար.
գրելը իմ և քո բացակայության միջև միակ անդունդն է,
գրելը սպանում է հնարավոր ամենքին,
և ինչու են պատերը թափառում տան մեջ, իսկ ընդհատակվածնե-
րը բողբոսում մենությունից, երբ ամեն օր նրանցից հանվում են
ժամկետանց կյանքերը ինքնասպանի,
օրացույցի մեջ մեռնելը, իրոք, դժվար է դարձել, ավելի դժվար,
քան կարող էիր արդարացնել բացակայությունս քո բացակայու-
թյամբ,
և, իրոք, քանի անգամ է պետք լքել մի կարգին մնալու համար.
գրելը քո և իմ բացակայության միակ պատճառն էր:

վողորմները քրտնել են մարդկանցից,
բառերը վերջանում են խանութներում,
կոշիկները վազում են չարդարացված,
ահա լուծյունը ուր որ է կմեռնի
ակորդեոններից հեռու,
իսկ ես դատարկվում եմ քո մեջ,

դատարկվում ջազի պես,
քառասնում անվերջ
ու լցվում կոտրված լռության մարմնի մեջ,
ես գիտեմ,
որ իմ բոլոր նախորդ կյանքերում
Լռություն եմ եղել,
ու իմ սին մեղքերի համար
ես դարձել եմ ես,
կորցրել եմ ինձ
իմ հորինած տասնյոթ
և ավել մեղքերում,
թաքնվել իմ ու բոլորի
հաջորդ կյանքերում,
ինչպես ճապոնացի
հիքիքոմորի
հույսով միայն,
որ դու քո կյանքերից
մեկում կգտնես
ինձ մտքերիդ տակ ծխելիս,
կամ փշրվելիս
մայթերը
հիվանդանում են մարդկանցով,
գլխարկները գլխապտույտ ունենում,
առօրյան շարունակվում է
սրտի ջեքերի հաշվին,
իսկ մարդիկ չափում են ցավը
դուրբիմետրերով.
ես չափում եմ ամեն ինչ քո «չլինել»-ներով
ու գիտեմ,
որ չեմ դիմանա
45 քո չլինելու ցավին,

ինչպես չեն դիմանում
ժամանակին կամ լռությանը.
մենք գիտենք
որ ես չեմ բուժվելու քեզնից,
ինչպես չեն բուժվում
կյանքից կամ իրենք
իրենցից,
մենք գիտենք,
որ բոլոր կատուների
կյանքերը
մեզ չեն հերիքի՝
մի կյանքաչափ իրար գտնելու
կամ աչքերիդ գույնը
վերջապես հասկանալու համար...
մարդիկ մեռնում են,
մարդկանցից
բառերը մոլորվում
քերաններում,
իսկ Լռությունը
անհիմաստ բան է հիմա...
իմ բոլոր նախորդ կյանքերում
ես եղել եմ ես,
և իմ սին մեղքերի
համար ես դարձել եմ դու...

ՔԱՂԱՔ

Քաղաքի սկզբում ինչ-որ մեկը հորինեց քունը,
որովհետև տառապում էր անքնությանը
քաղաքի սկզբում ինչ-որ մեկը սխալվեց իմ մեջ,
ու ես հորինեցի քունը՝ չսխալվելու համար

ինձ կետադրեցին ստիպված
(ես կույր էի),
ուղղեցին մաս տառասխալներս
(ես կույր էի ավելի),
քաղաքի կեսից ես ջարդեցի քայլերս
ու
կոտրված գույների մեջ կորցրի մեր մահը,
այնքան լռություն հավաքեցի՝ ցեխերից
տենդի մեջ ընկած շենքերը
փտող մարդկանցից,
անտող ուրվականներից
փրկելու համար...
քաղաքի սկզբում ես հաշվեցի անտարբերությունը...
մի տեղ
գրել եմ՝
«ես ծամեցի ինձ»,
իսկ քաղաքի վերջը սխալ էր...

ՀԻՎԱՆԳ ԵՄ (Երգ)

Դու հագել ես բոլոր գույները
Ու հանկարծ անգույն դարձել:
Դու ներկել ես բոլոր պատերը
Ու այնտեղ մեզ փնտրել:

Արևն արդեն ձևական է,
Տաքությունը՝ ներսից:
Ես հիվանդ եմ, հիվանդ եմ քեզնով
Նորից...

Ես նորից դողում եմ քեզնից
Ու լողում հեռու ավերից:
Ես մրսում եմ քեզնից հեռու:
Ու, չէ՛, հիվանդ չես դու:

Գիշերն արդեն ձևական է,
Մթուքյունը՝ ներսից:
Ես հիվանդ եմ, հիվանդ եմ քեզնով
Նորից...
Ես հիվանդ եմ, հիվանդ եմ քեզնով
Նորից...

ԴՈՒ ՉԿԱՍ

(Երգ)

Երկնքից կարոտը թափվում է հոգուս մեջ:
Պատերից ստվերդ կաթում իմ մեջ:
Դու կաս ու լռում ես աչքերում իմ:
Դու կաս ու խոսում ես լռության հետ իմ:

Բայց երբ դու չկաս,
Հոգիս կիսատ է:
Բառերը՝ անհիմաստ,
Հեքիաթն աներազ է:
Երբ դու չկաս, չկա արև, կապույտ անձրև,
Վերև տանող թևեր չկան, երբ դու չկաս,
Երբ դու չկաս ու երևի էլ չգաս:

Երկնքից կարոտը թափվում է հոգուս մեջ:
Պատերից ստվերդ կաթում իմ մեջ:
Դու կաս ու լռում ես աչքերում իմ:
Դու կաս ու խոսում ես լռության հետ իմ:

(Երգ)

Ես կորցրել եմ բոլոր ելքերը՝
Ինձ քեզանից դուրս բերելու:
Ես փակել եմ բոլոր վերքերը
Ու ուրիշին չեմ փնտրելու:
Դու իմ տունն ես, բայց հեռու:
Գլխեն՝ գալու ես ինձ տանելու,

Ես մոլորվել եմ քո մեջ, հարբել քեզնով:
Դու երգ ես անվերջ, ապրում եմ քեզնով:
Քեզնով, քեզնով, ապրում եմ քեզնով:

Դու սովել ես ինձ տուն արևի վրա,
Դու իմ միակ լույս գիշերվա:
Իմ հոգին մարում է, մեռնում առանց քեզ:
Դու ինձ պետք ես արևի պես:

Ես մոլորվել եմ քո մեջ, հարբել քեզնով:
Դու դարձել ես նոր էջ, ապրում եմ քեզնով:
Քեզնով, քեզնով, ապրում եմ քեզնով:

Ես մոլորվել եմ քո մեջ, հարբել քեզնով:
Դու դարձել ես նոր էջ, ապրում եմ քեզնով:
Քեզնով, քեզնով, ապրում եմ քեզնով:

Ես մոլորվել եմ քո մեջ, թող ապրեն քո մեջ անվերջ:



Աիդա Հարությունյան

Ծնվել է 1998 թ. հունվարի 6-ին Երևանում: 2005-2013 թթ. սովորել է Գրիգոր Նարեկացու անվան թիվ 137 հիմնական դպրոցում, 2006-2013 թթ.՝ Ա. Տիգրանյանի անվան երաժշտական դպրոցի դաշնամուրային բաժնում, երգել է երաժշտական դպրոցի երգչախմբում: 2013-2016 թթ. սովորել է Երևանի թիվ 97 ավագ դպրոցում: 2016-2020 թթ. ուսումնառությունը շարունակել է Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի սոցիալական գիտությունների և սերվիսի ֆակուլտետում՝ «Լեզվաբանություն և միջմշակութային հաղորդակցություն/ միջազգային տուրիզմ» մասնագիտությամբ: Ուսանողական տարիներին անդամակցել է ԲՊՀ ուսանողական խորհրդի մի շարք հանձնաժողովների, «Ռուս-հայկական երիտասարդական միություն» երիտասարդական հասարակական կազմակերպությանը, որպես կամավոր մասնակցել մի շարք միջազգային համաժողովների, կրթ սեղան-քննարկումների, այլ միջոցառումների: 2020-2022 թթ. սովորել է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետի մագիստրատուրայում՝ «Արվեստի տեսություն և պատմություն» մասնագիտությամբ: 2022 թվականից սովորում է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետի ասպիրանտուրայում՝ «Կերպարվեստ, դեկորատիվ և կիրառական արվեստ, դիզայն» մասնագի-

տությամբ: 2021 թվականից հանդես է գալիս ԵՊՀ մշակույթի կենտրոնի երգչախմբում: 2021-2022 թթ. երգել է «ԱՐԱՐ» երգչախմբում, մասնակցել է մի շարք համերգների, երաժշտական մախագծերի ու միջազգային մրցույթների:

2016 թ. մասնակցել է «Հասկեր» գրական մրցույթին երկու չափածո ու արձակ ստեղծագործություններով, համանուն անվանակարգերում արժանացել է «Սերմնահատիկ» մրցանակի: 2018 թ. մասնակցել է ՀԳՄ Լևոն Անանյանի անվան ամենամյա երիտասարդական մրցանակաբաշխությանը՝ արժանանալով երրորդ մրցանակին «պոեզիա» անվանակարգում: 2017 և 2019 թթ. մասնակցել է Երիտասարդ գրողների ՀԳՄ ծաղկածորյան համաժողովին: 2021 թ. հաղթել է գրող, բանասեր Ռոբերտ Մանուկյանի (Մանու) հիշատակին նվիրված բանաստեղծական մրցույթում:

Թարգմանական գրքերի հեղինակ է. թարգմանել է Մարկ Տվենի «Թոմ Սոյերը՝ խուզարկու» և Ռոբերտ Լուիս Սթիվենսոնի «Բժիշկ Ջեքիլի և պարոն Հայդի տարօրինակ պատմությունը» գրքերը, որոնք լույս է ընծայել «Գարակ» հրատարակչությունը: Թարգմանել է նաև Ջուլիան Բարնսի «Աշխարհի պատմությունը 10½ գլուխներում» գիրքը, որը պատրաստվում է տպագրության:

Ստեղծագործությունները տպագրվել են «Գրեթերթ» ՀԳՄ գրական երիտասարդական թերթում, «Գարուն» ամսագրում, «Մշակութային հրապարակ» ամսաթերթում, «Գրանիշ» գրական կայքում, «Ցուրեր» գրական հանդեսում, Իրանի «Ալիք» օրաթերթում, Աբխազիայի «Գրական Համշեն» շաբաթաթերթում, Լոռու «Երկունք» գրական ամսաթերթում, Արցախի «Եղիցի լույս» շաբաթաթերթում, «Հասկեր», «101 աղոթք հիշատակի» ժողովածուներում և էլեկտրոնային այլ կայքերում ու պարբերականներում:

«Անկախության սերնդի ձայնը» երիտասարդ ստեղծագործողների հանրապետական ուսանողական մրցույթի գրականություն ուղղությամբ «բանաստեղծություն» անվանակարգում զբաղեցրել է երկրորդ պատվավոր հորիզոնականը:

Ես գիրեն, որ այն, ինչ Նիցշեն ասել է, ճիշտ է, բայց և այնպես, ես տեսա փոքրիկ երեխայի դեմքը փողոցում, և այն զեղեցիկ էր:

Է. Փ.

ՉԳԻՏԵՄ

Երազիս մեջ
քույր և եղբայր ունեի.
քույրս բերան չուներ,
բայց սկսեց մորս ձայնով երգել,
կորցրի հավասարակշռությունս,
խաղաղվեցի,
ինչպես հանգուցյալի գլուխը
փռռերով բարձի վրա:

Նա գալիս էր՝ սև արկղը ձեռքին,
գալիս էր նախամուտքի զգուշավորությամբ,
գալիս էր՝ շալի քուղերը արմունկից կախ գցած,
մի քանի ամրակ
զգեստի երկու մատնաչափ գոտուն ամրացրած,
մազերը կոկիկ հավաքած,
պարանոցից վեր՝ թռչունի շուռ տված բույն,
ամուսնու ազգանունը կրող կնոջ քայլվածք ուներ,
թատերաբեմի հայելի էր հիշեցնում.
անունը մայր էր մորիցս հետո:

Գնում եմ, գնում եմ դեպի մա:
Մի ուրիշ ոտնահետք:
Նախկինում հողը չէր զգում ինձ,
ես չէի լսում իրեն.

հողը ջուր էր,
ես՝ ժապավեն:
Վրայից մարմինը կորցրած զգեստի հոտ էր գալիս,
երբ քամի էր,
մլակի պես խաղում էր լամպի դիմաց,
անկանոն շարժումներով
իր չափսերից մեծ ստվերներ գցում շուրջը,
փորձում լինել լույսին ամենամոտը,
ձեռքի մատների արանքի տաքություն էի զգում,
թռչունի ոտքերի պես բարակ,
կարմիր ստվերներ գցեց վրաս,
հետո ճակատիս ընկած մազափունջը
ականջի հետև տարավ,
բվի փետուրի պես փշաքաղեցնող էր:
Ասաց. «Գիշերները չեմ քնում,
ծառերից սերմեր եմ թափվում,
հավաքում եմ և լիճը լցնում:
Ես անգույն ջրերի մեջ եմ ծնվում»:

Եղբայրս,
նա էլ ինձ նման
հորիցս ժառանգած
բաց շագանակագույն աչքեր ուներ,
չբոված սուրճի հատիկներ,
բուրում էր, ինչպես դարբնի գոգնոց,
այնքան սիրելի:
Տունն արդեն մի քանի կտուր ուներ,
շարունակություն, որ իմը չէ միայն,
երբ դեռ հեռու էի,
կապույտ էր այն, ինչը մոտ պիտի լիներ հետո,
հիմա ներսից եմ տեսնում,

հիմա քայլում եմ,
և կարմիր կա:

Երազիս մեջ եղբայր և քույր ունեի,
ծիծաղում էի,
վազում,
ընկնում,
ցուցամատով թաց վերքիս մեջտեղով
գիծ քաշում,
ինչպես մայրս՝
բալի մուրաբան
մատով ստուգելիս,
լիզում եմ,
ցավ չեմ գգում:
Նրանք այնքան նման են ինձ,
աչքերս ջուրը քաշած ավազ դարձան,
երկար նայեցի,
հետո կոպերս միացան իրար.
շրջված լուսնի մեջք,
վերևի և ներքևի թաց թարթիչներս՝
եղևնու ճյուղեր:

Ննջասենյակիս առաջին լուսաբացը.
մահճակալից կախ ընկած
փոքրիկ ոտքերի սավերներ,
չեմ կարողանում նայել.
ձկան պես լողում եմ,
ձկան պես տեսնում,
առջևումս ոչ ոք չկա:
Երազիս մեջ քույր և եղբայր ունեի
և չգիտեի՝ ինչպես դիմել նրանց:

Ծանոթագրություն. որպես բնաբան՝ Էզրա Փառունդի «Արտագրություն» բանաստեղծությունը, բարգմանությունն անգլերենից՝ հեղինակի:

ՀԻՇԻՐ ԻՆՁ, ԷՄԻԼԻ՛

Էմիլի՛, իմ անցած ճանապարհով
ոչ ոք չի քայլում:
Անձրևներից հետո
ջրափոսերը
մաքուր են մնում,
այնքան մաքուր,
որ ձին խոնարհվում է
ջուրը խմելու:

Ոտնահետքերս չեն երևում,
Էմիլի՛, կոնքագոտիս քաշում եմ
հետևումս ծալված ձեռքերով,
ճանապարհով,
որով անցնում եմ,
մաքրում եմ ոտնահետքերս՝
կարճելով մոլոնները,
որ այդպես էլ չեղան:

Դու հայելիներ ունես,
անուանները՝ Լավինիա և Սյու,
նրանք ամեն օր աճում են դեպի քեզ,
ես՝ 6 շրջանակ ամբողջ քաղաքի մեջ
(տան պատերը, առաստաղը և հատակը),
ամեն օր դուրս եմ գալիս
գլխավոր շրջանակից որպես հյուր

և վերադառնում, ինչպես տանտեր,
դու ոտնաձայներ ես լսում.
Ես քայլում եմ ամեն օր, որ հիշեն ինձ,
ծնողներս ոտքերիս և հատակի
գուգերգը լսել սովորեցրին,
չգիտեմ՝ երաժշտական գործիք եմ, թե երգիչ,
երկաթե խողովակի վրա մագլցած
խաղողի վազը քայլում է առաջ, վերև,
ես նրա դիմաց անընդհատ երերացող ծառն եմ,
մատներս գունավորվում են ամռան ամիսներին...

Ծնողներս դանդաղ գնում են, Էմիլի՛,
երանի Բրայթը սիրահարվեր ինձ մինչև նրանց գնալը.
հայրս անտառային մանուշակներ կբերեր,
մայրս կգարդարեր ինձ,
նրանց աչքերի կաթիլները
եղևնու ճյուղեր կդառնային այտերիս վրա,
ո՞վ է երագել այսպիսի վերջ,
երևի միմուճարները...

Իմ գնալուց հետո դաշտերում
ոչ մի թռչուն չի մնա,
որովհետև ես մի տարածություն եմ,
որտեղ բարձր լռում են,
որտեղ մառախուղը միայն լուսավորում է,
որտեղ նավը ջուր չի սիրում...

Էմիլի՛, ծիծեռնակներին միշտ թռչելիս եմ տեսնում
կապույտ ճանապարհին,
որ գնում է դեպի ձեռքիս ավիդ,
հայացքներն առաջ են ուղղվում,

փակում ճանապարհս,
ես չեմ շարունակվում...

Երբ ձեղնահարկ եմ բարձրանում,
ձեռքս տանում եմ դեպի գաճաճի
տան դուռ հիշեցնող պատուհանից
ներս ընկնող լույսի ծուխը.

պետք է, որ ձմռանը
բերանից դուրս եկող գոլորշու պես
մի բան երևար օդում,
բայց ոչինչ չկար:
Ես էլ չկամ:

Էմիլի՛, փոքրացած շորերիցս թութունի
և ընկուզենու տերևների հոտ է գալիս,
ես չեմ հիշում ինձ...

ՄՆԱՅՈՂՆԵՐԻ ԵՐԿԻՐ

Երևի թե պետք էր իմանալ, թե որտեղ կարելի է
գտնել քեզ, երբ կորցրել ես ամեն ինչ:

Թե ինչպես է պետք շարունակել
ամենատրոշիչ վերջակետից հետո:

Մտածում եմ, որ եթե լինեմ մետրոյի վագոնում,
ապա մտքերիս ձայնը չեմ լսի:

Ցանկանում եմ տեղավորվել թանգարանների տոմսերի արան-
քում,

որ պահում եմ շաքարաթելի էջանշանով նոթատետրի մեջ:

Դիտում ես, կարդում ու լսում բոլոր նկարները,

բանաստեղծություններն ու երգերը «Անվերնագիր» վերնագրով,
օրացույցի բոլոր թվերի մեջ տեսնում մեկը

և հիշում ամեն փոքր բան՝
սկսած ձեռագործ սվիտերի դուրս եկած մի թելից,
որ փոքր հասակում քաշել էիր:

Նավի անկանոն շարժումների և աչքը թարթելու արագության պես
կարդալ գրողների այն գրքերը,
որոնք հայտնի չեն այնքան, որքան մի քանիսը,
որոնց վերնագրերը յուրաքանչյուր մարդ
կյանքում գոնե մեկ անգամ տված կլինի,
կարդալ՝ գտնելու համար պատասխանը հարցի,
բայց մտածել, որ պատասխանը չկարդացած գրքերում է,
բոլոր գրքերում, որ դեռ չես կարդացել,
և բոլոր գրքերում, որ այդպես էլ չես կարդալու:
Հերթով հաշվում եմ նույն հատիկները՝
կասկածի տակ դնելով թվերը նաև:
Փողոցներում տեսանելի են քամուց սառած
բազմաթիվ ձեռքեր, որ չեն կարողանում թերթել
այս երկար ու բարակ էջը:

Մոր ուսերը շարժվում են
գնացքի ռելսերի մոտ գտնվող տան նման,
որդու վերջին նամակը դողում է ձեռքերի մեջ,
ինչպես կրակի վրա պահած թելը,
և չեն հասկանում, թե ինչպես կարելի է
մահանալ փոքր առ փոքր, օրը մի քանի անգամ,
բայց ի վերջո ողջ մնալ:
Մնալ այն օրերի մեջ, որտեղ երազն ուղղակի երազ էր
և ոչ բացատրություն գտնելու հնարավոր տարբերակ:

...

Վերադարձողները գալիս են բոլոր
գնացածների անունից:
Շուտով ձյուն կգա:

ՉԵՄ ՈՒՉՈՒՄ

Խոսել չխոսելու մասին,
չապրել կյանքի մասին,
տեսնել չտեսնվածը,
բայց...

թվերի ու տառերի շարքեր,
որ պայթյունների լռեցված ձայներ են,
գրքի նախադասություն, որ չի թողնում
էջի մեջ առաջ գնալ:

Պատերազմը մտածում է մեզ:

Իրադարձությունների,
ամուր կապերի, հեռվից սիրելու մասին վեպերի
կենտրոնի հիմքում՝

իրենց կենտրոնը կորցրած մարդիկ՝
այս ու այն կողմ քայլող մտքերով:

Պենելոպեներ, որ սպասում են,

Ռդիսևներ, Տելեմաքոսներ,

որ տուն են գալու նույնիսկ եթե...

բոլոր դեպքերում, միշտ:

Այստեղ ու հիմա՝ չավարտված բառերի, չմեկնված ձեռքերի,

չշարունակվող մտքերի շարք,

որի վրայից խնամքով, երկար ու հանդարտորեն

պիտի հանենք բոլոր չ-երը:

Սառած հայացք մի կետի՝ ավտոբուսի դատարկ նստատեղին:

Ճանապարհ ընկնելու հերթը նեղ աստիճանների առջև

ու վերադարձի մեկ առ մեկ, դանդաղ քայլերը:

Մարդիկ, որ ուզում են մի բան փոխել իրենց արտաքինի մեջ,

որովհետև գուցե պիտի տեսանելի լինի փոփոխությունը ներսի,

որ մեծանում է անընդհատ ու հայտնվում

երկարող մագերի ծայրերին ու մատների տակ:
Երբեք չէի պատկերացնի, որ երբ կանգնես գնալու ու գալու միջև,
այսքան երկար կտևի սպասումը:
Մտածում էի՝ եթե գնում եմ, ուրեմն անպայման գալիս եմ հետո:
Մնայուն թվացող հաջորդականությունը կորցրեց ինձ:

Պատերազմ է...
անտառն այրվում է,
ծառերի ճյուղերը դատարկ են մնացել,
թռչուններն էլ առաջվա պես չեն թռչում:
Ջրի մեջ սուզված սպունգի կտորներ,
դուրս են գալիս զգուշորեն, թևերը կողերին կպած,
փորձում են փրկվելով փրկել:

Օրվա ընթացք ու անկանոն պատկերներ,
որ հետո կհասկանամ կամ կթվա, որ հասկացել եմ,
երազր՝ դաշտային ծաղիկներ՝ որպես նվեր,
օճառը, որ մաշվում է ձեռքիս տակ,
պատուհանի ամենօրյա ֆիլմերը երկնքի մասին,
որ արդեն մեկուկես ամիս է, ինչ նույնը չեն:
Անաչկոտ մութացիկը փողոցում,
որ մոտենում է մարդկանց ու չխիզախելով հետ-հետ գնում:
Մարդիկ փորձել են քաղաքի ձայնով խոսել միմյանց հետ,
քայլում են ու լսում քաղաքը, ասում է՝ հաղթելու ենք,
խսկ հեռուստացույցներում՝ հաղթելու ենք ցտեսության փոխարեն:

Չուզահեռ աշխարհներ, որ այնքան են իրար մեջ, որ գրեթե նույնն են:
Պատերազմը պատը կառուցո՞ւմ է, թե՞ քանդո՞ւմ:
Հնարավոր է՝ գալիս է, որ փորձի, թե որքան ամուր ես քո պատերի
մեջ,
ու դու պիտի սպացուցես հանգամանորեն ու համոզիչ կերպով,

տեսականորեն՝ երկրաչափության խնդիրների պես,
գործնականորեն՝ լիովին ուրիշ մի պատմություն:
Լիովին ուրիշ մի պատմություն...

Աշխարհը մանկություն չուներ,
ցույց տվեցինք մեր ունեցածը,
սկսեց երկար մտնտալ, ինչպես Օգոսեն Նեշը վեց տարեկանում,
բայց չգտավ հանգերը,
ասացինք՝ փոքր ժամանակ թերթում էինք գրքերի էջերն
ու նկարներ փնտրում, հիասթափվում էինք,
երբ չէինք գտնում ոչ մեկը, հիշո՞ւմ եք:
Չհասկացան՝
աշխարհը ձիու վրա էր. իջնել չուզեց:

«Մեր ժամանակ մենք ուրիշ էինք» չկա,
պարզապես հետաքրքիր է, թե որքան կմնանք,
թե որքան մարդիկ կպահեն մեզ՝
հիշելով ժամանակի մեջ:
Պատմություններ, որ միշտ աչքերի մեջ ենք պահել,
բայց չենք կարողացել թաքցնել,
ինչպես խնամքով ծավալած ու բարձի տակ դրված գիշերանոց:
Ասում է՝ գիշերը լաց ենք լինում,
առավոտյան՝ ամուր կանգնում ու նայում առաջ:
Այսքան մի բան:

ՄԻԳՈՒՑԵ

Պետք չէ ասել բառեր երկար,
որովհետև մինչ ավարտը նրանց մնում են
միայն հնչյուններ,
ձայնդ էլ է գնալով սկսում կորչել,
իսկ դեմքիդ արտահայտությունն արդեն
գնացել է դեպի իմաստը հաջորդ բառի:
Դժվար է գտնել բառեր,
բառեր, որոնց կսիրես դու,
բառեր, որոնք կսիրենք քեզ,
բայց նրանք դուրս են գալիս,
ինչպես լոտոյի քարերը փոքր պարկից,
և միգուցե հենց սա է ընտրությունը:
Լողալ ջրում առանց լողակների,
հաշվել սենյակումդ հավաքված գրքերը
և շնորհակալ լինել բոլոր լավ կախվածությունների համար,
թեթևության համար որոշումը խոսք չդարձնելու
և միգուցե առհասարակ նրա բացակայության,
երբ կարող ես հանդարտ քնել աղետից հետո
և արթնանալ զարմանքով,
թե ինչպես կարող ես լինել այդպիսին:

Ամենուր ներկա լինելու ցանկությունը,
որ մեծանում է, մեծանում, մեծանում,
և քարերի մեջ ապրելուց
քար չդառնալու համար գնում ես ու հայտնվում
բարձր խոտերով ծածկված տարածությունում՝
ամաչելու աստիճան մերկ և բաց երկնքի տակ,
որտեղ քեզնից առաջ քամի էր,
քեզնից հետո էլ քամի կլինի,

ու խոտերը կթեքվեն աջ ու ձախ,
կթեքվեն միանգամից, միգուցե աստիճանաբար,
և կհիշես երկար մազերդ,
որ ձեռքով դանդաղ տանում ես մի կողմ, հետո՝ մյուս,
ինչպես ծանր տոպրակը,
որ ձեռքից ձեռք ես տեղափոխում:
Չգիտես, թե ինչու ես հիշել այս ամենը,
բայց չես փոխի ոչինչ, պետք է հիշել մինչև վերջ.
անցնել բոլոր փողոցներով՝ հիմնականում դեպի տուն տանող
(չնայած այլ փողոցներ չկան էլ երևի),
փողոցներ, որոնք անընդհատ փոխում ես բազմազանության
համար,
և տեսնել ձեռքից ձեռք գնացող տոպրակը,
մատներիդ ծալվող հատվածը,
որ ուռել է ու կարմրել:

Միգուցե մի օր անձանոթները մեզ ցույց տան բոլոր այն
լուսանկարները,
որոնցում հայտնվել էինք պատահաբար:
Միգուցե կարողանանք կարդալ բարձրահարկ շենքերի
վառված ու անջատված լույսերի տեքստը,
որի այբուբենը չգիտեինք:
Միգուցե մի օր չփնտրենք ու գտնենք:



Ալբերտ Մաֆարյան

Ծնվել է 1998 թ. հուլիսի 9-ին Երևանում: 2005-2016 թթ. սովորել է Երևանի Գևորգ Էմինի անվան թիվ 182 ավագ դպրոցում, 2006-2009 թթ.՝ Հենրիկ Իգիթյանի անվան գեղագիտության ազգային կենտրոնում: 2009-2012 թթ. անցել է նկարչական և կիրառական արվեստի անհատական դասընթացներ: 2016-2020 թթ. սովորել է ԵՊՀ աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի սերվիսի ամբիոնում՝ «Կայուն տուրիզմ» մասնագիտացմամբ: 2017 թվականից առ այսօր ԵՊՀ Շառլ Ազնավուրի անվան մշակույթի կենտրոնի «Համալսարանական» թատրոն-ստուդիայի սան է:

2019 թ. հունիսին ԵՊՀ 100-ամյակին նվիրված «Անկախության սերնդի ձայնը» երիտասարդ ստեղծագործողների և կատարողների հանրապետական ուսանողական քիենալեի գեղանկարչության մրցույթում զբաղեցրել է առաջին պատվավոր, իսկ ասմունքի մրցույթում՝ երրորդ հորիզոնականը: 2019 թ. սեպտեմբերին Երևանի Գաբրիել Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնում խաղացել է ռեժիսոր Կարինե Դավթյանի կողմից բեմադրված Տ. Չուխաջյանի «Կարինե» օպերետում Արմենի հոր՝

պարոն Հակոբի կերպարը: 2019-2020 թթ. սովորել է «Մեր Սկրտչյան» արտիստական թատրոն-ստուդիայում:

«Անկախության սերնդի ձայնը» երիտասարդ ստեղծագործողների հանրապետական ուսանողական մրցույթի գրականության ուղղությամբ «բանաստեղծություն» անվանակարգում գրադեցրել է երրորդ պատվավոր հորիզոնականը:

ՄԱՐԴՈՒ ՄԻՐՏԸ

Ա՛խ, ինչ բան է մարդու սիրտը,
Հազար գույն է, հազար երանգ,
Հենց այսպես է մարդու սիրտը:
Ա՛խ, ինչ բան է մարդու սիրտը,
Մի քարեղեն երազանք է
Սիրահարի տխուր սիրտը:

Հազար տեսակ փոխվող սիրտ է,
Ճնվված է ու քար դարձած
Ա՛խ, սեր տեսած մարդու սիրտը:

Տառապած է ու տանջված
Սիրող մարդու քամված սիրտը,
Սիրուց գամված, խոցված սիրտը:

Վա՛յ, էն սրտին, որից միայն
Մի ճամփա է լոկ դուրս գալիս,
Իսկ ետդարձի ճամփան չկա:

Եվ տարիներ դաժան սիրուց
Ալեկոծված, հողմահարված
Դեռ ապրում է մարդու սիրտը:

Բայց մի կողմից մտածում եմ.
«Թե սիրտը մեր սեր չտեսներ»,
Ա՛խ էլ ինչ սիրտ պիտի մնար,

Եվ էլ ինչ սիրտ պիտի կոչվեր
Սիրուց փորձված մարդու սիրտը:

ԿՅԱՆՔՈՒՄ

Լինել կյանքի հետ ներդաշնակ,
Քայլել նրա հետ համահունչ,
Ապրել դարդերից անտեղյակ,
Եվ սիրել կյանքն առանց տրտունջ:

Խոսել կյանքում ամենքի հետ,
Փորձել լուծել անկարելի,
Գտնել հնար ու մերթընդմերթ
Սեկնաբանել անճառելի:

Բոլորի հետ սեղան նստել.
Հարգանքի մեջ տեղավորվել,
Եվ ամենքի, ուշիուշով,
Վարք ու ձևին լուռ հետևել:

Պետք չէ կյանքում շողոքորթել,
Վատը խորհել ու լավն ասել,
Հարկավ, պիտի սիրտը հարթել
Եվ այնտեղից սուտը մաքրել:

Ահա այսպես իմ լավ ընկեր,
Կյանքդ պատվով դու կապրես,
Քեզնից հետո կանցնեն դարեր,
Բայց դարերում կլինես:

ԵՎ ՍԻՐՏՍ ԶԳԱՑ

Եվ զգաց սիրտս ինչ-որ բան նորից,
Եվ խոսեց սիրտս խոր հառաչանքով,

Հուշերն են թակում դռներն անցյալի.
Ճանր ու երկար էր լռությունը խոր:

Եվ սիրտս զգաց սարսուռի ձևով,
Որ մոտ է սիրտդ սրտիս տատապած
Եվ ինչ-որ անտես թրթիռներ հյուսող
Իմ ու Քո սիրտը կարոտով կապեց:

Երկուսիս սիրտը շուտ զգաց փոքր-ինչ
Մեր ճամփաների սպասված հատումը,
Մինչ մեր աչքերը բացված զարմանքից,
Ուշքի կբերեր մեր հանդիպումը:

Եվ ինչ քաղցր էր և ինչքան դժվար
Անցնել Քո կողքով այդքան անտարբեր,
Բարևդ առնել ձեռքի շարժումով,
Առանց կանգնելու գեթ մեկ բոպետով:

Բայց թեկուզ մի պահ, կարճ մի ակնթարթ
Բավական էր, որ քամի բարձրանար,
Որ տարիների հանդարտված քամին
Փոքրրկոտ հողմով կրկին արթնանար:

ՔԵԶ ԻՄ ՍԵՐ

Ժամն է հեկեկում սեղանիս վրա՝
Թախծոտ աչքերը հառելով վրաս,
Օրն է հետևում ինձ պատուհանից
Ու գիշերն իր ներկում մութ պատուհանիս:

Ամեն ինչ լուռ է ու խաղաղ դրսում,
Զե՞ որ գիշերն է թառել փողոցում,

Մութ գիշերվա մեջ բոլորից թաքուն,
Լուկ ինձ պես միայն լուսինն է արթուն:

Ու ամեն գիշեր լուսնի հետ մենակ
Մտքերով անդարձ գնում եմ հեռու,
Այն հույսով կրկին գտնելու նրան՝
Անանց կարոտս նրան պատմելու:

Սակայն ես գիտեմ, որ էլ չի գալու
Սրտիս առաջին ճրագն իմ լուսե,
Որ գուցե երբեք ետ չեն դառնալու
Նրանով լցված օրերն արծաթե:

Բայց դեռ չնայած այդ ամեն ինչին՝
Ես քեզ կսիրեմ, Սե՛ր իմ առաջին:

ԿՅԱՆՔ

Կյա՛նք, ինձ կյանքում ի՛նչ ես տվել
Եվ ինչքա՛ն ես կյանքս բաշխել,
Որ իմ կյանքով, ա՛խ, մի կյանքով
Կարողանամ հարատևել:

Ա՛խ, դու կյանք ես մարդկանց կյանքում,
Բայց քչերն են արժևորում,
Ուշ հասկանում, գնահատում,
Կորցնելիս կարևորում:

Կյանք ես բաշխել դու բոլորին,
Բայց քո բաշխած կյանքի դիմաց
Շատ կյանքեր են, որ կամովին
Մեռնում են զուր կյանքը թողած:

Դու ոչ միայն կյանքն ես տալիս,
Այլև կյանքի ճանապարհը,
Բայց թե, ավստ՛ս, որ շատ մարդիկ
Ունեն «իրենց գաղափարը»:

Շատերին ես ուղի հարթում,
Մոլորվում են ճանապարհին,
Ու մոլորված ճամփաներում
Մեղադրում են դարձյալ կյանքին:
Բոլորին ես ընկեր տալիս
Որպես կյանքի թև ու թիկունք,
Բայց հաճախ կես ճանապարհից
Ունանք էլի մույնն են մնում:

ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

«Ընկեր» բառը լոկ մեկ բառ չէ,
Իմաստ ունի շատ ավելին,
Այն լոկ միայն գոյական չէ,
Այլ լրացում գոյականին:

–«Ընկերություն» . լոկ գոյական,—
Այսպես կասեր մի լեզվաբան,
Թե ձեր սիրտը սիրուց ցավեր,
Սրտաբանը ձեզ ինչ կասեր:

Միայն ասել ընկերություն
Ու հասկանալ պարզապես բառ,
Հավասար է կյանքը սիրել
Եվ ապրել այն ստիպողաբար:

Ա՛խ, ափսոս, որ քիչ են նրանք
Հանդիպում մեր ճանապարհին,
Որ անճնուրաց նվիրվում են
Ընկերության գաղափարին:

Քչերն են լոկ մեզ հանդիպում
Որպես անձև, անկեղծ ընկեր,
Եվ նրանց հետ հանդիպումից
Հենց ինքը՝ կյանքն է մեզ ժպտում:

ԵՐԱՆԻ ԹԵ

Երանի թե անձրև դառնայի,
Ու կաթիլ-կաթիլ վերից իջնեի,
Բերեի լազուր երկինքը սրտիս,
Քո ծով սրտի մեջ տեղավորեի:

Երանի թե մի քար լինեի,
Ընկած լինեի մի առվի ափին,
Տխուր օրերիդ գայիր, նստեիր,
Ստվերդ տայիր քարացած սրտիս:

Երանի թե արև լինեի,
Արևից կախված շողերի նման
Ամեն լուսաբաց, ամեն իրիկուն
Դեմքիդ լուսեղեն ամպեր փռեի:

Երանի թե արևի լույսով
Պատկերդ գրկումս գունեղ պահեի
Ու արտացոլված քո ստվերներում
Դարդերս թաքուն մթին պատմեի:

Երանի ես էլ գիշերվա նման
Հանդարտ իջնեի աչքերիդ խորունկ,
Մթնած սրտիս պես գիշեր դառնայի,
Երազ լինեի քո գիշերներում:

ԻՄ ԱՇԽԱՐՀՈՒՄ

Հեռու և մութ հոգուս խորքում
Ես իմ ուրույն աշխարհն ունեմ,
Միայն ես կամ այդ աշխարհում
Ինձնից բացի՝ ոչ ոք չունեմ:

Հավերժ փակ են ճամփաները,
Ուր կտանեն Չեզ իմ աշխարհի,
Անպակաս են տարերքները.
Չեք դիմանա այնտեղ երկար:

Անրջային այդ աշխարհում
Միշտ գիշեր է՝ լուռ, աստղազարդ,
Ուր ոչ մի հետք չկա մարդու,
Այնտեղ ապրելն է շատ դժվար:

Այդ աշխարհում մինչև հիմա
Միայն մեկն էր ներս թափանցել,
Այն էլ պարզվեց՝ մի անարժան
Սիրտ էր սիրուս բաժին հասել:

ԲԱՅ ԱՉՔԵՐԴ

Բա՛ց աչքերդ, շուրջդ նայի՛ր
Եվ լայն բացի՛ր, որ լավ տեսնես,

Շա՛տ ավիսոս, որ այսքան տարի
Իմ աչքերը կույր են եղել:

Բա՛ց աչքերդ, ու թող բացվեն
Կապանքները հոգուդ ներքո,
Թող գլխիկոր ծնկի իջնեն,
Լուսավորեն աչքերը քո:

Բա՛ց աչքերդ, ուղի՛ղ նայիր
Այս աշխարհի մութ աչքերին,
Չեն կուրանա, մի՛ վախեցիր.
Վախով կյանքն է անհնարին:

Բա՛ց աչքերդ ու կյսես
Հառաչանքը հոգուդ խորքից,
Դուրս կնետես անտես ցավը
Խորաթափանց քո աչքերից:

ԱՍՈՒՄ ԵՆ՝ ՍԵՐԸ...

Ասում են՝ սերը երբեք չի մեռնում,
Բայց այսօր սերդ սրտումս մեռավ,
Բացվի՛ր դու, սիրտ իմ, էլ բավ է սգաս.
Մեռած, անհոգի սերն ինչիդ է պետք:

Ասում են՝ սերը լցնում է մարդուն,
Բայց երեկ սերդ այնպես դատարկվեց,
Որ մի հարվածից մերկ ու փուչ դարձան
Այս տարիների պատրանքները սին:

Ամենաթանկը՝ սերս, տվեցի,
Սիրտս տվեցի օթևան սիրուդ,

Գիտես, որ քեզ պես ուրիշ ոչ ոքի
Դեռ այսքան թանկը ինձնից չեմ տվել:

Եվ ափսոսում եմ ու շատ եմ ցավում,
Որ չեմ ճանաչել ես քեզ «այսպիսին»,
Որ տարիների սիրո ջրհորից
Հանել եմ միայն դատարկ սիրտն իմ:

Սերս չի մեռել, իմ սերն հավերժ է,
Բայց սրտիդ համար փակ է այսուհետ,
Գնա՛, քեզ արժան սերդ վայելի՛ր.
Դու իմ սուրբ սիրուն արժան չես եղել:

44-ՕՐՅԱ ՊԱՐԵՐԱԶՄԻ ՔԱԶ ՀԱՅՈՐԳԻՆԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ...

Ուղիղ մեկ տարի անցավ այն օրից,
Երբ հայոց հողը կրկին խաբխսվեց,
Երբ չար թշնամու արկերի ձայնից
Հայի անդորրը ընդմիշտ խախտվեց:

Հայոց քաջերը շուտ ոտքի ելան,
Անցան փրկելու մեր սուրբ մայր հողը,
Հայոց ազգը մեր, թեժ կռվին պատրաստ,
Մնաց անտրտունջ մայր հողին կանգնած:

Ընկան լուսավոր շատ հերոս տղերք,
Ու քանի-քանի տան ճրագ մարեց,
Մայր հողին դաջվեց նորից մի նոր վերք,
Նորից մի նոր ցավ հայ ազգիս պատեց:

Սևազգեստ դարձան ազգի շատ մայրեր,
Սգավոր դարձանք, դարձանք սևավոր,
Լուռ հպարտության և ցավի միջև
Մեր հոգիներում թաղվել ենք այսօր:

Անցավ մեկ տարի, բայց ցավը մնաց
Մեր հողում, փարվեց Եռաբլուրին...
Փառք ու պատիվ ձեզ, անմահ հերոսներ,
Ուժ է ձեր գործը մեր հայոց ազգին:

ԱՐՁԱԿ



Սոֆյա Մարտիրոսյան

Ծնվել է 2001 թ. հոկտեմբերի 14-ին Մեծամոր քաղաքում: 2007 թ. ընդունվել է Մեծամոր քաղաքի թիվ 1 հիմնական դպրոց: 6-րդ դասարանից սկսել է գրել բանաստեղծություններ: Գպրոցին զուգահեռ հաճախել է երգի ու նկարչության խմբակների: 2016 թ. ընդունվել է Մեծամորի Սաշա Գալստյանի անվան թիվ 2 ավագ դպրոց: 2019 թ. սովորել է Երևանի պետական համալսարանի աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի «Մերվիս» բաժին: 2020 թվականից ստեղծել է «Աստղային քարտեզներ» բրենդը:

«Անկախության սերնդի ձայնը» երիտասարդ ստեղծագործողների հանրապետական ուսանողական մրցույթի գրականության ուղղությամբ «արձակ» անվանակարգում իր աշխատանքի համար զբաղեցրել է առաջին պատվավոր հորիզոնականը:

ԵՐԲ ՄԱՅՐԱՄՈՒՏ ԷՐ

*«Երբ մայամուր էր»:
Մոֆյա Մարտիրոսյան*

Նախաբան

Գործող անձինք, դեպքերն ու իրադարձությունները հորինված են:

Սա պատմություն է, որտեղ նկարագրված են դեպքեր՝ կապված պատերազմի, ցեղասպանության, սիրո ու ընտանիքի հետ: 1915 թվական: Հայոց ցեղասպանություն. սա պատմության մեջ բացառիկ էր, սրա մասին աշխարհը երկար լռեց, սրա մասին քչերը համարձակվեցին խոսել: Այդ ժամանակ հայը չբնաջնջվեց աշխարհի երեսից, տեսնո՞ւմ եք՝ մենք կանք ու կլինենք այնքան ժամանակ, քանի դեռ կա մարդկություն կոչվածը: Մենք թույլ չենք տա աշխարհին մոռանալ 1915 թվականի ոճիրը, քանի որ ցեղասպանության մասին լռելով՝ կծնվեն նոր ցեղասպանություններ:

Սպանում էին հայ մանուկներին, որպեսզի կերակրեն իրենց շներին: Աշխարհ, դու դեռ լռո՞ւմ ես....

1945 թվական: Երկրորդ համաշխարհային պատերազմ: Ինչպիսի՞ հետք թողեց այն մարդկանց ապագայի վրա: Քանի՞ անմեղ մարդիկ սպանվեցին ու խեղդվեցին բունկերներում: Դուք դեռ ցանկանո՞ւմ եք պատերազմներ ստեղծել, մարդիկ: Ժամանակները փոխվել են, զենքերի ու հրետանիների փոխարեն օգտագործե՞ք գրիչ և թուղթ: Պատերազմը չարիք է:

Ապրել սիրահարված ու սիրո համար..., թվում է՝ գեղեցիկ է, բայց նախևառաջ պետք է հասկանալ՝ ո՞ւմ և ինչի՞ համար:

Նա սիրում էր անկեղծ և ականակիտ սիրով:

Բոլորի կյանքում էլ լինում են շրջադարձային պահեր, հիասթափություններ, բայց ուժեղ մարդիկ կարողանում են ցանկացած

խնդրի ճիշտ լուծում տալ: Իմ գրքի հերոսուհին արդյո՞ք կկարողանա դուրս գալ իրեն հասած փոճուքյունների միջով, թե՞ հիասթափված աշխարհից, մարդկանցից և ծնողների կորստից՝ կհեռանա և միայնակ կապրի մի տեղ, ուր գուցե կվերագտնի իրեն:

1

Փետրվարի 23, 1949 թ., Գերմանիա

Երբ դուրս եկա, արևը այնպես ծակեց աչքերս, որ կարծես բանտից դուրս եկած լինեի և արևին կարոտ: Չմռան արևը և՛ հաճելի է, և՛ տհաճ:

Նախկինում սիրում էի ձմեռը, մինչև այդ դեպքը:

Խստաշունչ ու սառն էր ամեն ինչ, բայց երկնքում արեգակը պարզ էր: Ոտքերս խրվում էին ձյան մեջ. դժվար էր քայլելը: Խանութների փեղկերին գեղեցիկ լույսեր էին վառվում: Թվում էր՝ աշխարհը ո՛չ պատերազմ է տեսել, ո՛չ էլ արցունք:

Որոշեցի գնալ նրա մոտ: Նա միակ հարազատն էր, որին ես ունեի: Մորաքույրս իր ամուսնու ու երեխաների հետ տեղափոխվել էր՝ ապրելու Ֆրանսիայում դեռ տասը տարի առաջ: Հորս ծնողները մահացել են վաղուց, իսկ մորս ծնողները մոտ ութ տարի առաջ վերադարձան իրենց հայրենիք. նրանցից ոչ մի լուր չունեմ:

Քայլերս ուղղեցի՝ չգիտեմ ուր. ես միայն նրան էի հիշում: Այնպես վստահ էի քայլում, որ կողքից տեսնողը կմտածեր՝ նպատակաուղղված գիտեի, թե ուր եմ գնում: Մայրամուտ էր՝ շատ սիրուն, տեսածս մայրամուտներից ամենագեղեցիկը: Քայլում էի արեգակի ուղղությամբ, շուրջս մարդիկ էին, դեմքեր, որ կարծես ծանոթ էին ինձ, ու այնպես էին նայում, որ մտածում էի՝ վաղուց ծանոթ ենք իրար: Վստահաբար քայլերս ինձ տանում էին արևի ուղղությամբ: Հիշում էի նրա պատուհանն ու իրեն: Տեսածս բոլոր պատուհանները այնքան խորթ ու անծանոթ էին թվում, բայց չէի դադարում քայլել:

Մի պահ մտածում էի՝ գուցե շփոթել եմ քաղաքը, շփոթել եմ մարդկանց դեմքերն ու մտքերս: Նկատեցի, որ արևը կամաց-կամաց մայր էր մտնում ու դադարում էր պարզ երևալ: Ձեռքս հանեցի գրպանիցս ու նայեցի ժամացույցին: Դա նա էր նվիրել ինձ, որը միշտ ձեռքիս էր, և ամեն անգամ ժամանակին նայելիս հասկանում եմ, թե այն ինչքան արագ է անցնում, և տրվելով ժամանակին՝ հաճախ մոռանում ենք ասել կարևոր բաներ նրանց, ովքեր անզնահատելի թանկ են մեզ համար: Իսկ ժամանակը ուղղակի անցում է, չի զգուշացնում, չի սաստում, չի հիշեցնում ամենակարևոր բաների մասին: Ժամանակը նման է մեքենայի. այն շատ արագ է սլանում, բայց երբեք չի վերադառնում: Տարիներ առաջ նույն այդ ժամին ես այցելում էի նրան, մենք հանդիպում էինք, ու վայրկյանական հիշողության պես հայտնվեց աչքերիս առաջ: Ես հասկացա, որ ճանապարհս ճիշտ էր. միայն մնում էր քաղաքի այդ հատվածում գտնել նրա պատուհանը: Անցնում էի. մեկի բակում ծաղկած բույսեր էին, մյուսի բակը ամբողջությամբ չորացած էր: Հայացքս բարձրացրի վերև, և..., այո՛, ես գտա նրա պատուհանը: Երկրորդ հարկի սպիտակ պատուհանը՝ թափանցիկ վարագույրով:

Անհասկանալի էր, բայց ոչ մի լույս չէր վառվում: Նրան տեսել էի մի քանի օր առաջ, ասել էր, որ կգա իմ հետևից, բայց այդպես էլ չեկավ ու կարծես տանն էլ չէր: Համենայն դեպս բարձրացա վերև և թակեցի դուռը: Մի քանի բույս դրսում սպասելուց հետո դուռը բացվեց, ու անհաշվելի քանակությամբ ծաղիկներով դիմավորեցին ինձ. անսպասելի էր, բայց նաև հաճելի: Նրա ձեռքին վարդերով մի մեծ փունջ էր՝ իմ սիրելի կարմիր վարդերով: Այնքան հաճելի և տպավորիչ էր ամեն ինչ, որ մի պահ մոռացել էի, թե ուր էի ու ինչի համար էի այդտեղ:

Գեկզմերի 23, 1948 թ., Գերմանիա, Բեռլին

Առավոտյան վաղ էի արթնացել, հինգշաբթի էր, ես պետք է գնայի համալսարան, բայց շտապում էի, թե երբ պետք է գնանք կինո: Այդ օրը վերջին օրն էր համալսարան գնալու, մինչև արձակուրդից կվերադառնայինք: Մենք երբեմն ընտանիքով՝ ես, հայրս ու մայրս, ամեն շաբաթ գնում էինք՝ որևէ հետաքրքիր ֆիլմ դիտելու:

Շատ ձյուն էր եկել մեր քաղաքում. այնքան գեղեցիկ էր: Չյան փաթիլները խաղիկներով իջնում էին ու գրկում պատուհանս, հետո հալչում և դառնում ջրի կաթիլ: Գնացի խոհանոց, իմ սիրելի սուրճը խմեցի և արագ դուրս եկա տանից:

Ի դեպ, այդ ժամանակ սովորում էի Հումբոլդտի (Բեռլինի) համալսարանում: Սովորում էի Քիմիայի ֆակուլտետում և խորացված ուսումնասիրում էի լեզուներ. մորաքույրս էլ է քիմիկոս:

Ժամերը շատ ծանր են անցնում: Ինչևէ, ես անցկացրի այդ մի քանի ժամը, և հայրիկը եկավ իմ ետևից:

–Ինչպե՞ս են դասերդ համալսարանում,– հարցրեց հայրս:

–Լավ են, – ժպտալով պատասխանեցի ես:

Իրականում ձանձրալի էր ամեն ինչ, ու ես երբեք էլ չեմ սիրել այդ մասնագիտությունը: Միշտ երազել եմ դառնալ թարգմանչուհի կամ աշխարհագրության ուսուցիչ:

–Գիտե՞ս՝ հայրիկը այսօր պետք է տոմսեր գնի,– ասաց մայրիկը:

–Կի՞նոյի՞:

–Ո՛չ, երկու օրից Փարիզ ենք մեկնելու:

–Ի՞նչ լավ է, – ոգևորված ասացի ես:

Ճանապարհին զրուցում էինք պատերազմի, դրա թողած հետքերի մասին: Ինչքա՞ն անմեղ մարդիկ մահացան, ինչքա՞ն ասի ու սարսափի մեջ էինք ապրում: Պատերազմները ոչինչ չեն բերում իրենց հետ. միայն տանում են, այն էլ ինչքան բան: Հողի

տակ են անցնում նրանք, ովքեր պետք է դեռ ապրեին ու ապրեց-
նեին, սիրեին, ժպտային, իսկ այստեղ՝ մեզ մոտ, թողնում են միայն
հիշողություններ ու մի քանի լուսանկար, և դու պետք է բավարար-
վես եղածով: Էլ ետ չեն գա նրանք, չեն ժպտա, չեն գրկի: Նրանք
լո՛ւտ քնած են և ազատված այս բուք աշխարհի աղտից:

Մահը սարսափելի չէ. սարսափելիին երևի կլինի այն, որ էլ եր-
բեք չենք տեսնի նրանց, ԵՐԵՎԻ...

Ճանապարհը սառած էր, ու մեքենան դժվարությամբ էր կա-
ռավարվում: Կարծես մի բան այն չէր, և մեքենան տատանվում էր
այս ու այն կողմ: Մենք երթևեկելի գոտուց դուրս թռանք: Վերջին
բանը, որ լսել եմ, մորս ձայնն էր. անունս բղավեց, ինձ առավ իր
ձեռքերի մեջ, ու էլ ոչինչ չեմ հիշում:

Աչքերս բացեցի: Պառկած էի հիվանդասենյակներից մեկում,
սառը պատերի ներսում մի մահճակալ կար, անկյունում՝ մի հայե-
լի: Մոտեցա դրան ու տեսա, որ դեմքիս մի քանի քերծվածք կար:
Ես ինձ լավ էի զգում:

«Տեսնես որտե՞ղ են հայրիկն ու մայրիկը»,– մտածեցի ես ու
դուրս եկա հիվանդասենյակից: Մի բուժքրոջ մոտեցա և հարցրի
նրանց մասին: Նա անտարբեր անցավ՝ խուսափելով որևէ բան
ասել: Դա ինձ ընդհանրապես դուր չեկավ: Ես մի ուրիշ բժշիկի մո-
տեցա. մի երիտասարդ տղամարդ էր: Նրանից փորձեցի տեղեկա-
նալ ծնողներիս մասին: Նա ժպտաց ինձ ու ասաց, որ ամեն ինչ
լավ է, բայց դեռ չեմ կարող տեսնել նրանց: Անհանգստացա,
որովհետև նրա խոսքերը կեղծ թվացին ինձ, նաև թե՛ ձայնի տոնը,
թե՛ դեմքի արտահայտությունը: Նա ինձ առաջարկեց գնալ և մի
փոքր հանգստանալ, բայց ես մերժեցի ու էլի սկսեցի հարցուփորձ
անել: Ոչինչ չստացվեց իմանալ ծնողներիս առողջական վիճակի
մասին, թե ինչպես են նրանք իրականում: Շատ էի անհանգստա-
նում: Մի քանի ժամ անընդմեջ հիվանդանոցում շրջելով՝ միննույն
է, ոչինչ չիմացա: Դա և՛ բարկացնում էր ինձ, և՛ անհանգստաց-
նում: Գնացի իմ հիվանդասենյակ և չզգացի, թե ինչպես քնեցի
այդ սառը սենյակում:

Գեկորենքերի 24

Կայծակի ձայնից արթնացա: Ուժեղ անձրև էր գալիս: Ես վախենում եմ բարձր ձայներից, մանավանդ ուժեղ քամու ու անձրևի ձայներից, որ թվում է՝ ուր որ է պիտի շենքերը բշի, տանի:

Դուռը թակեցին: Երեկվա երիտասարդ բժիշկն էր:

–Կարելի՞ է, – հարցրեց նա:

–Իհարկե, – ասացի ես:

Ինձ բարի լույս մաղթեց, չնայած որ տրամադրություն չուներ:

Նստեց աթոռին: Լուռ նայում էր ինձ:

–Ի՞նչ է պատահել:

–Չեմ ցանկանում երկար-բարակ մտքեր շարադրել, բայց ներիր ինձ՝ երեկվա իմ խաբելու համար. ոչինչ էլ լավ չէր, ու վաղ թե ուշ դու պետք է իմանաս: Ծնողներդ այն օրը մահացել են ավտովթարից, կներես..., ցավում եմ, անուշիկս:

Ես ուղղակի սառել էի ամբողջությամբ, ամբողջ մարմնիս քարացել էր, ու թվում էր, թե սիրտս էլ էր կանգ առել:

Ես չկայի՝ ո՛չ ֆիզիկապես, ո՛չ էլ հոգեպես: Թվում էր՝ հոգիս մարմնիցս անջատվում է, ու ես հենց այդպես էի զգում:

Բարձր բղավում էի: Դա իմ ամենավատ, ամենասարսափելի, ամենատեղի լուսաբացն էր: Ամենավատն օրն էր իմ կյանքի: Այդ օրվա եղանակը ես էի:

Ինձ կառավարել չէր ստացվում: Դուք հասկանո՞ւմ եք՝ ես մի վայրկյանում կորցրի իմ երջանկությունը, որն իմ ընտանիքն էր. ես կորցրի ինքս ինձ: Կարծես ինձ չսիրող որևէ մեկը սիրտս վերցրել էր ձեռքերի մեջ ու սեղմում էր, ինչքան ուժ ուներ, որ ցավի ու քիչ-քիչ մեռնի այն: Հոգիս քամվում էր ու դադարում էր զգալ որևէ բան:

Ես կորցրի ժպիտս, կորցրի աչքերիս փայլը: Ամեն բան ներկվեց սև ու սպիտակով: Ես ունեցածս ու չունեցածս կորցրի...

Ես չկայի: Իմ մի մասնիկը գնաց նրանց հետ:

Գեկորեմբերի 25

Ես անգիտակցաբար ինձ անկառավարելի էի պահում, և դա սարսափելի էր: Ինչ-որ բան ներարկեցին ինձ, որ քնեցնեն:

* * *

Գեկորեմբերի 26

Ես գրեթե մեկ օր քնած եմ եղել: Չեմ զգացել ոչինչ: Հավանաբար շատ ուժեղ քնաբեր էին ներարկել:

Ժամեր անց նորից նույն սկսվեց մոտս. բժիշկները եկան, բայց այս անգամ ինձ ձեռքերիցս բռնած մի կերպ տեղափոխեցին ինչ-որ տեղ:

Բժիշկը, որին ես երբեք չեմ մոռնա, ամեն ինչ անում էր, որ այդ վայրենի մարդիկ մի փոքր նրբանկատ վարվեին ինձ հետ:

Ինձ տեղափոխեցին մեկ այլ հաստատություն, որն էլի նման էր հիվանդանոցի:

Ես բղավում էի ու տալիս էի ծնողներիս անունը, բայց մի կին, որին ես օձի էի նմանեցնում, իր անտարբեր, սառն ու խիստ դեմքով առաջացավ կողքիս կանգնած բժիշկներին և ասաց, որ առաջին հիվանդասենյակ տեղափոխեն ինձ: Հետո նա եկավ ներս, ձեռքին ներարկիչ կար: Որքան էի հոգնել այդ զգվելի դեղերից, որ ներարկում էին ինձ: Կարծում էին՝ օգուտ են տալիս ինձ. երևի նրանք չեն սիրում մարդկանց, և գուրկ են մարդկային զգայարաններից. սարսափելի էր:

Գեկորեմբերի 27

Առավոտյան շուտ էի արթնացել, և մի քանի հիվանդներ ևս արթուն էին: Նրանք, իրոք, ունեին հոգեկան խնդիրներ, իսկ իմ խնդիրը այլ էր՝ չլուծվող:

Փորձում էի ինձ կառավարել ու հանգիստ պահել, որ հանկարծ որևէ դեղանյութ չանցնի մարմնիս մեջ, և որ չտեսնեմ այդ կնոջ դեմքը:

Մտածում էի, որ այդ հիվանդների հետ ես, իրոք, կգժվեմ:

Այդ կինը, իհարկե, եկավ:

– Ինչպե՞ս ես:

– Դա քեզ այոքան էլ չի հետաքրքրում, զգվելի՛ օձ: Գնա՛:

«Զգվելի օձ» անվանելու համար սպտակ ստացա դեմքիս:

Դե, սովորության համաձայն, ասացի այն, ինչ մտածում էի ու էլի շարունակելու եմ այդպես անել, քանի դեռ ինձ համարում էին հոգեկան խնդիրներ ունեցող մարդ:

– Բեզ մոտ մի տղա է եկել,– կոպիտ տոնով ասաց նա:

– Ո՞վ է, կարո՞ղ եմ տեսնել:

Նա ձեռքիցս բռնեց ու տարավ այնտեղ:

Դե, իհարկե, ես սպասում էի նրան: Նա իմ ընկերն էր՝ իմ սիրած տղան՝ միակ հարազատս, որ մնացել էր կողքիս: Նա կատարյալ է ինձ համար: Նրա աչքերը շագանակագույն են: Ինձանից երկու տարի մեծ է: Դավիթը միշտ հոգ է տանում իմ մասին, իսկ ինձ դա դուր է գալիս:

Նա Իսրայելից է, իսկ ես՝ Գերմանիայից, բայց դա ոչինչ չի նշանակում մեզ համար, կրոնը՝ ևս: Մենք երբեք չենք խոսել մեր կրոններից, ազգությունից և դավանանքից: Մենք սիրում ենք իրար:

Դավիթը պատմել է, որ 1940 թվականին՝ պատերազմի ժամանակ, համակենտրոնացման ճամբարից, արսորից կամ մեռնելուց մի կերպ փրկվելու համար փոխել են իրենց ընտանիքի հրեական անուններն ու ազգանունը, բայց դրանք կեղծ տվյալներ են, չգիտեմ՝ դա որքան վտանգավոր է այժմ:

Հիմա ամեն ինչ անում են՝ այն օրինականացնելու համար:

Նրա անունը հիմա այլ է. նա Միքայել Ֆրանկն է, գերմանացի Միքայել Ֆրանկը:

Մենք նույն քաղաքում էինք ապրում և ծանոթացել ենք դեռ վաղուց: Երկուսիս ծնողներն էլ դեմ էին մեր շփմանը, բայց շարունակում էինք շփվել:

Մենք երկար գրուցեցինք, վերջում ամուր գրկեցինք իրար ու եկավ հրաժեշտ տալու պահը, որ պետք է նա գնար առանց ինձ, բայց խոստացավ անել ամեն ինչ, որ ինձ դուրս բերի հոգեբուժարանից: Ես հավատում էի նրան:

Գեղարևբերի 28

Քայլում էինք լեռնային ինչ-որ գեղեցիկ վայրում, մայրս ինձ էր նայում հեռվից: Չդիմացա, վազեցի ու գրկեցի նրան: Այնքան էի կարոտել նրան, այնքա՛ն: Մենք էլի միասին էինք, և թվում էր՝ էլ չենք բաժանվի: Երբ գլուխս դրել էի նրա ծնկներին ու շոյում էր վարսերս, ինձ ասաց.

–Կյանքում ինչ դժվարության էլ հանդիպես, պայքարի՛ր, որ հասնես նպատակներիդ միայն արժանապատվորեն:

Բայց, ափսո՛ս, այն երազ էր և կիսատ մնաց, որովհետև արդեն ժամն էր հիվանդներին արթնացնելու:

Ատում էի ամբողջ աշխարհը, և մանավանդ այդ հաստատությունը:

Առավոտյան ու կեսօրին տանում էին ճաշարան, որը մնան չէր ճաշարանի, այլ խոզանոց էր. ուտելիքները ևս խոզի կերի էին մնան: Ես չէի ուտում դրանք, բայց շատ սոված էի: Մարդիկ մեղավո՞ր էին, որ հիվանդ են, և պետք է առիթից օգտվելով՝ նրանց խոզի կե՞ր տային: Ես ուզում էի այդ գարշելի զիբիլը լցնել պատրաստողի և տնօրենի բերանը, որ զգային այդ հիվանդներն էլ են մարդ:

Այդտեղ մարդուն օգնելու ու կարեկցելու փոխարեն միայն ավելի էին խորացնում նրանց խնդիրները: Ներարկում էին դեղեր, որոնք բթացնում էին նրանց: Վայրկյան առաջ ուզում էի փախչել այդտեղից, ա՛խր ես առողջ էի, իմ ցավը իմ սրտում էր և չի բուժվի երբեք, չի բթացնի ոչ մի դեղորայք, և ուղեղիցս դուրս չի գա մորս ձայնը, որ լսեցի վերջին անգամ, անուսն տվեց ու հասցրեց գրկել:

Դեկտեմբերի 29

Հիվանդների տարօրինակ ձայները խլացնում էին ուղեղս: Անուր փակել էի ականջներս ու սեղմել էի աչքերս: Ոչինչ անել չէի կարող: Միայն մնում էր սպասել, թե երբ կկտրեն ձայները: Տիտոս ու նյարդայնացնող մթնոլորտ էր:

Մեկ ժամ անց հանդարտվեցին, իսկ գլխացավս սրացավ:

Չայն էի տալիս, որ դեղ տան ինձ, ես իմ կամքով դեղ էի խնդրում: Երկար բղավելուց հետո ոչ մի արձագանք չեղավ. ոչ որ չկար:

Դուրս եկա սենյակից ու գնացի մուտքի մոտ. այդ հիմարները մոռացել էին փակել դուռը:

Հիանալի հնարավորություն էր փախչելու. միայն մնում էր աննկատ դուրս գալ գլխավոր մուտքից:

Իջա առաջին հարկ, բայց ինձ նկատեցին, միակ պատճառաբանումը, որ եկավ մտքիս դա դեղն էր: Ասացի, որ իջել էի՝ գլխացավի դեղ վերցնելու:

Ինձ դեղ տալու փոխարեն որոշեցին քնաբեր ներարկել, և դա ինձ ընդհանրապես դուր չեկավ: Հետո, երբ արթնացա տեղեկացա, որ նա եկել էր և երբ իմացել էր, որ քնած եմ, գնացել էր: Ինձ քաղցրավենիք էր բերել, և պետք է ուրախ լինեմ, որ աշխատողները իրենցով չեն արել դա և փոխանցել են ինձ: Նա փրկեց ինձ սովից: Քանի օր էր՝ ոչինչ չէի կերել:

Դեկտեմբերի 30, 1948 թ.

Առավոտս սկսեցի լավ լուրով: Միքայելն էր եկել և սպասում էր ինձ: Արագ ինձ կարգի բերեցի ու գնացի նրա մոտ:

Այնքան ջերմ էինք գրկել իրար, այնքան կարոտած: Նայում էի նրա շագանակագույն աչքերին և մի ողջ տիեզերք էի տեսնում, վախենում էի խորասուզվել այդ մութ տարածության մեջ, որտեղ երևի այնքան գաղտնիքներ կային:

Այդ մութ ժամանակվա միակ լուսավոր կողմը նրա ներկայու-
թյունն էր:

–Մրանք քեզ հաստատ պետք կզան այստեղ,– ասաց նա ու
ձեռքս տվեց մի տոպրակ:

Ինձ էլի քաղցրավենիք էր բերել, տաք սնունդ և մի քանի հա-
գուստ:

Բժիշկների հետ խոսել էր, որ Ամանորին պետք է դուրս գամ,
որ միասին նշենք:

Հուրախություն երկուսիս՝ տնօրենը համաձայնել էր:

Անհամբեր սպասում էի հաջորդ օրվան:

Գեկտեմբերի 31, 1948-1949 թթ.

Նա արդեն հիվանդանոցում էր: Չեռքին տոպրակ կար:

–Վերցրո՛ւ, հագի՛ր. քեզ համար եմ գնել:

Այնքա՛ն գեղեցիկ էր. կապույտ երկար փեշերով զգեստ էր:
Տաք վերարկու էլ էր բերել:

Օր օրի ավելի էի համոզվում, որ ինձ շատ է սիրում, և կար-
ծում էի, որ երբեք չեմ փոշմանի այդ համոզմունքիս մեջ:

Սկզբում խնդրեցի մեքենան կանգնեցնի ծաղիկների խանու-
թի մոտ: Ցանկանում էի այցելել ծնողներիս գերեզմանին: Նույ-
նիսկ նրանց վերջին հրաժեշտ չտվեցի...:

Հավանաբար թաղման ծախսերը հոգացել էր հորեղբայրս,
որի հետ առանձնապես շփում չունեիք, և նույնիսկ չի էլ այցելել
ինձ:

Գերեզմանը գտանք:

Ամբողջը գրեթե ծածկված էր ճերմակ ձյունով, որը կարծես
խաղաղություն էր բերում ծնողներիս գերեզմանին:

Ինձ չկարողացա զսպել և լաց էի լինում փոքրիկ երեխայի
նման: Գրկել էր ինձ ու բաց չէր թողնում, խնդրում էր, որ չլացեմ,
ասում էր՝ ամեն ինչ լավ կլինի:

–Վեր կաց, – ասաց Միքայելն ու գրկեց ինձ,– քեզ տանջելով՝
հետ չես բերի նրանց: Նրանք միայն երջանիկ կլինեն այն ժամա-
նակ, երբ քեզ երջանիկ ու ժպտուն աչքերով կտեսնեն:

Հնարավոր է միաժամանակ լինել և՛ երջանիկ, և՛ տխուր:

Իմ կյանքն այդպիսինն է: Ես երջանիկ եմ, որ կողքիս ունեմ Միքայելին, և դժբախտ եմ, որ այսքան շուտ կորցրի ինձ համար ամենաթանկ մարդկանց:

Գիտեր, որ շնուշկով սահել չեմ սիրում, բայց համոզեց, որ գնանք ու մի քիչ ուրախանանք: Անսահման սիրում էի նրան, ո՞նց մերժեի մի մարդու, որն ուզում էր ինձ միշտ երջանիկ տեսնել:

Իրոք, որ ամեն ինչ ուրախ անցավ: Սահադաշտում վաղուց չէի եղել, իսկ նրա հետ գտնվել մի վայրում կատարյալ երջանկությամբ էր ինձ համար:

Մի փոքր զբոսնեցինք: Արդեն մթնում էր, և մթությունը ավելի էր գեղեցկացնում ձմեռը՝ իր բոլոր կողմերով: Մնացել էր մոտ երեք ժամ, որ ազդարարվեք նոր տարվա գալուստը:

Առաջարկեցի գնալ գլխավոր եղևնու մոտ և այդտեղ նշել Նոր տարին: Եվ երբ մի քանի վայրկյան էր մնացել Նոր տարվան, և սովորության համաձայն՝ ես երազանք պահեցի:

Ամուր բռնել էինք իրար ձեռք ու երազանք էինք պահում և երեխայի նման հավատում էինք, որ այն կիրականանա, բոլորս էլ երբեմն երեխա ենք՝ մեր կամակորություններով, քմահաճույքներով, խենթություններով ու ժպիտով: Գալիս է մի պահ, որ ստիպում է քեզ մեծ զգաս, բայց չես ուզում: Առաջ մայրիկն էր ճաշ պատրաստում ու կանչում նախաճաշի, իսկ այժմ ես եմ պատրաստում այն, ու չկան հիմա սեղանի շուրջ նրանք: Առաջ մայրիկն էր աշխատանքի գնալուց առաջ ասում, որ տաք հագնվեմ, անպայման գլխարկ հագնեմ ու շարՖ կապեմ, առաջ հայրիկն իր խիստ ու բարի հայացքով նայում էր ինձ, ժպտում էր, երբ տուն էի մտնում, բայց հիմա տունը դատարկ է: Նրանցից մնացել են լուսանկարներ, որ կարոտդ միայն կարող ես առնել դրանցով, բայց նկարով ո՞նց գրկես մարդուն, ո՞նց ասես, որ սիրում ես ու սպասես պատասխանի...

Նախկինում, երբ ընտանիքով հեռուստացույց էինք նայում կամ քննարկում էինք մեր վերջին կարդացած գրքերը, թվում էր՝ սովորական բան է, և այդպես էլ պետք է լինի, բայց գալիս է մի պահ, որ երագում ես՝ այդ պահը թեկուզ մեկ րոպեով հետ գա, բայց, ավա՜ղ..., մահվան դեմ բոլորս էլ անգոր ենք:

Առաջ շատ բան այլ էր, հիմա՝ ուրիշ:

Հունվարի 1, 1949 թ.

Այդ օրը երբեք չեմ մոռանա: Թվում էր՝ ֆիլմում եմ կամ հեքիաթում. ես ինձ երջանիկ էի զգում, իսկ հաջորդ օրը էլի այդ հիմար հիվանդանոցում էի:

Նա խոստացավ հնարավորինս շուտ դուրս բերել ինձ այդտեղից:

Օրերը ծանր էին անցնում:

Զգիտեմ՝ ինչ կատարվեց, բայց մոտս էլի նույն սկսվեց, և էլի ձեռքս վրա մի ծակոց գգացի. էլի նրանց հիմար դեղերն էին:

Հունվար 1949 թ.

Չեմ հիշում՝ ամսի քանիսն էր, և ամսի մեկից այն կողմ ինչ է կատարվել, միայն գիտեմ, որ ինձ ամեն օր դեղեր էին ներարկում, և սկսում էր հիշողությունս քիչ-քիչ ջնջվել:

Միայն նրան էի հիշում. նա հաճախ էր ինձ մոտ գալիս:

Փետրվարի 23, 1949 թ., Պերմանիս

Ես գրեթե ոչինչ չէի հիշում, ոչինչ: Ինձ մոտ ամենեզիս էր:

Ցանկացած հիշողություն աղոտ էր ինձ համար: Ես նման էի մի բույսի, որը հազիվ էր շարժվում, ես ուղղակի շնչում էի: Աչքերիս տակը ամբողջությամբ սևացած էր, ու հիվանդոտ տեսք ունեի:

Ճիշտ է, օրս լավ չսկսեցի, բայց օրվա երկրորդ կեսը կատարյալ հաճելի և ուրախալի էր:

Այն բժիշկը, որին չէի հավանել հենց սկզբից, եկավ իմ սենյակ:

Գնացի ուրիշ կողմ և ասացի, որ չմոտենա ինձ: Քնժիծադ տվեց ու ասաց.

–Հավաքվիր. այսօր կգան քո հետևից. դու տուն ես գնում:

Չհավտացի մի պահ և բարկացա:

–Կատա՞կ ես անում,– կոպիտ տոնով ասացի ես:

–Ո՛չ, կներես և ինձ իմ չափազանց կոպտության համար: Ես սկզբում չգիտեի քո պատմությունը:

–Իհարկե, այդպես է միշտ. չիմանալով դիմացինի պատմությունը՝ միշտ մեղադրում ենք իրեն և համարում մեզ անսխալական:

Մի մի քանի ժամ սպասեցի, սակայն նա չեկավ: Ես չէի հիշում իմ տան հասցեն, քաղաքը, մարդկանց:

Խնդրեցի հոգեբույժին տալ ինձ իմ տան հասցեն, որպեսզի տաքսիով գնամ:

Նստեցի տաքսի ու շարժվեցիմք: Հասանք մի փոքրիկ քաղաք, որտեղ այդքան էլ շատ չէին մարդիկ, բայց այն հրաշք էր ինձ համար:

3

Այս ամենը, իրոք, պետք էր ինձ, բայց, ցավոք, նրանցից ոչ ոքի չէի հիշում:

Մի աղջիկ մոտեցավ. շագանակագույն վարսեր ուներ, աչքերն էլ նույն այդ գույնի էին, տարբերվում էր բոլորից, չգիտեմ՝ ինչով, բայց տարբեր էր:

Խնդրեցի նրան, որ հիշեցնի անունները ու որոշ մանրամասներ:

Փաստորեն՝ մենք մտերիմներ ենք եղել, բայց մի վեճից հետո դադարեցրել ենք մեր շփումը: Ասաց, որ անունը Վիկտորյա է:

Սա լավ առիթ էր՝ կրկին վերականգնելու և նորից ամեն բան սկսելու համար:

Բավականին ուրախացանք, ու արդեն մթնում էր:

Նա ինձ տարավ տուն:

Ճանապարհին նայում էի շինություններին, վառվող լույսերին, բայց ամեն ինչ անծանոթ էր թվում:

Փաստորեն՝ մեր տունն այնքան էլ հեռու չէր նրանց տանից:

Մովորության համաձայն՝ դուռը թակեցի, բայց պատասխան չկար. ես մի պահ ամբողջությամբ մոռացել էի, որ այս մեծ աշխարհում իմ փոքրիկ տունը դատարկ է:

Ես նայեցի նրան: Ժպտում էր:

–Վերցրո՛ւ, Անգելա՛, ձեր տան բանալին է:

Ես բացեցի դուռը, ու ներս մտանք: Տունը շատ դատարկ էր: Ոչ մի կահույք չի կարող լցնել տունը, որքան հարազատների ներկայությունը:

Նայեցի այն բազմոցին, որտեղ միշտ հայրիկն էր նստում: Հիշեցի հայրիկիս ժպիտը, որ ամեն անգամ հայտնվում էր, երբ տեսնում էր ինձ տուն մտնելիս: Հիշեցի մայրիկիս անուշ ձայնը, երբ ասում էր. «Արի՛ խոհանոց. քո սիրած ուտելիքն եմ պատրաստել»:

Երանի՛ կարողանայինք հետ բերել որոշ իրադարձություններ, գրկել մարդկանց, որոնք հիմա մեր կողքին չեն:

–Որտեղի՞ց քեզ մեր տան բանալին,– հարցրի Միքայելին:

–Դրանք ինձ էին տվել որպես միակ հարազատի: Մորաքրոջիցդ լուր չունե՞ս:

–Պարզ է, ո՛չ: Թեյ կխմե՞ս:

–Չեմ հրաժարվի, այն էլ քո պատրաստած թեյից:

Մենք սիրում էինք միասին թեյել, և մի բաժակ թեյի շուրջ քննարկել տարբեր թեմաներ: Երբեմն խոսում էինք մեր սիրելի գրքերից, երբեմն փիլիսոփայում էինք ու խոսում բոլոր թեմաներից, բայց մի թեմա կար, որից երբեք չէինք խոսում: Մենք երբեք

չենք խոսել պատերազմի մասին, դա ակնհայտ ցավոտ թեմա էր մեզ համար:

Թեյեցիմք և էլի խոսեցիմք մեր սիրելի թեմաների շուրջ, որոշ բաներ ինձ հիշեցրեց: Աղոտ հիշողություններս քիչ-քիչ վերականգնվում էին:

Նրան ճանապարհելուց հետո գնացի՝ լոգանք ընդունելու:

Կարոտել էի իմ փափուկ, ճերմակ ու մաքուր անկողինը: Վերջապես ես տանն էի:

Փեպրվարի 24

Առավոտյան արթնացա և շատ սոված էի: Գնացի խոհանոց՝ ինչ-որ բան պատրաստելու, բայց ոչինչ չկար տանը: Ծնողներիս սենյակից գումար գտա: Որոշեցի գնալ մոտակա խանութ՝ մի քանի բան գնելու համար:

Կարտոֆիլ, քաղցրավենիք, բրինձ և մակարոն գնեցի:

Շատ բան եփել չգիտեմ. դրա համար հեշտ պատրաստվող բաներ գնեցի:

Տան մոտ հասա ու նկատեցի, որ փոստի մեջ նամակ կա: Վերցրի այն և ներս մտա:

Երբ նամակը բացեցի, զարմացել էի: Մորաքույրս էր գրել.

«Բարև, Անգելա՛, սիրունիկս, քեզ գրում է մորաքույրդ՝ Մարջըր:

Ցանկանում եմ տեղեկացնել, որ մի քանի օրից կլինենք քեզ մոտ՝ Բեռլինում: Սպասի՛ր մեզ»:

–Աստված իմ, նրանք գալիս են: Վերջապես՝ ս: Նրանց տարիների առաջ եմ տեսել և այնքան էլ լավ չեմ հիշում. փոքր եմ եղել:

Դռան ձայնը լսվեց:

–Ես շոկի մեջ էի և չնկատեցի՝ ինչպես անցավ այդ մի քանի օրը,– ծիծաղելով ասացի ես ու մոտեցա դռանը:

–Բարի օր, սիրելի՛ս:

Միքայելն էր:

Նրա ձեռքին տոպրակներ կային, ասաց, որ ինձ համար սնունդ է գնել:

Այնքան հաճելի է, երբ ուշադիր են քո հանդեպ, երբ դա ոչ մի շահ չի հետապնդում, ավելի հաճելի է, երբ ընդունում ես այդ ուշադրությունը:

–Անջե՛՛, ես պետք է գնամ՝ անճնագրիս հարցերը կարգավորելու, հուսով եմ՝ այսօր կրկին մոտդ կգամ: Եթե չկարողացա, վաղն առավոտյան անպայման կգամ: Լավ կսնվես և մի տաք բան գցի՛ր վրադ. թեթև ես հագնված,– ասաց Միքայելը, գրկեց ինձ ու համբուրեց ճակատս:

Այդ օրը տեղեկություն չունեցա նրանից:

Փեպրվարի 25

Արթնացա դռան թակոցից:

Ինձ արագ կարգի բերեցի ու գնացի՝ դուռը բացելու:

Միքայելն էր. ձեռքին ինչ-որ նամակ կար:

–Բարի լույս,– ժպտակով ասաց նա:

–Բարի լույս,– ասացի ես ու ներս հրավիրեցի նրան:

–Սա ի՞նչ նամակ է:

–Վերցրո՛ւ. քո փոստարկղի մեջ էր դրված:

Բացեցի նամակը ու տեսա, որ համալսարանից է:

Այնտեղ գրված էր, որ եթե ցանկանում եմ շարունակել ուսումս, փետրվարի 28-ին՝ երկուշաբթի օրը, ներկայանամ համալսարան:

Շատ նեղվեցի: Դե, իհարկե, ուզում էի շարունակել ուսումս, բայց չէի կարող վճարել վարձը: Միքայելը ասաց, որ ինքը կվճարի, և որ ես պետք է անպայման սովորեմ մինչև վերջ, բայց ես մերժեցի և ներողություն խնդրեցի նրանից:

–Արի մի փոքր զբոսնենք,– առաջարկեց նա:

Այս առաջարկը չներժեցի, և, իրոք, ինձ պետք էր զբոսանքը:

Քայլում էինք մեր սիրելի Բեռլինի փողոցներով և խոսում էինք մեր ապագա պլանների մասին, որոնք այնքան գեղեցիկ էին հնչում, մնում էր միայն կատարելինք:

Ասաց, որ նոր աշխատանք է գտել, և շատ եկամտաբեր է: Խնդրեցի, որ ինձ էլ որևէ տեղ աշխատանքի տեղավորի: Ասաց, որ չի խոստանում, և եթե ինչ-որ բանի կարիք ունենամ, միայն իրեն դիմեմ:

Մի քանի ժամ զբոսնելուց հետո խնդրեցի, որ ճանապարհի ինձ տուն:

* * *

Պառկել էի մահճակալիս ու ձեռքս էի վերցրել Ադանե և Ալբերտ Հոֆմանների լուսանկարը: Ի դեպ, մայրս ծագումով հայ է, Արևմտյան Հայաստանից: Նրա ընտանիքը 1915 թվականի գաղթի ժամանակ տեղափոխվել է Գերմանիա, երբ նա դեռ ութ տարեկան էր: Նրանք Մուշից են, և երբ Օսմանյան կայսրության գլխավոր կազմակերպիչները հրաման են տվել սպանել ողջ հայությանը, նրանք կարողացել են փրկվել և զոհ չդառնալ օսմանին: Այդ արձագանքների ցանկությունը մեկն էր՝ թողնել մեկ հայ և այն էլ՝ թանգարանում, ու ստեղծել Մեծ Թուրանը: Տատիկս պատմել է, որ նրանք սպանում էին նույնիսկ հողի կնոջ՝ գրագ գալով՝ պտուղը տղա է, թե աղջիկ, նրանք սպանում էին մտավորականներին, տվորական գյուղացուն իր իսկ ձեռքի մանգաղով: Նրանց մարմնում հոգի չկա:

1926 թվականին մայրս ամուսնանում է գերմանացի երկրաբան Ալբերտ Հոֆմանի՝ հայրիկի հետ, իսկ 1927 թվականին լույս աշխարհ են գալիս ես: Ինձ շատ է պատմել հայերի մասին, ու ես ինձ համարում եմ գերմանահայ: Ինձ շատ անգամներ է պատմել, թե ինչքան դժվարությունների է դիմացել հայ ազգը: Ես վստահ

եմ, որ մի օր ես կգնամ Հայաստան. ես ուզում եմ տեսնել իմ հայրենիքը:

4

Փեպրվարի 26

Սովորաբար վաղ եմ արթնանում, բայց այսօր ստացվեց այն-պես, որ ուշ արթնացա: Ժամը երկուսի-երեքի կողմերը դուռը թակեցին. կարծեցի Միքայելն է:

Բացեցի դուռը, և անակնկալ. մորաքույրս էր իր ընտանիքով:

–Միրելի՛ս, ողջույն:

Նրա ամուսինը նույնպես ազգությամբ հայ է:

Միքով ընդունեցի նրանց և սուրճ հյուրասիրեցի. նկատել եմ, որ հայերը ավելի շատ գերադասում են սուրճ, քան թեյ:

Նրանք ընտանիքով շատ ուրախ մարդիկ են, իսկ այդպիսի մարդկանց հետ ավելի հեշտ եմ լեզու գտնում, քանի որ միշտ էլ հեշտ է շփվող մարդկանց հետ:

–Կներես՝ չկարողացանք ծնողներիդ թաղմանը ներկա գտնվել. մեր գումարը չէր բավականացնում՝ տոմսեր գնելու համար: Վաղը կայցելենք նրանց գերեզմանին,– ասաց Հարութը՝ մորաքրոջս ամուսինը, իր լուրջ դեմքով:

–Անջե՛լ, ես շատ սոված եմ. ի՞նչ կա ուտելու,– ասաց մորաքրոջս մեծ աղջիկը, որը տասնվեց տարեկան է:

–Շուշիկ, կարտոֆիլ ու սալաթ ունեմ պատրաստած. հիմա սեղան կզգես: Հաստատ բոլորդ էլ սոված եք. երկար ճանապարհ եք անցել:

–Օգնե՞մ քեզ,– ասաց Մարջի փոքր աղջիկը. նա տասը տարեկան է:

–Դեմ չեմ. արի՛,– պատասխանեցի ես:

Մենք միասին սեղան զցեցինք, և ընթացքում հասցրի խոսել Հարութի, Մարջի հետ: Շուշիկը գրապահարանից վերցրեց մի գիրք և նստեց բազմոցին:

Այդքան մեծ գրապահարանից ընտրեց ինչ-որ հայերեն գիրք, որը, ինչքան հիշում եմ գրքի կազմից, մայրիկիս սիրելի գիրքն էր:

Ես չգիտեի հայերեն և չէի կարող կարդալ դա, բայց Շուշիկն ու Մարիամը գիտեն հայերեն գրել ու կարդալ. նախանձում եմ նրանց: Չգիտեմ՝ կարդում էր, թե ուղղակի թերթում էջերը, ինչևէ:

Ճաշից հետո նրանց ծանոթացրի իրենց սենյակներին: Տեղեկացա, որ Գերմանիայում մնալու են մեկ շաբաթից ավել: Խնդրեցի, որ ավելի երկար մնան այստեղ, սակայն նրանք երկուսն էլ աշխատում էին և չէին կարող երկար մնալ: Մարջը մասնագիտությամբ քիմիկոս է, իսկ Հարութը չգիտեմ, թե որտեղ է աշխատում, բայց գիտեմ, որ ինժեներ է:

Միքայելը եկավ՝ ձեռքին կարմիր վարդեր: Ծանոթացրի մորաքրոջս ընտանիքի հետ, ու կարծես արժանացավ նրանց հավանությանը:

–Շատ համակրելի երիտասարդ է, Անջել,– ակաջիս փսփսաց մորաքույրս:

–Դու ամուսնացած ես,– կամաց ծիծաղելով՝ ասացի ես:

Միքայելն ու Հարութը խոսում էին իրար հետ, իսկ Շուշիկի ձեռքին այն նույն գիրքն էր, որ վերցրել էր:

–Շուշիկ, ո՞ր գիրքն էս կարդում:

– «Երկիր Նաիրի»: Ծանոթ է,– հայերենով ասաց նա:

–Չգիտեմ, բայց մայրս միշտ կարդում էր դա:

–Կցանկանա՞ս դու էլ հայերեն սովորել:

–Իհարկե,– զարմացած նրա այդ հարցադրումից պատասխանեցի ես:

–Ուրեմն կսովորեցնեմ:

Ես ուրախ էի, որ նա ցանկություն ուներ ինձ հայերեն սովորեցնելու. ավելի լավ առիթ էր իրար ճանաչելու, լավ առիթ էր սովորել ևս մեկ լեզու:

Ժամը ինն էր, Միքայելն ասաց, որ արդեն պետք է գնա:

–Հարութի հետ պայմանավորվեցինք, որ վաղը տասներկուսին կգամ ձեր հետևից: Բարի գիշեր,– ասաց Միքայելը, համբուրեց ճակատս ու գնաց:

5

Փեպրվարի 27

Կողքիս Շուշիկն էր քնած: Ես նրանից շուտ էի արթնացել:

Կարգի բերեցի տունը, հետո նախաճաշ պատրաստեցի: Մինչև լոգանք կընդունեի, բոլորը արդեն արթնացել էին:

Իրար բարի լույս մաղթեցինք և նստեցինք նախաճաշի:

–Գինի կխմե՞ք,– առաջարկեցի ես:

–Միբով: Ի դեպ, քեզ գինի ենք բերել Ֆրանսիայից,– ասաց մորաքույրս:

–Շնորհակալ եմ, հիմա կբերեմ այն:

Երբ ես գնացի՝ գինին բերելու սառնարանից, նրանք սկսեցին հայերեն խոսել, ինձ մի պահ վատ էի զգում, չլիմացա և արտահայտվեցի.

–Կարծում եմ՝ ճիշտ չէ դա. եթե չեք ուզում, որ ես ձեզ հասկանամ, կարող եք հետո խոսել, երբ ես այստեղ չեմ լինի:

–Անջե՛լ, հանգստացի՛ր, մենք միշտ ենք հայերեն խոսում, ամուսինս չի սիրում, երբ ֆրանսերեն կամ գերմաներեն են խոսում, մանավանդ հացի սեղանի շուրջ:

–Պարզ է,– պատասխանից բավարարված ասացի ես:

Երբ վերջացրինք, Շուշիկն ու Մարիամը օգնեցին ինձ սեղանը հավաքել: Հետո Շուշիկն ինձ ասաց, որ այսօրվանից կսկսենք պարապել հայերեն:

Լավեց դռան զանգը: Միքայելն էր: Եկել էր, որ գնայինք այցելության ծնողներիս գերեզմանին:

Ճանապարհին կանգ առանք ծաղիկների խանութի մոտ:

Վերջին անգամ Ամանորին էի այցելել ծնողներիս գերեզմանին:

Մի պահ նկատեցի, որ մորաքրոջս աչքերը թաց են, ու մտովին սլացել էր վաղ անցյալ, որտեղ երևի ուրախ ու անհոգ էր ամեն բան:

Երբ վերադարձանք տուն, Միքայելը ինձ կանչեց խոհանոց և հարցրեց.

–Ի՞նչ ես մտածում. դու վաղը պետք է գնաս համալսարան:

–Միքայել՛, չե՛մ կարող, թող մնա հետո:

–Հետո կարող է ուշ լինել, ես և դու վաղը դուրս կգանք: Կգամ քո հետևից:

Իմ սրտով չէր, բայց գրեթե միշտ համաձայնում եմ Միքայելի հետ:

Միքայելն ու Հարութը ընկերներ են դարձել արդեն:

Շուշիկն ինձ կանչեց.

–Անջե՛լ, արի՛, ես թուղթ ու գրիչ եմ վերցրել, որ սովորենք:

–Եկա՛, եկա՛:

Ասեմ, որ հաճելի է Շուշիկի հետ ինչ-որ բան սովորելը: Նա սկսեց.

–Սա «Ա» տառն է, հայերենի այբուբենի առաջին տառը:

–Լավ,– հետաքրքրված ասացի ես:

–Իսկ դու գիտե՞ս, թե ով է ստեղծել հայերենի այբուբենը:

–Մայրս ասել է. ինչքան հիշում եմ՝ Մեսրոպ Մաշտոց էր նրա անունը:

–Ապրե՛ս, ճիշտ է:

Ես երկու ժամում ամբողջությամբ սովորեցի հայերենի այբուբենը: Այն շատ գեղեցիկ է հնչում, բայց բարդ է:

Մենք պարապում էինք հայոց լեզու, Մարջը կարդում էր Ռեմարկի «Երեք ընկերը», իսկ Հարութը Միքայելին պատմում էր Հայաստանից:

Մեկ օրվա մեջ ես սովորեցի քսանից ավել բառ և արտահայտություն: Երբ ես գնամ Հայաստան, ես ամբողջությամբ հայերեն կիմանամ, կարծում եմ: Ժամը տասնմեկն էր. Միքայելն արդեն

գնացել էր: Մարջը մոտեցավ ինձ՝ ձեռքին ֆրանսիական գինի, մեկնեց ինձ և ասաց, որ բացեմ լավագույն առիթի դեպքում:

Պալանավորեցի, որ կբացեմ, երբ մեկնեմ Հայաստան: Հայաստան գնալը արդեն նպատակ էր դարձել ինձ համար: Ես չգիտեմ՝ երբևէ կլինեմ այնտեղ, թե ոչ, սակայն ես սիրահարված եմ Հայաստանին:

Փեղրվարի 28

Չմռան վերջին օրը:

Միքայելն արդեն մեր տանն էր, սպասում էր ինձ, որ միասին գնայինք համալսարան:

–Անջե՛լ, կգա՞ս պարապենք,– հարցրեց Շուշիկը:

–Անուշիկս, հիմա պետք է գնամ համալսարան, մի փոքր գործեր կան, երբ վերադառնամ, կպարապենք:

Ես ու Միքայելը արդեն համալսարանում էինք: Մոտեցանք դեկանի աշխատասենյակին, և Միքայելը խնդրեց ինձ սպասել դրսում:

Տասնհինգ թույն անց նա դուրս եկավ դեկանի աշխատասենյակից և ասաց.

–Ահա և վերջ: Դու վաղվանից կգաս դասի: Ամեն հարց լուծված է:

–Ինչպե՞ս, Միքայել, հասկանո՞ւմ ես...– չհասցրի ավարտել խոսքս նա ասաց.

–Վերջ, վերջ, Անջե՛լ, կգաս ու կսովորես, իսկ ուսման վարձի մասին մի՛ մտածիր:

Ես ամբողջ ճանապարհին չխոսեցի նրա հետ, բայց, իրոք, շատ էի ուզում շարունակել ուսումս, սակայն չէի ցանկանում ներդրյուն տալ նրան:

Նա ինձ իջեցրեց մեր տան մոտ և գնաց:

–Անջե՛լ, ի՞նչ արեցիր, շարունակելո՞ւ ես:

–Այո՛, մորաքո՛ւյր:

–Արի՛, Անջե՛լ, արի՛, որ սովորենք,– ասաց Շուշիկը:

Ես ժամ-ժամի ավելի էի շատացնում գիտելիքներս հայոց լեզվից:

Մարտի 1

Ես առավոտյան գնացի դասի:

Ընկերներս ինձ ջերմ դիմավորեցին: Ես էլ նրանց էի կարոտել:

Նրանց պատմեցի, որ սովորում եմ հայերեն, բայց նրանք նույնիսկ քարտեզի վրա Հայաստանի տեղը չգիտեին, և դա բնական էր: Վերցրի քարտեզն ու ցույց տվեցի Հայաստանի տեղը, պատմեցի որոշ պատմություններ, և ի զարմանս ինձ՝ ցանկություն հայտնեցին սովորել հայերեն որոշ բաներ, ես սիրով համաձայնեցի ու ինացածս ասացի նրանց:

Տուն վերադարձա ժամը երեքին: Շուշիկը գիրք էր կարդում, Մարջը ապուր էր պատրաստում, Մարիամը քնած էր, իսկ Հարությունը տանը չէր:

–Ինչպե՞ս անցավ օրդ:

–Ուղղակի հրաշալի, մոռաքո՛ւյր:

–Հիանալի է, ապուրը հիմա պատրաստ կլինի:

–Ես թեյ եմ ուզում խմել:

–Հիմա կպատրաստեմ,– ասաց Մարջը:

–Ո՛չ, ո՛չ, ես ինքս: Շուշի՛կ, թեյ կխմե՞ս:

–Իհարկե, սիրով միանում եմ քեզ:

Հանկարծ ներս մտան Հարություն ու Միքայելը:

–Դուք միասի՞ն էիք,– հարցրի ես:

–Բարև, սիրելի՛ս, այո՛:

–Պարզ է:

–Անձնական տվյալներիս հետ խնդիրներ կան, հնարավոր է՝ շուտով երկրից բացակայեմ,– հոգոց հանելով ասաց նա:

–Եվ ո՞ւր պետք է գնաս:

–Գուցե Իտալիա, գուցե Իսրայել կամ Ֆրանսիա: Չգիտեմ:

–Ծաղրո՞ւմ ես,– քնծիծաղ տալով ասացի ես ու գնացի իմ սենյակ:

–Չգիտեմ՝ ինչ անեն: Մի կողմից ուզում եմ մնալ Անգելայի կողքին, մյուս կողմից էլ, եթե մնամ հիմա երկրում ու որևէ գործ չձեռնարկեմ, գուցե բանտ նստեցնեն կամ ավելի վատ,– լսեցի, որ Միքայելը ասաց Հարութին:

Իրոք, սարսափելի իրավիճակ է: Կարծում եմ, եթե գնա էլ, հետ չի կարողանա գալ, եթե մնա, միասին չենք լինի, և իրավիճակը ավելի կբարդանա: Եթե որոշի գնալ, կսպասեմ նրան, ինչքան պետք լինի, չէ՞ որ սիրում եմ:

–Միքայել, եթե որոշես գնալ, ապա ես դեմ չեմ լինի, միայն այն պայմանով, որ ինձ գրես, որ էլի կվերադառնաս, որովհետև ես քեզ սպասելու եմ:

Աչքերս հեղեղված էին արցունքներով: Մորաքույրս գրկել էր ինձ ու սրբում էր աչքերս արցունքներից:

–Ես դեռ չեմ գնում. մի՛ լացիր:

–Ասում ես՝ չլացե՞մ, դու հասկանում ես՝ մենք անցանք պատերազմի միջով, մահացան ծնողներս, ոչ մի հարազատ կողքիս չէր, ամեն պահի դու ես եղել կողքիս, իսկ հիմա որոշում ես գնալ: Այո՛, մենք պատերազմի մասին երբեք չենք խոսել, դա ծանր հետք էր թողել մեր սրտերում, բայց դա եղել է, ու ինչո՞ւ չասեմ, ինչո՞ւ, եթե հենց այդ պատերազմի պատճառով ես դու գնում, որովհետև կարող եմ քեզ բռնել կեղծ անձնագրիդ համար հենց այդ պատերազմի պատճառով: Միևնույն է, կսպասեմ...:

Բարկացած էի, հուզված ու նեղացած:

Մոտեցավ ու գրկեց ինձ, համբուրեց ճակատս ու գնաց առանց որևէ բան ասելու:

Հեռավորությունը էական չէ, եթե կա իրական սեր: Ժամանակդ սկսում է արագ անցնել, երբ գիտես, որ սպասող ունես, կամ

հենց դու ես սպասում, միայն պետք է ճիշտ մարդու ընտրել, որն արժանի կլինի դրան:

6

Մարտի 2

Ամբողջ գիշեր չքնեցի: Առավոտյան աչքերս կարմրած էին, սարսափելի էր տեսքս, բայց ստիպված էի գնալ համալսարան:

Մարջը ինձ համար թեյ էր պատրաստել և կողքին իմ սիրելի շոկոլադն էր դրել: Չուզելով, բայց գնացի:

Բոլորը հարցաքննում էին, թե ինչ է պատահել, բայց ես ընդամենը ասում էի, որ պարապել եմ ամբողջ գիշեր, որ քննություններս կարողանամ հանձնել:

Վերադարձա տուն: Միայն Շուշիկն էր տանը:

Հարցրի, ասաց, որ մորաքույրը Մարիամի հետ գնացել է խաւնոթ, իսկ Հարութը՝ Միքայելի հետ ինչ-որ տեղ:

Ես թեյ պատրաստեցի երկուսիս համար: Եվ չհարցրի, թե ուր են գնացել Միքայելն ու Հարութը:

Մոտ մեկ ժամ անց Մարջն ու Մարիամը վերադարձան տուն:

Քիչ ժամանակ է, որ շփվում ենք, բայց հասցրել ենք իրար սիրել: Առաջ այսքան լավ կարծիք չունեի նրանց մասին: Հիմա նրանք դարձել են իմ ամեն օրվա ուրախությունը, իսկ Շուշիկն իմ սրտում մեծ տեղ ունի:

Ամեն օր մենք սովորում էինք հայերեն: Ես մի քանի բան կարող էի թարգմանել հայերեն, երբեմն նրանց հետ հայերենով էի հաղորդակցվում:

Հարութը վերադարձավ երեկոյան իննին, իսկ Միքայելը նրա հետ չէր: Նրա մասին ընդհանրապես չհարցրի, իսկ Հարութը ոչինչ չասաց Միքայելի մասին:

Տասնմեկն էր. քնեցի:

Մարտի 8

Օրերն անցնում են, ամեն բան նույնն է, ոնց կա, իսկ ես լուր չունեմ Միքայելից:

Ի դեպ, իմացել եմ, որ մորաքրոջս ընտանիքը ամսի 10-ին հետ է վերադառնալու. դա ինձ շատ տխրեցրեց: Ես խնդրեցի, որ մի փոքր երկար մնամ, սակայն դա հնարավոր չէր:

Էլի միայնակ էի:

Շուշիկը խոստացավ, որ ինձ հաճախ կգրի, բայց դա, միևնույն է, քիչ էր, որովհետև նամակով չես տեսնում նրանց ժպիտները և չես կարողանում գրկել:

Օրը մռայլ էր, բայց հաճելի էր միևնույն ժամանակ:

Պատուհանից նայում էի մարդկանց անցողաբձին, ու հանկարծ հայտնվեց Միքայելի ավտոմեքենան: Շատ զարմացա. կարծում էի՝ արդեն մեկնել է, ու էլ չեմ տեսնի նրան:

Դուռը թակեց, բացեցի ու ներս հրավիրեցի: Այդ ժամանակ տանը միայն ես էի:

Չեռփին մի մեծ ծաղկեփունջ կար՝ կարմիր վարդերով, և ինչ-որ փաթեթ:

– Բարև, Անջե՛լ, շնորհավորում եմ տոնդ: Սա քեզ համար է:

– Շնորհակալ եմ, բայց սրանց կարիքը չկար:

– Կարո՞ղ ենք խոսել:

– Քանի օր է՝ չկայիր, իսկ այսօր հայտնվում ես ու ասում՝ կարող ենք խոսել:

– Կներես ինձ: Արի՛, նստի՛ր, որ խոսենք:

– Լսում եմ:

– Վաղը գնալու եմ Իտալիա:

– Գնա՛, բարի ճանապարհ եմ քեզ մաղթում:

– Այսքան բա՞ն, – զարմացած դեմքով ասաց Միքայելը:

– Էլ ի՞նչ էիր սպասում:

– Կսպասե՞ս ինձ մինչև գամ:

– Կսպասեմ:

–Հայրս ընկերներ ունի Իտալիայում, հիմա տեղի ոստիկանությունը ինչ-որ կասկածներ ունի իմ գերմանացի լինելու մեջ:

–Դե, իհարկե, Դավիթ:

–Բեզ լավ նայի՞ր. շուտով կվերադառնամ, և կկազմակերպենք մեր նշանադրությունը: Սիրում եմ քեզ,– ասաց Միքայելը ու հեռացավ մեր տանից:

Աչքերս միանգամից լցվեցին արցունքներով, հոգիս ցավում էր, ու մի պահ մտածեցի նրան հավետ կորցնելու մասին: Կարծում էի, թե մենակ կմնամ աշխարհում:

Մորաքույրս, երբ եկավ տուն ու տեսավ ինձ այդ վիճակում, շատ անհանգստացավ:

Ես վստահ էի, որ Հարութը ամեն բան գիտեր, բայց ոչինչ չէր ասել ինձ:

Բողոքը հավաքվել էին կողքիս ու ամեն կերպ սփոփում էին, որ չտխրեմ, բայց երբ տխուր ես, միևնույն է, ոչ մեկի խոսքերը չեն բուժում քո ցավը, այլ ավելի են խորացնում:

Մարիամը մի պահ գնաց, հետո հետ վերադարձավ՝ ձեռքին իմ սիրելի շոկոլադը:

–Վերցրո՛ւ. բերել եմ, որ միասին ուտենք:

–Ապրես,– ժպտացի ես ու վերցրի նրա ձեռքից շոկոլադը:

Գրկեց ինձ ու սրբեց աչքերս:

–Չտեսնեմ, որ լացես, ժպտա՛ արագ, մեծ աղջիկ ես, Անջել:

Ես ժպտացի:

–Այսպես ավելի գեղեցիկ ես:

* * *

Մի բանի ժամ խոսեցի մորաքրոջս հետ, ներսումս կուտակվածը թոթափեցի, հետո ինձ ուղեկցեց քնելու, որ մի փոքր հանգստանամ:

Ուշ կարողացա քնել: Մտքերիս հետ էի: Միքայելի հանկարծակի գնալը տարօրինակ էր թվում ինձ համար, կամ ավելի շատ վախենում էի:

Մարտի 9

Ես առավոտյան այնքան թարմ տեսք ունեի, ու կարծես ես չէի երեկվա կարմրած ու թաց աչքերով աղջիկը:

Միասին նախաճաշեցինք, բայց ես համալսարան չգնացի:

Գնացի հյուրասենյակ և տեսա, որ երեկվա ծաղիկները դրված էին ծաղկամանի մեջ, իսկ փաթեթավորած նվերը բացված չէր: Ես բացեցի այն. գիրք էր՝ Սոֆյա Յունգանսի «Haus Eckberg» վեպը, որտեղ ներկայացված են Երեսնամյա պատերազմի ժամանակների բարքերի նկարագիրը:

Իր մակագրությունը նշված էր մեջը. «Ամբողջ սրտով Անգելա Հոֆմանին Դավիթից»:

Նա իրեն Միքայել չէր համարում:

Գիտեր, որ պատմական գրքեր կարդալ շատ են սիրում: Ես էլ նրան նվիրել եմ իմ ամենասիրելի գիրքը՝ Աստվածաշունչը, չգիտեմ՝ կկարդա, թե ոչ: Մեր կրոններն այլ են:

* * *

Վաղը Հարությունյանների ընտանիքն էլ կգնա, ցավոք: Շուշիկն ինձ բավականին բաներ էր հասցրել սովորեցնել: Մի ամբողջ տետր լի էր հայերենով:

Ցանկանում եմ ասել, որ իմացածս բոլոր լեզուներից ամենաշատը հայերենն եմ սիրում. այն ինձ շատ է գրավել:

* * *

Երեկոյան ժամը ութն էր, այնքան չէի ուզում՝ օրը վերջանար: Շատ կկարոտեմ նրանց: Շատ էի ցանկանում նրանց հետ մեկնել, բայց Բեռլինում շատ բան ունեի թողած:

Նրանց իրերը արդեն պատրաստ էին՝ դրված հյուրասենյակում:

Ես նկատել էի, որ Ռեմարկի «Երեք ընկերը» Մարջը չէր հասցրել ավարտել: Որոշեցի նվիրել նրան այդ գիրքը և դրեցի իր պայուսակի մեջ:

Նրանց թռիչքը ժամը չորսին էր:

Մենք Գերմանիայում վերջին անգամ թեյեցինք մեր փոքրիկ սեղանի շուրջ և հրաժեշտ տվեցինք իրար: Չէինք կարողանում բաժանվել իրարից: Հրաժեշտ տալն ամենաբարդ բանն է ինձ համար, երբ ինչ-որ տևական կամ մշտական ժամանակով բաժանվում եմ հազարատ մարդկանցից:

–Միշտ քո կողքին եմք, Անջե՛լ, գրի՛ր, երբ մեր կարիքը ունենաս,– ասաց Հարութը:

–Ես միշտ կունենամ ձեր կարիքը, Հարու՛թ:

Հարութը մոտեցավ ինձ, գրկեց, հետո վերցրեց իրերը և գնաց դռան մոտ: Նրան հետևեցին Մարջը, Շուշիկը և Մարիամը...

–Մնաս բարով, կհանդիպենք, աղջի՛կս,– ասաց Մարջը ու գնաց դեպի տաքսին:

* * *

Երեկոյան ժամը վեցն անց կես էր, ձեռքիս սուրճի բաժակ կար: Ես նայում էի, թե ինչ գեղեցիկ է արևը մայր մտնում: Իրականում երագում էի այնքան հանգիստ լինել, որ հիանալի արևի մայր մտնելով: Ես մտածում էի Միքայելի, Մարջի, Շուշիկի, Մարիամի, հայրիկիս ու մայրիկիս մասին, բայց ոչ իմ մասին: Ամեն բան խառնվել էր իրար. մղձավանջ էր իմ գլխում, հոգում: Միշտ կարողացել եմ տնօրինել մտքերս, բայց այս անգամ ոչինչ չէր ստացվում: Գլուխս դրել էի ապակուն և խորասուզված նայում էի արևամուտը: Մայրամուտն իր տեսքով ավելի գեղեցիկ է, ավելի խորհրդավոր, երբ ցանկանում ես մի բաժակ թեյով մտածել, ստեղծագործել կամ աշխատել, իսկ լուսաբացը նոր ընծայված օրվա սկիզբն է, ամենասանադա՛րտը, որ դեռ ոչ մի սխալ չես հասցրել անել: Ա՛խ, եթե մենք ինչ-որ բան անելուց կամ ասելուց առաջ երկար մտածեինք: Արևի գեղեցիկ ճառագայթները քիչ-քիչ իրենց թաքցնում էին խորը հորիզոնում: Ամեն մայրամուտին հա-

ջորդում է լուսաբացը: Մեր կյանքում էլ է այդպես: Ամենադժվար ու ծանր օրերից հետո ինչ-որ կողմից արև է ծագում, և դա իսկապես կապ չունի՝ արևելքից է, թե արևմուտքից, կարևորը արևը ծագում է: Իսկ հույսը կորցնելն անստույթություն է: Մարդը միշտ պետք է սպասի ամենալավին, քանի որ վատ ավարտներ չեն լինում:

Մարտի 11

Ամեն առավոռ ստուգում էի փոստը: Նամակ ունեի: Շուշիկն էր գրել: Հայերենով գրել էր, որ տեղ են հասել և չանհանգստանամ:

«Պետք է անընդհատ կրկնեմ, որ չմոռանամ հայերենը», – մտածեցի ես:

Նստեցի և մի երկու ժամ պարապեցի, իսկ համալսարան էլ չէի գնում:

Մորաքույրս տեղ հասնելուն պես գրեց, իսկ Միքայելը...:

* * *

Օրերը միապաղաղ անցնում էին: Ու մի պահ հիշեցի հոգեբու-ժարանում անցկացրած օրերս: Ինձ թվում էր, թե քիչ-քիչ կգժվեմ մենակության մեջ: Պատերը սառն ու դատարկ էին թվում, չունեի կողքիս էլ հարազատ ոչ մեկի: Օրերս դառն էին, աննկարագրելի տխուր...:

Ես ոչ ոք չունեի իմ կողքին, ես ամբողջովին մենակ էի, իսկ մենակության մեջ մարդ իրեն կա՛մ գտնում է, կա՛մ էլ կորցնում:

8

Ապրիլի 5

Ես ու Շուշիկը հաճախ էինք խոսում փոստով, մի փոքր երկար ենք սպասում տեղ հասնելուն, բայց մեր շփումը չենք դադարեցնում: Շուշիկը պատմում է իրենց առօրյայից, թե ինչպես են անցկացնում իրենց դասերը: Ինձ կանչում էր Մարսել՝ ապրելու,

հանգստանալու, սակայն Բեռլինում շատ բաներ կային, որոնք ստիպում էին մնալ, ապրել կամ սպասել:

Հունիսի 15

Արդեն ամառ էր: Երեք ամիս է, ինչ լուր չունեի Միքայելից: Որոշել էի, որ մեկ ամիս էլ սպասեմ, եթե նամակ չստանայի, վերջնականապես կդադարեցնեի կապերս նրա հետ և չէի սպասի այլևս: Դժվար թե հինգ րոպե ազատ ժամանակ չունենար, որպեսզի ինձ նամակ գրեր. չէ՞ որ սպասում էի:

* * *

Հունիսի 16

Տան գումարը արդեն վերջանում էր, իսկ մորաքրոջիցս գումար չէի ցանկանում խնդրել:

Որոշել էի ինչ-որ տեղ ընդունվել աշխատանքի:

Հագա իմ կարմիր կիսաշրջագետտը, որն առջևից կոճակներով էր կոճկվում, ֆրանսիացի դերձակի աշխատանք էր ամբողջը, դա մայրս էր նվիրել ինձ: Հետո էլ սպիտակ վերնաշապիկս հագա, որի վրա կարմիր փոքրիկ ծաղիկներ էին: Իմ շազանակագույն, երկար և ալիքավոր վարսերը շատ ծանրացած էին, և օրն էլ շատ շոգ էր, հավաքեցի վարսերս և դուրս եկա փողոց՝ մի փոքր քայլելու և աչքի անցկացնելու պատերի՛ն փակցված աշխատանքի հայտարարությունները: Դրանց մի մասը մաշված էր, պոկված. կարծես վաղուցվանից փակցված լինեին:

Առաջարկվող աշխատանքներից միայն մեկը կարող էի անել՝ թարգմանություններ: Գնացի նշված հրատարակչություններից մեկը, որտեղ փնտրում էին անգլերենի ու ֆրանսերենի իմացությունամբ թարգմանչուհի:

Տնօրենը շատ կշռադատված մարդ էր երևում: Սկզբում հարցրեց, թե որտեղ եմ սովորել և մի քանի մանրամասներ ևս:

Ասաց, որ փորձնական մի քանի օր կաշխատեմ, և ըստ դրա՝ կորոշի՝ ընդունել, թե ոչ:

Այդ օրը մնացի հրատարակչությունում:

Ծանոթացա աշխատողներից մի քանիսի հետ: Շատ բարի մարդիկ էին երևում: Աշխատողներից շատերը տարիքով կանայք էին: Նրանից առավել շատ ինձ դուր եկավ Գայանե անունով մի կին: Ասաց, որ հայ է: Ժամանակավորապես տեղափոխվել էր այստեղ, բայց էլի հետ է վերադառնալու: Վաթսունն անց կին էր: Շատ հաճելի էր նրա հետ զրուցելը:

Նրա թոռները և երեխաները բնակություն էին հաստատել Գերմանիայում:

Միաժամանակ և՛ ծանոթացնում էին աշխատանքին, և՛ հասցնում էինք զրուցել:

Ինձ դուր եկավ այդ միջավայրը, եթե նույնիսկ չընդունեին ինձ աշխատանքի, միևնույն է, շփումս չէի դադարեցնի նրանց հետ:

Աշխատանքն ավարտվում էր ժամը վեցին: Ես տիկին Գայանեին հրավիրեցի մեր տուն, և ի ուրախություն ինձ՝ նա չմերժեց առաջարկս: Ես շատ եմ ցանկանում ունենալ ազգությամբ հայ ծանոթներ. կարծում եմ այդպես ավելի լավ կճանաչեմ ինքս ինձ: Քայլելով հասանք մեր տան բակ:

–Սա մեր տունն է, տիկին՝ Գայանե:

–Շատ գեղեցիկ բակ ունեք, աղջիկս, իսկ ծնողներդ աշխատո՞ւմ են:

–Եկեք ներս գնանք,– գլուխս կախելով՝ ասացի ես:

Գուռը բացեցի և ներս հրավիրեցի իմ հյուրին:

Նայեց մեր հյուրասենյակին, հետո երկրորդ հարկ տանող աստիճաններին և ասաց.

–Տանը մարդ չկա՞ մեզանից բացի:

–Ո՛չ, տիկին՝ Գայանե, ի՞նչ կլամեք:

–Մուրճ, եթե կարելի է:

–Իհարկե, հիմա:

–Կպատմե՞ս քո մասին,– ժպտալով ասաց ինձ,– դու էլ ե՞ս հայ:

–Մայրս հայ էր, հայրս՝ գերմանացի:

–Է՞ր,– զարմացած ասաց նա:

–Նրանք մի քանի ամիս առաջ են մահացել ավտովթարից:

–Ցավում եմ,– գլուխը կախեց և գրկեց ինձ:

Աչքերս մի պահ լցվեցին արցունքներով, բայց զսպեցի ինձ և շարունակեցի պատրաստել սուրճը:

Մենք երկար զրուցեցինք: Այնպես էինք խոսում, կարծես վաղուցվա ծանոթներ լինեինք և հասակակիցներ: Ես սիրում եմ շփվել մեծերի հետ, իմ հասակակիցներից շատերը կամ ինձանից փոքրերը շատ անհետաքրքիր են և ձանձրալի, իսկ մեծերի հետ ես ինձ ավելի հարմար եմ զգում, միշտ խոսելու և սովորելու բան լինում է: Ճանաչածս փոքրերից միայն մորաքրոջս աղջիկներին եմ սիրում:

Տիկին Գայանեին ճանապարհեցի մինչև իրենց տուն և վերադարձա ժամը իննին: Ճանապարհին մտածում էի ծերության մասին: Գուցե լա՞վ է, որ մարդն ապրում է այնքան, որ հասնում է խոր ծերության, որ գրկում է իր թոռներին, հասցնում նրանց հետ զրոսնել, խաղալ ու սեր ստանալ, հետո՝ նոր մահանալ: Գուցե լա՞վ է, որ մարդ հասցնում է ապրել այնքան, որ կարողանում է կանգնել հայելու առջև և շոյել իր կնճռոտ երեսը, իր ճերմակած վարսերը և հասկանում, որ ապրել է այնքան տարի, որքան իր դեմքին կնճիռ կա, ու այդ խորշոմների մեջ հիշում է իր ապրած ու չապրած տարիները, իր ուրախ ու տխուր օրերը, հետո հիշում է, որ պիտի մի օր ինքն էլ հողին հանձնվի, տխրում է, սակայն հիշում, որ պատերազմները տարել են ամենափոքրերին, ամենախիզախներին, և ինքն իրեն ասում է, որ իսկապես ապրել է և չի վախենում մեռնելուց, չնայած մահվան մասին մտածելով՝ մենք կորցնում ենք ապրելու ժամանակը: Փողոցները դատարկ էին, փոքրիկ լապտերներն էին վառվում Բեռլինի փողոցներում, և մի քանի

տղաներ խմբված էին և կարծես ինչ-որ բաներ էին քննարկում գարեջրատան դիմաց, ինչևէ, ես հասա տուն և նկատեցի, որ դռան փոստից նամակ էին ներս գցել:

Այս ժամին դժվար թե փոստատարը բերած լիներ:

Մակագրություն չկար նամակի վրա:

Բաց արեցի նամակը և սկսեցի կարդալ:

«Բարև, սիրելի՛ Անգելա:

Ես հիմա Իդրալիայում եմ՝ Հռոմում:

Ներողություն եմ խնդրում՝ երկար ժամանակ չգրելու համար. որոշ խնդիրներ կային:

Նամակը ուղարկել եմ ընկերոջս միջոցով: Ասել եմ, որ ծնողներին փա, որ քեզ փոխանցեն:

Ես գիրեմ, որ դու ինչ սպասում ես, և դա ամենադժվարն է երկուսիս համար:

Քեզ ճանաչած օրվանից՝ սպրածս ցանկացած օր քեզ եմ նվիրել և չեմ փոշմանում դրա համար: Հիմա ինչ որ կասեմ, խնդրում եմ, փորձի՛ր ինչ հասկանալ:

Դու ինչ սպասում ես քո անկեղծ սիրով, իսկ ես...:

Ես այսրեղ՝ Իդրալիայում, ծանոթացա իդալուիի Աննա անունով մի աղջկա հետ: Հիմա մենք միասին ենք սպրում, կարելի է ասել՝ ամուսնացած ենք:

Ների՛ր, եթե ցավ եմ պարճառում:

Էլ քեզ չեմ սիրում, մոռացի՛ր իմ մասին և սկսի՛ր նոր կյանք, իսկ ես երբեք չեմ կարող մոռանալ քո մասին. դու իմ առաջին սերն էիր, գերմանուիի՛ Անգելա...

Միքայել»:

Կարդալու ընթացքում աչքերս ամբողջությամբ լցվել էին արցունքներով, իսկ սիրտս, հոգիս... շատ էր ցավում: Ես հիասթափված էի:

Երբե՛ք, երբե՛ք չէի կարող պատկերացնել, որ մի օր կկարդամ նման տողեր Միքայելից, չէ՛, Դավիթից, չգիտեմ՝ իր ներսի Մի-

քայելն էր գրել, թե Դավիթը, բայց դե, միևնույն է, ես հիասթափված էի: Ամբողջ թուղթը թրջվել էր արցունքներիցս: Ես չէի հասկանում ոչինչ, գուցե կատա՞կ էր, բայց նման կատակ ո՞վ է անում...:

Էլ ոչ ոք չկար, որ աչքերս սրբեր՝ ո՛չ մայրս, ո՛չ մորաքույրս, և ընդհանրապես ես մենակ էի:

Մրբեցի աչքերս, զգուշությամբ այդ խոնավ թուղթը ծալեցի և դրեցի սեղանին:

Մտքերս փորձում էի շեղել ու մոռանալ կարդացածիս մասին, բայց չէր ստացվում:

Ամբողջ գիշեր արթուն մնացի, ամբողջ գիշեր աչքերիս առաջ էր նրա պատկերը: Ի՞նչ արեց նա: Երևի ես էի մեղավոր, մի՞թե մեղք է մեկին նվիրվելը, եթե, այո՛, ես մեծ մեղք եմ գործել և պատասխանատու եմ իմ գործած մեղքի համար. ես սիրել եմ:

Մի՞թե մեղք է նվիրվել, հավատալ, սիրել անկեղծ, հոգիդ ու սիրտդ անվերապահորեն նվիրել մեկին, երևի մե՛ղք է....:

Այնքան եմ զգում մորս խորհուրդների կարիքը, այնքան անհրաժեշտ եմ հիմա ինձ դրանք, ի՞նչ կասեր հիմա նա.... Բոլորը գնում են, մնում ես միայն դու՝ ինքդ քեզ հետ:

9

Հունիսի 17

Ամբողջ գիշեր չքնեցի:

Առավոտյան աչքերս կարմրած էին, և տեսքս սարսափելի էր, բայց, միևնույն է, ես պետք է գնայի աշխատանքի:

Ժամը ութն էր, իսկ իննին պետք է հրատարակչությունում լինեի:

Մեր տանից քիչ հեռու էր գտնվում, այդ պատճառով ոտքով էի գնում աշխատանքի:

Ես արդեն այնտեղ էի, ու հանկարծ տնօրենը հայտնվեց իմ դիմաց.

–Բարի լույս, դու երեկվա աղջի՞կն ես, այդպե՞ս չէ:

–Բարև Ձեզ,– ժպտալով ասացի ես,– այո՛, ես եմ՝ Անգելա Հոֆման:

–Ուրախ եմ, որ ճիշտ ժամանակին այստեղ եք, իսկ ի՞նչ է պատահել Ձեզ, Ձեր աչքերը կարմրա՞ծ են:

–Մի փոքր ուշ եմ քնել, ամեն ինչ կարգին է, շնորհակալ եմ:

–Կարող եք անցնել աշխատանքի,– բարի ժպիտով ասաց պարոն Շնեյդերը:

Երբ ներս մտա, նրանց ջերմ հայացքներից միանգամից դեմքիս ժպիտ հայտնվեց:

Նրանք այնքա՛ն էին ինձ դուր գալիս, ես էլ՝ նրանց, կարծում եմ:

–Բարի լույս,– ասացի ես:

–Բարի լույս, Անգելա՛,– ասաց տիկին Գայանեն, որ ինձանից մի փոքր հեռավորության վրա էր նստած:

Մնացածը ինձ ողջունեցին իրենց գեղեցիկ ժպիտներով: Գնացի և նստեցի տիկին Գայանեի կողքին:

–Ինչպե՞ս եք, տիկին՝ Գայանե:

–Ես լավ եմ, բայց ինչո՞ւ են աչքերդ կարմրած,– զարմացած հարցրեց նա,– երեկ, երբ դուրս եկա ձեր տանից, դու լավ էիր:

–Ես Ձեզ հետո անպայման կպատմեմ:

–Լավ: Մրանք պարոն Շնեյդերն է տվել, որ թարգմանես, երեկվա գործը շատ էր հավանել, իսկ այսօրվա գործը պետք է ուղարկվի նախարարություն:

«Այդքան պատասխանատու գործը ի՞նձ է հանձնարարված»,– մտածեցի ես ու վերցրի նրա ձեռքից այդ թղթերը:

Նստած էի տիկին Գայանեի կողքին և թարգմանում էի այդ նյութերը, բայց մտքերս միանգամայն ուրիշ կողմ էին: Փորձում էի դրանք ամեն կերպ շեղել:

Աշխատանքն ավարտվելու ժամն էր մոտենում: Որոշեցի վերանայել թարգմանածս, ու ստացվեց, որ բավականին անուշադիր

սխալներ էի արել: Գրանք արագ ուղղեցի և իջա ներքև՝ պարոն Շնեյդերի մոտ:

Մոտեցա նրա աշխատասենյակի դռանը, թակեցի և բաց արեցի այն.

–Ներեցեք, կարելի՞ է:

–Իհարկե, նե՛րս արի:

–Սրանք այն փաստաթղթերն են, որոնք ասել էիք, որ թարգմանեմ: Կարծում եմ, որ ճիշտ է ամբողջը:

–Ես վստահում եմ քեզ,– ժպտալով պատասխանեց պարոն Շնեյդերը:

Ես դուրս եկա նրա աշխատասենյակից և նկատեցի, որ տիկին Գայանեն դրսում կանգնած էր և կարծես սպասում էր ինչ-որ մեկին: Մոտեցա նրան:

–Տիկին Գայանե, ո՞ւմ եք սպասում:

–Քեզ,– ժպտալով պատասխանեց նա,– այսօր էլ ես եմ քեզ հրավիրում մեր տուն:

Սիրով համաձայնեցի: Մենք միասին քայլում էինք Բեռլինի փողոցներով:

Ճանապարհին գրուցում ենք տարբեր թեմաներից: Նա ձեռքով ցույց է տալիս իրենց տունը ինձ:

–Ահա և հասանք, հինա թռռնիկներս քեզ են սպասում. ես պատմել եմ քո մասին նրանց:

–Նրանք հա՞յ են:

–Հայ են, իհարկե:

Նրանց տունն էլ էր երկհարկանի, դրսից շատ գեղեցիկ էր, ներսից՝ էլ ավելի: Ինձ առավել շատ գրավեց նրանց ծաղկազարդ բակը, որը դրախտի էր նման: Երկու կողմերից տնկարկներ էին, որոնց արանքներում աճեցված էին պիոններ և ինձ անծանոթ այլ ծաղիկներ:

Տուն մտնելուն պես նրա թռռները վազեցին տատիկի դիմաց.

–Տատիկ, նա Անգելա՞ն է,– ասաց նրանցից ամենափոքրը, որը մոտավորապես հինգ-վեց տարեկան կլիներ:

–Այո՛, այո՛, նա Անգելան է՝ իմ երրորդ թոռնիկը:

Այնքան ջերմ ասաց այդ խոսքերը, որ մի պահ մտածեցի նրան տատիկ անվանելու մասին, կարծես մենք իրար շատ էինք հավանել:

–Տիգրա՛ն, իսկ ո՞ր է Արփենիկը:

–Արփենիկը գիրք է կարդում իր սենյակում:

–Տիգրա՛ն, դա եվրոպական անո՞ւն է,– հարցրի ես:

–Ո՛չ, աղջիկս, դա հայկական անուն է, Տիգրան Մեծ թագավորի անունը. նա հայ է եղել:

–Հետաքրքիր է,– ասացի ես:

–Պարզապես մեր պատմությունը քչերին է հայտնի, քչերն են ծանոթ հայերին, Հայաստանին: Ժամանակներն այդպիսին չեն և այնպիսին չեն եղել, որ կարողանայինք մեր արվեստն ու մեր պատմությունը ի ցույց դնել աշխարհին: Հուսով եմ՝ կգան ժամանակներ, երբ մենք էլ մեր տեղը կունենանք համաշխարհային պատմության մեջ:

–Արդեն եկե՞լ եք. ուրախ եմ՝ ձեզ տեսնելու համար: Ես տորթ էի պատրաստում Ձեզ համար,– ասաց տիկին Գայանեի հարսն իր ուրախ ժպիտով:

Նրանք ինձ շատ ջերմ ընդունեցին:

Ես ու Անահիտը շատ արագ ծանոթացանք, և միանգամից մտերմացանք, չնայած որ նա մայրիկիս տարիքին կլիներ: Հանկարծ նկատեցի, որ իրենց մեծ աղջիկը իջավ ներքև: Նա շատ գեղեցիկ էր, երկար ու ալիքավոր մազերով: Ձեռքին գիրք կար, տառերից հասկացա, որ հայերեն գիրք էր, իսկ թե որն էր, չհասցրի կարդալ:

–Բարև Ձեզ,– ասաց նա և նստեց մեզ մոտ, հետո հայերենով շարունակեց,– հասկանո՞ւմ եք հայերեն:

–Բարև, ոչ այնքան,– պատասխանեցի հայերենով և շարունակեցի գերմաներենով,– ավելի հարմար է խոսել գերմաներեն:

Ինձ մորաքրոջս աղջիկն է որոշ չափով սովորեցրել հայերեն, հիմա նա այստեղ չէ:

Հաճելի և ուրախ աղջիկ էր երևում Արփեհնիկը: Նա ինձ հիշեցնում էր Շուշիկին. երևի նրա տարիքին կլիներ:

10

Արդեն ինը կլիներ. վերադարձա տուն:

Մռռացել էի դուրս գալուց առաջ դրսի լույսը միացնել, փողոցը շատ քիչ լուսավորում էին դրսի լապտերները: Ամեն բան աղոտ էր երևում: Մի կերպ կարողացա մթության մեջ գտնել դռան բանալու տեղը և բացել այն:

Տուն մտա: Ամեն բան դատարկ ու սառն էր թվում, չնայած որ հունիս ամիսն էր:

Ինձ համար սուրճ պատրաստեցի ու նստեցի պատուհանի մոտ: Ձեռքս վերցրի իմ ու Շուշիկի լուսանկարը: Այնքան էի կարոտել նրան, մորաքրոջս: Որոշել էի, եթե աշխատանքս հաստատվի, գումար խնայեմ ու մեկնեմ մի քանի օրով Ֆրանսիա: Ես սկզբում հաշվի չեմ առնում դժվարությունները, պլանավորում եմ, որոշում անելիքս, իսկ հետո բախվում խնդիրների: Չնայած դրան՝ միշտ կարողացել եմ հարթել դժվարությունները, որոնք մագնիսի պես ձգվում են իմ կողմ:

Որոշեցի նամակ գրել մորաքրոջս ու Լյուսիին:

«Բարև, սիրելի՛ մորաքույր, ինչպե՞ս ես:

Շար եմ կարոտել քեզ, Մարիամին, Շուշիկին, նույնիսկ Հարութին և նրա հունորները:

Երեկ նամակ սրացա Միքայելից: Նա արդեն ամուսնացել է մի իրարուհու հետ: Շար ծանր էր կարդալ նման րոդեր, քայց հիմա, միևնույն է, ինչ համար: Աշխատանք եմ գրել այսպեղ, հիմնական չէ դեռևս, րեսներն՝ ինչ կլինի:

Մրաժում եմ մի քանի ամսից մեկնել Ֆրանսիա՝ չեզ մուր որոշ ժամանակով:

Պարմէք մի փոքր ջեր մասին, ջեր առօրյայից:

Միրով սպասում եմ ջեր նամակին»:

«Առավոտյան փոստով կուղարկեմ», – մտածեցի ես:

Հունիսի 18

Այսօր հայրիկիս ծննդյան օրն է, բայց, ցավոք, հիմա մենք միասին չենք: Անցած տարի շատ ուրախ էր: Ես ու մայրիկը տորթ էինք պատրաստել:

Այնքան եմ զգում նրանց կարիքը, մայրիկի խորհուրդները, որոնք միշտ ականջիս լսվում են խորհրդավոր լռության մեջ: Ուզում եմ էլի տեսնել հայրիկիս ժպիտը, աչքերի փայլը: Նա խիստ մարդ էր, հազվադեպ էր մարդկանց ժպտում, բայց շատ երջանիկ էր և կյանքով լի, ցավոք, կյանքը նրա համար այդքան տարի էր նախատեսել:

Տանը ոչինչ չկար պատրաստած, իրականում սոված էլ չէի: Շաբաթ էր, իսկ շաբաթ ու կիրակի օրերին չէր աշխատում հրատարակչությունը:

Որոշեցի մի բաժակ սուրճ խմել, իսկ դրանից հետո գնալ հորս գերեզմանին:

Օրը մռայլ էր՝ պարուրված խավարով, որն այդքան էլ հաճելի չէր և չէր սագում այս եղանակին:

Տաքսիով հասա այնտեղ, ծաղիկներ խոնարհեցի նրանց շիրիմին, և ինքնաբերաբար աչքերիցս սկսեցին արցունքներ հոսել: Կինոժապավենի նման աչքերիս առաջով անցան մեր միասին ապրած օրերը, հետո հասկացա, որ էլ հետ չեմ կարող բերել ոչինչ: Էլ չեմ կարողանա գրկել նրանց երբեք, և դա հենց ամենաշատն էր ինձ ցավ պատճառում: Միրոս բաժանված էր երկու մասի: Նրանց հետ ինձանից մի մաս էր գնացել, ես էլ էի կիսով չափ մահացած, իսկ եթե չլինեին հարազատներս, ես գուցե մոռանայի ապրելու մասին:

Ծանր է կորուստը, մանավանդ ամենահարազատի:

Ճանապարհին հետ վերադառնալիս գնացի փոստ՝ մորա-
քրոջս նամակ ուղարկելու համար:

Խոհանոցում դարակներն էի ստուգում. ոչինչ չկար տանը
ուտելու, գումարս էլ քիչ էր: Գնացի խանութ և ծախսեցի վերջին
լուման: Չգիտեի՝ հետո ինչ կլինի, բայց սոված էլ չէի կարող մնալ:
Եկա տուն ու բրնձով ապուր պատրաստեցի, փորձում էի խնայել
ամեն բան, մինչև կստանայի աշխատավարձ (երևի):

Ոչինչ չունեի անելու, և ցանկություն էլ չունեի ինչ-որ բան անե-
լու:

Երգում էի մեր գերմանական երգերից, որը շատ էի հավա-
նում: Չայնային տվյալներս այնքան էլ զարմացնող չեն, բայց կա-
րողանում եմ երգել:

Չանձրանում եմ շաբաթ ու կիրակի օրերին, դրանք շատ դան-
դաղ են անցնում:

Միքայելի մասին մտածել անգամ չէի ուզում: Ամեն ինչ հոգ-
նեցնում էր ինձ, շատ ձանձրալի էր թվում ամեն բան:

Ամեն օր տանը մենակ էի, և ոչինչ չկար անելու, ընկերներ էլ
չունեի, որպեսզի նրանց հետ ժամանակ անցկացնեի, ում հետ, որ
շփվել եմ, նրանք իմ հավանությանը չեն արժանացել, շատ ձանձ-
րալի մարդիկ են եղել, իսկ ոմանք էլ ուղղակի առանց բառ ասելու
հեռացել են կողքիցս: Ես հոգնել էի բոլորից ու ամեն ինչից:

Մի փոքր ռադիո լսեցի, հետո երաժշտություն, քնեցի և երեկո-
յան յոթին արթնացա դռան ձայնից:

–Ո՞վ է,– հարցրի ես:

–Գայանենն է,– ասաց իր նուրբ ձայնով:

Ես բացեցի դուռը և նրան ամուր գրկեցի: Շատ եմ սիրում տի-
կին Գայանեին: Հրավիրեցի ներս և սուրճ առաջարկեցի: Փաստո-
րեն՝ նա ինձ քաղցրավենիք էր բերել՝ իր ձեռքով պատրաստած:

–Ինձ էլ կսովորեցնե՞ք պատրաստել,– իմ հետաքրքրական հա-
յացքով ասացի ես:

–Իհարկե, եթե դեմ չես, մի քանի օրով կհրավիրեմ՝ մեր տանը
մնաս:

–Ես Ձեզ ներդրումն չե՞մ պատճառի:

–Ո՛չ, ինչի՞ մասին է խոսքը, մտածի՛ր առաջարկիս շուրջ:

Մտտ մեկ ժամ գրուցելուց հետո տիկին Գայանեն ասաց, որ պետք է գնա. գործեր ուներ: Նրան ճանապարհեցի, և էլի ձանձրույթը եկավ ինձ հյուր, մենք՝ ես ու ձանձրույթը, ընկերներ էինք դարձել, իսկ կյանքը սարսափելի է դառնում այն պահին, երբ դու ունես ժամանակ և ոչինչ չունես անելու:

Քայլում էի փողոցներով, ուր տարիներ առաջ նույնիսկ անհնար էր նայել:

Լռության ձայնն էր լսվում քաղաքում: Այո՛, լռությունն էլ ձայն ունի, դա կհասկանան միայն նրանք, ովքեր երկար ժամանակ սովոր են եղել աղմուկի: Այդ մթության մեջ ես միայնակ էի: Ինձանից քիչ հեռու մի կին էր արագ քայլերով փորձում հասնել ինչ-որ տեղ:

Այժմ խաղաղված Բեռլինի փողոցներում խլացնող լռություն էր, որը ևԲհաճելի էր, ևԲտհաճ: Հաճելի էր այնքանով, որ չկային էլ ո՛հ կրակոցներ, ո՛հ հրանոթների, և ո՛հ էլ մարդկանց ձայներ. նրանք բոլորը իրենց տներում էին և չէին խանգարում քաղաքի լռությանը: Վատ կողմն էլ, որ թվում է՝ ուր որ է մի տանկ կմտի քաղաք ու կավերի շուրջբոլորը, կամ փողոցի մյուս կողմից մեկը զինված կհարձակվի քեզ վրա: Իմ վերջին մտքից՝ երևակայական ավազակից սարսափած՝ քայլերս արագացրի և հասա տուն:

–Չարմանալի է՝ ես հենց նոր նախընտրեցի, որ ավելի լավ է՝ քաղաք տանկ մտի, քան ինձ ավազակ մոտենա,– ինքն իրեն ասաց և սկսեց ծիծաղել:

Գնացի իմ սենյակ, որ մի փոքր քնեմ: Բացեցի մահճակալիս կողքին դրված պահարանը, որպեսզի մազակալ վերցնեմ, այնտեղ էին դրված Միքայելի նամակը և նրա նվիրած ժամացույցը, որն այլևս չեմ կրում:

Ուզում էի կարդալ նամակը, ուզում էի ևս մեկ անգամ հասկանալ նրա գրած տողերը:

Վերցրի այն ու բացեցի: Կրկին կարդացի, բայց այս անգամ ինձ համար կարծես միևնույն լիներ: Առաջ, եթե կարդայի, ամբողջ

օրս կփշացնեի, իսկ այս անգամ ես բարձր ծիծաղում էի, հիշում էի ինձ լացելիս ու ծիծաղում:

Նույն ձևով փակեցի նամակը և էլի դրեցի պահարանի մեջ: Քնելու ցանկությունս վերացավ ու գնացի հյուրասենյակ:

Լռությո՜ւն էր: Լռության մեջ լսվում էր ժամացույցի սլաքի ձայնը. այնքան հաճելի պահ էր: Սիրում եմ լռություն, հանգստություն և լռության մեջ լսվող ժամացույցի սլաքի ձայնը, որը ամեն վայրկյան ինչ-որ բան է հիշեցնում:

11

Հունիսի 19

Երեկ շատ ուշ պառկեցի քնելու: Մտածում էի:

Կարո՞ղ ենք խոսել մի մարդու մասին, որին չենք ճանաչել:

Երբևէ կարո՞ղ ես խոսել մեկի մասին, որին շատ ես սիրում: Չնայած այդ «շատ»-ը երբեք բառերով չենք կարող ասել, թե ինչ-քան է, նույնիսկ ձեռքերով ու խոսքերով չենք կարող:

Երբե՛ք չպետք է շատ պատմել սիրելի մարդկանց մասին ուրիշներին, խոսել նրանց մասին՝ նույնիսկ լավը, ասել նրանց անունն ուրիշների մոտ, բայց չպետք է վախենալ խոսել ինքդ քեզ հետ նրանց մասին. չէ՞ որ նրանք մեր դեմքին ժպիտ են նկարում, այդպե՛ս չէ: Գեղեցիկ է:

Դու քեզ երջանիկ ես զգում, որ կողքիդ են մարդիկ, որոնք կարևոր են քեզ համար:

Կպատասխի նաև այնպես, որ մի օր ամենաէթանագին ձևով կհեռանան մեզանից, շատ չպետք է տխրել. ճիշտը ձևը ուղղակի ժպիտով հաջողություն ասելն է ու վերջ. չէ՞ որ անկեղծ սիրող մարդիկ երբեք չեն հեռանում մեզանից: Նաև լինում է, երբ հարկադրված են հեռանում: Մեղադրել պետք չէ: Երբ երկինքը կանչում է նրանց, դու ի գորու չես խառնվել Աստծո գործերին: Այդ ժամանակ քեզ լքում են միայն ֆիզիկապես, մնացած դեպքերում էթանները լքում են հոգեպես, գրողը տանի նրանց ֆիզիկական ներկայությունը: Մեր հարազատներից թանկ բան չկա կյանքում:

Նրանք կապրեն այնքան, քանի դեռ կլինեն մեր հիշողություններում:

Մի պահ պետք է հետ նայել, հիշել նրանց, ովքեր էլ մեր կողքին չեն, ու մտածել, որ նրանք բոլորն էլ մեզ որևէ բան սովորեցրել են: Հիշել նրանց մեկ-մեկ անհրաժեշտ է, հիշել նրանց հետ անցկացրած գեղեցիկ պահերը, որ գուցե էլ երբեք չկրկնվեն:

Կկարոտես, բայց էլ երբեք առաջվանը չի լինի, դու էլ չես սպասի նամակի կամ զանգի, չես ցանկանա տեսնել դրսում՝ որևէ տեղ, որովհետև քեզ ցավեցրել են, որովհետև դու նրանց վստահել ես և գուցե եղել ես միևնույնը, սովորական նրանց համար:

Մենք սովորում ենք մեր իսկ սեփական սխալներից և վերցնում դասեր, որ երբեք չեն սովորեցնում դպրոցում:

Դպրոցում մեզ սովորեցնում են լինել կիրթ ու գրագետ, բայց չեն սովորեցնում ինչպես լինել ՄԱՐԴ և ինչպես սիրել դիմացիներին. դրանք կարևոր դասեր են, որ մենք չենք ստանում դպրոցից: Կյանքը լավագույն ուսուցիչն է: Դու կրթվում ես ամեն օր, քանի դեռ ապրում ես, և կսովորես այնքան, քանի դեռ կաս:

Սովորե՛նք մոռանալ նրանց, ովքեր մոռացել են մեզ, սովորե՛նք սիրել նրանց, ովքեր սիրում են մեզ ամեն ինչից շատ, ամեն ինչից վեր:

* * *

Կանգնած էի խոհանոցում ու նայում էի անցորդներին: Մի գլխաշորով կին էր անցնում՝ ձեռքին տոպրակներ, կողքին էլ՝ մի տղա երեխա. այնքան գեղեցիկ էր: Վազվում էր, ձեռքին քթից ինքնաթիռ կար պատրաստած, օդում պտտեցնում էր ու բղավում.

–Խաղաղությո՛ւն, ազատությո՛ւն աշխարհին... Թռի՛ր բարձր այնտեղ, ուր չկան չար մարդիկ... Տատիկ, պատերազմ չի լինի էլ, չէ՞....

Կինը լուռ նայում էր մանչուկին և չգիտեր՝ ինչ պատասխաներ: Լուռ ժպտում էր և շարունակում իր քայլերը:

Նրա ձայնը ականջներիցս դուրս չէր գալիս: Այդքան փոքրիկ, բայց շատ հասկացող, ուզում էի գնալ և գրկել նրան, գոնե աշխարհի բոլոր մարդիկ հասկանան խաղաղության ու ազատության գինը, առավել ևս՝ երկիր ղեկավարողները, իսկ տարածքային ու կրոնական պատերազմները, կարծում եմ, միշտ կլինեն, ցավալի է...

Մարդիկ չպետք է խտրականություն դնեն սևամորթի ու սպիտակամորթի միջև, քրիստոնեության, իսլամի և մնացած կրոնների միջև, չէ՞ որ ամեն մեկն է ընտրում իր դավանանքը:

Ի՞նչ տարբերություն. կունենաս ահռելի տարածք, թե՞ մի փոքր երկիր, կարևորը երկրի ներսում գտնվող խաղաղությունն է, մնացած հարցերը կլուծվեն:

* * *

Դուրս եկա փողոց՝ մի փոքր քայլելու: Արդեն ճնշվում էի դատարկ պատերից:

Դբսում տաք էր: Փողոցները լի էին մարդկանցով, ամեն մեկը, իր մտքերով տարված, քայլում էր. մեկը ծաղիկներ էր նվիրում սիրելիին, իսկ որոշ մարդիկ շտապում էին իրենց գործերին:

Տեղ-տեղ կանգնած էին թերթավաճառներ, որոնք օրվա նորություններն էին «վաճառում»:

Մեզ տան մոտ էի հասել ու նկատեցի, որ քիչ այն կողմ մի կին փայտով խփում էր և վռնդում փոքրիկ շան ձագի: Շատ բարկացա այդ կնոջ արարքից: Մոտեցա նրան:

–Ի՞նչ եք անում. նա էլ է ցավ զգում,– բարկացած տոնավ ասացի ես:

–Մի կողմ քաշվիր. դու էիր պակասում:

Շատ ագրեսիվ կին էր երևում: Չցանկացա հետը վիճել, ուղղակի վերցրի շանը և արագ գնացի: Նա բղավեց.

–Գնա՛, գնա՛, այդ շան լակոտին էլ այստեղ չտեսնեմ:

Նա այնքան նվաղ էր, երևի մի քանի օր է, ինչ ծնվել էր: Երկուսս էլ մենակ էինք:

Ինձ հետ տարա տուն: Իմ սնունդը քիչ էր, բայց սառնարանում եղած կաթից նրան տվեցի: Ուզում էի պահել նրան ինձ հետ, բայց ո՞նց, եթե չէի կարողանալու կերակրել:

Մի լավ գաղափար եկավ մտքիս:

Վերցրի նրան ու դուրս եկա տանից, քայլերս ուղղեցի տիկին Գայանենեց տան ուղղությամբ: Մի քանի բուպե հետո արդեն այնտեղ էի: Դուռը երկար թակելուց հետո Արփենիկը բացեց:

–Անգելա՛, ողջույն,– գրկեց ինձ՝ ուշադրություն չդարձնելով, որ շուն կար ձեռքիս,– ներս համեցի՛ր:

Ինձ հրավիրեց ներս և զնաց կանչելու տիկին Գայանեին, որն այդ պահին խոհանոցում էր և ամբողջ տնով անուշաբույր հոտեր էր զգել:

–Տատի՛կ, արի՛ տես, թե ով է եկել:

Ջերմ-ջերմ գրկել էինք իրար, ինչպես հին հարազատներ:

–Նոր տեսա, այս ի՞նչ շուն է,– հարցրեց Արփենիկը:

–Նրան օգնություն է պետք, կարծում եմ:

–Ես ուզում եմ պահել նրան, կթողնե՞ս, չէ՞, տատի՛կ:

–Դե վերջացրո՛ւ, Արփենի՛կ, շուն է էլի:

–Խնդրում եմ,– փաղաքշական տոնով ասաց Արփենիկը:

–Լա՛վ,– ասաց տիկին Գայանեն, մաքրեց կոկորդը, հետո անտանելի հազ սկսեց մոտը:

–Լա՞վ եք, տիկին Գայանե, ջուր բեր՛ր, Արփենի՛կ:

–Ամեն բան կարգին է,– ասաց տիկին Գայանեն, որ կարծես արդեն լավ էր:

Տիկին Գայանեն համաձայնեց, չնայած որ սրտով չէր: Անահիտը Տիգրանի ու ամուսնու հետ տանը չէր:

–Անջե՛լ, արի՛ խոհանոց:

Արփենիկը ինձ տարավ խոհանոց՝ ինչ-որ բան ցույց տալու համար:

–Նայի՛ր, տատիկս ամեն տարի տարբեր մրգեր ու բանջարեղեններ է պահաձոյացնում և կոմպոտներ պատրաստում, դա տան պայմաններում պատրաստված հյութ է. հայերը շատ են սիրում պատրաստել:

–Այո՛, մայրիկս էլ էր այսպես անում. հիշեցի:

Աչքերիս առաջ եկավ մայրիկս, երբ մուրաբաներ ու կոմպոտներ էր պատրաստում. շատ էր սիրում կոմպոտ:

«Այո՛, պահաձոներ կան նկուղում պահված»,– մտածեցի ես, և ինքս ինձ ժպտացի այդ մտքից:

Շատ էի ուրախացել, երբ հիշեցի մայրիկիս պատրաստած պահաձոների մասին, դրանք կարող էի օգտագործել մինչև գուճար կունենայի՝ ինչ-որ բան գնելու:

Տատիկս օգնում էր մորս պատրաստել պահաձոներ, երբ դեռ ապրում էր մեզ հետ Գերմանիայում:

Երբ արդեն դուրս էի գալիս իրենց տանից, տիկին Գայանեն ինձ կանչեց և մեկնեց մի տոպրակ՝ լի պահաձոներով.

–Մա քեզ, անուշ լինի,– ժպտալով ասաց նա և մեկնեց ինձ ձեռքի տոպրակը:

–Արդեն լավ ե՞ք,– հարցրի ես:

–Արդեն լավ եմ, անուշիկս, շնորհակալ եմ:

–Ես եմ շնորհակալ, տիկին Գայանե, լավ եղե՛ք: Յտեսություն:

* * *

Երբ տուն հասա, սկզբում իջա նկուղ, մայրիկի պատրաստած պահաձոներից վերցրի և դրեցի սառնարանը՝ առավոտյան ուտելու համար:

12

Հունիսի 20

Փոստում նամակ կար: Մորաբույրս էր գրել.

«Բարև, Անգե՛լ, սիրելիս, մենք լավ ենք:

Այսրեղ ամեն բան նույնն է. Հարութը աշխատում է, Շուշիկն օրվա մի մասը ընկերների հետ է անցկացնում, մեկ-մեկ էլ գիրք է կարդում: Քննությունները գերազանց է հանձնել, Մարիամը ամառային հանձնարարություններն է կատարում: Ի դեպ, քեզ համար լավ նորություն ունեն:

Խորհրդային Ռուսաստանը հայրենադարձություն է կազմակերպել, ըստ որի՝ ցանկացած հայ կարող է օտար երկրից վերադառնալ հեր՝ Հայաստան, սա քեզ համար լավ առիթ է գնալ Հայաստան: Դու այդրեղ մենակ ես, կողքիդ ոչ ոքի չունես. ավելի լավ է գնաս փարիկի մոտ:

Սպասում եմ նամակիդ: Մրածի՛ր սասածիս մասին»:

–Բայց ես անձնագրով գերմանացի եմ, ինձ թույլ չեն տա ապրել Հայաստանում,– խոսում էի ինքս ինձ հետ,– եթե հնարավորություն ունենամ գնալու, կվաճառեմ տունը և մշտական կհաստատվեմ ապրելու Խորհրդային Հայաստանում:

Նույն օրը նրան նամակ գրեցի: Շատ էի ոգևորվել նրա այդ սասածից. իրոք, դա լավ առիթ էր՝ Հայաստան մեկնելու համար:

Աշխատանքի պետք է գնայի, մտածում էի այս թեմայով խոսել տիկին Գայանեի հետ. գուցե միասին գնայինք:

Սկզբում գնացի փոստ՝ նամակը ուղարկելու, հետո նոր հասա աշխատանքի վայր:

Բարևեցի մերկաներին և նստեցի իմ տեղում: Տիկին Գայանեն չկար, բայց այդ ժամին սովորաբար այդտեղ էր լինում:

–Ներեցե՛ք, որևէ մեկդ տեղյա՞կ եք, թե ինչու այսօր տիկին Գայանեն չի եկել:

–Այո՛, այսօր առավոտյան տնօրենին տեղեկացրել են, որ հիվանդ է,– ասաց քարտուղարուհին:

–Հիվա՞նդ,– զարմացած հարցրի ես:

–Նա թոքաբորբով հիվանդ է:

Աստված իմ, ինչո՞ւ չի ասել ինձ դրա մասին: Չէի համբերում թե, երբ է ավարտվելու աշխատանքը, որ գնամ նրանց տուն: Ժամանակը դանդաղ էր առաջ գնում:

Աշխատանքը ավարտվեց ու արագ շտապեցի տիկին Գայանենց տուն:

Տան լույսերը անջատված էին. կարծես ոչ ոք տանը չէր: Հինգ բույսեր դուռը թակեցի, բայց ոչ ոք չբացեց այն: Նստեցի նրանց աստիճաններից ու փորձեցի սպասել նրանց տան անդամներից որևէ մեկին: Առանց տեղեկություն իմանալու նրա առողջական վիճակի մասին ոչ մի տեղ չէի կարող գնալ:

Մոտ երկու ժամ սպասեցի նրանց տան մոտ, արդեն կամաց-կամաց մթնում էր:

Շատ էի հոգնել: Նստեցի աստիճաններից, աչքերս փակեցի ու գլուխս հենեցի պատին:

–Ներեցե՞ք:

Հանկարծ լսվեց ինչ-որ տղամարդու ձայն, գլուխս բարձրացրի և տեսա մի բարձրահասակ տղամարդու, մի ակնթարթում հասցրի գննել նրան. շատ գեղեցիկ էր:

–Հայրի՛կ, նա Անգելան է, տատիկի հետ է աշխատում,– ասաց Արփենիկը:

–Ողջույն, Անգելա՛,– ասաց Արփենիկի հայրը:

–Բարև Ձեզ: Որտե՞ղ է տիկին Գայանեն:

Փաստորեն՝ այդ տղամարդը տիկին Գայանեի տղան էր: Նրա հետ էին Արփենիկն ու Տիգրանը, իսկ Անահիտը չկար:

–Նա հիվանդանոցում է, այնտեղից ենք գալիս, ի դեպ, ծանոթացի՛ր, նա հայրս է՝ Լևոնը:

–Ուրախ եմ,– ժպտալով ասացի նրան:

–Դուք հա՞յ էք:

–Հայ եմ,– հպարտ ասացի ես:

–Եկե՛ք մերս գնանք, այնտեղ կխոսենք,– ասաց Արփենիկի հայրը:

Մենք ներս գնացինք և սկսեցի անգուսպ կերպով հարցեր տալ: Փաստորեն՝ իրոք, նա թոքերի հետ կապված խնդիր ունի և ոչ միայն. նա նաև ունի սրտի հետ կապված խնդիրներ, որոնք ամենախանգարողն են նրա առողջությանը: Հիմա պետք է հատուկ բուժում ստանա, որից հետո ժամանակավորապես կդադարեն ցավերը, հազը:

–Արփեն՝, կարո՞ղ ենք վաղը միասին գնալ տատիկիդ մոտ:

–Իհարկե, կարող ենք: Ձեր աշխատանքի վայրին մոտ է: Վերջացնելու ժամին կգամ այդտեղ, միասին կգնանք: Մայրիկն այսօր նրա մոտ է մնալու:

–Շատ լավ, ուրեմն պայմանավորվեցինք: Արդեն գնամ, ուշ է:

Երբ մտա Արփենիկենց տուն, տեսա, որ տան մի անկյունում փոքրիկ տնակ էր դրված, որի մեջ քնած էր շունը, որ երեկ նվիրել էի նրան: Փաստորեն՝ սիրում է կենդանիներ:

Շատ հոգնած էի, տուն մտնելուն պես արագ պառկեցի՝ քնելու:

13

Հունիսի 21

Այսօր շատ շուտ էի արթնացել. երևի վեցը կլիներ: Լոգանք ընդունեցի, հետո գնացի, սառնարանից վերցրի ջեմ, որ երեկ նկուղից էի բերել, և կարագով կերա այն: Շատ համեղ էր, նախկինում չեմ փորձել, միշտ կարծել եմ տհաճ համ ունի, բայց, փաստորեն, սխալվել եմ:

Դուրս եկա տանից ու գնացի աշխատանքի: Գործավարը միջանցքում էր, մոտեցավ ինձ և ասաց.

–Բարև, Անգելա՛, տնօրենն ասաց, որ քեզ փոխանցեմ, որ ներկայանաս իր աշխատատեղյակ. քեզ հետ խոսելու բան ունի:

–Բարև Ձեզ, լավ,– վախեցած տոնով ասացի ես:

«Ինձ աշխատանքից ազատում է, հաստատ, իմ աշխատանքը նրան դուր չի եկել, հիմա ի՞նչ եմ անելու»,– սրտնեղած մտածում էի ես:

Գնացի իր աշխատասենյակի մոտ, դուռը թակեցի և ներս մտա.

–Ներեցե՛ք, կարելի՞ է, կանչե՞լ էիք ինձ:

–Նե՛րս եկեք, Անգելա՛, նստե՛ք:

Շարունակեցի լսել նրան՝ առանց որևէ բառ ասելու:

–Ես Ձեզ պետք է ասեի ամսվա վերջում՝ ընդունվում եք աշխատանքի, թե ոչ, բայց կարծում եմ՝ այդքան պետք չէ սպասել:

«Դե գիմվի՛ր համբերությամբ և հանկարծ չնեղվես, ուղղակի հաջողություն կասես և դուրս կգաս, Անգելա՛»,– ինքս ինձ կրկնում էի մտքի մեջ:

–Ինձ գոհացրել է Ձեր աշխատանքը, նախարարության աշխատողներին՝ ևս, Դուք ընդունված եք աշխատանքի: Շնորհավորում եմ:

–Ի՞նչ,– զարմացած հարցրի ես:

–Այո՛, արդեն Դուք պաշտոնապես աշխատելու եք մեր հրատարակչությունում: Մի քանի փաստաթղթեր կան, կստրագրեք, և կհաստատվի ամեն բան, դրանք վաղը այստեղ կլինեն:

Երբ արդեն ուզում էի դուրս գալ, նա հետ կանչեց ինձ.

–Մեկ րոպե, Դուք նաև պարզատրվել եք որոշակի գումարով Ձեր փայլուն աշխատանքի համար, խնդրում եմ վերցնել սա, իսկ Ձեր աշխատավարձը կստանաք հուլիսի 16-ին:

«Փայլուն է»,– մտածեցի ես:

Վերցրի գումարը և դուրս եկա:

Քանի որ գումար ունեի արդեն, որոշեցի դատարկ ձեռքով չգնալ տիկին Գայանեի մոտ:

Մտա մեր աշխատասենյակ, մեկը թերթ էր կարդում, մյուսը գրամեքենայով տեքստեր էր հավաքում, ես էլ նստած անգլերենից գերմաներեն թարգմանություններ էի կատարում:

Այնքան էլ շատ չէր գործս, հասցրի աշխատանքի ավարտվելու ժամից մի փոքր շուտ ավարտել: Բոլորին հաջողություն ասացի և դուրս եկա, որ Արփենիկի հետ գնամ հիվանդանոց: Նա արդեն ինձ էր սպասում: Միմյանց ջերմորեն գրկեցինք:

–Արփենիկ, այստեղ՝ մոտակայքում, մրգերի խանութ կա՞:

–Այո՛, կա:

–Ուրեմն արի սկզբում գնանք այնտեղ:

Մոտ հինգ բույս քայլելուց հետո հասանք խանութի մոտ: Արփենիկի սիրելի մրգերից գնեցի ու շարունակեցինք մեր ճանապարհը:

–Իսկ Տիգրանը ո՞ւր է:

–Մորաքրոջս մոտ է:

Հասանք այդ հիվանդանոցի մոտ, բարձրացանք երկրորդ հարկ: Նա չորրորդ պալատում էր:

Ներս մտա և ամուր գրկեցի նրան:

–Բարև Ձեզ,– ողջունեցի Անահիտին և տիկին Գայանեին,– ինչպե՞ս եք, տիկին Գայանե, այնքան էի անհանգստանում Ձեզ համար:

–Արդեն լավ եմ, քիչ-քիչ կազդուրվում եմ: Ես սպասում էի քեզ, գիտեի, որ կգաս:

–Իհարկե, ինչպե՞ս կարող էի չգալ տատիկիս մոտ: Այս մրգերը Ձեզ համար են. Անահի՛տ, անպայման կտասս, որ ուտի, իրեն ավելի լավ կզգա:

–Շնորհակալ եմ, աղջիկս, բայց կարիք չկար:

–Տիկին Գայանե, գիտե՞ք, այսօր ինձ ընդունեց աշխատանքի պարոն Շնեյդերը:

–Ես չէի կասկածում, որ դու քեզ կարդարցնես, ապրե՛ս, ի դեպ, նա միշտ գովեստի խոսքեր է ասում քո հասցեին, քեզ շատ է սիրում,– իր նուրբ ժպիտով ասաց տիկին Գայանեն:

–Արփենիկ, արի՛ միասին գնանք տատիկի դեղերը ստանալու, բժիշկը կանչել է,– ասաց Անահիտը:

–Եկա, մա՛մ:

–Ներեցեք մեզ, հիմա կգանք:

–Տիկի՛ն Գայանե, չցանկացա նրա ներկայությամբ ասել, որ շողորորթանք չհամարի, բայց շատ համեստ և Ձեզ արժանի հարս ունեք:

–Շնորհակալ եմ, ես էլ եմ նրան շատ սիրում հարազատ աղջկա նման:

Շատ քիչ է ինձ հանդիպել, որ սկեսուրը իր հարսին սիրի հարազատ աղջկա նման, առավել ևս՝ հարսը, որ սկեսուրին սիրի իր հարազատ մոր պես: Դա երևի դաստիարակությունից է կամ մարդու տեսակից, բայց շատ կարևոր է հարգել ցանկացած մեծի. մի օր դու էլ ես մեծանալու, իսկ աշխարհում միշտ բումբերանգի օրենքն է գործում:

Անահիտենք վերադարձան: Մտածում էի նրանց հետ տուն գնալ:

–Անահիտ, այսօր տուն գնալո՞ւ ես:

–Ո՛չ, այսօր էլ կմնամ մայրիկի մոտ:

–Անահի՛տ, Արփենիկի ու Անգելայի հետ կգնաս, դու ամբողջ գիշեր աչք չես փակել, հոգնել ես, գնա՛ և հանգստացի՛ր: Ես արդեն լավ եմ, բուժբույրերն էլ աշխատում են ամբողջ գիշեր:

–Ճիշտ է ասում տատիկը. Անահի՛տ, արի՛ գնանք, մի փոքր կհանգստանաս, վաղն էլի կգաս:

–Լավ-լավ,– ասաց Անահիտը:

Ամբողջ ճամապարհին գրուցեցինք, առաջարկեցի Անահիտին գալ մեր տուն, բայց մերժեց. շատ հոգնած էր և ցանկանում էր քնել:

Նրան կարողացա համոզել, որ Արփենիկը գա և մնա մեր տանը, իսկ առավոտյան կվերադառնա:

Անահիտին ճանապարհեցինք տուն, իսկ ես և Արփենիկը եկանք մեր տուն, մա առաջին անգամ էր մեր տանը:

–Որտե՞ղ կքնես,– հարցրի նրան և ցույց էի տալիս մեր տան սենյակները:

–Քո կողքին,– ժպտալով ասաց նա:

–Թող լինի այդպես,– սիրով համաձայնեցի ես,– այստեղ գիշերազգեստ ունենմ, մայրիկն էր գնել, բայց չեմ հասցրել հագնել:

–Գեղեցիկ է: Կգաս՝ խաղ խաղանք:

–Ի՞նչ խաղ:

–Իրար հարցեր տանք և անեղծ պատասխաններ հնչեցնենք:

–Դե սկսի՛ր:

–Սիրահարվե՞լ ես երբևէ:

–Այո՛,– հոգոց հանելով ասացի ես:

–Կպատմե՞ս ինձ նրա մասին:

–Առանձնապես պատմելու բան էլ չկա: Նա հրեա էր ազգությամբ: Մենք սիրում էինք իրար, բայց մի քանի ամիս առաջ նա վերջ ինձ և ամուսնացավ իտալուհու հետ:

–Սիրո՞ւմ ես նրան հիմա:

–Ո՛չ,– ծիծաղելով ասացի ես,– իսկ դու սիրե՞լ ես երբևէ:

–Ո՛չ, ես չեմ ուզում, ինձ չի հետաքրքրում սերը. ով սիրում է, վերջում անպայման հիասթափվում է:

–Ուղղակի պետք է ճիշտ մարդու սիրել, Արփե՛ն:

Ես լուռ լսում էի Արփենիկին, նա փոքր էր տարիքով, բայց հասկանում էր բավականին բաներ:

–Եթե հնարավորություն ունենայիր, անցյալ կմեկնեի՞ր, թե՞ ապագա,– հարցրի ես Արփենիկին:

–Ապագա. ինձ շատ հետաքրքիր է, թե ինչպիսին կլինեն Երկիր մոլորակը, մարդիկ մոտավորապես յոթանասուն տարի հետո:

–Հետաքրքիր է. չեմ մտածել այդ մասին: Երկրագունդը այդքան կգոյատևի՞:

Շատ ուշ ժամի պառկեցիմք քնելու, ամբողջ գիշեր խոսում էինք, ծիծաղում և պատմություններ իրար պատմում:

Առավոտյան զարթուցիչի ձայնից արթնացանք, բայց շատ դժվարությամբ:

Ես պետք է գնայի աշխատանքի, բայց միևնույն ժամանակ ուզում էի մնալ Արփենիկի հետ: Աշխատանքս այսօր շատ-շատ էր: Վերցրի հետս, որ տանը շարունակեմ: Արփենիկին տարա ինձ հետ աշխատանքի վայր: Բոլորը հավանեցին Գայանեի թոռնուհուն: Աշխատանքը վերջանալուց հետո տեսա, որ Արփենիկի ընտանիքը մեքենայով ինձ էր սպասում:

Ողջունեցի նրանց, և շարժվեցինք դեպի հիվանդանոց:

Տիկին Գայանեի վիճակը կայունանում էր, գույնը տեղն էր եկել, և դա բոլորիս շատ էր ուրախացնում:

Նրանք ինձ հասցրին տուն և գնացին: Ներս մտա և հատակին տեսա ծրար:

Երևի իմ գնալուց հետո փոստատարն էր բերել և դռան վրայի նամակի տեղով ներս էր գցել:

Փաստորեն՝ Մարջն էր գրել.

«Անգե՛լ, եթե դու կարողանաս գալ Ֆրանսիա, Հարութը ծանոթներ ունի այստեղ, կդասավորենք այնպես, որ դու կունենաս ֆրանսիական անչնագիր, մենք Խորհրդային Ռուսաստանին կդիմենք, որ մայրդ հայ է եղել, և դու պարտասուր ես հրաժարվել Ֆրանսիայի քաղաքացիությունից և վերադառնալ Հայաստան՝ սպրեւելու, բայց դու էլ հերդարչի ճանապարհ չես ունենա, այնպես որ որոշի՛ր:

Արդեն քանի տարի է՝ հազարավոր հայեր հեյր են վերադառնում իրենց երկիր:

Հնարավոր է՝ շուրով դադարեցնեն զանգվածային հայրենադարչությունը, արագ մրաժի՛ր. դու կարող ես միայն այստեղից մեկնել: Մարջ»

Արագ որոշե՞մ, բայց ինչպե՞ս:

Ինչպե՞ս թողնեմ մայրիկի ու հայրիկի գերեզմանն այստեղ ու հավերժ հաստատվեմ ապրելու Հայաստանում:

Վերցրի թուղթ ու գրիչ և նամակ գրեցի Մարջին.

«Մա՛րջ, ես մենակ չեմ կարող գնալ, ես ոչ մի տեղ չգիտեմ Հայաստանում, նույնիսկ լեզուն չգիտեմ:

Իսկ մայրիկի ու հայրիկի գերեզմանը ո՞ւմ թողնեմ, ո՞նց վայրահեմ ուրիշին, ախր, սիրտս այստեղ է, բայց Հայաստան գնալ եմ ուզում:

Ես կմտածեմ, բայց դու ինչ պատրաստան նամակ ուղարկի՛ր. սպասելու եմ»:

Աշխատանքի վայրի բոլոր թարգմանություններն արագ կատարեցի և պառկեցի քնելու:

Հունիսի 23

Առավոտյան նամակը տարա փոստատարի մոտ և գնացի աշխատանքի: Անհամբեր սպասում էի պատասխանի:

Եթե հանկած որոշեի մեկնել, պետք է տունը վաճառեի:

Ուզում էի խորհրդակցել տիկին Գայանեի հետ, բայց միայն աշխատանքից հետո էր դա հնարավոր:

Թարգմանած թղթերը ներկայացրի գործավարուհուն և գնացի նոր նյութեր թարգմանելու: Մեզ հետ աշխատողներից մեկը, ով անչափ գրագետ և հաճելի կին է, ինձ հարց ուղղեց.

–Անգելա՛, այդքան լավ ես թարգմանում, գիտես շատ լեզուներ, այդքան խելացի աղջիկ ես, ինչո՞ւ քո սեփական գիրքը չես գրում, նկատել եմ, որ փայլուն մտքի շարադրանք և խոսք ունես:

–Տիկին Ջուլիետ, շնորհակալ եմ լավ խոսքերի համար, բայց երբևէ չեմ փորձել գիրք գրել, անգամ չեմ մտածել այդ ուղղությամբ, բայց լավ միտք է, կարծում եմ՝ արժի փորձել:

Ես մի ամբողջ օր մտածել եմ նրա այդ ասածի շուրջ:

Աշխատանքս ավարտելուց հետո գնացի հիվանդանոց: Տիկին Գայանեի հետ բավականին խոսեցինք, նրան պատմում էի

հրատարակչությունից և խորհուրդ հարցրի, արդյո՞ք ճիշտ է Հայաստան մեկնել:

Նա միանգամից դրական արձագանք տվեց, սակայն նշեց, որ ամեն ինչ այնքան էլ հեշտ չէ, ամեն բան օրենքով է և շատ խիստ Խորհրդային Ռուսաստանի կազմում լինելու պատճառով, բայց մարդիկ չեն բողոքում: Ասաց նաև, որ ամեն օր հերթի են կանգնում՝ հաց ստանալու համար, Խորհրդային Ռուսաստանը գրեթե ամեն բանով ապահովում է իր կազմի մեջ եղած երկրներին, ամեն բան կա, բայց դժվար կլինի ինձ համար:

Ասաց, որ հնարավոր է ինքն էլ գա ինձ հետ Հայաստան:

Խնդրեցի նրան, եթե համկարծ որոշեմ մեկնել, և նա չգա, գոնե ամիսը մեկ անգամ այցելի ծնողներիս գերեզմանին:

Տիկին Գայանեի բժշկի հետ խոսեցի, ասաց, որ վաղը դուրս կգրեն նրան, իսկ մնացած բուժումը կստանա տան պայմաններում: Շատ ամուր և կյանքին նվիրված կին է: Ես չեմ հանդիպել մի մարդու, որն այդքան փորձությունների միջով անցած լինի, բայց շարունակի ապրել այնպես, կարծես իր կյանքը կազմված չէ խնդիրներից: Անհնար է լինել այդպիսի ուժեղ ու անկոտրուն կին:

Նա մի քանի տարի առաջ է կորցրել իր ամուսնուն: Ծանր ապրումներից նրա մոտ ի հայտ էր եկել քաղցկեղ, բայց առանց որևէ դեղորայքի նա բուժվել է ինքնուրույն: Հարցնում եմ, թե ոնց է այդպես հնարավոր, ասում է.

«Մարդն է իր մտքերը և ապրումները կառավարում, որ կողմ որ ուղղված են մտքերդ, դա էլ անդրադառնում է քեզ վրա: Փորձիր միշտ դրականը մտածել և մտքերդ կենտրոնացնել նպատակներիդ կողմ, կտեսնես արդյունքն ու կապշես: Վստահի՛ր ինձ»:

Նա իրեն երբեք հիվանդ չի համարում, այս անգամ էլ մի կերպ էին համոզել, որ տանեին հիվանդանոց:

Հաճելի՞ է, չէ՞, երբ շփվում ես դրական լիցքերով մարդկանց հետ, որոնք քեզ դրականն են տալիս նույնիսկ դժվար պահերին, իսկ բացասական և անընդհատ բողոքող մարդիկ ի վերջո քեզ էլ դժբախտ կդարձնեն:

Հունիսի 24

Այսօր ուրբաթ է, իսկ վաղը տանն ենք: Կարծում եմ այսօր չեմ կարողանա գնալ տիկին Գայանեի մոտ, գործերս այնքան շատ են, որ դժվար թե հասցնեմ վերջացնել, իսկ վաղը անպայման կգնամ նրա մոտ:

Երբ մտա աշխատանքի վայր, գործավարուհին հարցրեց.

–Անգե՛լ, դու և Գայանեն մոտ եք, որևէ լուր ունե՞ս նրանից:

–Այո՛, նա արդեն լավ է, այսօր տուն պետք է գնա:

–Գեմ չե՞ք լինի վաղը գնանք նրան հյուր,– կողքից ասաց մեզ հետ աշխատողներից մեկը:

–Ես դեմ չեմ, միայն ուրախ կլինեմ,– ասացի ես,– տիկին Գայանեն էլ ուրախ կլինի, կարծում եմ. նա հյուրեր ընդունել շատ է սիրում:

Բոլորը համաձայնեցին մեկ մարդու նման: Վաղը ժամը երեքին պետք է հավաքվեինք նրանց տան մոտ: Որոշեցինք մի մեծ ծաղկեփունջ մեզ հետ վերցնել:

* * *

Աշխատանքից հետո եկա տուն ու սկսեցի թարգմանությունները կատարել: Բավականին ուշ քնեցի:

Հունիսի 25

Երբ արթնացա, տասնմեկն էր: Արագ գնացի փոստը ստուգելու, և հուրախությամբ ինձ՝ փոստատարը նամակը արդեն բերել էր: Մարջը ինձ պատասխան նամակ էր ուղարկել.

«Երանի կարողանալի հիմա կողքիդ լինել և գրուցել քեզ հետք, ոչ թե օրերով սպասել, որ նամակներդ ինչ հասնեն: Արդյո՞ք կգա ժամանակ, երբ նամակը նույն պահին կհասնի, և պատասխան նամակն էլի նույն պահին հետք կգա: Չնայած փոստատարը կախարդ չէ, որ նամակը նույն պահին հասցնի հասցեատիրոջը:

Այսպեսից բոլորը քեզ բարևում են ու շար են կարողել:

Ծնողներիդ գերեզմանի մասին մի՛ անհանգստացիր, նրանք քեզ կհասկանան: Գերմանիայից Հայաստան դուք կհեռվանաք իրարից, բայց սիրտդ թող երբեք չհեռանա մորդ սրտից:

Որոշում կայացրո՞ւ, քանի դեռ շուր է: Մենք քեզ սպասում ենք»:

Արագ ձեռքիս տակ ընկած թուղթը և թանաքամանը վերցրի և սկսեցի գրել.

«Ես էլ եմ ողջունում ձեզ:

Մա՛րջ, ես որոշել եմ, որ կգամ, բայց ինչ հետ պետք է գանաս րիկին Գայանեն: Ես քեզ նրա մասին չեմ պարմել: Նա ինչ հետ աշխատում է հրատարակչությունում: Հայ է՝ վաթսունն անց կին:

Ես այս քանի օրը քեզ կասեմ՝ գալիս եմ, թե ոչ:

Իմ կողմից գրկիր Մարիամին և Շուշիկին: Համբուրում եմ»:

Հագուստս փոխեցի, արագ նախաճաշեցի ու գնացի փոստային բաժանմունք:

Երբ վերադարձա, արդեն ժամը երկուսն էր, իսկ մենք երեքին պետք է գնայինք տիկին Գայանեի տուն:

Պայուսակս թողեցի տանը ու դուրս եկա: Երեկ գումար էի թողել նրանց մոտ, որ իմ կողմից էլ ծաղիկներ գնեն:

Արդեն հավաքվել էին բոլորը մեր պայմանավորված վայրում: Ես դուռը թակեցի:

–Աստված ի՛մ,– զարմացած դեմքով ասաց Արփենիկը,– համեցեք:

Մենք մտանք ներս, և Արփենիկը մեզ ուղեկցեց տիկին Գայանեի սենյակ: Նա զարմացած էր և միևնույն ժամանակ շատ ուրախացած մեր այս անսպասելի, բայց հաճելի անակնկալից: Մեկ-մեկ մտածում եմ՝ եթե այդ հրատարակչությունը և նրանք չլիներին, ես ուղղակի դանդաղ կմահանայի մենակության մեջ, բայց նրանք ինձ երջանկացնում են:

Մեկ բաժակ սուրճ խմեցինք, Անահիտը մեզ հյուրասիրեց իր պատրաստած խմորեղենը:

Անգուզական համ ուներ, ասաց հայկական գաթա է: Չգիտեմ ինչպես են պատրաստում, առաջին անգամ էի փորձում, բայց շատ էի հավանել:

Ես ավելի շուտ տուն եկա: Հագուստս փոխեցի և սկսեցի թարգմանել նյութերը, որ մինչև երկուշաբթի վերջացնեի:

Մոտ մեկ ժամ աշխատելուց հետո հասկացա, որ սոված եմ: Տապակած կարտոֆիլ պատրաստեցի. դա իմ ամենասիրելի ուտելիքն է:

Դուռը թակեցին. մի տղամարդ էր: Գլխին սև գլխարկ կար, հագնված էր շատ պաշտոնական ձևով:

– Բարև Ձեզ, կարելի՞ է, – հարցրեց նա:

Ես սառած մնացի իմ տեղում: Չգիտեի, թե ով է, ի՞նչ իմաստ ուներ նրան ներս հրավիրելը:

– Ներեցե՛ք, բայց ես Ձեզ չեմ ճանաչում, ներկայացե՛ք, խնդրում եմ:

– Ես իրավաբան եմ, Ձեր ծնողների ժառանգությունը ստանալու համար Դուք պետք է ստորագրեք որոշ փաստաթղթեր:

– Կարո՞ղ եմ տեսնել:

– Դա ֆրանսերենով է, Դուք հասկանո՞ւմ եք:

– Ֆրանսերե՞ն, ո՛չ, բայց ուզում եմ տեսնել:

Ես իրականում հասկանում էի ֆրանսերեն, չցանկացա ասել, որ գիտեմ՝ հասկանալու համար նրա անելիքը և թղթի վրա գրվածը, բայց տարօրինակը գիտե՞ք՝ որն է, ես ժառանգության փաստաթղթերը ստորագրել եմ նոտարական գրասենյակում, իսկ ինչ-որ տղամարդ գալիս է և ինձ ասում, որ ստորագրեմ փաստաթուղթ ֆրանսերենով, կասկածելի՞ չէ:

Աչքի անցկացրի և հասկացա, որ ուզում են իմ ունեցվածքը իրենցով անել:

– Ներեցե՛ք, ո՞րն է Ձեր իրավաբանական ընկերությունը, ներկայացե՛ք և ցո՛յց տվե՛ք Ձեր անձը հաստատող փաստաթուղթը:

–Ես... ես աշխատում եմ նոտարական գրասենյակում՝ այստեղից ոչ հեռու գտնվող,– կմկմալով ասաց նա,– փաստաթուղթը մնացել է աշխատանքի վայրում:

–Ի՞նչ եք կարծում, ես այնքան միամիտ եմ, որ հավատամ Ձեր հնարած հեքիաթների՞ն, և այն, որ ես ֆրանսերեն չգիտեմ, պետք է առիթից օգտվե՞ք: Ինձ ներկայացրե՛ք ձեր աշխատանքի վայրից փաստաթուղթ, որը կհաստատի Ձեր անձը, այդ ժամանակ կստորագրեմ, իսկ հիմա գնացե՛ք,– ասացի ես և դուռը փակեցի նրա դեմքին:

«Իսկ եթե ոստիկանությանը տեղյակ պահե՞մ»,– մտածեցի ես:

Կյանքում ինչպիսի մարդիկ ասես, որ չեն պատահի:

Ես պատուհանից նայեցի տեսա, որ նստեց մի մեքենա և գնաց: Եթե էլի երևար, ես նրան ոստիկանների ձեռքը կտայի:

16

Հոնիսի 26

Ամբողջ գիշեր անհանգիստ եմ եղել: Առավոտյան ժամը հինգին հազիվ կարողացա քնել:

Սարսափելի է, երբ տանը մենակ ես ապրում, ամեն ոտնաձայն, որ լսվում է դրսից, քեզ ստիպում է վախենալ, մանավանդ, երբ շատ վախկոտ ես:

Աչքերս փակվում էին, անընդհատ հորանջում էի: Գնացի խոհանոց՝ թեյ պատրաստելու համար: Ինձ համար նշանակություն չունի տարվա եղանակը, ես միշտ թեյում եմ:

Միացրի ռադիոն, որ տեղեկանամ երկրի քաղաքական վիճակից, բայց ոչ մի հետաքրքիր բան:

Պառկեցի՝ մի փոքր հանգստանալու:

Մտածում էի՝ արժի՞ գնալ Խորհրդային Հայաստան թե՞ ոչ, ես չգիտեի ոչ մի առավելություն ու թերություն այդ երկրի վերաբերյալ:

Ի՞նչ կլինի հետո, երբ մեկնեմ այնտեղ:

Տիկին Գայանեն հիվանդ է, դժվար թե կարողանա գալ ինձ հետ, ստացվում է՝ պետք է մենակ մեկնեմ:

Հանկարծ նկատեցի, որ նամակ ներս գցեցին: Վերցրի այն ու նայեցի. վրան ոչինչ չկար գրված: Պատուհանից նայեցի. էլ ոչ ոք չկար: Դժվար Մարջը լինեք, նախ նրա ծրարների ձևն ու գույնն այդպիսին չեն, հետո էլ այսքան շուտ չէր գա նրա նամակը:

Բացեցի այն և սկսեցի կարդալ.

«Բարև, Անգել, ինչ հիշո՞ւմ ես: Ես եմ՝ Վիկտորյան: Միքայել-լենց տասն ենք խոսել վերջին անգամ: Չէի կարող խոսել այնքան անկեղծ, որքան կարող եմ գրել:

Ցավում եմ ծնողներիդ կորցնելու համար:

Դեկտեմբերին ընդամենը մեկնեցինք՝ Միցիլիսյում ապրելու, բայց խնդիրներ եղան ու հեղուկ վերադարձանք:

Չգիտեմ՝ կհիշես, թե ոչ, շփում էինք ես ու Պիրերը, որը եղել է քո դասարանից, իմ Միցիլիս մեկնելուց հետո ինչ լքեց, հիմա Բեռլինից տեղափոխվել են Պուրտան, առհասարակ չենք շփում և չենք տեսնում իրար: Ես մենակ եմ, և դա ինչ սպանում է ներսից:

Խնդրում եմ, օգնի՛ր ինձ, ես ուզում եմ՝ ինչ մենակ չթողնես:

Մեր տան հասցեն նշում եմ ներքևում: Կսպասեմ: Խնդրում եմ, կգաս»:

«Իհարկե, հիշում եմ ամեն ինչ էլ հիշում եմ արդեն: Ես դեռ նրան ասում էի, որ Պիրերը լուրջ նպատակներ չունի, բայց չէր հասկանում:

Ինչ լավ է՝ հիշել է: Հիշում են, երբ մենակ են մնում: Չօգնել էլ չեմ կարող: Կզնամ և կխոսեմ հետը»,– մտածեցի ես:

Նամակը ծալեցի և դրեցի սեղանին: Հագուստս փոխեցի և դուրս եկա տանից, նստեցի տրամվայ, որ հասնեմ նրանց տուն: Վիկտորյան իմ տարիքին է: Նա շատ պարզամիտ ու ազնիվ աղ-

ջիկ է, չունի կամքի ուժ և իր անձը առաջնային դասելու կարողություն:

Մի քանի բույս հետո հասա այնտեղ, բայց, ցավոք, նրանց տան տեղը հստակ չէի հիշում, մնում էր միայն հարցուփորձ անելի:

Քանի որ սիրում էի ծաղիկներով զարդարված բակ, իսկ այդ տան բակը կատարյալ մաքուր էր և գեղեցիկ, որոշեցի հենց այդ դուռն էլ թակել:

Դուռը բացեց բարձրահասակ, շագանակագույն աչքերով, սև մազերով մի տղա, որը զարմանալի գեղեցկություն ուներ: Հագվիլ մի կերպ խոսքս ձևակերպելով՝ ասացի.

–Բարև Ձեզ, ներեցեք, Վիկտորյա Միլերների բնակարանի տեղը չէի՞ք ասի,– հարցրի ես:

–Բարև Ձեզ,– ժպտալով ասաց նա,– այն տունն է,– ձեռքով ցույց տվեց դիմացի տունը,– ուղեկցե՞մ Ձեզ:

Ես պապանձվել էի իմ տեղում:

–Շնորհակալ եմ, կգնամ,– ասացի ես:

Հասա նրանց տուն և թակեցի դուռը: Հենց Վիկտորյան էլ բացեց այն և ինձ տեսնելուն պես փաթաթվեց, համբուրում էր և ասում.

–Ես գիտեի, գիտեի, որ կգաս:

Ինձ հրավիրեց ներս: Տանը մենակ էր, ծնողներն աշխատանքի էին երևի: Եկավ և նստեց իմ դիմաց:

–Մենակ ենք տանը, ինչպես նկատեցիր, հայրիկն ու մայրիկը գնացել են աշխատանք գտնելու: Սիցիլիա մեկնելուց հետ ազատվել էին աշխատանքից: Մեր տան մեջ հիմա մենք վարձով ենք ապրում, մեկնելուց առաջ վաճառել էինք:

–Կներես, իհարկե, բայց ինչո՞ւ եք վաճառել, եթե կարող էիք դա ընթացքում անել:

–Մի սուտասան և դավաճան ընկեր ուներ հայրս, նա հենց այնտեղ էր ապրում՝ Մեսինայում, հորս լավ աշխատանք էր առաջարկում այնտեղ՝ կապված ծովամթերքի հետ: Վստահեցնելով, որ

ամեն հարց արդեն լուծված է՝ մեզ ասաց, որ վաճառենք մեր տունը, գումարը տանք իրեն, որ մեզ համար տուն գնի այնտեղ, որն արդեն իբր գտել էր: Հայրս էլ նրան համարելով իր մոտ ընկեր՝ վստահում է և անում նրա ասածով: Նա մեզ տարավ իր նշած քաղաքը, բայց մի կեղտոտ հանրակացարանում մեզ տեղավորեց, ասաց՝ տան տերը մի փոքր գործ ունի՝ այն տան հետ կապված, որն իբր գնել էր և ստիպված մեզ տեղավորել էր հանրակացարանում: Հորս տարավ այդ գործարանում աշխատելու: Մի քանի ամիս աշխատեցնելով նրան՝ չէին վարձատրում: Հետո էլ լուր չուներցանք նրանից: Հայրս ուրիշ աշխատանք գտավ, քիչ եկամտաբեր էր, բայց ամեն ինչ անում էր, որ գումար հավաքվի և հետ վերադառնանք: Հիմա այստեղ ենք և ամեն ինչ անում ենք՝ հինը վերադարձնելու համար: Քեզանից պատմիր, ինչպե՞ս են քո ու Միքայելի հարաբերությունները:

–Ցավում եմ, որ վստահել եք անպետք մարդու: Ես էլ եմ վստահել այսքան ժամանակ անպետք մարդու, փաստորեն: Նա մարտ ամսին մեկնեց Իտալիա և ամուսնացավ այնտեղ: Արի մեր խոսակցության թեման փոխենք ու խոսենք ավելի կարևոր բաներից: Ասացիր, որ մենակ ես, բայց նայիր ինձ, ես ավելի մենա՞կ չեմ, քան դու:

–Դե... այո՛:

–Ես կերպգեի ցանկացածի փոխարեն լինել, որոնք ունեն ծնողներ:

–Մենք արդեն մեծ ենք,– ասաց Վիկտորյան:

–Ես ինձ երբեք մեծ չեմ համարել, դու գիտես դա, և միշտ ասում էի, քանի դեռ մեր ծնողները մեր կողքին են, մենք փոքր ենք: Ես ի՞նչ իմանայի, որ այսքան շուտ եմ մեծանալու:

Մենք լուռ էինք: Ուղղակի մտածում էինք: Երկուսս էլ մտածում էինք իմ ասածների շուրջ:

–Մորս հետ լեզու չեմ գտնում. անընդհատ վիճում ենք:

–Դեռ այդ խնդիրը չի՞ հարթվել:

–Կարծում եմ՝ դա երբեք էլ չի հարթվի:

Վիկտորյան և իր մայրը իրար հետ լեզու չեն գտնում: Նրան լսելով՝ ես հասկանում եմ, որ չի սիրում իր մորը, մայրն էլ՝ իրեն: Յավայի է, բայց պետք է լեզու գտնեն իրար հետ: Առանձնապես ընտանեկան անդորր չկա նրանց տանը. միշտ վիճում է ծնողների հետ, մի անգամ էլ տանից թողել էր ու դուրս էր եկել: Չգիտեմ՝ ինչով կարող եմ օգնել նրան, բայց գիտեմ, որ լավագույն օգնությունը մարդու կողքին լինելն է:

–Դու ախքանից հետո չե՞ս չարացել աշխարհի ու մարդկանց հանդեպ,– հարցրեց Վիկտորյան:

–Երբեք հոգիդ մի՛ լցրու չարությամբ, ինչքան էլ դեպքերը ստիպեն: Միշտ հոգիդ պահի՛ր խաղաղ, քանի դեռ այնտեղ ապրում է Աստված,– ասացի ես:

Նա լուռ ժպտում էր ինձ:

17

Հունիսի 27

Երեկ բավականին գրուցեցի Վիկտորյայի հետ, երբ նրա ծնողները վերադարձան, ես եկա տուն:

Այսօր աշխատանքի եմ, շաբաթվա առաջին օրն է: Կարծում էի՝ փոստում նամակ կլինի, բայց ոչինչ չկար:

Արագ պատրաստվեցի ու դուրս եկա:

Բոլորը իրենց տեղում էին և կատարում էին իրենց աշխատանքը: Ես գնացի գործավարուի ու մոտ փաստաթղթերը հանձնելու նպատակով:

Ճիշտ է, շատ լավն են ինձ հետ աշխատողները, բայց տիկին Գայանեի բացակայությունը ակնհայտորեն զգացվում էր:

Մտածում էի աշխատանքից հետո գնալ նրա մոտ և խոսել հետը, եթե ինձ հետ գա Հայաստան, կգնամ, եթե ոչ, ուրեմն ես էլ կմնամ այստեղ:

Աշխատանքս վերջացնելուց հետո գնացի նրանց տուն:

–Բարի երեկո,– ասաց Անահիտը և գրկեց ինձ:

Տիկին Գայանեն քնած էր, բայց հենց լսեց ձայնս, արթնացավ ու եկավ հյուրասենյակ: Փաստորեն՝ արդեն լավ էր, ու այդ փաստն ինձ շատ ուրախացրեց: Ամուր գրկեցի՞նք իրար և ասաց.

–Մեկ օր չէի տեսել քեզ, բայց հասցրել էի կարոտել, քաղցրս,– ասաց նա և ծիծաղեց իր հաճելի ձայնով:

Խոսում էի՞նք, և որոշեցի տալ այն հարցը, որը շատ բան կփոխեր:

–Տիկին Գայանե, մորաքույրս առաջարկում է, որ մեկնեն Խորհրդային Հայաստան և ապրեն այնտեղ: Ի՞նչ եք կարծում, արժի՞ գնալ:

–Իհարկե, էլի եմ ասում՝ գնա տատիկիդ և պապիկիդ մոտ. նրանք քո կարիքը շատ կունենան:

–Կգա՞ք ինձ հետ:

–Գա՞լ...– մի պահ տատանվեց և շարունակեց,– գիտես՝ լավ միտք է, բայց խոսք չեմ տալիս:

–Եթե գումարն է խնդիրը, ես կվճարեմ ձեր փոխարեն:

–Գումար ունեմ, առողջական վիճակս է վատ: Երբ որոշես մեկնել ինձ ասա, գուցե կարողանամ գալ, բայց մենակ ապրել չեմ կարողանա Հայաստանում: Ամեն պահին վիճակս կարող է վատթարանալ:

–Հասկանում եմ,– ասացի ես:

Տիկին Գայանե. երանի՜ նրա նման մարդիկ շատ լինեին աշխարհում: Ես սիրում եմ նրան:

Հունիսի 28

Առավոտյան աչքերս բացելուն պես վազեցի փոստի մոտ: Հուրախություն ինձ՝ այն դատարկ չէր: Մարջն էր.

«Բարև, աղջիկս:

Տեղեկացել եմք, որ ուզում եմ մինչև հոկտեմբեր ամիսը դադարեցնել հայրենադարձությունը:

Վաճառի՛ր Կրունը և արի՛ մեզ մուր:

Մինչև քո գալը Հարութը կլուծի անչնագրիդ հարցը: Արի՛ մեզ մուր, մինչև ամեն ինչ կարգավորվի, հետո այն կնոջ հետ միասին կմեկնենք»:

Ի՞նչ կարող էի անել: Որոշեցի տունը վաճառքի հանել: Ցուցանակ փակցրի դռան վրա:

Օրն այնքան էլ պարզ և հաճելի չէր, ամպամած էր ու մռայլ: Լսվեց դռան թակոց: Վիկտորյան էր:

–Բարի օր, կարելի՞ է:

–Անշուշտ, մե՛րս համեցիր: Ինչո՞ւ ես տխուր. լացել ե՞ս:

–Այո՛...

–Ի՞նչ է պատահել:

–Նրանք էլի վիճում են: Ոչինչ չի փոխվել իմ ընտանիքում: Դրանք անիմաստ պատճառներ են, բայց վեճերը անպակաս են իմ ընտանիքում: Մայրս որոշել է բաժանվել հորիցս, այդ փաստն ինձ շատ է տանջում: Ամեն բան փորձել եմ անել, բայց չի ստացվում ոչինչ: Ես նոր թողեցի և դուրս եկա տանից: Այլևս չեմ վերադառնա այնտեղ. ինձ ճնշված եմ զգում:

–Հանգստացի՛ր, նրանք քո ծնողներն են: Գնահատի՛ր նրանց ներկայությունը, կգա մի պահ, որ կերազես նրանց տեսնելու ու գրկելու մասին: Սրբի՛ր աչքերդ, ի՞նչ կխմես՝ թեյ, սուրճ:

–Ոչինչ, շնորհակալ եմ: Նրանք նույնիսկ չեն ցանկանում, որ ես աշխատեմ, բայց տունը մի կերպ եմք կարողանում պահել:

–Ինչո՞վ կարող եմ օգնել քեզ:

–Ուղղակի կողքիս եղի՛ր:

–Կողքիդ եմ, անխոս:

–Ես վախենում եմ,– ասաց Վիկտորյան և գլուխը կախեց:

–Ինչի՞ց ես վախենում:

–Ամեն ինչից՝ աշխարհից, մարդկանցից, փոփոխություններից, ծնողերիս բաժանման համար նույնպես:

Ես գրկեցի նրան և ասացի.

–Նրանց հետ խոսի՛ր, հանգի՛ստ նստեք ու գրուցե՛ք՝ առանց վիճելու: Նրանք մեծ են և անպայման կհասկանան քեզ, քո հոգին, քո մտքերը, չնայած երբեմն դա բարդ է հասկանալ: Համենայն դեպս խոսի՛ր և փորձի՛ր ստեղծել ընտանեկան հաճելի մթնոլորտ: Մթության մեջ փորձի՛ր որոնել և գտնել լույսը, որից հետո սենյակում շատ առարկաներ կտեսնես:

Նա իր խոսույն հայացքով փորձում էր որսալ ցանկացած բան, որ ասում էի:

–Հիշո՞ւմ ես մի քանի տարի առաջ:

–Մի քանի տարի առաջ, ի՞նչը:

–Պատերազմը:

–Չեմ սիրում խոսել ու վերհիշել այդ օրերը, բայց եթե կուզես, մի փոքր կխեսեսնք:

–Կցանկանայի: Որտե՞ղ էիք այդ ժամանակ, կարծես Բեռլինում չէիք,– ասաց Վիկտորյան:

–Այո՛, Բեռլինում չէիք: Մենք գնացել էինք Հայդեմբերգ. այնտեղ ավելի ապահով էր: Մոտակայքում մի խրճիթ կար, որտեղից անտանելի հոտ էր գալիս, հետո, երբ իմացա՝ դա ինչ հոտ էր, ես ցնցված էի, սարսափած: Ես փորձում էի հասկանալ մեր երկրի կառավարիչներին, զինվորականներին, բայց չէր ստացվում: Նրանք անմարդկային քայլեր էին անում: Ամեն պահ Միքայելն էր մտքումս, որ հանկարծ նրան ոչինչ չպատահի: Ինձ համար մեկ օրը տարի էր թվում, անհամբեր սպասում էի պատերազմի ավարտին:

–Ի՞նչ հոտի մասին է խոսքը:

–Բուռններներում «Ցիկլոն B» գազով խեղդում էին հրեաներին: Նրանց համակենտրոնացման ճամբարներ էին ուղարկում, վարակվում էին տիֆով, ուրիշ հիվանդություններով կամ ուղղակի մահանում էին սովից: Ծանր պահեր էին: Ի դեպ, դուք ո՞ւր էիք:

–Շվեյցարիայում: Սարսափելի է, գուցե լավ է, որ չեմ տեսել այդ ամենը:

–Ես էլ շատ բաներ չեմ տեսել, հիմնականում լսել եմ կամ հեռ-
վից տեսել:

–Իսկ Միքայելը չի՞ գրել քեզ:

–Չեմ սպասում:

–Նա սիրում էր քեզ:

–Այո՛, սիրում էր, անցյալով ձևակերպել այս նախադասու-
թյունը շատ ճիշտ էր:

–Գուցե, ես գնամ արդեն:

–Եթե կարիքս ունենաս, արի՛:

–Ցտեսություն, շնորհակալ եմ:

* * *

Լուսնի ճերմակաթույր լույսն ընկել էր պատուհանիս: Այդ ար-
ծաթափայլ գիշերում լսվում էր անձրևի թանձր ձայնը: Քամի էր,
բայց շատ հաճելի, թեթև: Ամռան անձրևը գեղեցիկ է և ասեմ ին-
չով. առավոտյան չկա էլ ոչ մի հետք գիշերվա քամուց ու անձրևից:
Գիտե՞ք ինչի է նման. երբ մեկը խառնում է քո հանգիստ կյանքը և
հետո զարմացած նայում, թե ինչ է պատահել:

Չեմ սիրում ամառը. խեղդում է այն ինձ ու շնչահեղձ անում.
ոչ թե շոգը, արևը, այլ... չգիտեմ, մի բան, որ չեմ կարողանում ա-
սել: Ատում եմ ամառն իր բոլոր գույներով ու երանգներով: Երա-
նի՛ բոլոր եղանակները միայն գարուններ լինեին, որ շնչել կարո-
ղանայի...

18

Հունիսի 29

Այսօր եղանակն էլի նույնն էր. առավոտյան քամին դադարել
էր, բայց անձրևը շարունակում էր գալ: Քաղաքը լցված էր խոնա-
վությամբ, երեկվա քամին փողոցը վերածել էր թղթե քաղաքի:
Թերթ վաճառողների թղթերը ցաքուցրիվ էին եղած, որոշ թղթեր
մարդիկ էին վերցնում ու գցում աղբամանը, մնացածն էլ՝ քաղաքը

մաքրող կանայք: Դուրս եկա փողոց: Գլուխս բարձրացրել էի ու նայում էի երկնքին, ամբողջ դեմքս թրջվել էր անձրից, բայց այնքան հաճելի էր: Բոլորը ինձ էին նայում, կարծես փոքրիկ երեխա լինեի, որ անձրև էր տեսել առաջին անգամ և ցատկոտում էր ուրախությունից: Չնայած դրան՝ ինձ համար միևնույն էր, թե ով էր նայում. ես ինձ երջանիկ էի զգում, կարևորը դա էր. երեխայի նման պտտվում էի ու դեմքս հառել էի արևին, սպիտակ կիսաշրջագծեստս ինձ հետ պտտվում էր և գնալով ավելի էր թրջվում: Ես ամբողջությամբ թրջված էի: Գնացի տուն հագուստս փոխելու: Դեռ պետք է աշխատանքի գնայի:

Աշխատանքի վայրում ամեն բան նույնն էր, թվում էր, թե արդեն դրանից էլ եմ ձանձրանում: Աշխատանքից մենակ էի վերադառնում:

Փողոցի մյուս կողմում մի տղա էր ինձ նայում, կարծես նրա դեմքը ինձ ծանոթ լիներ, բայց որտեղի՞ց՝ չէի հիշում: Նա նայում էր ինձ ու ժպտում: Անկեղծ էր ժպիտը նրա:

Մի պահ շառագունեցի նրա հայացքից, ես էլ ժպտացի ու գնացի տուն: Բայց որտե՞ղ էի տեսել նրան, փորձում էի հիշել:

Մտրճ էի ուզում պատրաստել, բայց, փաստորեն, վերջացել էր այն: Գումար վերցրի դարակից և դուրս եկա: Անձրևը դեռ շարունակում էր գալ: Նա դեռ մեր տան մոտ կանգնած էր, այն նույն տղան...:

–Բարև,– ֆրանսերենով ասաց նա:

Ես հիշեցի նրա դեմքը: Երբ Վիկտորյայի մոտ էի գնում, նրանից հարցրի տան տեղը, այն գեղեցիկ տղան էր: Չնայած որ ուզում էի բարևել նրան, այնուամենայնիվ ես առանց բառ ասելու շարունակեցի ճանապարհս:

–Ինչո՞ւ չես պատասխանում, չէ՞ որ ես քեզ պատասխանեցի, երբ հարցնում էիր ընկերուհուդ տան տեղը: Գերմաներեն լավ չեմ հասկանում, կներես գերմաներենիս համար,– ասաց նա և շարունակ քայլում էր իմ հետևից:

–Մի՛ փորձիր երեսով տալ,– պատասխանեցի նրան ֆրանսերենով:

–Հասկանո՞ւմ ես ֆրանսերեն,– զարմացած ասաց նա:

Գլխով արեցի:

Մի պահ կանգնեց, բացեց ձեռքերը, գլուխը բարձրացրեց և նայեց երկնքին, ինչպես ես էի արել:

–Այնքան հաճելի է անձրևը, այդպե՞ս չէ,– ասաց նա:

Ես քնծիծաղ տվեցի և մտա խանութ: Նայում էի խանութի պատուհանից, նա էլ՝ ինձ և ժպտում էր:

Դուրս եկա խանութից և գնացի տուն: Նա մնաց իր տեղում կանգնած:

* * *

Եղանակը քիչ-քիչ բացվում էր, անձրևն արդեն դադարել էր, իսկ գետնի խոնավությունը խառնվում էր տաք օդի ջերմությանը և հաճելի տաքության էր վերածվում: Ամռան անձրևը միշտ էլ հաճելի է: Դռան ձայնը լավեց: Կարծում էի՝ տիկին Գայանեն է, բայց սխալվեցի: Դա անծանոթ մի կին էր՝ կապույտ աչքերով, սև հագուստով ու ցիլինդրով, հաճելի արտաքին ուներ:

–Բարև Ձեզ, վաճառո՞ւմ եք տունը:

–Այո՛, վաճառվում է այն:

–Ցանկություն ունե՞մ գնել, կարո՞ղ եմ տեսել:

–Իհարկե, նե՛րս եկեք:

–Գեղեցիկ բակ ունեք, կոկիկ է ամեն բան: Քանի՞ սենյակից է բաղկացած:

–Շնորհակալ եմ, հինգ սենյակ ունի տունը, երկուսը առաջին հարկում են, երեքը՝ երկրորդ:

–Դուք մենա՞կ եք ապրում,– զարմացած դեմքի արտահայտությամբ հարցրեց նա:

–Իհարկե, ո՛չ, ծնողներս աշխատանքի են:

Ուրիշ ոչինչ չէի կարող պատասխանել:

Նրան կարծես տունը դուր էր եկել: Անմիջապես նրա դուրս գալուց հետո ինձ հյուր եկավ տիկին Գայանեն Արփենիկի հետ:

– Բարև, Անջե՛լ,– ո՞վ էր այս կինը:

– Նա ուզում է գնել մեր տունը:

– Վաճառո՞ւմ ես,– զարմացած հարցրեց տիկին Գայանեն:

– Այո՛, պետք է վաճառեմ՝ Հայաստան մեկնելու համար:

– Որոշեցիր մեկնել,– ժպիտալով ասաց նա,– ես էլ կգամ:

– Բայց մենակ ինչպե՞ս:

– Մենակ չէ. ընտանիքիս հետ: Լևոնն էլ է ուզում, որ հետ վերադառնանք:

Ինձ անչափ զարմացրեց նրա պատասխանը, և միաժամանակ շատ հաճելի էր լսել այդ ամենը: Վերջապես ամեն բան կարգավորվում էր կարծես:

Մի պահ աչքս զցեցի պատուհանի կողմ, նա այնտեղ էր ու նայում էր իմ պատուհանին: Երբ տեսավ ինձ ժպտաց ու ձեռքով արեց: Փակեցի վարագույրն ու գնացի հյուրասենյակ՝ Արփենիկենց մոտ:

19

Հունիսի 30

Երեկվա անձրևոտ եղանակից այսօր հետք անգամ չկար. այնքան տաք է օդը, որ ջուրն արագ գոլորշիացել է: Արևոտ ու պարզ եղանակ է, երկինքն այսօր ավելի արտահայտիչ ու գեղեցիկ տեսք ունի, քան երեկ: Այսպես ավելի հաճելի է: Երբ արթնանում ես արեգակի վճիտ ու ականակիտ շողերից, որը թափանցել է սենյակդ և լցրել վառ լուսավորությամբ. գեղեցիկ է: Մի բաժակ սուրճն էր պակասում, բայց այնքան չէի ցանկանում վեր կենալ, ուզում էի պառկած մնալ և երագել, պատկերացնել, ստեղծել: Իմ երևակայությունը մի մեծ իրականություն է, որտեղ կարողանում եմ ստեղծել կամ ոչնչացնել այն ինչ ցանկանում եմ: Այնուհանդերձ, վեր կացա, քանի որ ստիպված էի. ուշանալու դեպքում կհեռացնեին աշխատանքից:

* * *

Հուրախություն ինձ և մյուս աշխատակիցների՝ տիկին Գայանեն եկել էր: Նա էլի կաշխատի մեզ հետ, քանի դեռ չենք մեկնել այստեղից: Հույս ունեմ, որ երեկվա տիկինն էլի կգա բնակարանի համար:

Խմբագրությունը լուրջան մեջ էր պատված, լսվում էր միայն տպագրական մեքենայի կտկտոցը. բոլորը իրենց գործն էին անում: Նստած էի տիկին Գայանեի կողքին, որոշեցի նամակ գրել Մարջին:

«Ողջույն, Մարջ: Ինչպե՞ս եք: Ինչպե՞ս են ձեր գործերը:

Ես փունը վաճառքի եմ հանել, երեկ գնորդ եկավ, կարծում եմ՝ կգնի փունը, հավանել է:

Շուրով կգամ:

Անուր գրկի՛ր Շուշիկին ու Մարիամին, Հարութին բարևի՛ր իմ կողմից:

Միրում և կարոտում եմ բոլորիդ»:

–Տիկին Գայանե, ի՞նչ եք կարծում, փոստը բաց կլինի ժամը 6-ին:

–Այո՛, իհարկե, մինչև յոթն աշխատում են:

–Կգա՞ք ինձ հյուր այսօր:

–Կգամ:

Աշխատանքի ավարտից հետո տիկին Գայանեի հետ միասին նախ գնացինք փոստ՝ նամակը ուղարկելու, ապա՝ մեր տուն: Ի գարմանս ինձ՝ մեր դռան դիմացի աստիճաններին նստած էր Վիկտորյան:

–Բարև Ձեզ,– ասաց նա և վեր կացավ:

–Բարև, ի՞նձ էիք սպասում:

–Այո՛, կարծում էի՝ տանը կլինես:

Դուռը բացեցի և շարունակեցի.

–Նե՛րս եկեք: Ո՛չ, աշխատում եմ, այս ժամին եմ վերջացնում: Ծանոթացի՛ր, իմ տատիկն է՝ Գայանեն, տիկին Գայանե, նա էլ Վիկտորյան է՝ ընկերուհիս:

–Ուրախ եմ, տիկի՛ն Գայանե, բայց տատիկիդ անունը Գայանե՞ էր:

–Մենք իրար խմբագրությունց ենք ճանաչում, արդեն հարազատ ենք դարձել իրար համար:

–Ինձ համար էլ է հաճելի,– ասաց տիկին Գայանեն,– ճիշտ է ասում Անգելը:

–Սուրճ կցանկանա՞ք. համեղ թխվածքաբլիթներ եմ պատրաստել:

–Դեմ չենք, այդպես չէ՞,– ասաց տիկին Գայանեն,– դո՞ւ էլ ես Անգելայի տարիքին:

–Այո՛, տիկի՛ն,– ասաց Վիկտորյան:

–Վիկտորյա՛, իսկ ինչպե՞ս են գործերդ,– հարցրի ես:

–Աշխատանք եմ փնտրում: Հայրիկին հեռացրել են աշխատանքից:

–Կցանկանա՞ս խմբագրությունում աշխատել:

–Խմբագրությունո՞ւմ, որպես ի՞նչ:

–Թարգմանիչ:

–Դե... այո՛, անգլերեն հասկանում եմ, բայց ինչո՞ւ ես դուրս գալիս աշխատանքից:

–Վերջնական որոշում եմ կայացրել, որ մեկնում եմ Հայաստան՝ տատիկիս ու պապիկիս մոտ ապրելու: Սկզբում կզնան Ֆրանսիա, այնտեղից է թռիչքը: Երբ ես մեկնեմ, կխնդրեմ տնօրենին, որ իմ փոխարեն դու աշխատես. կարծում եմ՝ չի մերժի, ի՞նչ կասեք, տիկի՛ն Գայանե:

–Հասկացա: Ուրախ եմ:

–Լավ միտք է. մի կողմից ընկերուհուդ կօգնես, մյուս կողմից էլ երազանքիդ հետևից կզնաս:

Ես նրա դեմքից ու ձայնի տոնայնությունից զգում էի, որ նա այնքան էլ լավ չի զգում իրեն, բայց փորձում էի ամեն կերպ փոխել նրա այդ վիճակը: Չդիմացա և հարցրի.

–Տիկի՛ն Գայանե, Ձեզ վա՞տ եք զգում:

–Ո՛չ, ո՛չ, լավ եմ: Ես արդեն դուրս գամ, լավ մնա, վաղը կտեսնվենք,– ասաց տիկին Գայանեն ու դուրս եկավ:

–Ինձ թվաց՝ իրեն լավ չի գգում:

–Ինձ նույնպես. շատ տարօրինակ էր այսօր:

Դուռն ինչ-որ մեկը թակեց: Երեկվա տիկինն էր, հետն էլ՝ մի տղամարդ: Չնայած նրանք կանգնած էին իմ դիմաց, ես նկատեցի, որ փողոցի մյուս մայթին այն տղան էր կանգնած ու ինձ էր նայում:

–Բարի երեկո, կարելի՞ է,– հարցրեց նա:

–Բարև Ձեզ, ինչո՞վ կարող եմ օգնել:

–Կինս հավանել է այս բնակարանը, ուզում ենք գնել այն, եթե հարմար է Ձեզ, այս քանի օրը զբաղվենք թղթաբանական հարցերով:

–Ինձ հարմար է:

–Դո՞ւք եք բնակարանի սեփականատերը:

–Այո՛, իմ անունով է:

–Շատ լավ, վաղը, եթե կարող եք ժամը երկուսին եկեք նոտարական գրասենյակ:

–Իսկ հնարավո՞ր է՝ երկուշաբթի օրվան թողնենք:

–Հնարավոր է: Մենք գնանք, ցտեսությո՜ւն:

–Ցտեսությո՜ւն:

Տունն այլևս ինձ չի պատկանի երկուշաբթի օրվանից, իսկ տան գումարը պետք է հնարավորինս խնայողաբար օգտագործել: Դրանով կզմեն Փարիզի տոմս, մի քանի նվերներ՝ մորաքրոջս ընտանիքին, իսկ մյուս մասը կպահեմ Հայաստանում օգտագործելու համար:

Այդ պահին ուզում էի Վիկտորյային հարցնել, թե ով է այն տղան, որ միշտ իմ տան մոտ է ու ինձ անընդհատ հետևում է, բայց այլևս այնտեղ չէր:

–Ինչո՞ւ ես վաճառում տունը:

–Էլ հետ չեմ վերադառնալու:

–Բայց Հայաստան մեկնելն այնքան էլ հեշտ չէ:

- Գիտեմ՝ Հարութը այդ հարցերը կարգավորում է:
- Հարութն ո՞վ է:
- Մորաքրոջս ամուսինը:
- Պարզ է: Եթե այդպես ես ճիշտ գտնում, ուրեմն գնա:
- Այո՛: Վիկտորյա՛, մի փոքր նեղված եմ:
- Ինչի՞ց:
- Ես պետք է գնամ տիկին Գայանենց տուն, նա վատ էր իրեն զգում, հասկանո՞ւմ ես, իսկ ես թողեցի, որ մենակ գնա:
- Ես էլ եմ գալիս քեզ հետ: Գնա՛նք:
- Ես փակեցի դուռը, և վազքով գնացիք նրանց տուն:
- Մոտ հինգ բուսե անց արդեն այնտեղ էինք: Դուռը քակեցի:
- Մի կին բացեց, նա անձանոթ էր ինձ:
- Բարև Ձեզ, տիկին Գայանեն տա՞նն է:
- Ո՛չ, Դուք ո՞վ եք:
- Մենք միասին ենք աշխատում, ո՞ր է նա:
- Նրան...
- Դե՛:
- Տեղափոխել են հիվանդանոց:
- Մենք արագ գնացինք այնտեղ: Ինձ այնքան վատ էի զգում, որ մենակ էի թողել նրան, չնայած չհասցրի անգամ ճանապարհել: Ես ամբողջ ճանապարհին աղոթում էի, որ ամեն բան լավ լինի: Եվ վերջապես հասանք հիվանդանոց: Հերթապահ բժիշկներից իմացանք նրա հիվանդասենյակը և արագ բարձրացանք այնտեղ:
- Ներեցեք, Դո՞ւք եք տիկին Գայանեի բժիշկը:
- Այո՛, Դո՞ւք էլ եք նրա հարազատները,– ասաց բժիշկը:
- Այո՛, որտե՞ղ է նա:
- Այն պալատում,– ասաց նա՝ ցույց տալով նրա հիվանդասենյակը:
- Անհանգստության չափ չկար:
- Տիկին Գայանե, ինչպե՞ս եք:
- Լավ եմ, լավ, մի՛ անհանգստացիր:
- Նրա փայլող աչքերում նկատեցի իր նուրբ ժպիտը:

–Գուք ինչպե՞ս եք, Անահիտ:

–Ես լավ եմ, շնորհակալ եմ. շատ անհանգիստ և լարված տեսք ունես:

–Երբ տիկին Գայանեն մեր տանն էր, կարծես վատառողջ տեսք ուներ, դուրս գալիս ասաց, որ լավ է, հետո անհանգստացանք ու գնացինք ձեր տուն, ի դեպ ո՞վ էր այն կինը:

–Քույրս է: Տիգրանի մոտ մնաց, մինչև գնանք տուն:

–Եթե կցանկանաք, ես կարող եմ այս գիշեր մնալ Ձեզ մոտ, տիկին Գայանե:

–Ինձ մոտ մնաս, ինչո՞ւ, ես առողջ եմ:

–Ման, բժիշկը դեղերի ցուցակ տվեց, դրանք հիմա կգնեմ,– ներս մտավ Լևոնը՝ ձեռքին մի թուղթ,– ներեցեք, շփոթված էի մի փոքր, բարև Ձեզ, Անգելա՛,– շարունակեց նա:

–Ողջույն,– ասացի ես:

–Ի՞նչ որդին է,– ականջիս կամաց հարցրեց Վիկտորյան:

–Այո՛:

–Երբ ե՞նք գնալու:

–Երբ գգամ, որ տիկին Գայանեն արդեն լավ է իրեն զգում:

–Անգել, սիրունիկս, կարող եք գնալ. արդեն մթնում է, ես լավ եմ, սիրում եմ քեզ շատ:

–Չէի ցանկանա Ձեզ մենակ թողնել:

–Միայն մի խնդրանք. տեղեկացրու տնօրենին, որ մի երկու օր չեմ կարող գալ աշխատանքի:

–Լավ, անպայման, ես էլ Ձեզ եմ սիրում:

Երբ մենք դեռ նոր էինք դուրս եկել հիվանդանոցից, Վիկտորյան ինձ ասաց.

–Բավականին մտերիմ եք, լավ կին է:

–Հրաշալի կին է: Դանպարհեմ քեզ և գնամ տուն,– շարունակեցի ես:

–Այո՛, դեմ չեմ լինի. գիտես, որ մթությունից վախենում եմ:

Տրամվայ նստեցինք և մի քանի թուպից հասանք նրանց տան մոտ: Մի քանի քայլ, և ահա արդեն նրանց տան դիմացն էինք:

–Կցանկանա՞ս այսօր մեր տանը մնալ:

–Ո՛չ, շնորհակալ եմ, ուրիշ անգամ: Գնա՛ և հանգի՛ստ քնիր, բարի գիշեր,– ասացի ես և հրաժեշտ տվեցի նրան:

Երբ ուզում էի տրամվայ նստել, կողքիս կանգնեց մի տղա ու կարծես ճանապարհ էր զիջում՝ բարձրանալու համար: Դեմքը հետո տեսա, երբ նստեց կողքիս, Վիկտորյայենց հարևանն էր:

–Ինչո՞ւ ես այս ուշ ժամին տուն գնում. ինչ-որ բա՞ն էր պատահել:

–Իսկ կարելի՞ է, որ ապրես քո կյանքով ու չհետևես մարդկանց,– ասացի ես:

–Կներես, եթե մի բան այն չեմ արել: Չե՞ս ցանկանում ինձ տեսնել:

Ես ոչինչ չպատասխանեցի: Չնայած որ նա շատ գեղեցիկ է և համակրելի, բայց, միևնույն է, հիմա նպատակներս այլ են:

20

Երբ տեղ հասա, ես իջա տրամվայից, իսկ նա մնաց ներսում ու շարունակ նայում էր ինձ մի տեսակ ուրիշ՝ անտարբեր ու վիրավորված աչքերով:

Արդեն շատ ուշ էր, փողոցի լույսերը հեռվից լուսատտիկների էին մնան, իսկ մայթը ողողված էր լուսնի լույսով:

Ամեն բան հանգիստ էր ու խաղաղ, ինչպես պատերազմից հետո եկած լռությունը, որ մի տեսակ հաճելի է, մյուս կողմից՝ տհաճ:

Տուն մտնելուն պես քնել եմ:

Հուլիսի 1

Օրս սկսվեց արևի վառող ու հաճելի ճառագայթներից: Օրը կատարյալ պայծառ ու թավշյա էր: Պետք է գնայի աշխատանքի, ստիպված էի վեր կենալ, դրանից հետո էլ մտադիր էի այցելել տիկին Գայանեին:

* * *

Հրատարակչությունում ամեն բան նույնն է: Բոլորը իրենց տեղում են, բոլորը իրենց գործն են անում՝ բացի նրանից: Մտածմունքների մեջ էի ու հանկարծ լսեցի անուս.

–Անգել, այցելել՞ ես Գայանեին,– ասաց քարտուղարուհին, որն այդ պահին մյուս աշխատողների հետ սրճում էր:

–Այո՛, տիկի՛ն Մեգի, ինչո՞ւ:

–Ես էլ եմ ցանկանում այցելել նրան, դեմ չե՞ս լինի՝ այսօր միասին այցելենք նրան:

–Իհարկե, ո՛չ, սիրով,– ասացի ես:

Իմ աշխատանքի վայրում բոլորը ինձանից տարիքով բավականին մեծ են, օրինակ՝ տիկին Մեգին հիսունն անց կին է, բայց շատ երիտասարդ տեսք ունի: Մնացածը տարիքով ավելի մեծ են, ամենափոքրը ես եմ, ինձանից հետո մի քառասուն տարեկան կին է, հետո՝ գործավարուհին, չնայած նրանք բավականին մեծ են ինձանից, սակայն հաճելի է շփվել նրանց հետ ու լսել խորհուրդներ, որոնք, անշուշտ, պետք են գալիս:

* * *

Աշխատանքն ավարտելուց հետո տիկին Մեգիի հետ իջանք ներքև: Չարմացա: Դրսում Արփենիկը ինձ էր սպասում, մոտեցա նրան:

–Արփենի՛կ, ի՞նչ ես անում այստեղ:

–Սպասում եմ քեզ, որ միասին գնանք տատիկի մոտ:

–Գայանեի բոռնի՞կն է, չե՞՞,– հարցրեց տիկին Մեգին:

–Այո՛, Արփենիկն է:

–Գնանք, Արփենի՛կ, նա տիկին Մեգին է, միասին ենք աշխատում: Չգիտեմ՝ կհիշես նրան, թե ոչ, այն օրը նա էլ էր եկել ձեր տուն:

Ճանապարհին զրուցելով՝ հասանք տեղ, ու կարծես երկուսն էլ իրար հավանությանն էին արժանացել:

–Ո՞ր հարկում է Գայանեն:

–Երկրորդ, տիկին Մեգի,– ասացի ես:

Մենք աստիճաններով բարձրացանք վերև: Տիկին Գայանեն այնքան էլ իրեն նման չէր. աչքերի տակ փոսեր էին, գույն չկար դեմքին, չնայած Անահիտը ասաց, որ սմվել էր: Հազում էր, անընդհատ հազում էր, բայց համենատ երեկվա՝ մի փոքր փոփոխություն կար:

Չէինք ցանկանում նեղություն տալ նրան. մեր այցը քիչ տևեց, ուզում էինք, որ հանգստանա ու փորձի քնել, նրա մոտ անքնություն է. քնաբերի միջոցով է քնում շատ ժամանակ:

Ես Արփենիկին տուն ճանապարհեցի, նա մնաց իր մորաքրոջ մոտ, իսկ տիկին Մեգին գնաց իրենց տուն:

Երբ հասա մեր տան մոտ տեսա, որ նա չկար, երևի անգիտակցաբար կոպտել էմ նրան, բայց ես դա չեմ ցանկացել:

Բացեցի դուռը և ներս մտա:

Դատարկ էր տունը, վերջին քանի ամիսը դատարկ էր: Չկա էլ ոչինչ՝ ո՛չ երջանկություն, ո՛չ հանգստացնող լռություն, ո՛չ էլ ժպտացող դեմքեր, իսկ այդ հանգստությունը պատերն են միայն, դատարկ ու սառը պատերը, որ էլ երբեք չեն լցվի ընտանեկան հաճելի զրույցներով, իսկ այդ հանգստությունը տհաճ է, իհարկե: Առանձնապես երկար կարելի է խոսել դատարկությունից, հարազատի կորստից, ցավից ու պատերազմից, բայց ի՞նչ իմաստ ունի, չեմ հասկանում: Դատարկությունը պետք է լցնել, հարազատին էլ հետ չենք բերի, մեզ մնում է միայն ապրել և հիշել, կարոտել, բայց չքայքայել մեզ ներսից, որովհետև մեռնողների հետ ոչ ոք չի մահանում: Ցավն ինքիսին ցավ է բերում: Մարդ չպիտի հաշտվի ու ապրի ցավի ու տխրության արանքում. պետք է ուղղակի գտնի մի դրական կետ ու շարժվի առաջ: Պատերազմ... ամենացավալի թեման է: Այստեղ ուղղակի մահեր չեն: Երևի միակ բանն է, որ դրանից հետո չես կարողանում տեղիցդ շարժվել, չես կարողանում լիարժեք ժպտալ, ուրախանալ, չէ՞ որ մեկ ուրիշի տանը հավերժա-

կան սուգ է... Երանի՜ աշխարհն էլ չտեսնի պատերազմներ... ՅԱՎ
Է, ՅԱՎ...:

Մեկ բաժակ սուրճից հետո պատկեցի, որ քնեմ, սակայն մտքիս եկավ Միքայելը: Ինքնաբերաբար ձեռքս տարա կողքիս դրված դարակի կողմը ու բացեցի այն, վերցրի ժամացույցն ու նամակը: Սկսեցի կարդալ... ինչքան թեթևություն ու սառնություն զգացի, ինչքան բան էր փոխվել իմ մեջ: Ես գուցե երջանիկ եմ այնքան, որ կյանքս չկապեցի այնպիսի տղամարդու հետ, որը նույնիսկ ինքն իր համոզմունքներում վստահ չէր, և կարող էր ամեն պահ իր ձեռքից զցել անգլին քարը՝ տարվելով հասարակ քարերով:

Թող ինձ ներեն աշխարհի բոլոր աստվածները, բայց ես էլ ուժ չունեմ հասկանալու աշխարհը. տարօրինակ է իր բոլոր կողմերով, այն տրված է՝ ամեն օր գրելու ու մի օր էլ վերջակետ դնելու համար:

Մեր նպատակներն ու երազանքներն են մեզ ապրեցնում: Իսկ ինչի՞՞ համար է կյանքը, ինչի՞՞ համար ենք մենք այստեղ, տեսնես մարդիկ երբևէ մտածե՞լ են այս մասին:

Ինչ վերաբերում է Միքայելին, ես ներել եմ նրան, վաղուց ներել եմ ու տվել ազատություն՝ կորչելու իմ կյանքից, իմ աշխարհից ու մտքերից: Գուցե մի օր կտեսնենք իրար, կնայեմ նրա աչքերի մեջ ու կասեմ այն, ինչ զգամ այդ պահին՝ ատելություն, կարոտ..., կասեմ այն, ինչ սիրտս ուզի, որի համար երբեք չեմ փոշմանի:

Ծալեցի ու դրեցի դարակը նրա նամակը, ժամացույցն էլ դրա հետ միասին դրեցի նույն տեղում՝ իրար կողքի:

21

Հուլիսի 2

Դռան ձայնը ընդհատեց իմ անուշ քունը: Չնայած շատ երկար էի քնել, արդեն տասն էր:

–Ողջույն, ինչպե՞ս ես, քնած էի՞ր:

Վիկտորյան էր, ձեռքին էլ ծաղկեփունջ կար, դաշտային գեղեցիկ ու անուշաբույր ծաղիկներ էին:

– Բարի լույս, քնած էի, այո՛, նե՛րս արի, այդ ի՞նչ ծաղիկներ են:

– Ե՞ս պետք է իմանամ. ձեր դռան դիմացն էր դրված:

– Հետաքրքիր է,– ասացի ես իմ զարմացած հայացքով,– կարծես նամակ էլ կա մեջը:

«Ողջուն: Ես այն փղան եմ, որն իր սրտի ամբողջ ուժով սիրահարված է քեզ: Դու անասելի գեղեցիկ ես, իսկ աչքե՛րդ... Թո՛ւյլ փուր ինձ իրավունք վերապահել և նկարագրել դրանք. այն կանաչը, որ կա քո աչքերում, այն ծաղիկների ցողուններն են, որոնք հիմա քո ձեռքում են, իսկ դեղինը, որ կա դրա շուրջ, այն ծաղիկներն են, որոնց բույրը քեզ դուր է եկել ու հիշեցնում է ինչ-որ լեռնադաշտի պարկեր՝ ողողված կապույտով, կանաչով, դեղին ծաղիկներով, նեկրարով, որտեղ դու ազատ ես և ունես թևեր՝ թռչելու ու փեսնելու աշխարհը:

Կուզեի՝ երկնքում սավառնող թռչուններից մեկն էլ ես լինեի: Կգայի պարուհասնիդ մոտր ու կտուցով կկանչեի քեզ, իհարկե, դու չէիր հասկանա, որ այդ թռչունը ես եմ, որ նա քեզ սիրում է այնքան, որքան իր թևերը, ազատությունն ու երկինքը:

Ազատություն սիրող այդ թռչունը այնքա՛ն կցանկանար՝ մի բույն շինեիր ու պահեիր իրեն: Նա այնքա՛ն կցանկանար փեսնել, թե ոնց է արևի լույսը վաղ առավոտին ընկնում դեմքիդ, թե ոնց ես արևին ժպտում:

Նա անշարժ կնայեր քեզ, կհեղներ քո քայլերին ու կուզեր, որ նուրբ ձեռքերդ շոյեին իր փեպուրները:

Կուզեր անվերջ լինել ձեռքերիդ մեջ, զգալ հոգիդ ու ջերմանալ՝ քեզանից մեծ սեր սրացած:

Ամեն օր կանցներ ձեր փան մոտրով, հետո կտուցին քալենու ճյուղ դրած՝ կզար, ձեր փան դիմացի ծառին իր բույնը կշիներ քալենու ծառից պոկված ճյուղերով:

Ամեն լուսաբացի կգար, կարթնացնենք քեզ, կիրուցով կհարվածեր պարուհանիդ, դու կժպտայիր...

Ամեն երեկո նորից կգար, կնայեր քեզ ու կհեղկեր, որ հանկարծ չմրսես:

Դու կայարայալ ես:

Գուցե մենք միմյանց համար չենք սրեղծված, բայց ես ցանկանում էի քեզ դարչնել ամենաներջանիկը, դու չցանկացար, իսկ ես չեմ ցանկանում քեզ սրհպել, որ սիրես ինձ: Ներողություն եմ խնդրում քեզ պարճառած նեղության համար: Ես մեկնում եմ երկրից:

Հ. Գ. Ես չեմ դադարում սիրել քեզ»:

Անեղձ ասած՝ նման հաճելի զգացողություն չէի ունեցել:

Ֆրանսերենով էր գրված, բայց այսքան գեղեցիկ չի հնչել երբեք ֆրանսերենն ինձ համար, ինչպես հիմա: Ինչքան գեղեցիկ էր գրել ամեն բան, դրանք անկեղծ ու սրտից եկած տողեր էին:

–Ո՞վ է գրել, Անգել:

–Լսի՛ր, ձեր տան մոտ մի տղա է ապրում, անունը չգիտեմ, առաջին անգամ իրար տեսել ենք, երբ նրան հարցրի ձեր տան տեղը: Ամեն օր մեր տան մոտ էր գալիս, մի քանի անգամ փորձել է խոսել ինձ հետ, բայց չեմ ցանկացել: Գրել էր, որ մեկնում է երկրից:

–Վե՞րջ, հանձնվե՞ց, կարծում էր այդպես հեշտությամբ քո սիրտը կգրավի՞, – ծիծաղելով ասաց Վիկտորյան:

–Ճանաչո՞ւմ ես նրան:

–Ո՛չ, կարծում եմ:

–Սուրճ կխմե՞ս:

–Պատրաստե՞մ:

–Եթե ուզում ես, պատրաստի՛ր: Ինձ՝ առանց շաքարի:

Նստած էի բազմոցին ու մտածում էի կատարվելիք իրադարձությունների մասին: Ամեն բան խճճված էր: Թվում էր, թե այս

թնջուկից դուրս գալ չեմ կարող: Սպասում եմ երկուշաբթի օրվան, որ տունը վաճառեմ ու մեկնեմ:

Ինչքա՞ն կուզեի կողքիս լիներ մայրիկը, գլուխս դնեի ծնկներին, ջերմ ժպիտով նայեի մորս դեմքին, խոսեի՞նք... կյանքից, աշխարհից: Մեռնում եմ միայն նրանք, ովքեր մոռացվում են: Իսկ դու հավերժ ես ապրելու:

–Ի՞նչ ես մտածում,– ասաց Վիկտորյան:

–Սուրճը համեղ ես պատրաստել,– փորձեցի շրջանցել նրա հարցը:

Եթե իմանայի՞նք, որ մեր մտքերը ինչ-որ բան կփոխեին, բարձր կմտածեի՞նք: Կան բաներ, որոնք մերն են՝ մեր սեփականը, ու չպետք է խոսել կամ պատմել դրանց մասին:

–Գիտես, եթե ես քո փոխարեն լինեի, չէի թողնի նրան գնալ:

–Եթե անկեղծ, ցանկությամբ չունեմ ոչ ոքի ստիպողաբար պահելու կողքիս:

–Բայց սիրում է քեզ...

–Մի՛ անհանգստացիր, եթե սիրում է, կգտնի, աշխարհի որ ծայրում էլ լինեմ:

–Չգիտեի՝ եսասեր ես:

–Գուցե եսասեր եմ, բայց ինձ չի վնասում դա:

Գլուխը տարուբերեց և ասաց.

–Նախկինում այսպիսին չէիր:

–Դա առաջ էր:

* * *

Վիկտորյային ճանապարհելուց հետո պառկեցի մի փոքր հանգստանալու. ուժեղ գլխացավ ունեի: Երբ արթնացա, արդեն ժամը չորսն էր:

Մի քանի մյուս կար թարգմանելու, պետք է ուղարկվեր նախարարություն, հետևաբար ուշադիր թարգմանությունը պարտադիր էր:

Նստեցի դրանք թարգմանելու: Ինչպես միշտ, քաղաքական նորություններ էին, ամենաշատը աշխարհում չեմ սիրում կարդալ թերթեր, որոնցում պատմում է երկրի քաղաքական կամ տնտեսական վիճակի մասին. դրանք ավելի շատ ծանրաբեռնում են ուղեղս, բայց ստիպված եմ դրանք ամեն անգամ կարդալ թարգմանությունների համար:

Երկուշաբթի կներկայացնեն պարոն Շնեյդերին, չնայած մի փոքր ուշ կհասնեն աշխատանքի: Տունը վաճառեն, մի քանի բան կզնեն և կմեկնեն Ֆրանսիա:

Նկատեցի, որ փոստատարը նամակ դրեց փոստի մեջ ու արագ սլացավ իր մաշված հեծանիվով:

Դուրս եկա և վերցրի, ու այդ պահին այն երիտասարդը եկավ մեր տան կողմ, նա, ով պատրաստվում էր գնել մեր տունը:

Նամակը դրեցի իմ մնջարանում և գնացի հյուրասենյակ:

– Բարև Ձեզ, օրիո՞րդ, կարո՞ղ ենք մի փոքր խոսել,– ասաց նա:

– Բարև Ձեզ, պարո՞ն, նե՛րս եկեք:

Դասական սև կոստյումով էր, և ձեռքին ինչ-որ պայուսակ կար. մի պահ մտածեցի պաշտոնավոր մարդ է:

– Փոշմանե՞լ եք բնակարանը գնելու հարցում,– հարցրի ես:

– Դե, իհարկե, ո՛չ: Նախ ներկայանամ: Ես Հենրիխ Գերելտոնն եմ, աշխատում եմ նախարարությունում, կինս, որին դուք արդեն տեսել եք, միասին ենք աշխատում. նա հաշվապահ է:

– Ուրախ եմ Ձեզ համար, ես Անգելա Հոֆմանն եմ:

– Անգելա Հոֆմա՞նը, ներեցե՛ք, դո՞ւք եք կատարում նախարարության համար թարգմանություններ:

– Այո՛, ես եմ:

«Փաստորեն՝ կարդում եմ և ոչ միայն հողվածը, այլև թարգմանողի անունը»,– մտածեցի ես:

– Դրանք կատարյալ են. նախարարն ամեն անգամ հիանում է Ձեր թարգմանություններով, այսքան ժամանակ ոչ ոք դրանք այնքան գրագետ չի թարգմանել, ինչպես Դուք եք դա անում:

Ո՞ր համալսարանում եք սովորել:

–Հունբրդլտի, բայց ուսումնս կիսատ է մնացել:

–Խնդիրն ի՞նչն է, գումա՞րը. ես պատրաստ եմ վճարել:

–Ո՛չ, մեկնում ենք պարզապես:

–Դրա՞ համար եք վաճառում Ձեր բնակարանը:

–Այո՛, պետք է գնանք:

–Ո՞րն է խնդիրը:

–Մորաքույրս վատառողջ է. նրան պետք է խնամենք:

–Իսկ ծնողնե՞րդ:

–Նրանք ամեն օր աշխատում են և չեն կարող բացակայել աշխատանքից, ես պետք է զբաղվեմ տան հարցերով, հայրս այդպես է ցանկանում: Երեխաներ ունե՞ք:

Երբեք չեմ սիրել սուտը, բայց հիմա ես մտածված ստում եմ, սարսափելի է, բայց ստիպված եմ:

–Դեռ ոչ, ցավոք:

–Պարզ է: Իսկ Ձեր գալու նպատակը ո՞րն է:

–Ցանկանում եմ այսօր գնել, եթե հարմար է Ձեզ:

–Այսօ՞ր,– զարմացած ասացի ես:

–Այո՛, որևէ խնդիր կա՞:

–Այսօր կարող ենք միայն գնալ նոտարական գրասենյակ, իսկ վաղը նոր կազատեմ տունը:

–Խնդիր չկա, գնա՞նք, ես մեքենայով եմ:

Նրա մեքենան Դավիթի մեքենայից էր, եթե չիմանայի, որ պարոն Գեբելսոնինն է, կկարծեի Դավիթինն է:

–Ինչի՞ մասին եք մտածում:

–Ինձ թվաց երևի:

–Ի՞նչը,– զարմացած հարցրեց պարոնը:

«Աստված իմ, սա Դավիթի մեքենան է»,– ես ապշած էի: Այսօր պատահականություններ:

–Մեքենան Ձեզ դո՞ւր է եկել:

–Ե՞րբ եք գնել:

–Մի քանի ամիս առաջ: Մի երիտասարդ տղա վաճառեց, սասց մեկնում է Իտալիա, որ իրեն էլ պետք չի գա:

–Անունն ի՞նչ էր:

–Անունը այնքան էլ լավ չեմ հիշում: Շարժվե՞նք:

–Այո՛:

Ամբողջ ճանապարհին նրան հարցեր էի տալիս, երևի ձանձրացրի, բայց, միևնույն է, պետք է բավարարեի հետաքրքրությունս:

–Հիշեցի նրա անունը, կարծեմ Միքայել էր:

–Իրո՞ք:

–Այո՛, ծանոթնե՞ր էիք:

–Ո՛չ, շփոթեցի. կարծեցի իմ ընկերներից մեկի մեքենան եք գնել:

Փաստորեն՝ իրոք, Դավիթի մեքենան էր. ես չէի սխալվում: Ես դրանում համոզվեցի, երբ տեսա դիմացի ապակուն փոքրիկ գրված «Ա» տառը. դա միասին էինք արել:

–Հասանք. կարող եք իջնել:

Մենք արդեն ներսում էինք, և ինձ ներկայացրին մի պայմանագիր: Կարդալուց հետո ստորագրեցի, և դուրս եկանք այնտեղից:

ՎԵՐՋ, մեր տունն էլ մեզ չի պատկանում, ավելի լավ էր ձեռքս կոտրվեր այդ պահին, քան այդպես չցանկանալով՝ ստորագրեի:

Ամբողջ ճանապարհին ոչինչ չասացի, միայն վերջում.

–Շնորհավորում եմ Ձեր նոր բնակարանը, պարոն Գեբելսոն,– ու բարձրացա տուն:

Ներս մտա և գնացի միանգամից իմ սենյակ:

Վերցրի ճամպուրուկը և սկսեցի այնտեղ դասավորել իմ իրերն ու մնացած կարևոր բաները:

Մայրիկի ու հայրիկի հագուստներն էլ կնվիրեմ Հարութին ու Մարջին, եթե այստեղ մնա, պետք է թափեն, իսկ ես դա չեմ ուզում:

Հյուրասենյակի սեղանին թողեցի Դավիթի նվիրած ժամացույցը, որի հետագա ճակատագիրն էլ հետաքրքիր չէր, հետո նրա վերջին ուղարկած նամակն այրեցի, իսկ Մարջի ուղարկած նամակը դրեցի պայուսակիս մեջ, որ հետո կարդամ:

Հիշեցի, որ Մարջն ինձ գինի էր նվիրել և ասել, որ ամենաուրախ առիթի դեպքում բացեմ. դա էլ վերցրի, որ երբ գնամ Հայաստան, խմենք:

Բոլոր իրերս դասավորել էի, կարևոր մի երկու գիրք վերցրի ու փակեցի ճամպուկը:

Մտածում էի մի քանի օր մնալ Վիկտորյայենց տանը, մինչև տոմս կգնեմ:

Արդեն տասն էր, բայց քունս չէր տանում. նախ շոգ էր, հետո էլ տրամադրություն չունեի:

22

Հուլիսի 3

Ամբողջ գիշեր աչք չեմ փակել. ուզում էի ամեն վայրկյանը վայելել, քանի դեռ մեր տանն էի, իսկ արդեն վաղն էլ մեր տունը չէր լինի, ոչ թե մի թղթի կտորի առկայությամբ, այլ... այլ նրա համար, որ աշխատանքը ավարտելուց հետո չեմ շտապի տուն, երբ մտնեմ ներս, էլ չեմ զգա ծնողներիս ներկայությունը (նրանք ինձ համար երբեք բացակա չեն եղել), այնտեղ ուրիշ մարդիկ նստած կլինեն, այն ծաղկամանը էլ իր տեղում չի լինի, ու գուցե բազմոցն էլ փոխեն, այն սենյակը էլ չի պատկանի ինձ, մայրիկին կամ հայրիկին, ու այդ տան մոտով անցնելիս էլ չեմ կարողանա մտնել ներս ու խմել մի բաժակ թեյ կամ սուրճ, բայց միշտ այդ պատերի ներսում կմնան մեր զրույցները, ընտանեկան քննարկումները, մեր ուրախ պահերը, մայրիկի անուշ ձայնը, հայրիկի խիստ, բայց բարի հայացքը, մնում է միայն՝ պատերը չքանդեն....

Սուրճ պատրաստեցի ու մեր տան մեջ վերջին անգամ վայելեցի այդ սուրճը, որը թերևս ամենադառն էր, որ երբևէ պատրաս-

տել եմ, դրա մանր հատիկները շարված էին կոկորդիս, որոոնք մի տեսակ անհարմարություն էին պատճառում ինձ:

* * *

Ժամը մեկն անց կես էր. դուռը թակեցին: Դրանք ծանր բուպեներ էին ինձ համար:

–Բարև Ձեզ, օրիորդ Անգելա,– ասաց պարոն Գեբելսոնը, որ կանգնած էր դռան մոտ իր կնոջ ու մի տղամարդու հետ:

–Բարև Ձեզ, ներս համեցեք:

–Հենրիխ, գումարը վճարի՛ր, հյուրեր ունենք այսօր այստեղ, աշխատողներին էլ կասես նոր սպասքը բերեն, այս հին ու օգտագործվածն էլ դեն կնետեք: Մաքրուհիներին ասե՛լ ես՝ կանչեն,– ասաց Գեբելսոնի ամբարտավան կինը:

–Հասկանում եմ, որ ներկայությունս այնքան էլ հաճելի չէ Ձեզ համար, փոխադարձաբար, ես հիմա գնում եմ, քանի որ ես էլ ցանկություն չունեմ քաղբենի մարդու կողքին գտնվելու:

Ամբողջ կյանքում ատել եմ ամբարտավան մարդկանց, մանավանդ, երբ կինն է այդպիսին: Հասարակ լինելու մեջ ավելի մեծ ճոխություն կա:

Փորձել եմ ինձ միշտ հեռու պահել իրենց բոլորից վեր դասող ցածր մարդկանցից, որոնք իրենք իրենց են փորձում նկատելի դարձնել, երբ անտեսված են ամբոխի կողմից, ավա՛ղ, ծիծաղելի է այդ:

Ինչևէ, համբերությամբ փորձում եմ լռել և ժպտալ:

Պարոն Գեբելսոնը հավանաբար իրեն վատ զգաց իր կնոջ խոսքերից.

–Ներողություն եմ խնդրում կնոջս անունից, օրիորդ Անգելա, նա փոքր-ինչ գեղեցիկ չարտահայտվեց: Եթե պատրաստ եք, Ձեզ օգնեմ իրերը դուրս բերել, և ուր պետք է կտեղափոխեմ իմ մեքենայով:

Գեռ չէի հասցրել պատասխանել Գեբելսոնին, հանկարծ նրա կինը էլի մեջ մտավ.

–Հենրիխ, ներողություն ես խնդիրում:

–Իսկ ի՞նչ է, վատ բան կա՞ որա մեջ, թե՞ պաշտոնով մարդկանց արգելված է ներողություն խնդրել:

Էլ ոչինչ չասաց նրա կինը, փաստորեն՝ իր մեջ դեռ մի փոքր չափի գգացում կա:

–Պարո՛ն Գեբելսոն, ներողության կարիք չկա. ամեն բան կարգին է:

–Սա գումարը: Ամբողջն այստեղ է, կարող եք հաշվել,– ասաց նա և մեկնեց ինձ մի քանի կապոց գումար:

–Վստահում եմ Ձեզ,– ասացի ես:

–Տանե՞մ Ձեր իրերը,– ասաց նրա աշխատողներից մեկը:

–Եթե դժվար չէ, շնորհակալ եմ,– ասացի ես:

–Սոկրա՛տ, դրանք տեղավորի՛ր մեքենայի մեջ և ուր որ կասի օրիորդը, այնտեղ էլ կտանես:

–Եղավ, պարո՛ն Գեբելսոն:

Նրա աշխատողը իրերս տեղավորեց մեքենայի մեջ, հետո գումարս դրեցի իրերիս մեջ: Երբ հասա մուտքի դռան մոտ, ասացի.

–Պարո՛ն Գեբելսոն, շնորհակալ եմ Ձեր նրբանկատ վերաբերմունքի համար, Դուք շատ բարի մարդ եք, իսկ Դուք, տիկին, մարդկանց մի՛ փորձեք ցածրացնել, դա այնքան էլ ճիշտ չէ: Դուք աննկարագրելի գեղեցիկ եք, դա փաստ է, Դուք ունեք այն, ինչ շատերը կցանկանային ունենալ, օրինակ՝ լավ ամուսին, շքեղ կյանք, գեղեցկություն, փորձեք պահել դրանք: Այս տունը միշտ լի է եղել ընտանեկան ջերմությամբ, և ես Ձեզ իմ ամբողջ սրտով ցանկանում եմ, որ երջանիկ լինեք, ունենաք ամուր ընտանիք, Ձեզ երեխան է պակասում,– ասացի ես իմ խորամանկ, բայց բարի ժպիտով ու դուրս եկա տանից:

–Շնորհակալ եմ,– լսեցի նրա կնոջ ձայնը:

* * *

–Շնորհակալ եմ, Սոկրատ,— ասացի ես և ձեռքով արեցի նրան:

Ես արդեն Վիկտորյայենց տան դիմացն էի: Թակեցի դուռը, բաց արեց նրա մայրը:

–Բարև, Ջոաննա՛: Հիշո՞ւմ ես ինձ:

–Դե, իհարկե՛ն, Անգելա՛,— ասաց նա ու գրկեց ինձ,— նե՛րս արի:

Ջոն այնքան էլ չէր փոխվել, նրան վաղուց չէի տեսել:

Այնքան էլ չի սիրում, երբ իրեն «տիկիմով» են դիմում, ասում է՝ ինձ անունով դիմեք:

Ջոյի աչքերը շականակագույն են, իսկ վարսերը՝ կարմիր:

Թեպետ նա խիստ է Վիկտորյայի հանդեպ, սակայն նա անում է այն, ինչ ցանկանում է:

–Մրանք ի՞նչ իրեր են,— հարցրեց նա:

–Ջո՛, կարո՞ղ եմ ձեր տանը մնալ մի քանի օր, մինչև Փարիզի տոնս գնեմ:

–Նստի՛ր, կարո՞ղ եմ ծխել,— հարցրեց նա և ձեռքը վերցրեց մի սիգարետ:

–Ջո՛..., վե՛րջ տուր, դեռ չե՞ս հրաժարվել այդ հին սովորու-թյունիցդ:

–Լավ-լավ, չեմ ծխի, ասա, տեսնեմ՝ ինչու ես մեկնում:

–Գնում եմ Մարջի մոտ: Այստեղ էլ անելիք չունեմ, հետո, եթե ստացվի, կգնամ Հայաստան:

–Հայաստա՞ն, երկի՞ր է, ո՞վ ունես այնտեղ,— զարմացած հարցրեց նա:

–Երկիր է, փոքրիկ երկիր, տատիկս ու պապիկս այնտեղ են:

–Պարզ է,— ասաց նա և ձեռքից դրեց սիգարետը սեղանին,— իհարկե, կարող ես մնալ, տեղավորվի՛ր:

–Շնորհակալ եմ: Վիկտորյան տանը չե՞:

–Ո՛չ: Գնացել է ընկերներից մեկի տուն:

Վիկտորյան տուն եկավ մոտ մեկ ժամ հետո, զարմացավ, երբ ինձ տեսավ իրենց տանը: Ջարմանքը միախառնվեց ուրախությանը:

– Ողջու՛յն, – ասաց նա, – ե՞րբ ես եկել:

– Մեկ ժամ առաջ, ինչպե՞ս ես:

– Լավ եմ, սրանք քոնն ե՞մ, – ասաց նա և ձեռքով ցույց տվեց անկյունում դրված ճամպուռներս:

– Այո՛, իմն եմ:

– Պարզ է: Վաճառել ես արդեն տունը:

Միբու՛ն եմ, երբ մարդիկ առանց հարցեր տալու հասկանում են ինձ:

– Ջոյին վաղուց չէի տեսել, – ասացի ես:

– Չի՞ փոխվել, չէ՞:

– Չէ՛, ընդհանրապես:

– Գիտե՞ս, չէ՞, կողքիս ես քնելու: Արի գնանք պատրաստենք անկողինը:

– Խե՛նք է այս աղջիկը, – ասաց Ջոն, – Վիկտորյա՛, դեռ ժամը չորսն է:

– Ճիշտ է ասում, թող մնա հետո:

– Անգե՛լ, սուրճ սիրո՞ւմ ես, պատրաստեմ:

Ես գլխով արեցի: Գնացի՛նք հյուրասենյակ, իսկ Ջոանման խոհանոցում սուրճ էր եփում: Նուստ էինք իրենց փոքրիկ շրջանաձև սեղանի շուրջ:

– Նայի՛ր, Անգելա՛, ինձ առհասարակ չի օգնում, – գոնե մի տեղ աշխատե՛ր, – ասաց Ջոն, որի ձեռքին սկուտեղով սուրճն էր ու շոկոլադը:

– Ես աշխատանքի հարցը կկարգավորեմ:

– Իրո՞ք, շնորհակալ կլինեմ:

—Համալսարանի մոտ գտնվող հրատարակչությունում էի աշխատում որպես թարգմանիչ: Աշխատավարձը բարձր է, աշխատակազմը՝ հիասքանչ, այնպես որ մի՛ մտածիր դրա մասին:

Մրճելուց հետո բարձրացա տանիք: Նրանց տանիքը այնքան հարմար է նստելու ու մտածելու համար:

«Որքան շատ բան ես իմանանում աշխարհի մասին, այնքան բարդանում է ապրելը, որքան խորն ճանաչում ես մարդկանց, այնքան սկսում ես հիասթափվել կամ ավելի շատ սիրել, որքան վստահում ես մարդկանց, այնքան փոշմանում ես: Ուղղակի պետք է ապրել թեթև, չբարդացնել և ծանր չտանել ամեն ինչ, մանր իրադարձությունները չպետք է մեծ ազդեցություն ունենան մեզ վրա»,— մտածում էի ես:

Հանկարծ նկատեցի, որ Վիկտորյան ներս մտավ.

—Կներես, խանգարեցի՞:

—Չէ՛, չէ՛:

—Ուզում էի ասել, որ մայրիկը սեղան է գցել, ընթրում ենք, միացի՛ր մեզ:

—Հիմա կգամ:

Ոչնչի տրամադրություն չունեի՝ ո՛չ ուտելու, ո՛չ կարդալու և ո՛չ էլ խոսելու: Ստիպված էի իջնել ներքև, բայց մինչ վեր կկենցալի, վառ կանաչ աչքերով մի սև կատու թռավ տանիքին.

—Վախեցրի՛ր, հիմարի՛կ, ինչ գեղեցիկ աչքեր ունես:

Եկավ ուղիղ ձեռքերիս մեջ, քսմավեց ինձ ու հետո պառկեց տանիքին:

Երբ վեր կացա, նկատեցի, որ շատ ուշադիր նայում է ինձ: Չէի կարող տանել ինձ հետ ներս, մնում էր միայն նրա համար կերակուր բերել:

Ձգույշ իջա աստիճաններով ու գնացի խոհանոց:

—Արի՛, նստի՛ր այստեղ,— ասաց Ջոն,— կարտոֆիլ եմ տապակել, սիրո՞ւմ ես:

—Շնորհակալ եմ, իհարկե, սիրում եմ:

Մոտեցա Վիկտորյային ու կամաց ականջին ասացի.

–Գո՛րս արի. բան պետք է խնդրեմ:

–Ի՞նչ:

–Տանը կաթ կա՞, մի կտոր էլ հաց:

–Ունենք, ինչի՞նչ է պետք:

–Դու դրանք հետո բեր տանիք, կասեմ:

–Լավ:

–Ո՞ւր եք գնում, աղջիկնե՛ր,– ասաց Ջոն:

–Հիմա կգանք, մա՛մ:

–Ամեն ինչ համեղ էր, Ջո՛:

Մենք բարձրացանք տանիք, այն, ինչ կտեսներ Վիկտորյան իր համար սարսափելի էր: Նա ֆոբիա ունի կատուներից: Արագ ինձ նոտեցրեց կաթն ու հացը և իջավ ներքև, բղավեց.

–Եթե իմանայի դրա համար է, չէի տա:

–Վիկի՛,– ասացի ես ծիծաղելով:

Փխսիկին կերակրելուց հետո իջա ներքև՝ ընթրելու: Ժամը քսաներեքն անց քսանհինգ թույն էր, երբ հանկարծ լավեց դռան ձայնը:

–Ջո՛, ո՞վ է այս ժամին:

–Ամուսինս,– անտարբեր տոնով ասաց նա:

Երբ դուռը բացեց, ու եկան ներս, միանգամից գարեջրի հոտը լցվեց սենյակով մեկ, նույնիսկ մեկ կիլոմետրից այն կզգացվեր: Ես ձեռքս նոտեցրի քթիս, բայց այնպես, որ չնկատվի հատուկեմտ այդ հոտի համար եմ փակել քիթս:

–Ո՞վ է էս աղջիկը, Ջո՛,– բառերը հազիվ արտաբերելով՝ ասաց նա:

–Գնա՛ պառկելու. ամեն օր այդ զգվելի գարեջրատանն ես, խաղամոլ ու հարբեցող ես դարձել,– բարկացած ասաց Ջոն:

Ամուսինը հարվածեց կնոջը, հետո ձեռքը վերցրեց սեղանին դրված ծաղկամանը և ուզում էր դրանով հարվածել երկրորդ անգամ: Հասցրի բռնել նրա ձեռքը և ծաղկամանը մի կողմ դնել:

Չոն ձեռքերով բռնել էր գլուխը և լացում էր: Այսպիսի տհաճ երևույթի առաջին անգամ էի ականատես լինում: Անկեղծորեն ասեմ՝ մեր ընտանիքում ես չեմ հիշում դեպք, երբ հայրս հարբած ուշ ժամի տուն գա և ցանկանա նեղացնել մայրիկին: Իմ ընտանիքը միշտ եղել է ջերմ մթնոլորտում, և սա անսովոր երևույթ էր ինձ համար:

Չնայած ծաղկամանը մի կողմ էի դրել, միևնույն է, նա երկու անգամ իր ձեռքի ամբողջ ուժով հարվածեց Չոյին: Վիկտորյան հորը ցանկանում էր հետ քաշել, բայց ապարդյուն:

Ես գրկել էի Չոյին, որ հանկարծ բան չպատահի: Այդ պահին Վիկտորյան իր ամբողջ ուժով հրեց հորը, նա գլուխը խփեց սեղանի սուր հատվածին և ընկավ:

Ես վախից աչքերս փակեցի: Բոլորս մեր տեղում սառել էինք մի պահ:

Չոն կամաց մոտեցավ և փորձեց նրա զարկերակը ստուգել: Մեկ պարանոցը ստուգեց, մեկ էլ ձեռքը: Հետ քաշվեց և ձեռքերով փակեց բերանը:

–Մա՞մ,– դողացող ձայնով ասաց Վիկտորյան:

–Վիկի՛,– դողում էր ձայնը, սարսափած էինք բոլորս,– նա... չի շնչում:

Սարսափելի պահի ականատես եղա, պետք չէր, որ այս ամենը իմ աչքի առաջ լիներ, և առհասարակ պետք չէր, որ այս ամենը կատարվեր:

–Հայրի՛կ, կներես, հայրի՛կ,– բղավում էր և լաց լինում:

24

Հուլիսի 4

Ամբողջ գիշեր չենք քնել: Ոստիկաններ էին գալիս-գնում: Մեզ երեքիս կանչել էին ոստիկանություն:

Ես մենակ նստած էի տանիքում և աչքերիս առաջ էր գալիս երեկվա կատարվածը, իսկ կողքիս նստած էր այն սև կատուն:

Վիկտորյան բարձրացավ վերև և կանչեց ինձ.

–Անգելա՛, արի մեզ հետ, պետք է գնանք, սպասում են մեզ բաժնում:

Կատուն մի ցատկով թռավ ներքև, կարծես հասկանար Վիկտորյայի խոսքերը:

* * *

Նստած էի քննիչի դիմաց, ինձ հարցեր էին ուղղում և ասացին, որ պետք է գրավոր ներկայացնեմ երեկվա կատարվածը:

Ինձանից առաջ քննել էին Ջոյին ու Վիկտորյային:

Երբ դուրս եկա, Ջոն ծխում էր, իսկ Վիկտորյան ինչ-որ անտարբեր հայացքով նայում էր ինձ:

–Գնա՛նք, Վիկտորյա,– ասաց Ջոն՝ քաշելով նրա թևից:

Ես էլ նրանց հետևից գնացի, Ջոն ծխախոտը գցեց, հետո հանկարծ դեպի ինձ շրջվեց և ասաց.

–Դու ո՞ւր ես գալիս:

–Չպե՞տք է գամ:

–Արի՛, իրերդ հավաքի՛ր և ընդմիջտ կորի՛ր մեր կյանքից: Դու ես մեղավոր,– ասաց նա և հարվածեց դեմքիս:

Այն սև կատուն, որ քայլում էր իմ կողքով, բարձրացավ ցանկապատի վրա և ճանկռեց Ջոյի դեմքը: Շատ խելացի կատու էր:

–Ե՞ս եմ մեղավոր, ինչո՞ւ,– մի կերպ զսպելով լացս՝ ասացի ես:

–Սա ի՞նչ սատանա էր,– ամբողջ դեմքը արյունոտվեց,– թաշկինակդ տո՛ւր, Վիկի՛:

Նրանք գնացին, իսկ ես, սառույց դարձած, կանգնած էի իմ տեղում:

«Ե՞ս եմ մեղավոր, երևի ես եմ մեղավոր, որ նրա փոխարեն դու էիր լինելու, եթե չվերցնեի ծաղկամանը: Բարկացած է, խոսեց էլի»,– մտածեցի ես:

Վերցրի կատվին և քայլեցի նրանց տան ուղղությամբ՝ վերցնելու ճամպրուկս:

Թակեցի դուռը.

–Վերցրո՛ւ,– ճամպրուկս գցեց իմ դիմաց ու դուռը փակեց դեմ-
քիս Ջոն:

Նորություն չէ, որ մարդիկ իրենց դեմքը մնան իրավիճակնում
են ցույց տալիս:

Վերցրի ճամպրուկս և գնացի բանկ՝ գումարս այնտեղ ավելի
ապահով պահելու համար:

Ես տանկնովրա արեցի պայուսակս, բայց այնտեղ ոչ մի կո-
պեկ փող չկար: Չէի ուզում հավատալ, որ նրանք են գողացել,
բայց ուրիշ էլ ո՞վ: Նույնիսկ ամաչում էի գնալ և հարցնել: Հիմարի
կարգավիճակով դուրս եկա բակից ու քայլում էի, չգիտեմ՝ ուր:
Միակ կենդանի էակը, որ կողքիս էր. նա էր՝ այդ սև կատուն:

Մինչ իմ մտքերի հետ էի, երկու ոստիկան մտնեցան ինձ.

–Հրաման ունենք Ձեզ ձերբակալելու, օրիորդ:

–Երևի շփոթում եք:

–Դուք Անգելա Հոֆմանը չե՞ք:

–Ես եմ:

«Բայց ինչո՞ւ պետք է ձերբակալեն ինձ»:

Չեռնաշղթա հագրի՞ն ինձ ու տարան: Մի մռայլ ու խոնավ
պատերով սենյակ էր:

Փորձում էի հասկանալ՝ ինչու եմ ես այդտեղ գտնվում, և մեկը
մտնեցավ ինձ.

–Ջոաննան ու իր դուստրը՝ Վիկտորյան, վկայություն են
տվել, որ Դուք եք սպանել Էնդի Ֆրանկին:

Ես երեխայի պես լաց էի լինում ոչ թե, որ կարող էի ամբողջ
կյանքս անցկացնել այդ գորշ պատերի ներսում և շնչել տհաճ խո-
նավության հոտը, այլ նրա համար, որ իմ ամենամոտ ընկերուհին
հարվածել է թիկունքիցս և սուտ վկայություն տալով՝ փրկել իր կա-
շին: Անշուշտ, ես վստահ էի, որ արդարությունը մի օր կայցելի
Բեռլինի Պլյոտցենգեի բանտ, բայց և կյանքում եղավ երկրորդ
ամենամեծ սխալս՝ վստահել մարդկանց: Չկան հարազատներ և
սրտացավ մարդիկ. ամեն մեկը իր շահն է պաշտպանում, իսկ
պետք եղած դեպքում հոգին վաճառում սատանային:

Ականջիս ինչ-որ ձայն լսվեց, գրուխս բարձրացրի և տեսա կատվին, որ մլավում էր ու նայում աչքերիս մեջ: Փաստորեն՝ շնե-րից բացի՝ կատուներն էլ են հավատարիմ ընկերներ լինում:

Ես որոշեցի նրան կոչել «Շվարց»: Ես էլ նայում էի նրան ու ժպտում՝ աչքերս սրբելով:

25

Հուլիսի 10

Օրերը անցնում էին, իսկ ես դժոխքի համն էի զգում: Ամեն օր կանչում էին հարցաքննության և փորձում ինչ-որ նոր բան լսել ինձնից:

Իմացա, որ Վիկտորյան է եկել բանտ՝ ինձ տեսնելու, մի պահ չէի ցանկանում նրա երեսը տեսնել, հետո փոշմանեցի և համա-ձայնեցի հանդիպել նրա հետ:

Ուզում էի երես փնտել ու ասել սրտիս ուզածը, ուղղակի երես էլ չկար, որ գտնեի:

—Կներես, հիմա մտածում ես, թե այսբանից հետո ինչպես եմ եկել մոտդ ու կարողանում եմ նայել աչքերիդ մեջ: Խնդրում եմ, մինչև վերջ լսի՛ր, չընդհատե՛ս:

Մայրիկն էր ստիպել, որ կեղծ ցուցմունք տամ: Ես չէի ցանկանում, անկեղծ: Երբ դու տանիքում էիր, նա ինձ ստիպեց, որ կեղծ ցուցմունք գրեմ, նայի՛ր, նա նույնիսկ ձեռքս ծխախոտով այրել է, որովհետև չէի համաձայնում: Նա ինձ կսպաներ, եթե ճիշտ եղելությունը պատմեի, իսկ հիմա ես չեմ վախենում, ես արդեն ամեն ինչ պատմել եմ ոստիկանությանը, որովհետև գիշերները չէի կարողանում քնել, խիղճս տանջում էր ինձ, իսկ այս գիշեր հայրս հայտնվեց աչքերիս առաջ ու ասաց.

«Ի՞նչ է, ես քեզ այդպես եմ սովորեցրել, որ ստե՞ս: Հարբած թե սթափ վիճակում ես քեզ սիրել եմ կյանքիցս առավել: Ես գիտեմ, որ սխալը ես եմ իրականում, բայց քո արարքների համար միայն դու պատասխան տո՛ւր և եղի՛ր արդար առաջինը ինքդ քո

հանդեպ: Մտածի՛ր»: Այսբանից հետո քեզ թողնե՞մ այստեղ, ի դեպ, գումարդ էլ մայրիկն է վերցրել. այժմ ոստիկանների մոտ է, կվերցնես:

–Վերջացրի՞ք, օրիո՛րդ,– ասաց հսկիչը:

Վիկտորյան գրկեց ինձ իր թաց աչքերով ու դուրս եկավ, իսկ ես բառեր չէի գտնում՝ զգացածս արտահայտելու համար:

Նրանք տվեցին ինձ իմ ճամպրուկը և ամբողջ գումարս:

Չարմացած, հուզված դուրս եկա ու նայում էի արևին, ամպերին, որ երբեք այդքան գեղեցիկ չեն թվացել աչքերիս:

Չգիտեի ուրախանալ, թե տխրել. գուցե օրհնանք է մման ընկեր ունենալը կամ էլ պատիժ: Ես չէի ցանկանում հիշել ոչ մի բան՝ կապված նրանց հետ, կապված այս քաղաքի հետ, որովհետև ինձ միշտ վիշտ ու ցավ է բերել այս քաղաքը, անիծել է ինձ իր ողջ ուժով:

Այդ պահին ծանոթ մլավոց լսեցի, գլուխս իջեցրի ու տեսա ծանոթ-հարազատիս: Կարոտած գրկեցի նրան ու գնացի՝ տաքսի նստելու:

–Խնդրում եմ, ինձ հասցրե՛ք մոտակա ծաղկի խանութ, այնուհետև՝ գերեզմանատուն:

Ես վերջին անգամ այցելեցի ծնողներիս գերեզմանին, ուր մենել է հազար շշուկ, ուր թափվել է հազար անձրևի կաթիլ, արցունք, ու թաղվել մեծ ցավ՝ սրտիցս պոկված:

Տաքսու վարորդին խնդրեցի ինձ հասցնել տիկին Գայանեի տուն: Նրանց հրաժեշտ տվեցի և գնացի օդանավակայան: Տիկին Գայանեի վիճակն արդեն կայուն էր. քիչ էր հազում: Շատ հուզվեց իմ մեկնելու փաստից. ծանր բույեներ էին: Խնդրեցի, որ վերջին թարգմանություններս փոխանցի պարոն Շնեյդերին: Վերջում ասաց. «Հուսամ՝ Հայաստանում ինչ-որ մի օր կհանդիպենք»:

* * *

Արդեն օդանավակայանում էի:

–Տե՛ս, Շվարճ, ես արդեն այստեղ եմ և առաջին թռիչքով պետք է մեկնեմ Փարիզ, դու, իհարկե, չես կարող ինձ հետ գալ, մեծ ափսոսանքով ես քեզ թողնում եմ այստեղ, սիրում եմ քեզ կանաչաշյա ընկեր,– բաց աչքերով ասացի ես ու գրկեցի նրան:

Թողեցի Շվարճին օդանավակայանի բակում. ցանկանում էր հետևիցս գալ:

Ես հետ-հետ քայլելով նայում էի նրա թախծոտ աչքերին, ինչևէ, հեռացա: Մոտեցա՝ տոմս գնելու:

Մեկ ժամից թռիչքս էր, ու ես կհայտնվեի սիրո քաղաքում՝ Փարիզում, և իմ երազանքների երկրում:

Մեկ ժամը մի քանի վայրկյանի նման անցավ, ու ես արդեն տեղավորվել էի ինքնաթիռի մեջ:

Ժամը երեքն անց ութ ըռպե էր, ես հարմարավետ հենված էի իմ տեղում ու նայում էի ամպերին. դա իմ առաջին թռիչքն էր: Տպավորությունները գերազանց էին: Չեմ հասկանա այն մարդկանց, որոնք քնում են թռիչքի ժամանակ՝ բաց թողնելով այդ հրաշք պահերը տեսնելու հնարավորությունը:

Կողքիս մի կին էր նստած՝ մոտ քառասուն-քառասունհինգ տարեկան, գլուխը հետ էր տարել և աչքերը փակել էր, երևի փորձում էր հանգստանալ մինչև Փարիզ հասնելը: Այնքան սլացիկ կազմվածք և թարմ տեսք ուներ, որ մի պահ նախանձեցի նրան և իր կողքին ինձ վաթսուն տարեկան տատիկ զգացի:

Մենք գտնվում էինք մեծ բարձրության վրա. տեսարանն էլ ավելի գեղեցիկ է բարձրությունից: Մենք թռչում էինք Ֆրանկֆուրտի վրայով:

26

Եվ քանի ամիս սպասում էի այս պահին, ես վերջապես հասա Փարիզ: Արդեն օդանավակայանում էի, շուրջս բազմաթիվ մարդիկ կային, ամեն մեկը կամ իր հարազատին ճանապարհում կամ

դիմավորում էր, բայց ես մենակ էի ու ստիպված էի գտնել Մարջենց տան տեղը:

Երբ դուրս եկա օդանավակայանից, արդեն ժամը յոթն էր, գնալու տեղ չունեի: Որոշեցի գիշերել որևէ հյուրանոցում:

Տարսիով հասա Լուվրի թանգարանի մոտ, հետո քայլեցի Էյֆելյան աշտարակի կողմ: Այն ավելի գեղեցիկ է, քան պատկերված է լուսանկարներում, թերթերում:

Լինել Փարզում և չտեսնել Փարիզի Աստվածամոր տաճարը անմտություն կլինի:

Գրքերում նկարագրվածը ի՞նչ է աչքիդ տեսածի դիմաց, իրականում շա՛տ գեղեցիկ ու միևնույն ժամանակ շատ առեղծվածային է: XII դարում կառուցված այս տաճարի պատերը նկարագարողված էին քրիստոնեական պատկերներով, բարձրության վրա Քրիստոսն է պատկերված, իսկ նրա կողքին առաքյալներն են. վեցը՝ աջից, վեցը՝ ձախից: Չախ կամարը նվիրված է Տիրամորը, աջը՝ Սուրբ Աննային: Վերևում բիրիական թագավորներն են: Իսկ կենտրոնում պատկերված է Տիրամայրը սրբերի հետ: Մայրիկը սիրում էր կարդալ Վիկտոր Հյուգոյի «Փարիզի Աստվածամոր տաճարը» վեպը: Ես սիրահարված էի Փարիզին: Երանի՛ մարդիկ կարողանան պահպանել մշակութային արժեքները և հասկանալ դրանց նրբությունը:

Հազարավոր զբոսաշրջիկներ կային այնտեղ, մեկը խոտերին պատկած գիրք էր կարդում, մյուսը՝ լուսանկարում, իսկ ես չգիտեմ՝ ուր էի գնում, բայց ես երջանիկ էի. կարևորը դա էր:

–Ներեցե՛ք, որտե՞ղ կարող եմ հյուրանոց գտնել,– հարցրի ես մի անցորդ կնոջ:

–Զբոսաշրջի՞կ եք,– ասաց այդ շեկ վարսերով, երկար դեմքով և կապույտ աչքերով կինը:

–Այո՛, ինչո՞ւ:

–Ես ֆրանսիացի եմ, մեր մուտքում բնակարան կա, վարձով են առաջարկում, պատուհանից Փարիզի ամբողջ գեղեցկությունը երևում է, եթե կիստաքրքրի գնանք, նայի՛ր:

Ես սիրով համաձայնեցի կնոջ առաջարկին, և մենք միասին գնացինք դեպի «Rue de l'Église» փողոցով:

Տասը-տասնհինգ բոպե հետո կանգնեցինք մի շենքի դիմաց:

–Սա է,– ցույց տալով ասաց նա,– բարձրանա՛նք:

Ձեռքիս մի ճամպրուկը նա վերցրեց, մյուսը մնաց մոտս, որ ավելի հեշտ բարձրանամ: Կանգ առանք չորրորդ հարկում:

–Անունդ ի՞նչ է,– հարցրեց:

–Անգելա, իսկ Ձե՞րը:

–Ես Քեթլինն եմ, Գերմանիայից եք հավանաբար:

–Ինչպե՞ս կռահեցիք:

–Դիմագծերիդ մեջ նմանություն կա, նաև արտասանությունիցդ, լա՛վ, ի՞նչ ենք կանգնել այստեղ, բանալին վերցնեմ և գամ, իմ տանն է թողել:

Երկու բոպե չանցած՝ եկավ: Բացեց դուռը ու հրավիրեց ներս:

–Տան մեկ ամսվա վարձը հինգ հարյուր եվրո է, նայի՛ր տունը, կհավանես, կարծում եմ:

–Ներեցեք, բայց ինձ մեկ օրով է պետք:

–Ուրեմն մեկ օրվա համար կվճարես քսան եվրո:

Հանեցի գրպանիցս քսանհինգ եվրո և մեկնեցի նրա կողմը:

–Վերցրե՛ք, խնդրեմ, մնացածն էլ պահեք Ձեզ, շնորհակալ եմ տան համար, գեղեցիկ է:

–Շնորհակալություն: Վայելե՛ք Փարիզը:

Ճամպրուկս դրեցի հյուրասենյակում՝ պայուսակիս հետ միասին, իսկ ես դուրս եկա պատշգամբ, որպեսզի երեկոն դիտեմ և նաև վայելեմ Փարիզը, բայց ինձ մոտ չստացվեց դա. լսեցի դռան ձայնը:

–Անգել, վերցրո՛ւ այս ֆրանսիական գինին. դուրդ շատ կգա:

–Շնորհակալ եմ,– ասացի ես, մեկնեց գինին ինձ, ժպտաց և փակեց դուռը:

Վերցրի գինու բաժակ և կրկին գնացի պատշգամբ:

Ես միշտ երազել եմ սրա մասին՝ նստել Փարիզյան պատշգամբներից մեկում, վայելել երեկոյան Փարիզը՝ պարուրված ջերմությամբ, լույսերով ու մարդկանցով, որոնք անսովոր են և անձանոթ քեզ, նայել մայրամուտն ու սուզվել դրա մեջ:

Հանկարծ հիշեցի, որ Մարջն ինձ նամակ էր ուղարկել, իսկ ես այն առանց ընթերցելու արագ խցկել էի ճամպրուկիս մեջ:

Ամեն ինչ կիսատ թողեցի ու վազեցի հյուրասենյակ: Բացեցի ճամպրուկս, հենց սկզբում էլ դրված էր այն:

«Բարև, սիրելիս: Եթե պետք է գաս Ֆրանսիա, սպա Փարիզի րոմս մի՛ գնիր, այլ Մարսելի: Մենք այլևս Փարիզում չենք ապրում. տեղափոխվել ենք Մարսել: Հասցեն թողնում եմ ներքևում, մանրամասները կասեմ, երբ հանդիպենք: Սիրով և անհամբերությամբ սպասում ենք:

Սիրով՝ Մարջն:

«Աստված իմ, փաստորեն՝ Մարսելում եմ: Ինչ հիմարն եմ. պետք է շուտ կարդայի: Հիմա այդքան ճանապարհ պետք է գնամ և եթե գտնեմ, ուրեմն Աստված մեծ կգտնվի իմ հանդեպ»:

Պառկեցի քնելու շատ ուշ՝ երեքն անց հինգ:

27

Հուլիսի 11

Առավոտյան արթնացա շատ վաղ՝ յոթն անց քսան ընդամենը:

Դառը սուրճ պատրաստեցի և գնացի պատշգամբ՝ մտածելու, նայելու ու երազելու:

Նստած էի փայտե աթոռին, աչքերիս առաջ՝ մի փոքր հեռավորության վրա, Էյֆելյան աշտարակն էր, մտքերս հանգիստ էին:

Որոշել էի գնացքով մեկնել Մարսել, բայց քանի որ այն շատ երկար կտևեր, նախընտրեցի ինքնաթիռով տեղ հասնել:

«Կեսօրին կգնամ տոնս գնելու»,– մտածեցի ես:

Վերցրի սուրճի բաժակը՝ խոհանոց տանելու համար, բայց այն կրկին դրեցի տեղը, նկատեցի մի տղայի, որի դեմքը ինձ շատ ծանոթ էր. նա էլ ինձ էր նայում դիմացի պատշգամբից: Չեռքով բարևեց: Արագ ներս մտա և նստեցի բազմոցին:

–Աստված իմ, նա այն տղան էր, որը մեկնեց Ֆրանսիա՝ խոստանալով հավերժ սիրել ինձ: Ո՞նց շուտ չնկատեցի նրան:

Փոխեցի հագուստս ու այդ պահին հնչեց դռան զանգը:

–Ներեցե՞ք, օրիորդ, կարելի՞ է:

Ես դուռը բացեցի և ներս հրավիրեցի նրան:

–Բարի լույս,– ասաց:

–Բարի լույս,– ասացի ես:

–Գիտե՞ս՝ որքան էի կարոտել քեզ: Կարծում էի՝ էլ երբեք չեմ տեսնի:

Ժպտացի: Շոյեց վարսերս և գրկեց:

–Ինչո՞ւ ես եկել Փարիզ:

–Մորաքրոջս մոտ, անձանոթ,– ծիծաղելով ասացի ես:

–Անձանոթ:

–Անունդ չգիտեմ:

–Շառլ է անունս:

Կրկին գրկեց ինձ՝ այս անգամ ավելի ամուր սեղմելով իր արմունկների մեջ: Ես մեծ ջերմություն գզացի նրա գրկում: Ես էլ ամուր գրկեցի նրան:

–Կլինե՞ս հավերժ ինձ հետ:

–Բայց ես քեզ չեմ ճանաչում:

–Չես ճանաչում, բայց ամուր գրկե՞լ ես:

Ես թողեցի ձեռքերս ու շրջվեցի:

–Մի՛ նեղացիր. կատակում եմ: Այսօր երեկոյան յոթին քեզ հրավիրում եմ «Cafn de Flore», կարծում եմ՝ չես հրաժարվի մեկ քաժակ սուրճ խմել ինձ հետ:

–Կներես, ես մի քանի ժամից մեկնելու եմ:

–Ո՞ր:

–Մարտել:

–Այս անգամ քեզ հաստատ մենակ չեմ թողնի. ես էլ կգամ քեզ հետ Մարտել:

–Բայց...

Չհասցրի խոսքս ավարտել ասաց.

–Ես քիչ հետո երկուսիս համար տոմս կզգնեմ:

Նստեցինք մի փոքր զրուցելու, շատ հարցեր ունեի նրան:

–Շա՛ռլ, քանի՞ տարեկան ես:

–Քսանվեց տարեկան եմ:

Մնացած հարցերը՝ հետո, խնդրում եմ, վատահի՛ր ինձ:

Ժպտաց ու դուրս եկավ տանից:

«Ես նրան շատ եմ հավանում»,– մտածեցի ես:

Մի քանի ժամ անց դռան զանգը լավեց: Շառլն էր՝ ձեռքին կարմիր վարդեր:

–Անգե՛լ,– ժպտաց նա և վարդերը մեկնեց ինձ:

–Շնորհակալ եմ:

–Մրանք էլ մեր տոմսերը, ժամը հինգին թռիչքն է: Չորսին դուրս կգանք այստեղից, պատրաստ կլինես, լա՞վ:

–Լա՛վ,– ասացի ես:

–Ներս համեցիր, սուրճ կխմե՞ս:

–Չեմ հրաժարվի: Ինչո՞ւ ես եկել Փարիզ, եթե պետք է Մարտել մեկնես:

–Չգիտեի, որ մորաքրոջս ընտանիքը ուրիշ քաղաք է տեղափոխվել: Դու ո՞ւմ հետ ես ապրում այստեղ:

–Ես թե՛ Գերմանիայում, թե՛ այստեղ մենակ եմ:

–Իսկ ծնողներ՞դ:

Դռան զանգը լավեց: Բաց արեցի այն և տեսա տիկին Քեթլին:
– Բարի լույս, աղջիկս, եկա՝ տեսնելու՝ ինչ-որ բանի կարիք ունես:

– Բարի լույս, տիկին Քեթլին, շնորհակալ եմ, ամեն բան կարգին է: Նե՛րս եկեք:

– Անգե՛լ, այդ ո՞վ է, – հյուրասենյակից ձայն տվեց Շառլը:

– Հիմա կգամ, – ասացի ես:

– Տանը մարդ կա՞:

– Այո՛, ընկերս է:

– Պարզ է, լավ, ես գնամ, եթե ինչ-որ բան պետք լինի, արի իմ սուն:

– Եղավ, շնորհակալություն:

– Անգե՛լ, ո՞վ էր:

– Հարևանուհին: Հիմա քեզ համար սուրճ եփեմ ու գամ:

* * *

– Շատ համեղ էր, ապրե՛ս:

– Շա՛նլ, ես ճամպրուկս կարգի բերեմ, և մի երկու ավստե կա, լվանամ, որ դուրս գանք, արդեն երեքն անց քառասուն է:

Մոտ տասը թույն հետո դուռը փակեցի և գնացի տիկին Քեթլինի բնակարան:

– Շնորհակալ եմ ամեն ինչի համար, մենք արդեն գնում ենք, ահա բանալին:

– Ձեզ եմ շնորհակալ:

* * *

Մենք արդեն Փարիզի օդանավակայանում էինք:

– Անգե՛լ, մոտեցի՛ր գրանցման կետին, հիմա ջուր գնեմ ու գամ: Երբ մոտենում էի գրանցման համար, հանկարծ մեկը արմունկով հարվածելով անցավ կողքովս: Գլուխը կախ էր այդ մարդու, իսկ այդ պահին ես ասացի.

–Մի փոքր զգո՛ւյշ եղեք:

Նա շրջվեց, իսկ թե ում կտեսնեի, ես պատկերացնել անգամ չէի կարող:

–Դո՞ւ,– ասաց Դավիթը:

–Դո՞ւ,– ասացի ես:

–Լսի՛ր, դու ամենազգվելի մարդն ես, որին ես երբևէ հանդիպել եմ, դու կատարյալ սուտասան ես,– վրդովված ասացի ես:

–Անգելա՛, հանգստացի՛ր, խնդրում եմ, և հինգ բույե տրամադրի՛ր ինձ:

–Լսե՞մ քեզ, ինչի համար, որ ստերդ արդարացնե՞ս: Ես ուզում էի դեմքդ տեսնել և ասել այն, ինչ ցանկանում եմ: Ես քեզ նվիրվել էի իմ ամբողջ հոգով, բայց, փաստորեն, չպետք է կյանքում մինչև վերջ վստահել մեկին, նվիրվել մեկին: Դու քեզ արժանի պատիժը կստանաս մի օր, Աստված վկա:

–Անգելա՛: Ես արդեն պատժված եմ: Ես ամուսնացած էի մի իտալուիու հետ, բայց նա իմ ամբողջ ունեցվածքը վերցրեց և անհետացավ: Ասել էին, թե Ֆրանսիայում է, բայց չգտա նրան: Ես վերադառնում էի Գերմանիա, որ գայի քեզ մոտ, որ խոսեի՜նք ու հասկանայի՜նք իրար: Կներե՞ս ինձ:

–Ես ամուսնացած եմ, գնա՛ քո ճանապարհով, իսկ երբ հասնես իմ տան մոտ, միայն անձանոթների կհանդիպես, գնա՛, գուցե այնտեղ կարողանաս ինչ-որ մեկին խաբել, ինձ շատ ծանոթ անձանոթ: Հաջողություն, ամուսինս ինձ է սպասում:

–Իրո՞ք ամուսնացել ես:

–Այո՛, հոյակապ մարդու հետ:

–Երջանկություն եմ մաղթում ձեզ...,– հիասթափված ասաց նա:

Ես շրջվեցի ու հեռացա:

Մարդ այդքան ստոր կարո՞ղ է լինել, ինչպիսին նա է: Երբեք չեմ փոշմանի, որ նա գնաց իմ կողքից, չե՞ որ իսկապես սիրող մարդիկ չեն հեռանում, վախկոտներն են միայն գնում:

Մոտեցա գրանցման կետին ու նկատեցի, որ Շառլը ինձ է սպասում:

–Սիրելի՛ս, ո՞ր էիր:

–Հին ծանոթներիցս մեկին հանդիպեցի, ինչևէ, չե՞մք ուշացել, չե՞:

–Արդեն պետք է նստենք ինքնաթիռ: Կես ժամից կթռչենք:

Եվ ահա ես լքում եմ այս քաղաքը, այս երկիրը: Թողնում եմ հիշողություններս ու արցունքներս այստեղ և անվերադարձ գնում եմ իմ երազանքների հետևից: Կյանքը չափազանց կարճ է՝ տառապելու համար: Եթե որևէ մի օր վերադառնամ, ապա ամեն բան փոխված կլինի, ես այլևս առաջվանը չեմ լինի և չեմ մտածի առաջվա նման: Կգամ խաղաղված, կշրջեմ ամենակարևոր տեղերում, կարոտս կառնեմ և էլի հետ կգնամ այնտեղ, ուր հանգիստ եմ իմ մտքերը: Այսքան ժամանակ ոչ թե իմ տառապանքներն էին ինձ պահում այստեղ, այլ հիշողությունները: Չեմ ազատում ինձ իմ հիշողություններից, բայց մտքումս պահում եմ միայն երջանիկ պահերը: Սա փախուստ չէ, այլ խաղաղության որոնում: Ես այժմ խաղաղ եմ:

Ինքնաթիռում նստած էինք իրար կողքի, նա գլուխը հետ տարած թեքվել էր իմ կողմ և նայում էր ինձ:

–Ինչո՞ւ ես այդպես նայում,– հարցրի:

–Ուզում եմ երազիս հավատալ, որ վերջապես կողքիս ես: Սիրում եմ քեզ:

Ժպտացի:

–Մի քիչ պատմի՛ր քո մասին:

–Ապրում եմ Ֆրանսիայում, հանգստանալու ու աշխատելու նպատակով եկել էի Գերմանիա:

–Իսկ ծնողներ՞դ,– հարցրի ես:

–Նրանք Հայաստանում են, լսած կա՞ս այդ երկրի մասին:
Փոքր երկիր է:

–Լո՞րջ: Հա՞յ ես,– զարմացած ասացի ես՝ աչքերս չռած:

–Այո՛, ինչո՞ւ:

–Ես էլ եմ հայ, դե, իհարկե, կիսով չափ, մայրս հայ է եղել:

–Աստված սիրես,– ծիծաղելով ասաց նա,– եղե՞լ ես Հայաստանում:

–Ո՛չ, իսկ դո՞ւ:

–Ծնվածս օրվանից այնտեղ եմ ապրում, մի քանի տարի առաջ եմ եկել:

–Ուրեմն կզնանք, մերոնք Երևանում են ապրում, հենց մայրաքաղաքում: Ասացիր, որ մայրդ եղել է, այսինքն՝ նա...:

–Այո՛, նա մահացել է, հայրս էլ. նրանք երկուսն էլ ավտովթարից մահացան:

–Ցավում եմ, կներես, իսկ մորաքրոջդ ընտանիքը հա՞յ է:

–Նրանք բոլորը հայ են:

Այդ փաստը նրան կարծես ուրախացրեց:

–Երբ գնանք Հայաստան, քեզ մեր տուն հարս կտանեն ու էլ երբեք չեն թողնի, որ գնաս ինձնից:

Ծիծաղում էինք:

Նրա հայ լինելու փաստը ինձ շատ զարմացրեց, բայցև շատ ուրախացա և էլ ավելի վստահ էի իմ ընտրության հարցում: Ամբողջ ճանապարհին զրուցեցինք, պատմեցինք իրար տարբեր պատմություններ ու դեպքեր մեր կյանքից:

Լսեցինք, թե ինչպես է անվտանգության աշխատակիցը զգուշացնում, որ կապենք անվտանգության գոտիները, քանի որ մի քանի բուպեից պետք է վայրէջք կատարենք:

Մենք երկուսս բռնել էինք իրար ձեռք ու ժպտում էինք իրար:

–Հասանք, մնում է՝ գտնենք,– ասաց նա:

Օդանավակայանից տաքսի նստեցինք և խնդրեցինք մեզ նախ հասցնել որևէ ծաղկի խանութ, ապա՝ այն հասցեով, որն ասել էր Մարջը:

Մի քանի րոպե հետո կանգնեց և ասաց.

–Մա է, հասա՛նք:

Մենք արդեն 63 շենքի դիմացն էինք: Բարձրացանք վերև և գտանք նրանց տունը: Դուռը մի փոքր երկար թակելուց հետո բացեց Շուշիկը:

Մենք երկուսս էլ սառած կանգնել էինք իրար դիմաց: Չեռքերով փակել էր բերանը, իսկ աչքերը փայլում էինք երջանկությունից ու զարմանքից: Ամուր գրկել էր ինձ, այնքան ամուր, որ զգում էի նրա կարտոի աստիճանը:

–Շուշի՛կ, ո՞վ է, ինչո՞ւ մնացիր այդտեղ:

–Մա՛մ, արի՛, տես, թե ով է եկել: Ինչո՞ւ մնացիք այդտեղ, նե՛րս եկեք:

Մորաքույրս, մի ափսե սրբելով, գալիս էր մեր կողմ, բայց հանկարծ ապշեց՝ տեսնելով իր հյուրերին: Շուշիկը վերցրեց ձեռքից ափսե՛ն, որ հանկարծ զարմանքից չընկնի ձեռքից:

–Բարև Չեզ,– ժպտալով ասաց Շառլը:

–Աստվա՛ծ իմ, սիրո՛ւնս,– ասաց նա ու ամուր գրկեց ինձ ու Շառլին, ծաղիկները մեկնեցի Շուշիկի կողմ,– նե՛րս եկեք, նստե՛ք:

–Անգե՛լ:

Հանկարծ լսեցի Մարիամի ձայնը, որը ներս մտավ Հարութի հետ: Գրկեցին ինձ, և Հարութն ու Շառլը իրար ձեռք սեղմեցին՝ ի նշան ողջույնի:

–Ծանոթացե՛ք, նա Շառլն է՝ իմ ընկերը, Շա՛ռլ, մորաքույրս է՝ Մարջը, իսկ այս հրաշք աղջիկները նրա և Հարութի դուստրերն են՝ Շուշիկն ու Մարիամը:

–Ուրախ եմ ծանոթության համար,– ասաց Շառլը:

–Շատ համակրելի երիտասարդ է, Անջե՛լ,– ականջիս փսփսաց մորաքույրս:

–Դու ամուսնացած ես,– կամաց ծիծաղելով ասացի ես:

Նա կրկնեց այն նույն խոսքերը, որն ասել էր Դավիթի մասին, ես էլ փորձեցի իմ պատասխանը կրկնել, որ ասել էի նախկինում: Նայեց ինձ ու ժպտաց: Հիշեց:

Արդեն երեկո էր: Մենք նախաճաշեցինք: Նրանց տունը բավականին մեծ է և գեղեցիկ, իսկ մի քանի մետր այն կողմ գտնվում է չքնաղ Միջերկրական ծովը:

Բոլորն ինչ-որ բանով էին զբաղված, մորաքույրը ելակով տորթ էր պատրաստում, Հարութն ու Շառլը զրուցում էին, և ակամայից աչքերիս առաջ եկավ, թե ինչպես էին զրուցում Հարութն ու Դավիթը. շատ նման էր այդ տեսարանին: Շուշիկն ինձ կանչեց՝ իր սենյակը ցույց տալու համար: Պառկել էինք իր մահճակալին և երգում էինք Էդիթ Պիաֆի երգերից:

–Անգելա՛, Շուշի՛կ, եկե՛ք հյուրասենյակ. տորթ եմ պատրաստել:

–Հարո՛ւթ, գիտե՞ս՝ Շառլը հայ է:

–Նոր իմացա, և դա հիանալի է:

–Ներեցե՛ք, տիկի՛ն, ինչպե՞ս կարող եմ Ձեզ դիմել:

–Մարջ, ուղղակի այդպես:

–Երևի Ձեր անունը Մարջա՞ն է:

–Ինչպե՞ս իմացար:

Հարութը ծիծաղեց:

–Իսկ դու ասում էիր՝ այդ անվան մասին Ֆրանսիայում դժվար թե իմանան:

–Հորաքրոջս անունն էլ է Մարջան, մենք Մարջիկ ենք ասում նրան:

–Մա՛րջ, իրո՞ք անունդ Մարջան է:

–Այո՛, Անգելա՛, ինչո՞ւ զարմացար,– ծիծաղելով ասաց նա:

–Դե ես կարծում էի՝ հենց այդպես է, որ կա:

Հաճելի զրուցում էինք, ժամն արդեն տասնմեկն էր:

–Շա՛ռլ, իսկ ի՞նչ եք որոշել, կվերադառնա՞ք, թե՞ կմնաք Ֆրանսիայում:

–Հայաստան:

Հուլիսի 12

Առավոտն այնքան պարզ էր ու մաքուր, որ ուզում էի միայն վայելել այն: Ութն անգ հինգ բուսե էի արթնացել: Ես, Շուշիկն ու Մարիամը ցանկացանք նույն սենյակում գիշերել, իսկ Շառլը քնել է հյուրերի համար նախատեսված սենյակում:

Մինչ ես լոգանք կընդունեի, արդեն բոլորը արթնացել էին, երևի ես եմ արթնացրել նրանց, որովհետև սիրում եմ լոգանք ընդունելիս երգել:

– Բարի լույս բոլորին, – ասացի ես:

– Բարի լույս, անուշիկս, լավ քնեցի՞ր:

– Այո՛, մորաքո՛ւյր, բոլորին արթնացրե՞լ եմ:

– Բոլորին՝ ոչ. Շուշիկին ոչ որ չի կարող արթնացնել. շատ խորն է քնում:

Նախաճաշեցինք, մինչ Շուշիկը կարթնանար: Ֆրանսիական նախաճաշի սեղանը շատ հետաքրքիր է:

Որոշեցինք, որ երեկոյան պետք է գնանք լողափ, բայց Մարջն ասաց, որ Մարիամի կոկորդը ցավում է, ու նրանք երկուսով կմնան տանը:

Նախաճաշից հետո պատշգամբում էի:

Ինչպե՞ս կարելի է չսիրել աշխարհ կոչվող գաղտնիքների շտեմարանը: Կյանքում կարելի է ուրախանալ նույնիսկ փոքրիկ բաներից, օրինակ՝ ծովին նայելիս, կանաչապատ դաշտով քայլելիս, երկնքին նայելիս. չէ՞ որ ինչ-որ մեկը երազում է տեսնելու մասին: Երջանիկ կարող ես լինել, երբ խոսում ես քո սիրելի մարդկանց հետ, դա կարող է փոքրիկ պահ թվալ, բայց այդ պահը հիշելիս ի՞նչ է, չե՞ս ուրախանում, իհարկե, ուրախանում ես: Երջանկության մասին կարող ես անվերջ խոսել և մտածել, բայց կարևորը երջանկությունը զգալն է:

Կարդում ես գրքեր, տողեր, որոնցում կարծես անփոփոխ է կյանքի իմաստը, բայց իմաստը ոչ թե գրքում գրված տողերում է,

այլ նրանում, որ կյանքդ ապրես լիարժեք, անես այնպես, ինչպես դու ես ուզում՝ անտեսելով հասարակության կարծիքը, ասես այն, ինչ զգում ես, ոչ թե կարողալով ինչ-որ մի տող՝ որոշես, որ այդպես է պետք, ո՛չ: Ոչ մի բանաստեղծ, փիլիսոփա, գրող չի կարող ներթափանցել քո աշխարհ. այնտեղ անքան գաղտնիքներ ու նրբություններ կան, որ ավելի հեշտ է եզիպտական բուրգերի առեղծվածը բացահայտել, քան մարդու ներաշխարհը:

–Ինչի՞ մասին ես մտածում,– հանկարծ Շառլը հայտնվեց կողքիս:

–Երջանկության,– ասացի:

–Ի՞նչ է երջանկությունը,– հարցրեց:

–Միրել և լինել սիրված, երագել ու գնալ երագանքների հետևից, տեսնել աշխարհը, լսել թռչուններին և խոսել սիրելիի հետ: Իսկ քե՞զ համար:

–Միայն այն, որ կողքիս ես, դա արդեն մեծ երջանկություն է ինձ համար:

Գրկեց ինձ և համբուրեց այսու: Ամուր գրկել էր ինձ, երկուսս էլ նայում էինք նույն ուղղությամբ, կարծես սեղմվել էի երջանկության մեջ, որ էլ ինձ երբեք բաց չի թողնի:

30

–Կցանկանա՞ս ճաշել,– հարցրեց Շուշիկը,– բոլորը սեղանի շուրջ նստած են արդեն:

–Դուք դեռ այստե՞ղ եք, աղջիկներ,– ներս եկավ Մարջ մորաբույրը,– եկե՛ք՝ ճաշելու. տղմա եմ պատրաստել:

–Գիտե՞ս՝ ինչ համեղ ուտեստ է:

–Տղմա՞:

–Այո՛, արի՛:

Խոհանոցում նստած էի Շուշիկի ու Մարջի մեջտեղում, Հաբուրը, Շառլն ու Մարիամը՝ իրար մոտ:

Տոլման ուղղակիորեն դարձավ իմ սիրելի ուտեստը. այն պարզապես հրաշալի է:

Դե Հարութը, սովորության համաձայն, սեղանի շուրջ խոսում էր միայն հայերեն, բոլորը հասկանում էին՝ բացի ինձանից, իսկ Շուշիկն ականջիս կամաց թարգմանում էր նրանց գրույցը: Ընդհանուր առմամբ խոսում էին իմ ու Շառլի ամուսնությունից: Հարութը ուզում է՝ Ֆրանսիայում տեղի ունենա հարսանեկան արարողությունը, իսկ մորաքույրն ու Շառլը՝ Հայաստանում: Ես էլ էի հակված Շառլի տեսակետին, ավելի լավ է՝ իր ծնողները և իմ մեծ ծնողներն էլ ներկա լինեն, իսկ մենք՝ ես ու Շառլը, մորաքրոջս օրհնությունը կստանանք այստեղ՝ Ֆրանսիայում:

Տեսնես՝ կգա ժամանակ, երբ աշխարհի մի ծայրից մյուսը նամակ կուղարկես և վայրկենական ստանաս պատասխանը, կամ կլինի՞ մի սարք, որի միջոցով կտեսնես բարեկամներիդ, որոնք շատ հեռու են ապրում քեզանից. այդպես երևի ապրելը կհեշտանա կամ ավելի կբարդանա, սակայն հաճելի կլինի կապվել բարեկամներիդ հետ, երբ հեռու են քեզանից ապրում: Մրանից հարյուր տարի առաջ ո՞վ կպատկերացներ, որ ռադիո կստեղծվի, կամ կառքերին կփոխարինեն ավտոմեքենաները:

Ճաշից հետո Մարջին օգնեցի ավստենները լվանալ, տունը կարգի բերել, իսկ հետո գնացի սենյակ, որտեղ Շուշիկը քնած էր, նա արագ հաց կերավ և եկավ սենյակ, մտածում էի՝ իրեն վատ է զգում:

–Կարելի է՞,– դուռը թակեց և հարցրեց Շառլը:

–Ես հիմա կգամ:

–Պատրաստվի՞ր, քիչ հետո գնում ենք լողափ:

–Շառլ, Շուշիկը քնած է, կարծես իրեն վատ է զգում, եթե նա չգա, ես էլ չեմ գա, կմնամ իր մոտ:

–Ի՞նչ է պատահել:

–Չգիտեմ:

–Մարջն իր մոտ կմնա, դու արի՛:

–Սպասիր,– ասացի ես և ներս մտա:

Երբ մի քանի անհրաժեշտ իր դնում էի պայուսակիս մեջ, նկատեցի, որ Շուշիկը արթնացավ: Խոսեցի հետը, փաստորեն՝ ոչինչ էլ չէր պատահել, ուղղակի քնել էր ուզում, սակայն նրան չհավատացի, որոշեցի հետո հարցել և հասկանալ տրամադրության կտրուկ փոփոխության պատճառը: Ասաց, որ ինքն էլ մեզ հետ լողափ կգա:

Մոտ տասնհինգ-քսան րոպե հետո արդեն Միջերկրական ծովի ափին էինք: Ծովն այնքան խաղաղ էր, ականակիտ, ինչպես երկինքը: Նա բռնել էր ձեռքս, նայում էինք ծովին, որտեղ երևում էր մեր երկուսի արտացոլանքը:

Ժպտում էինք այնպես, ասես տեսել ենք իրար հենց նոր, հենց նոր էլ սիրեցինք իրար աչքերով, ժպիտով ու հայացքով: Ամփոփելով իրար՝ իրար մեջ գտանք մի մեծ աշխարհ, որտեղ կայինք մենք ու ծովը, որտեղ, մեզանից բացի, էլ ոչ ոք պետք չէր մեզ. մենք կայինք, ու դա բավական էր մեզ:

Մի քանի կաթիլ ջուր ցողեց երեսիս և ասաց.

–Լողա՞նք:

Գրկեց ինձ ու իր հետ տարավ ալիքների մեջ:

–Շա՛ռլ, բայց ես լողալ չգիտեմ, կխեղդվեմ:

–Չե՛ս խեղդվի. ձեռքերիս մեջ ես:

–Լողալ չգիտե՞ս,– լողալով մեզ մոտ հասավ Շուշիկը:

–Ո՛չ, ինչպես տեսնում ես,– ծիծաղելով ասացի ես:

–Անգե՛լ, կգա՞ս ափ, մի փոքր բան ունեմ՝ քեզ հետ խոսելու:

–Իհարկե:

Մի պահ անհանգստացա՝ մտածելով, թե ինչ պետք է նա ինձ ասի, որ այդքան լուրջ դեմքով հարցրեց:

–Անգե՛լ, ես սիրած տղա ունեմ. մենք շփվում ենք, նա իմ դասընկերն է: Սրա մասին ոչ ոք չգիտի, ոչ որի չեմ ցանկանում ասել դեռևս, բայց քեզ շատ ցանկացա պատմել սրա մասին: Չե՞ս ասի, չե՞, մայրիկին:

–Բայց դուք դեռ փոքր եք: Ո՛չ, ո՛չ, հանգիստ եղի՛ր. չեմ ասի: Դեռ շատ ժամանակ ունես քեզ համար թեկնածու ընտրելու. մի՛ շտապիր այդ հարցում:

–Կարծում եմ՝ լուրջ է:

–Առաջի՞ն անգամն է, որ սիրահարվել ես:

–Այո՛, առաջին անգամ է:

–Լսի՛ր, պետք չէ վստահել ոչ ոքի, ընկերություն արեք, բայց թող լինի դա միայն ընկերական, ավելորդ ոչինչ պետք չէ քեզ: Ես քեզ խորհուրդ եմ տալիս. ընդունել կամ չընդունելը դու կորոշես, իսկ եթե կարծում եք, որ ամեն բան լուրջ է, ծանոթացրո՛ւ ծնողներիդ հետ, որպեսզի գաղտնի քայլեր չանես և չխաբես նրանց, չե՞ս կարծում:

–Ճիշտ ես, բայց հայրիկը թույլ չի տա, իսկ մայրիկի բնավորությանը ծանոթ ես, ինձ կսպանի:

–Միրելու մեջ ոչ մի ամոթ բան չկա, հավատա՛, իսկ մայրիկն էլ շատ չի բարկանա, ես կխոսեմ նրա հետ: Սակայն ես մնում եմ իմ կարծիքին, որ ավելի լավ է ուսմանդ վրա ավելի շատ կենտրոնանաս:

–Կմտածեմ ասածներիդ շուրջ:

Նստած գրուցում էինք, հետո մեզ միացան Շառլը և Հարութը: Ավելի երկարեց գրույցը, երբ հանկարծ նկատեցինք արևի գեղատեսիլ մայրամուտը:

Ես մի փոքր առաջ գնացի նրանցից, հետո Շառլը եկավ և նստեց կողքիս: Հարմարավետ նստեցի՝ դեմքով դեպի արեգակը, սկսեցի խորացած մայել այդ պահը:

–Գեղեցի՞կ է, չե՞,– ասաց Շառլը:

–Այնքան, որ մի հավերժություն կնստեի և կնայեի արևամուտը:

–Ես սիրում եմ քեզ,– ասաց:

–Ես էլ քեզ եմ սիրում,– ասացի:

–Այնքան, ինչքան մայրամո՞տն ես սիրում:

–Դրանից էլ շատ:

–Խոստովանո՞ւմ ես:

Ժպտացի:

–Ես այսուհետ բոլոր մայրամուտները քեզ եմ նվիրում:

–Բայց դա ոչ որի չի պատկանում:

–Ես իմ կյանքի ապրած բոլոր մայրամուտներն ու այն մայրամուտները, որոնք պետք է ապրեմ, քեզ եմ նվիրում: Իմ լուսաբացը դու ես, իմ մայրամուտն էլ ես դու: Եվ կյանքիս բոլոր օրերը քոնն են միայն, ու գուցե գա մի օր, երբ մենք կլինենք ութսուն տարեկան, կրոնենք իրար ձեռք, ինչպես հիմա եմ բռնել քո ձեռքը ու կասեմ. «Մենք դա արեցինք»: Կժպտամ քեզ ու կհամբուրեմ ձեռքդ,– ասաց նա և համբուրեց ինձ:

31

Հովհան 13

Ահա արևը, և ահա ես. իր ողջ գույներով ու երանգներով ինձ պարուրել է իր շողերի մեջ, ուզում է՝ իրեն էլ սիրեմ, իրեն էլ նայեմ, բայց ո՞նց չսիրել այս առեղծվածը: Աշխարհը յուրովի կատարյալ է և առեղծվածային:

Պատահո՞ւմ է, չէ՞, որ քեզ մեկ-մեկ չես հասկանում: Չես հասկանում, թե ինչ ես ուզում, թե ում ես պետք: Պատահո՞ւմ է, չէ՞, որ մեկ-մեկ մարդը հիասթափվում է, կոտրվում, բայց ուժեղները բարձրանում են այնքան, որ մոռանում են դրա մասին ու ձգտում վեր բարձրանալ և ի վերջո բարձրանում են:

Նայում ես շուրջդ ու զարմանում, թե ինչքան շատ են երկերեսանի մարդիկ, թե ինչքան են սիրում քծնվել. անտանելի է: Նրանցից պետք է մղոններով հեռու մնալ:

Հարգանքի են արժանի այն մարդիկ, որոնք, անարդարություներ տեսնելուց բացի, բարձրաձայնում են դրա մասին:

Պատահո՞ւմ է, չէ՞, որ ուզում ես մի քանի րոպե ժամանակ գտնել ու մտածել քո մասին, ի մի բերել մտքերդ ու շարունակել ժպտալ, որովհետև հետո կհասկանաս, որ դու ունես ավելին, կհա-

մարես քեզ երջանիկ-դժբախտ, այո՛, ամեն մարդ կիսով չափ երջանիկ է, կիսով չափ դժբախտ: Դու ես երբեմն որոշում՝ դրանցից որն է ավել, որը՝ քիչ:

Մտածում ես նաև նրա մասին, որ թեկուզ միշտ կողքիդ չեն մարդիկ, որոնց սիրում ես, որ ամեն օր չես տեսնում նրանց, բայց կարևորը ողջ են ու առողջ:

Ամեն մեկն իր կյանքի նկարիչն է, և հենց ինքն է որոշում՝ ինչ-պիսին լինի իր նկարը, որը կարելի է համեմատել կյանքի հետ: Ոմանց մոտ անգույն, սև մատիտով նկարված գծանկար է... Ոմանց մոտ վառ, մածուցիկ ներկերով նկարված նկար, իսկ որոշ մարդկանց մոտ այդ թուղթը դատարկ է: Կարծում եմ՝ նրանք սպասում են, որ ինչ-որ մեկը կլցնի այդ դատարկ թուղթը վառ գույներով և կիմաստավորի իր նկարը, սակայն դա անհեթեթ է: Ամեն մեկը պիտի ստեղծի իր նկարը՝ իր գույներով, իր մատիտներով, իր վրձնով:

Ամենամեծ սխալներից այն է, որ նկարելիս թողնում ես՝ կողքիդ կանգնեն այնպիսի մարդիկ, որոնք չեն հասկանում դա ու «անզգուշաբար» դիպչում են վրձնիդ և փչացնում նկարդ: Դա նույնն է, ինչ անհոգի մարդկանց թողնում ես քո կյանք, և նրանք «անզգուշաբար» դառնում են քեզ հարազատ ու օրերից մի օր որոշում են գնալ:

Բայց նկարելով է մարդու ձեռքը սովորում:

–Անգե՛լ, բարի լույս,– կամաց ասաց Մարիամը և մոտ եկավ ինձ,– գիտե՞ս՝ վաղը Շուշանիկի ծննդյան օրն է. մտածում եմ՝ մի հետաքրքիր անակնկալ պատրաստենք նրա համար:

–Իրո՞ք, չգիտեի: Արի՛ մի յուրահատուկ բան մտածենք:

–Առաջարկում եմ՝ տորթ պատրաստենք:

–Բայց ես տորթ պատրաստել չգիտեմ:

–Մայրիկը կօգնի. նա համեղ է պատրաստում:

–Նայի՛ր, դու ու մորաքույրը երեկոյան տորթ կպատրաստեք, իսկ նա դրա մասին չի իմանա, քանի որ կզնանք զբոսնելու: Արթո՞ւն է Մարջը:

–Այո՛, հաստատ արթուն է, հայրիկին ճանապարհել է աշխատանքի:

–Ուրեմն՝ արի՛:

Թակեցի Մարջենց սենյակի դուռը և ներս մտա:

–Կարելի՞ Է,– ասացի:

–Իհարկե, եկե՛ք, տեսնե՛մ՝ ինչ է պատահել:

–Մա՛րջ, կօզնե՞ս մեզ:

–Լսում եմ:

–Մա՛րջ, Մարիամն ասաց, որ վաղը Շուշիկի ծննդյան օրն է: Այսօր երեկոյան տորթ կպատրաստե՞ս: Ուզում եմ՝ ուղիղ տասներկուսին շնորհավորենք նրան: Եկե՛ք տորթ պատրաստենք և նրան հրավիրենք տանիք: Կարծում եմ՝ սա լավ առիթ է՝ նրան ուրախացնելու: Կերևան գեղեցիկ լուսավորված քաղաքն ու երկու փայլուն լուսին:

–Ինչպե՞ս ես պատկերացնում դա:

–Դու կատարի՛ր իմ խնդրանքը, մնացածը ես կանեմ:

Մարջը դժվարությամբ, բայց համաձայնեց առաջարկիս: Խոսեցի Շառլի հետ, որպեսզի օրվա ընթացքում մի պահ հարմարեցնի՝ միասին նվեր ընտրելու համար: Ասաց, որ մի քանի ժամից, երբ Հարութը գա, գնալու են իմ գործերով՝ Հայաստան մեկնելու համար. հայրենադարձությունը դադարեցվում է: Հավելեց, որ երբ վերջացնի գործերը, անպայման ինձ հետ կգնա՝ նվեր ընտրելու:

Ժամը երկուսն անց կես էր, բայց Շուշիկը դեռ քնած էր: Մարջը անընդհատ ձայն էր տալիս նրան, որ իրեն օզնի, բայց ոչ մի արձագանք: Երբ ավսեներն էի լվացնում, հանկած Մարջը մի բաժակի մեջ ջուր լցրեց և արագ գնաց խոհանոցից:

–Ասաա՛, մա՛ն, ի՞նչ ես անում,– լսեցի Շուշիկի բղավոցը:

Արագ գնացի նրա սենյակ և ի՞նչ տեսնեմ: Ես ու Մարջը ծիծաղում էինք բարձր: Քանի որ Շուշիկը չէր ցանկանում արթնանալ, Մարջն էր որոշել նրան արթնացնել:

–Շուշիկ, քնկո՛տ, վե՛ր կաց, ինձ օգնի՛ր:

Մենք ծիծաղում էինք, իսկ Շուշիկը՝ փնթփնթում:

Չանցած հինգ րոպե՝ Շուշիկը կողքիս կանգնած էր հոգնած տեսքով, կիսաբաց աչքերով:

–Մա՞մ, ի՞նչ կա անելու:

–Հատակը մաքրի՛ր, հետո տունը կարգի՛ բեր և սրբի՛ր փոշին:

–Տեսնո՞ւմ ես, թե ինչպես է տանջում ինձ:

–Ընտի՛ր է. անցի՛ր գործերիդ,– ասացի ես՝ ծիծաղելով նրա նվնվոցի վրա:

Շառլն ու Հարութը տուն եկան: Շառլը անձնագիրս ու մի քանի փաստաթուղթ վերցրեց, և դուրս եկան, ասաց, որ շուտ կվերադառնան:

Հինգն անց քսան րոպե էր, նրանք երկուսով ներս մտան:

Շառլը բարկացած տեսք ուներ, ոչինչ չասաց, գնաց խոհանոց, բացեց պատուհանը և սկսեց ծխել:

–Շա՛ռլ, ինչո՞ւ ես ծխում. ի՞նչ է պատահել:

–Ասացի՛ն, որ հայրենադարձությունը դադարեցվել է, և գուցե էլ ելք չկա՝ հետ վերադառնալու համար, Հայաստանում շատ խիստ հսկողություն է սահմանված: Մեզ պես էլի մի քանի մարդիկ կային, որ ցանկանում են գնալ Հայաստան, բայց ասում են, որ ուշացել ենք: Նամակ ենք ուղարկել ԽՍՀՄ-ին՝ խնդրանքով առ այն, որ հնարավորություն ընձեռեն՝ վերջին մարդկանց հետ վերադառնալու իրենց հայրենիք: Պետք է սպասենք:

–Ինչքա՞ն:

–Գուցե տասը օր, գուցե ամիս, չեմ կարող հստակ ժամանակ ասել: Անորոշ իրավիճակ է:

–Անջրպետ է, որը կա՛մ պետք է շրջանցել, կա՛մ քանդել:

–Մի՛ մտածիր. ամեն ինչ լավ կլինի, կվերադառնանք:

Լռությունը կրկին խախտեց Շառլը.

–Գնա՞նք:

–Ո՞ւր:

–Ո՞ւր պետք է գնայինք:

–Հագուստս փոխեմ, ու դուրս գանք:

Երբ ցանկանում էի գնալ սենյակ, Հարութն ու Մարջը եկան ինձ մոտ:

–Խոսք եմ տալիս, հնարավոր ամեն բան կանեմ, որ մեկնեք,–
ասաց Հարութը:

Մարջը գրկեց ինձ և հարցրեց.

–Ինչ-որ տե՞ղ ես պատրաստվում գնալ:

–Այո՛, մենք քիչ հեռոտ կգանք:

–Լավ:

Նրանց շենքից քիչ հեռու մի քանի խանութներ կային: Սկզբում մտանք հագուստի խանութ և փորձեցի ինչ-որ հետաքրքիր հագուստ ընտրել: Կարծում եմ՝ Շառլին բավականին տանջեցի, բայց գտա այն, ինչ ցանկանում էի:

Դեղին գույնի կիսաշրջագծեստ գնեցինք Շուշիկի համար, հետո էլ՝ մի նոթատետր:

32

Տասնմեկն անց հիսուն էր, երբ պատշգամբում նստած էինք ես ու Շուշիկը: Լուռ նայում էինք երկնքին, և ամենքս մի բան էինք մտածում:

–Շուշի՛կ, արի՛:

–Ո՞ւր:

–Արի գնանք տանիք. այնտեղից երկնականարն ավելի լավ է երևում:

–Մայրիկը չի թողնի:

–Իսկ մենք մայրիկից գաղտնի կզգանք: Հագի՛ր կոշիկներդ ու սպասի՛ր դռան մոտ, ես հիմա կգամ:

–Լավ, բայց...

–Գնա՛:

Շուշիկը ժպտաց ու կատարեց ասածս: Ես արագ գնացի հյուրասենյակ, տեղեկացրի, որ մենք արդեն գնում ենք տանիք, ուղիղ տասներկուսին լինեն այնտեղ:

–Շա՛ռլ, խնդրում եմ, հետո կվերցնես մեր գնած նվերները:

Երբ դուրս եկա, Շուշիկը աստիճանների մոտ ինձ էր սպասում: Բարձրացանք վերև, հետո նայեցի ձեռքիս ժամացույցին, ուղիղ հինգ րոպե էր մնացել:

–Արի՛ այատեղ նստե՛նք:

–Գեղեցի՞կ է, չէ՞:

–Առեղծվածային է: Խորը:

–Վաղը ծնունդս է, գիտեի՞ր:

Գլխով արեցի իբր տեղյակ չէի:

–Կարծում եմ՝ սա ամենալավ նվերն էր, որ երբևէ մատուցել են ինձ,– ասաց և գլուխը ավելի բարձրացրեց վերև:

Հուլիսի 14

Այնքան հիացած և գեղեցիկ էր նայում երկնքին: Խորհրդավոր լռությունը խախտվեց, իսկ Շուշիկը սաշահար վեր թռավ նստած տեղից: Ես էլ վեր կացա և սկսեցի նրանց հետ միասին երգել «Ծնունդդ շնորհավոր» երգը:

–Դո՞ւ էիր կազմակերպել այս ամենը, չէ՞,– ասաց Շուշիկը, նայեց ինձ և սկսեց ծիծաղել:

–Իմ փոքրիկ Շուշան, շնորհավոր ծնունդդ,– ասաց Մարջը և համբուրեց դստեր ճակատը:

–Ես հպարտ եմ, որ քեզ ու Մարիամի նման աղջիկներ ունեմ, շնորհավոր ծնունդդ, աղջիկս,– ասաց Հարութը՝ ամուր գրկելով աղջկան:

–Ման, պա՛պ, շնորհակալ եմ, ես ձեզ շա՛տ եմ սիրում:

–Անո՛շ աղջիկ, ես էլ եմ շնորհավորում,– ասաց Շառլը և գրկեց նրան:

–Շնորհակալ եմ, Շա՛ռլ:

–Դուք մնո՞ւմ եք, թե՞ մեզ հետ կգաք,– ասաց Մարջը:

–Մենք քիչ հետո կգանք,– ասաց Շուշանը:

Շուշիկն ամուր գրկել էր ինձ ու ասում էր, որ շա՛տ է սիրում ինձ: Դե ես դրա մասին գիտեի, բայց հաճելի էր որերորդ անգամ ևս լսել դրա մասին: Նա այնքան պարզ և խորհրդավոր աղջիկ է, կարծում եմ՝ չկա մեկը, ով չսիրի նրան: Նա միշտ ցանկանում է օգնել ընկերներին, նույնիսկ անձանոթներին: Մոտ քսան-քսան-հինգ թուփե գրուցելուց հետո որոշեցինք իջնել ներքև: Շուշիկը կարծես հավանել էր մեր անակնկալը:

Նստած էինք հյուրասենյակում, գրուցում էինք, Մարջը հետաքրքիր դեպքեր էր պատմում Շուշիկից: Շառլը նստած էր կողքիս, կամաց ասաց, որ իր հետ գնամ:

Հյուրերի սենյակում էինք՝ այնտեղ, որտեղ քնում է Շառլը:

–Նալի՛ր՝ ինչ գեղեցիկ տեսարան է:

–Շուշանի նման ասացի՛ր, այո՛, գեղեցիկ է:

Ժպտաց ու նայեց աչքերիս:

–Կարո՞ղ ես հաշվել, թե քանի աստղ կա երկնքում,– ասացի:

–Անհնար է. դրանք անթիվ են:

–Իսկ դու գիտե՞ս, որ արեգակն աստղ է. այն ամենամոտ աստղն է մեզ հարյուր հիսուն միլիոն կիլոմետր հեռավորությամբ:

–Իրո՞ք, չգիտեի:

–Պատկերացնում ես՝ հիմա ինչ հեռավորության վրա եմ մեզանից աստղերը:

–Ապշելու բան է,– զարմացած ասաց նա:

–Ուրեմն գիտեցի՛ր, որ ես քեզ սիրում եմ մինչև այ այն աստղը և հետ,– ասացի ես՝ ցույց տալով հեռվում շողացող մի փայլող աստղ:

–Դու խենթ ես,– ժպտալով ասաց նա:

–Քո խենթը:

–Իմ խենթը, այո՛:

Անուր բռնել էր ձեռքերս, կարծես պիտի գողանային ինձ իրենից, բայց անկարող էին:

Մեզ բոլորիս շատ քիչ բան է պետք իրականում: Պետք չէ, որ մեզ հասկանան. ուղղակի պետք է սիրել, զգալ այն ջերմությունը, որ տալիս են մեր սիրելի մարդիկ:

Ինձ պետք չեն թանկարժեք իրեր, աղամանդ ու ոսկի, պետք չեն ծովի ափին շքեղ տներ կամ գրպանից թափվող փողեր. ես ունեմ ավելին, քան այդ էժանագին բաները:

–Որտե՞ղ ես ուսումնասիրել աշխարհի մասին գիտություն:

–Հայրս երկրաբան էր, Շա՛ռլ: Նա փայլուն տիրապետում էր իր մասնագիտությանը: Մեկ-մեկ, երբ ազատ էր լինում, ինձ կանչում էր իր աշխատասենյակ և տարբեր առարկաներից (ֆիզիկա, աշխարհագրություն, երկրաբանություն և այլն) կարևոր նյութեր էր սովորեցնում: Հետո գլոբուսի վրա ցույց էր տալիս Երկրի պտույտը Արեգակի շուրջ կամ Լուսնի պտույտը Երկրի շուրջ: Քարտեզ էլ ավելի լավ գիտեմ:

–Ընտի՛ր է: Փաստորեն՝ դու հետաքրքրված ես երկագիտությամբ:

–Քիչ, որոշ բաներ են ուղղակի հետաքրքիր: Ես ավելի շատ սիրում եմ լեզուներ ուսումնասիրել: Դու մասնագիտություն ունե՞ս:

–Մկզբում Հայաստանում էի սովորում: Իրավաբան եմ, հետո տեղափոխվեցի Գերմանիա՝ աշխատելու, սովորելու և հանգստանալու: Վերջացրի այս տարի ու հանդիպեցի քեզ, սակայն շատ վիրավորված էի՝ քեզանից մերժում ստանալու համար, բայց կարևորը հիմա ամեն բան լավ է: Գնանք Հայաստան. քեզ մեր տուն հարս են տանելու, սպասիր:

Ծիծաղում էինք:

–Շառլ, արդեն ուշ է, գնամ հյուրասենյակ, բարի գիշեր մադ-
թեն բոլորին և քննեմ:

–Բարի գիշեր, սիրունա:

33

Առավոտյան ութն անց կես Շառլն ու Հարութը գնացին դես-
պանատուն՝ փորձելով ինչ-որ բան փոխել:

Երբ սենյակում միայն ես ու Շուշանն էինք, սկսեցի հարցու-
փորձ անել այն օրվա իր պատմած տղայի մասին: Ասում էր, որ,
ճիշտ է, դպրոցում այնքան էլ լավ չի սովորում և օրինակելի վարք
չունի, սակայն իր քայլերում անկեղծ է, երբ սիրում է, անկեղծ է սի-
րում, երբ ատում է, անկեղծ է ատում, ասաց, որ չի սիրում իրեն
ցուցադրել. սիրում է օգնել ընտանիքին, երբեմն տարբեր աշխա-
տանքներ է կատարում, որպեսզի գումար աշխատի, չնայած դրա
կարիքը չունեն, Շուշանի համար միշտ շոկոլադներ է գնում: Մի
բան էլ ասաց, որի համար գուցե հավատայի, որ լավ տղա է,
ասաց, երբ անարդարություն է տեսնում, չի կարողանում լռել, եր-
բեմն վեճի մեջ է մտնում, երբ անարդարության է բախվում, միշտ
ասում է մարդու դեմքին այն, ինչ մտածում է, շողորթելն իրենը չէ:

Երբ գրուցում էինք, Մարջը լսել էր մեզ, փաստորեն: Ներս
մտավ ու ասաց.

–Աղջիկներ՞ր, գաղտնի բանե՞ր եք խոսում:

–Չէ՛, մա՛ն, ուղղակի գրուցում էինք:

–Ես պատահաբար անցնում էի սենյակիդ կողքով, հասկացա,
որ սիրահարվել ես Ստեֆրն Մլըքբալենին՝ դասընկերոջդ:

–Դրա մեջ վատ բան կա՞,– ասացի ես:

–Ես քե՞զ հետ էի,– խիստ տոնով ասաց մորաքույրս:

–Կներես:

–Ճի՞շտ եմ լսել, Շուշի՛կ,– բղավեց Մարջը:

–Մա՛ն, դրա մեջ վատ բան կա՞:

–Նա այլանդակի մեկն է:

–Չհամարձակվե՛ս,– բարկացած ասաց Շուշանը:

–Խնդրում եմ, վերջ տվե՛ք, Մա՛րջ, արի՛ խոսենք:

–Անգե՛լ, դո՛ւրս արի:

–Մա՛րջ:

–Դո՛ւրս արի, խնդրում եմ:

Մորաքույրը բղավում էր Շուշիկի վրա, ես հասկացա, որ տանել չի կարողանում Մըքքալենին: Այն, որ ունի վատ վարք դպրոցում, ստիպում է Մարջին ատել նրան: Ամեն օր բողոքներ են հնչում այդ տղայի հասցեին, ամեն օր դպրոցում ծեծկռտուքի մեջ է ընկնում աշակերտների հետ, նույնիսկ մի անգամ փորձել են նրան հեռացնել, սակայն քանի որ նրա հայրը Ֆրանսիայում Բրիտանիայի դեսպան է, նրան հանդուրժել են: Շուշիկն ասաց, որ չի ցանկացել երբեք հորը խառնել իր գործերին, մանավանդ դպրոցի: Անտանելի վիճում էին: Ներս մտա այն ժամանակ, երբ Մարջը ապտակեց աղջկան. մման ապտակ կյանքում չեն կերել:

Շուշիկը լացում էր, իսկ ես նրան գրկել էի ու փորձում էի հանգստացնել:

Դուռը թակեցին.

–Ես կբացե՛մ,– հյուրասենյակից բղավեց Մարիամը:

–Բարև, Շուշանը տա՞նն է,– ասաց մի տղա էր, որի ձեռքին դաշտային գեղեցիկ ծաղիկներ էին ու շոկոլադ:

–Չգիտեմ,– ասաց Մարիամը:

–Ո՞վ է, Մարիա՛մ,– սենյակից ձայն տվեց Մարջը:

–Չգիտեմ, մա՛մ:

Մարջը դուրս եկավ սենյակից, որպեսզի դիմավորի հյուրին, սակայն այդ հյուրը այնքան էլ սպասված չէր, և այդ պահին նրա հայտնվելը առհասարակ տեղին չէր:

–Բարև Չեզ, կարո՞ղ եմ Շուշանին տեսնել:

Հետաքրքրությունից դրդված, երբ գրույցը այդքան երկարում էր, ու Մարջը չէր գալիս հետ՝ սենյակ, որոշեցի տեսնել, թե ով է:

Բարձրահասակ, մուգ շագանակագույն աչքերով, խրոխտ հայացքով, համակրելի տղա էր: Մարջի հայացքից միանգամից կռահեցի, թե ով էր նա:

– Էլ այստեղ չգաս և Շուշան չհարցնես, – ասաց Մարջը հանգիստ տոնով:

– Մա՛րջ...– չհասցրի ավարտել խոսքս:

– Գնա՛, հիմա կգամ, Անգելա՛:

Ես գնացի սենյակ, բայց Շուշիկին ոչինչ չասացի:

– Ո՞վ էր:

– Զգիտեմ, Շուշիկ:

Մեկ-երկու բուպե հետո Մարջը եկավ մեզ մոտ, Մարիամն էլ նրա հետևից:

– Դու գնա քո սենյակ, Մարիա՛մ:

– Լավ, մա՛մ:

– Ո՞վ էր եկել:

– Ո՞վ,– քննադատելով ասաց նա,– այն մարդը, որին ատամներով պաշտպանում ես: Պատկերացնո՞ւմ ես, քեզ ծաղիկներ և շոկոլադ էր բերել: Ինչպես եկել էր, այնպես էլ հետ ուղարկեցի:

– Մա՛մ, ախր դու միշտ ասում էիր՝ կհասկանաս ինձ այդ հարցում, ում էլ սիրեմ, դու համաձայն կլինես:

– Ծաղրո՞ւմ ես: Ես պետք է թույլ տամ՝ նրա հետ ընկերություն անե՞ս, մոռացի՛ր նրա մասին: Ես չեի կարող պատկերացնել, որ այդքան հիմար ես դու:

– Միայն այն, որ նա վատ վարք ունի դպրոցում, ստիպում է քեզ թույլ չտալ, որ մենք շփվե՞նք:

– Զայնդ կտրի՛ր: Այսօր ծնունդդ է, չեմ ցանկանում այն փչացնել, վաղվանից կսկսեմ ավելի հետևողական լինել քո հանդեպ:

– Դու արդեն փչացի՛ր այն, պատժի՛ր, ինչքան ուզում ես, սիրելու մեջ վատ բան չկա:

Կրկին ապտակ ստացավ: Ես ոչինչ անել չէի կարող, նա բարկացած ժամանակ ոչինչ հաշվի չէր առնում, երբ կհանգստանար,

այդ ժամանակ էլ կփորձեի խոսել նրա հետ: Դրանից հետո նա դուրս եկավ սենյակից, մնացինք ես ու Շուշիկը: Ոչինչ չէր ասում, միայն լացում էր երեխայի մման, ասես իր կոնֆետը ձեռքից վերցրել էին ու չէին տալիս հետ: Ես ցանկանում էի խոսել Ստեֆրնի հետ, հասկանալ՝ ինչպիսի՞նն է: Մարջի պատկերացրած այլանդա՞կն է, թե՞ Շուշիկի սիրելի արդարամիտ տղան, բայց իրականում ես այդ իրավունքը չունեի:

Օրը սարսափելի վատ էինք սկսել, իսկ օրվա երկրորդ կեսը կհասկանալի ինչպիսիսնն է, երբ Հարութն ու Շառլը գային:

Ժամը երկուսն անց կես նրանք վերադարձան: Շառլն ասաց, որ հնարավոր ամեն բան արվում է, գուցե շուտով գնանք, Խորհրդային Ռուսաստանի հետ է դեսպանատունը կապ հաստատել, իսկ կառավարության գլխավոր ներկայացուցիչները ասել են, որ առաջիկա օրերին պատասխան կուղարկեն:

Հարութը վերադարձավ իր աշխատանքին, այնքան վատ եմ զգում ինձ, որ մեր պատճառով երբեմն բացակայում է աշխատանքից: Շառլն էլ դուրս եկավ տանից՝ ասելով, որ որոշ գործեր ունի, շուտով կվերադառնա: Մարջն իր սենյակում էր պառկած, Շուշիկը՝ իր: Չգիտեի՝ ում հետ խոսել առաջինը: Որոշեցի գնալ Մարջի մոտ առաջինը:

–Կարելի՞ է:

–Այո՛, արի՛:

–Կարո՞ղ ենք խոսել:

–Ասա՛:

–Մա՛րջ, եթե պիտի ինձ հետ արհամարհական ձևով խոսես, ավելի լավ է գնամ:

–Իսկ քո արարքը արհամարհանք չէ՞ իմ նկատմամբ:

–Ի՞նչ եմ արել:

–Իմացել ես և ինձ ոչինչ չես ասել:

–Ես նոր եմ իմացել դրա մասին և եթե նույնիսկ վաղուցվանից իմանալի, միևնույն է, ոչինչ չէի ասելու քեզ: Ես սովորություն չու-

նեմ ինձ վստահված գաղտնիքի մասին խոսելու: Կներես, դա անել չէի կարող:

–Եթե ճանաչելիք այդ տղային, այդպես չէիք խոսի:

–Իսկ ես ուզում եմ ճանաչել:

–Ավելի կոնկրետ և լուրջ բան կա՞, որի մասին կցանկանաս խոսենք:

–Եթե անկարևոր ու անլուրջ բան էր, ինչո՞ւ ապտակեցիր այդպես:

–Չգիտեի, որ քեզ պետք է բացատրություններ տամ իմ քայլերի համար, գնա՛ սենյակից. ո՛չ քո, ո՛չ էլ նրա երեսը չեմ ցանկանում տեսնել:

–Կներես, չէի ուզում...:

«Դեռ բարկացած է»,– մտածեցի ես:

Գուցե ավելորդ կամ սխալ բաներ խոսեցի, որ Մարջը ինձ դուրս արեց սենյակից, կամ ավելի շատ ճշմարտություն կար՝ չգիտեմ: Հիմա բարկացած ու լարված վիճակում է, հետո գուցե մտափոխվի և համաձայնի Շուշիկի հետ:

–Շուշի՛կ, ջուր կխմե՞ս,– հարցրի:

–Խնդրում եմ, եթե դժվար չէ,– ասաց իր նուրբ ձայնով՝ նայելով աչքերիս:

Կարմրած ու թաց էին նրա սիրուն աչքերը: Խոհանոցից ջուր վերցրի և գնացի նրա սենյակ:

–Շուշի՛կ, անո՛ւշս, աշխատի՛ր մայրիկի հետ լավ հարաբերությունների մեջ լինել. նա քեզ սիրում է: Քո մայրն է, մի անգամ էլ կբարկանա, կհարվածի, այդքան ծանր մի՛ տար: Բոլորն էլ երբեմն խնդիրներ ունենում են իրենց ծնողների հետ: Արի՛ ինձ հետ խոհանոց, որևէ համեղ բան պատրաստենք:

–Ես շատ բան պատրաստել չգիտեմ:

–Ես էլ, բայց մի բան կպատրաստենք:

–Ուզում եմ քնել:

–Հասկացա, քնի՛ր, ես գնում եմ:

Որևէ արդյունքի հասնելու համար մեզ առաջին հերթին պետք է պայքարել, իսկ այն մարդիկ, որոնք իրենց նպատակներին կնայեն մատոների արանքով, երբեք չեն հասնի դրանց:

34

Այնքան էի կարոտել տիկին Գայանեին, Անահիտին, Տիգրանին ու Արփենիկին: Մարիամից թուղթ ու գրիչ խնդրեցի:

«Ողջոյն, տիկին Գայանե: Նախ ցանկանում եմ ներողություն խնդրել Ձեզանից, որ այդքան անսպասելի այցելեցի ու այդքան արագ Ձեզ հրաժեշտ տվեցի: Չհասցրի՞ք կարգին գրուցել: Ես չէի պլանավորել, որ հենց այդ օրն եմ գալու, ամեն ինչ պատահական սրացվեց: Երբ տունը վաճառեցի, զնացի ընկերուիս՝ Վիկտորյայի տանը ապրելու: Դեպք պատահեց, և ինչ կեղծ մեղադրանքով բանտ տարան: Մի քանի օր այնտեղ մնալուց հետո նա խոստովանեց իր արարքը, և ինչ բաց թողեցին: Արագ տունս եմ գնել, որպեսզի փախչեմ այդ քաղաքից, այդ մարդկանցից ու վատ հիշողություններից: Ես հիմա լավ եմ: Ծանոթացել եմ մի տղայի հետ, որն ինչ շատ է սիրում, ես էլ՝ նրան: Մենք միասին ենք: Այժմ ապրում ենք Մարսելում՝ մորաքրոջս տանը: Որոշ ժամանակ անց, եթե կարգավորվի գործերը, մենք երևի ընդմիջյա կմեկնենք Հայաստան:

Պատմե՛ք Ձեզանից: Ինչպե՞ս եք: Կարոտել եմ բոլորիդ: Համբուրի՛ր թոռնիկներիդ և Անահիտին, ասե՛ք, որ կարոտել եմ նրանց:

Անհամբեր սպասում եմ Ձեր պատասխան նամակին:

Հ. Գ. Խնդրում եմ, զոնե մեկ-մեկ այցելե՛ք ծնողներիս գերեզմանին:

Հ. Գ. Գ. Հասցեն ծրարի վրա գրված է»:

Նամակս փոստով ուղարկեցի տիկին Գայանեին: Կարծում եմ՝ երկու օրից ամենաշուտը տեղ կհասնի:

Արդեն հանդարտվել էին Մարջն ու Շուշիկը: Կարծես ոչ ոք ծննդյան տոնի տրամադրություն չուներ, և չէին ցանկանում նշել այն:

Մենյակում պառկած գիրք էի կարդում, Շուշիկն ինձ մոտ էր: Գլուխը դրել էր ծնկներիս և մտածում էր ինչ-որ բանի մասին: Չէի ցանկանում խանգարել նրան և շեղել իր մտքերից:

–Աղջիկներ, ինչո՞վ եք զբաղված,– ներս մտավ Մարջը՝ ձեռքին ինչ-որ փաթեթավորված նվեր:

–Ես դուրս գամ, դուք խոսե՛ք,– ասացի:

–Կարող ես մնալ,– ասաց Մարջը,– վերցրո՛ւ, Շուշի՛կ, սա քո նվերն է, կներես ինձ. քեզ հետ շատ կոպիտ խոսեցի:

Մարջն ամուր գրկել էր աղջկան և համբուրում էր դեմքը: Հիշեցի այն օրը, երբ մտա տուն ու մայրիկին հայտնեցի համալսարան ընդունվելուս մասին: Այնքա՛ն էր ուրախացել, այնքա՛ն հպարտ էր իրեն զգում, համբուրեց դեմքս ու ասաց. «Ես միշտ երջանիկ մայր եմ ինձ համարել, որ ունեմ քեզ պես աղջիկ: Այսօր կատարվեց նպատակներիցդ մեկը, և հաջորդաբար կկատարվեն մյուսները. ես վստահ եմ դրանում: Երբեք չես սիրել օգնություն խնդրել ամեն մարդուց որևէ հարցում, միշտ փորձել ես հնարավորինս մենակ լուծել խնդիրներդ: Սիրում ես ինքնուրույն լինել, բայց մի՛ մոռացիր, որ կողքիդ ենք, քեզ շատ ենք սիրում, իմ աղջի՛կ»:

–Անգե՛լ, այդ ո՞ւր հասար մտքերով:

–Այստե՛ղ, այստե՛ղ եմ, Մա՛րջ:

–Երբ հյուրասենյակում էի, Շառլն ասաց, որ դուրս է գալիս տանից, երեկոյան պատրաստ լինես. ինչ-որ տեղ եք գնալու:

–Չասա՞ց, թե ուր:

–Ո՛չ:

–Կթողնե՞ս՝ Շուշիկն էլ մեզ հետ գա:

–Ավելի լավ է, դուք երկուսով գնաք: Այդպես ճիշտ է:

Մարջը փոքր-ինչ կոպիտ էր հետս խոսում: Իրականում ես շատ շուտ եմ նեղանում, չեմ սիրում, երբ հետս կոպիտ եմ խոսում: Վերցրի պայուսակս ու դուրս եկա սենյակից:

–Անգե՛լ,– ձայն տվեց Շուշիկը:

Իջա բակ, իսկ այդ բակը շատ անձանոթ ու օտար էր ինձ, ցանկացա բացահայտել և ծանոթանալ տարածքին:

Քայլում էի փողոցներից մեկով, որը շատ գեղեցիկ էր, բայց չկարողացա գտնել ցուցամակ, որտեղ գրված կլինեք, թե որ փողոցն է: Այդ պահին իմ հետևից մեկը բռնեց ձեռքս, սիրտս սկսեց արագ աշխատել, վախեցել էի, կարծեցի գող է: Պայուսակովս ուժեղ հարվածեցի դեմքին ու շրջվեցի:

«Ա՛յ քեզ հիմար դեպք»,– մտածեցի ես: Իրականում Շառլն էր:

–Ա՛խ, գժվե՞լ ես: Ես եմ՝ Շառլը:

–Շա՛ռլ, կներես. կարծեցի գող է:

–Ի՞նչ ես անում դրսում միայնակ:

–Դուրս եկա, որ մի փոքր զբոսնեմ:

–Ամեն բան կարգի՞ն է:

–Այո՛, ինչո՞ւ:

–Ինձ թվաց՝ նեղացած ես ինչ-որ մեկից:

–Չէ՛:

–Սուրճ կխմե՞ս:

–Դեմ չեմ լինի:

–Արի՛ ուրեմն այս սրճարան:

Ես կաթով սուրճ վերցրի: Փոքրիկ, հարմարավետ սրճարան էր, պատերին գեղեցիկ նկարներ էին փակցված՝ տարբեր արվեստագետների կողմից նկարված: Դրանցից շատերը հայտնի նկարների կրկնօրինակներն էին՝ Դա Վինչիի «Մոնա Լիզան», Վան Գոգի «Աստղալից գիշերը», Սյուզաննա Վալադոնի «Ծաղկեփունջը»:

–Որտե՞ղ էիր,– հարցրի:

–Գնացել էի դեսպանատուն:

–Ի՞նչ ասացին:

–Դեռ լուր չկա:

Երկար զրուցեցինք: Ուշ երեկոյան վերադարձանք տուն:

Հուլիսի 20

Այս օրերի ընթացքում ոչինչ չի փոխվել: Ամեն բան նույնն է, իսկ Մարջի ու իմ հարաբերությունները կարծես կարգավորվել են: Այսօր ստացա տիկին Գայանեի նամակը, ստանալուն պես արագ բացել եմ և կարդացել, բայց, փաստորեն, նա չէր գրել նամակը:

«Բարև, սիրելի՛ Անգելա: Ներողություն խնդրելու կարիք չկա: Քեզ տիկին Գայանեն չի գրում, այլ ես եմ՝ Անահիրը: Մայրիկը նույնպես մեկնել է երկրից: Նա Հայաստանում է, ասաց, որ մշտական տեղափոխվել է՝ ապրելու այնտեղ: Կարծում եմ՝ մենք էլ շուտով կտեղափոխվենք Հայաստան: Երբ գաս, անպայման կայցելես մեզ: Մեր հասցեն կթողնեմ ներքևում: Երբ մրես գյուղ, ցանկացած մարդուց կարող ես հարցնել Գայանե տարիկենց տունը, նրանք քեզ ցույց կտան մեր տան տեղը. այնտեղ բոլորը իրար ճանաչում են:

Կհանդիպենք շուտով, վստահ եմ:

Հ. Գ. Նամակդ սրանալու օրը այցելել եմ ծնողներիդ գերեզմանին, իսկ երբ մենք էլ մեկնենք երկրից, քրոջս ասել եմ, նա կայցելի, հանգի՛սր եղիր»:

Զգացածս քիչ էր՝ արտահայտելու համար: Ուղղակի ժպտում էի:

Կարծում էի, որ մոտենում էին օրերը՝ Խորհրդային Հայաստան մեկնելու:

Երբ հյուրասենյակում նստած մտածում էի կամ գուցե երագում, Շատլը ուրախ ներս մտավ:

–Ուզում եմ գրկել քեզ:

–Շա՞նլ,– այնքան տարօրինակ էր այդ պահին,– ի՞նչ է պատահել:

Ինձ առել էր ձեռքերի մեջ ու կրկնում էր.

–Գնում ենք, գնում Խորհրդային Հայաստան:

–Չեմ հասկանում՝ ինչ է կատարվում, Շա՞նլ:

–Գեսպանատունը չի մերժել մեզ, իսկ Խորհրդային Ռուսաստանը միջոցներ կտրամադրի՝ Սովետական Հայաստան մեկնելու համար: Մեզանից բացի՝ շատ ու շատ մարդիկ էլ են դիմել այդ հարցով, բոլորս շուտով կգնանք հայրենիք:

Ականջներիս չէի հավատում, մի՞թե սա երազ չէր: Մարջը բռնեց երկուսիս ձեռքը և ասաց.

–Դուք այնքան համապատասխան եք, խենթ եք երկուսդ էլ, ձեզ շատ են սիրում: Գուցե էլ չգաք այստեղ՝ Ֆրանսիա, բայց միշտ հիշե՛ք, որ ձեզ այստեղ կարոտում են և սպասում: Երբեք իրար ձեռքերը բաց չթողնեք, երբեք:

Օրհնություն է, երբ շրջապատված ես անկեղծ հարազատներով ու հավատարիմ ընկերներով:

–Հուլիսի 26-ին մեկնելու ենք,– ասաց Շառլը:

–Այո՞քան շո՞ւտ:

–Այո՛: Վերցրո՛ւ անձնագիրդ:

–Քո անձնագի՞րն էլ ես տալիս:

–Դրանք քոն են, գերմանականը ուղղակի պահի՛ր, այժմ քեզ միայն Ֆրանսիայինն է պետք:

–Մա ի՞նչ է,– ասացի ես, երբ տեսա, որ դա Ֆրանսիայի զինանշանով է, իսկ ազգանվանս փոխարեն ուրիշ բան է գրված:

–Դու այժմ Անգելա Տեր-Բերբերյան ես՝ հայ, բայց Ֆրանսիայի քաղաքացի: Իմ ազգանունն ես այժմ կրում: Դե՞մ չես, չէ՞:

–Միայն ուրախ եմ: Լավ է գոնե ծննդյանս օրը չես փոխել:

–Չէ՛, դա նույնն է մնացել:

–Ես պետք է նվերներ գնեմ տատիկիս համար, քո ընտանիքի ու տիկին Գայանեի համար:

–Շուշիկը կօգնի՞ քեզ, չէ՞:

–Իհարկե: Ես գնամ Շուշիկին ասեմ, որ շուտով գնալու եմ:

–Հարուրթ գիտի՞,– ասաց Մարջը:

–Գիտի, ինձ հետ էր. վերադարձավ աշխատանքի:

–Շուշի'կ, մի բան պետք է ասեմ, գուցե տխրես:

–Կարող ես չասել, լսել եմ:

–Ես քեզ այնքան կկարոտեմ: Եթե կարողանաս Հարութին համոզել, դուք էլ գաք շատ լավ կլինի:

–Չի ստացվի, վատահ եմ: Հայրիկը այստեղ է աշխատում և լավ վարձատրվում է, մայրիկը՝ նույնպես, իսկ եթե գնան Հայաստան, գուցե անգործ մնան, իսկ դա ձեռնառու չէ: Այնպես որ էլ երբեք չենք տեսնի իրար:

Նկատեցի, որ աչքերը արցունքներով լցվեց:

–Ես էլի կգամ:

–Չես գա:

–Մի՛ տխրիր, լա՞վ: Մենք դեռ պետք է գնանք՝ նվերներ ընտրենք, իսկ քեզ համար մի լավ գիրք կգնեմ, որ ամբողջ ամառ կարդաս:

–Ուզում եմ գրկել քեզ:

–Ինչո՞ւ ես ասում, գրկի՛ր: Առաջ գրկելու համար ե՞րբ ես հարցրել:

–Ես քեզ շատ եմ սիրում:

–Ես էլ քեզ եմ սիրում:

–Կգա՞ս, գնանք զբոսնելու դրսում:

–Հագուստս փոխեմ, գնանք: Ես Մարջին տեղյակ կպահեմ: Երբ իջանք ներքև, դրսում Ստեֆընը, մուտքի մոտ կանգնած, ծխում էր:

–Դու տեղյա՞կ էիր, որ այստեղ է:

–Երդվում եմ, չգիտեի,– ասաց Շուշիկը:

Ստեֆընը մոտեցավ մեզ:

–Բարև Ձեզ:

–Ողջույն: Մորաքրոջս աղջիկն է՝ Անգելան, ծանոթացի՛ր: Անգելա, նա...

–Գիտեմ, ուրախ եմ Ստեֆըն:

–Ես էլ: Ձեր թույլտվությամբ, կարո՞ղ եմ մեկ-երկու բուպե խոսել Շուշանի հետ:

–Խնդրում եմ, արա՛գ խոսեք, եթե Մարջը տեսնի, կապանի երեքիս:

Ես նրանից բավականին հեռացա, որպեսզի հանգիստ գրուցեմ: Իրականում ես չէի ցանկանում, որ Շուշիկին ինչ-որ մեկը կոտրի, ցավեցնի, կամ որ նա հիասթափվի, բայց չէի էլ կարող նրան որևէ բան արգելել: Նրանք երկուսն էր շատ լավն էին: Ստեֆընը մեզ տեսնելուն պես ծխախոտը հանգցրեց և գցեց աղբամանը: Այդ պահին միայն երագում էի, որ հանկարծ Մարջը կամ Մարիամը դուրս չգան շենքից: Այնուամենայնիվ, մարդուն չպետք է պահել վանդակի մեջ: Ինչքան փորձում ես փակի տակ պահել թռչնին, այնքան ազատության է ձգտում:

Մոտ տասը բուպե անց նկատեցի, որ նրանք քայլում իմ ուղիությամբ:

–Շնորհակալ եմ, որ թույլ տվեցիք գրուցել Շուշանի հետ:

–Ամեն բան կարգին է: Գնա՞նք, Շուշի՛կ:

–Գնանք:

Երբ արդեն բավականին ճանապարհ էինք անցել, և նա ռչինչ չէր խոսում, գուցե իր մտքերի մեջ էր, հարցրի.

–Խոսեցի՞ր:

–Այո՛: Անգել, խնդրեց, որ վաղն էլ հանդիպենք, բայց ավելի երկար ժամանակով, թո՞ւյլ կտաս:

–Մեր գլխին փորձանք ես բերելու մի օր:

–Ես պատասխան կտամ:

–Չգիտեմ:

–Ո՞ր խանութն ենք գնալու:

–Չգիտեմ, ինձ նվերների խանութ է պետք:

Մի՞թե իրականում սեր գոյություն ունի: Դա ավելի շատ նման է համակրանքի կամ կախվածության: Ի՞նչ է սերը, որ մարդիկ այդքան խոսում են դրա մասին, գրողները պատմում են, իսկ նկա-

րիչները՝ պատկերում, ի՞նչ վերացական գոյական է դա, որ մարդկանց թմրանյութի պես կապում է իրար:

Այս չեմ հասկանում՝ ինչն է դա: Մենք ասում ենք. «Միրում եմ քեզ», բայց գրողը տանի, ինչո՞ւ այդ խոսքերը... ուղղակի դա պետք է ամփոփվի մեր քայլերում: Այդ բառերը չպետք է անտեղի ասել, անտեղի գործածել, նույն է, թե աղոթք ասես, բայց առանց հավատի: Այդ բառերը կարելի է փոխարինել հոգատարությամբ, ուշադրությամբ, ներողամտությամբ կամ իրար հասկանալով, թե չէ ինչ սեր, եթե ուղղակի բառ է դա:

Առևտրիս մի մասն այսօր վերջացրի: Պապիկի համար ֆրանսիական կոնյակ գնեցի, կարծում եմ՝ կհավանի: Մի կողմից ուզում էի ամբողջ կյանքս անցկացնել Ֆրանսիայում, մյուս կողմից էլ՝ Հայաստանն էր կանչում, ես պետք է գնայի, պետք է, որովհետև Գերմանիան իմ երկիրը չէ, Բեռլինը իմ քաղաքը չէ, հիշողություններից եմ գուցե փախչում, բայց արդարացում չէ, ուղղակի իմը չէր դա: Ֆրանսիան ես սիրեցի, նա էլ՝ ինձ, Փարիզը նվիրեց ինձ մեծ սեր, իսկ Մարսելը՝ հիշողություններ, որոնք դեռ երկար կհիշեմ, իսկ ամեն անգամ հիշելիս շատ կկարտեսմ:

Ես շատ վաղ տարիքից ինքնուրույն դարձա, որը ինձ դուր է գալիս, իսկ մեկ-մեկ հոգիս ցավում է, երբ հիշում եմ, թե ինչու եմ դարձել ինքնուրույն: Մարդը ցանկացած տարիքում պետք է պատրաստ լինի ինքնուրույն դառնալուն, պատրաստ լինի ցանկացած հարվածի, ցավի. դրանք պահեր են մարդու կյանքում, որ անպայման անցնելու են: Խորը վերքերը միշտ սպիներ են թողնում իրենցից հետո, բայց պարտադիր չէ ամեն անգամ նայել դրան, հիշել, տանջվել ու անիմաստ տանջել: Առանց դժվարությունների ու փորձությունների մեր կյանքը իմաստ չէր ունենա, պատկերացնո՞ւմ եք մի կյանք, որտեղ ամեն բան կատարյալ է, մի կյանք, որտեղ չկան վեճեր, չկան հաշտեցումներ, չկան փորձություններ չկան ու հաղթանակներ, մի օր կձանձրանաս: Այն աստիճանը, որ հեշտ ես բարձրանում, չի ունենում ամուր հիմքեր:

–Հիմա կգամ,– ասացի ես, երբ Մարջը կանչեց ինձ իր սենյակ:

–Ես արդեն եկա,– ասաց Մարջը:

–Ի՞նչ-որ բան է պատահել:

–Ուզում եմ՝ խոսենք:

–Ինչի՞ մասին:

–Այն ամենի, ինչ կատարվեց այս յոթ-ութ ամսում: Դու մեզ այնքան էլ չզիտեիր: Չզիտեիր, թե ով է քո Մարջ մորաքույրդ, ով է Շուշիկը, Մարիամը, Հարությունը: Դու մեզ քիչ թե շատ հասցրիր ճանաչել, երբ քրոջս մահվանից հետո եկանք Գերմանիա: Ես իմացա Միքայելի մասին, ես Գերմանիայում անցկացրած օրերս ապրում էի քեզ հետ, քո հույզերի հետ, տեսնում ապրումներդ: Ծանր էր քեզ համար Միքայելին կորցնելը, իսկ ավելի ծանր էր ծնողներիդ հավերժական կորուստը, ինձ համար էլ էր ծանր քրոջս կորցնելը, անհավատալի էր՝ ինչ կատարվեց: Դու երկու ոտքի վրա ամուր կանգնեցիր, և մտքովդ անգամ չանցավ հանձնվել: Քո փոխարեն ուրիշ աղջիկ լինեիր, կամրջից ցած կնետվեիր, իսկ ճանապարհի կեսից կփոշմանեիր, որովհետև միայն այդ ժամանակ են հասկանում, որ ամեն խնդրին էլ լուծում կա: Ի վերջո ամեն բան անցողիկ է: Գնահատանքի ես արժանի, որ այդքան ցավի դիմակայեցիր և հասար այն ամենին, ինչ ունես: Ես անկեղծ ուրախ եմ քո և Շառլի համար: Նա տարբեր է. չի կարելի նրան որևէ մեկի հետ համեմատել, և երբեք չփորձես գուգահեռականներ անցկացնել նրա ու Միքայելի միջև: Շառլը շատ նրբանկատ, ուշադիր, նպատակասլաց անձնավորություն է, իմացի՛ր՝ աշխարհի որ ծայրում էլ լինես, նա երբեք ձեռքդ բաց չի թողնի: Երբ հոգնես ու չուզեմաս ոչ ոքի տեսնել, նա մայրամուտի պես կերևա քեզ, կժպտա ու դեմքդ կլուսավորվի արևի պես, հետո քեզ իր շողերի մեջ պարուրած կտանի իր հետ հեռու, ուր ոչ ոք չկա՝ ձեզանից բացի, լուսաբացի պես կբաց-

վեք և նոր շունչ կտաք ձեր կյանքին: Նա քեզ սիրում է ամենքից ու ամեն ինչից առավել, դրանում չկասկածես երբեք: Խոսես մի փոքր ինձանից: Դու ինձ համար եղար աղջիկ՝ իմ երրորդ աղջիկը, որին շատ սիրեցի: Կներես ինձ, եթե ինչ-որ տեղ կոպիտ եմ խոսել հետդ: Կարճ ժամանակում մենք հասցրինք կապվել քեզ հետ, դու դարձար մեր ընտանիքի մի մասը: Երբ դեռ չէիր եկել, Շուշիկն ամեն վայրկյան քեզնից էր խոսում, Մարիամը՝ էլ ավելի շատ: Նրանք քեզ ընդունեցին հարազատ քրոջ նման, դու էլ՝ նրանց: Ափսո՛ս, որ էլ երբեք չենք հանդիպի: Ես էլ, դու էլ մեծ մարդ ենք և հասկանում ենք դա, Շուշիկին կամ Մարիամին գուցե կարողանանք սպասումով թողնել, որ դեռ կհանդիպենք, քանի որ ծանր կտանեն, եթե հասկանան, որ էլ չենք հանդիպի: Ժամանակները շատ ծանր են և դժվար: Դու դա հասկանում ես և գիտես՝ ինչ նկատի ունես: Երբ գնաք, այս նամակը կփոխանցես մայրիկին, այսփնքն՝ տատիկիդ, սա էլ հասցեն է, թե որտեղ գտնես նրան: Հորս կասես, որ շատ սիրում ու կարոտում եմ նրան:

Խոսքեր, որ երբեք չեն ջնջվի իմ հիշողությունից: Մարջը շատ անկեղծ էր խոսում, որ ինձ մի պահ թվաց, թե ուր որ է կհուզվի:

Երեկոյան՝ ժամը ութն անց կես, դուրս եկանք՝ խամոթ գնալու նպատակով: Բակում Ստեֆընը սպասում էր Շուշիկին: Նրանք միասին գնացին սրճարան: Միայնակ գնումներ կատարելուց չեմ ձանձրանում: Գրախանութ մտա առաջին հերթին, Շուշիկին գիրք էի խոսք տվել: Այնքան շատ ու հետաքրքիր գրքեր կային, որ սկզբում չէի կողմնորոշվում ինչ գնել: Հետո հասկացա, որ սիրահարված դեռահաս աղջկան դուր կգա ավելի շատ սիրո մասին ինչ-որ գրվածք:

–Ներեցեք, Ուիլյամ Շեքսպիրի «Ռոմեո և Ջուլիետ» գիրքը կարո՞ղ եք տալ ինձ:

–Ցավում եմ, բայց այստեղ միայն ֆրանսիական գրականություն է վաճառվում:

–Այդ դեպքում խնդրում եմ տալ Անտուան դը Սենտ-Էքզյուպերի «Փոքրիկ իշխանը» գիրքը և համանուն հեղինակի «Անտեսանելի երեխաները»:

–Շատ լավ, մոտեցե՛ք դրամարկղին, հիմա կբերեմ:

–Շնորհակալ եմ:

– *«Քայց դու մի՛ մոռացիր, որ հավիտյան պարասխանարուես նրա համար, ում ընկրելացրել ես»*,– ասաց դրամարկղի աշխատողը՝ մեջբերելով գրքի խոսքերից:

Ժպտացի:

«Տեսնես՝ երբ կգա Շուշիկը: Քայլեմ նրա ուղղությամբ»,– մտածեցի ես:

Նրանք, երկու փոքրիկ երեխայի պես ձեռք ձեռքի տված, քայլում էին, երջանկությունը ծփում էր նրանց աչքերից, այնքան հաճելի էր նրանց նայել կողից:

–Ահա և Շուշիկը, շնորհակալ եմ, Անգե՛լ,– ասաց Ստեֆրնը:

Գնա՞նք տուն, Շուշի՛կ:

–Ցտեսություն, Ստեֆրն,– ասաց Շուշիկն իր ժպտացող աչքերով:

38

–Մարիան՛, արի ինձ մոտ,– ասացի ես:

–Եկա՛:

–Այս գիրքը քեզ եմ նվիրում, անպայման կկարդաս: Կարծում եմ՝ կհավանես:

–Անտուան դը Սենտ-Էքզյուպերի՞:

–Այո՛, ինչո՞ւ զարմացար:

–Ես սիրում եմ նրա գրվածքները:

–Ուրեմն ճիշտ գիրք եմ ընտրել:

–Շնորհակալ եմ,– ասաց Մարիամը և գրկեց ինձ,– գնամ և սկսեմ ընթերցել:

–Շուշիկ, ուզում եմ «Փոքրիկ իշխան» գիրքն էլ քեզ նվիրել:
Սա կարող ես կարդալ, որ տարիքում էլ լինես: Ամեն անգամ կար-
դալիս մի նոր բան կգտնես:

–Շնորհակալ եմ շատ: Ես էլ ուզում եմ, որ այս քննոցը միշտ
քեզ հետ լինի, որ ամեն անգամ նայելիս ինձ հիշես:

–Ի՞նչ գեղեցիկ է:

Արժաթագույն փայլուն քարերով զարդարված քննոց էր:

–Այսօր մայրիկի հետ պետք է խոսեմ Ստեֆընի մասին ու
շատ լարված եմ. լուրջ խոսակցություն է լինելու,– ասաց Շուշիկը:

–Խոսե՛ք, հասկացե՛ք իրար:

Հուլիսի 26

Հրաժեշտի պահը միշտ էլ ծանր է երկու կողմի համար, ինչ
հրաժեշտ էլ, որ լինի: Կապ չունի հրաժեշտ ես տալիս հաջորդ օրը
տեսնելու նպատակով, թե հրաժեշտ, որ էլ երբեք չես տեսնի: Հրա-
ժեշտի պահին միշտ էլ սրտիցդ մի կտոր թողնում ես այնտեղ, որ-
տեղ ունես հիշողություններ, որոնք երբեք մոռանալ չես կարող:
Երևի հենց հիշողություններն են մեզ ստիպում ցավ, ափսոսանք
զգալ, հենց հիշողություններն են մեզ ստիպում կարոտել: Բոլորս
էլ ունենք մեր սրտում պահած հրաժեշտի մի կտոր, որն ամեն ան-
գամ հիշելիս ուզում ենք հայտնվել նույն տեղում ու էլի գրկել, էլի
գրկել ու անվերջ կրկնել այդ պահը, նայել այդ ժպտացող թաց աչ-
քերին ու անվերջ կարոտել:

Օդանավակայանի մեծ ամբոխի մեջ կանգնած էինք: Ծանր
րոպեներ էին բոլորիս համար, քանի որ գուցե էլ երբեք չտեսնեմ
նրանց, էլ երբեք չժպտամ և չլացեմ նրանց հետ: Ինչքա՛ն ար-
ցունքներ կամ ժպտացող աչքեր են տեսել աշխարհի բոլոր օդա-
նավակայանները:

Ժամը յոթն անց տասնհինգ րոպե էր:

–Բարի ճանապարհ, երջանիկ եղեք: Ձեզ սիրում ենք և սպա-
սում,– ասաց Հարութը:

Ժամը ութին արդեն երկար ճանապարհ էինք անցել: Ժամեր հետո արդեն մայրաքաղաք Երևանում կլինեմք:

–Մայրամուտը սիրո՞ւն է, չէ՞,– ասաց Շառլը:

–Անասելի:

–Մեկ ամսից՝ հենց այս օրը, կամուսնանաք: Համաձա՞յն ես:

–Իսկ եթե ծնողներդ չհավանե՞ն ինձ:

–Նրանք քեզ հաստատ կհավանեն ու կսիրեն հարազատ աղջկա մման, վատահ եմ: Մայրիկը միշտ ասում էր. «Ում էլ ընտրի տղաս, ես համաձայն կլինեմ և կընդունեմ, միայն թե հայ լինի»:

–Ի՞նչ է մայրիկիդ անունը:

–Մորս անունը Նազիկ է, հորս անունն էլ՝ Ավետիք:

–Մայրիկիս հայկական ազգանունը Լալայան է: Անունը Ադանե է եղել:

Գեղեցիկ անուն է ունեցել մայրդ: Գիտե՞ս տատիկիդ անունը:

–Իհարկե, գիտեմ, բայց երբեք չեմ կարողացել այդ բարդ անունը արտաբերել և ինձ համար կրճատել եմ ու դարձրել Հայա տատիկ կամ ուղղակի տատիկ:

–Հայաստան է նրա անունը, եթե այն թարգմանենք անգլերեն, կստացվի Արմենիա, այսինքն՝ Հայաստան. մեր երկրի անունն է:

–Այդքան բանը չգիտեի, ոչ ոք ինձ չէր ասել դրա մասին:

Հուլիսի 27

Մենք արդեն Հայաստանում էինք: Ծանր ժամեր էին, որ թվում էր՝ անվերջ է ու միշտ լինելու էինք այդ ինքնաթիռի մեջ:

Հայաստանի օդանավակայանը մեծ էր, բայց ոչ Ֆրանսիայի կամ Գերմանիայի օդանավակայանների չափ: Նայեցի պատին կախված ժամացույցին. գիշերվա մեկն էր: Չափազանց հոգնած էինք, ու մեզ մոտ այն զգացողությունն էր, թե կոտրել էին մեր ոսկորները, հազիվ էինք տեղաշարժվում: Տաքսի վերցրինք և հասանք Շառլենց տան մոտ: Այն գտնվում էր Աստաֆևսակայա փողոցում, բարձրացանք 32 շենք՝ երկրորդ հարկ:

–Շա՛ռլ,– զարմացած ու միաժամանակ ասաց նրա մայրը, երբ դուռը բաց անելուց հետո տեսավ որդուն:

Հետո նրա հայրը եկավ, երկուսիս ջերմ դիմավորեցին:

Հետո ինչ-որ հայերեն բաներ խոսեցին, որոնք ես չհասկացա, բայց ինձ ջերմ և սիրով ընդունեցին նրանք:

Հյուրասենյակում էինք: Շառլն ու նրա ծնողները գրուցում էին, իսկ ես խորացած նայում էի պատերին կախված նկարներին, որոնցում հոգի կար դրված, թվում էր, թե պատից կախված նկարները շնչում էին: Մի նկար կար, որ ինձ ավելի շատ գրավեց, ներքևի մասում մակագրված անուն կար:

–Շա՛ռլ, ներեցե՞ք, ո՞վ է այս կտավի հեղինակը,– հարցրի ես:

–Մարտիրոս Սարյանը: Հայ նկարիչ է, պապիկիս մոտ ընկերներից է, նա է նվիրել պապիկիս:

–Գեղեցիկ է,– ասացի:

–Պատմեցի քո մասին ծնողներիս և ասացի, որ շուտով ամուսնանալու եմք:

–Նրանք համաձայն են,– հարցրի ես և մատեցի նրա կողքին:

–Անշու՞թ, համաձայն են:

Նրա մայրը հայերեն ինչ-որ բան ասաց: Հետո Շառլը թարգմանեց.

–Մայրիկն ասում է, որ շատ գեղեցիկ աչքեր ունես:

Ժպտացի:

–Ինչպե՞ս կարող եմ Ձեզ դիմել, Շառլ, խնդրում եմ թարգմանի՛ր,– ասացի ես:

–Մայրիկի անունը Նազիկ է: Կարող ես ասել «տիկի՛ն Նազիկ», հայրիկի անունն էլ Ավետիք է,– հայերեն ասաց նա:

–Freut mich, dich kennenzulernen,– ասացի ես գերմաներենով:

Նրանք չհասկացան՝ ինչ ասացի, միայն ժպտացին, հետո Շառլը թարգմանեց նրան համար: Իրականում մեզ համար շատ բարդ էր հաղորդակցվելը, ինչ խոսում էինք, պետք է Շառլը թարգմաներ:

–Կցանկանա՞ս քնել,– հարցրեց Շառլը:

–Այո՛, շատ եմ հոգնել:

Տիկին Նազիկը Շառլին ինչ-որ բան ասաց, որ թարգմանի ինձ համար:

–Մայրիկի հետ գնա, նա քո սենյակի տեղն է ուզում ցույց տալ:

–Լաճի,– ասացի:

Տիկին Նազիկն ինձ ցույց տվեց սենյակիս տեղը՝ չիմանալով ինչ պատասխանել, պարզապես ասացի.

–Մերսի:

Նա գլխով արեց և դուրս եկավ սենյակից: Քիչ անց Շառլը դուռը թակեց.

–Կարե՞լի է:

–Նե՛րս արի:

–Հարմարավե՞տ է սենյակդ:

–Շնորհակալ եմ շատ, ապրե՛ք, Շառլ:

–Ինչի՞ համար:

–Դու այնքան լավ մարդ ես, որ ծնողներդ քո ընտրության համար վստահ են: Ինչևէ: Ես արդեն քնեմ: Բարի գիշեր:

–Բարի գիշեր,– ասաց նա և համբուրեց ինձ:

Վեր կացա մահճակալից և գնացի պատուհանի մոտ: Ժամը երեքն անց երեսուն րոպե էր. քաղաքը քնած էր: Անջատված էին փողոցի բոլոր լուսամփոփները, մի քանի տան լույս էր վառվում միայն, նրանք գուցե մտածում էին, ինչպես ես, կա՛մ գիրք էին կարդում, կա՛մ էլ մայրը նորածնին էր կերակրում:

Քաղաքը, իրոք, անհամեմատելի է ցանկացած վայրի հետ: Գիշերն ամենահարմար պահն է օրվա մեջ՝ մտածելու համար: Մեկ ամսից ես կամուսնանամ, մեկ ամսից կլինեմ ամբողջ աշխարհի և ամբողջ տիեզերքի ամենաերջանիկ կինը, ես ամեն ինչ կանեմ՝ Շառլին միշտ երջանիկ տեսնելու համար, նրա հետ կհաղ-

թահարեմ ամեն դժվարություն ու երբեք բաց չեմ թողնի նրա ձեռքը:

Գիշերվա այդ խորհրդավոր լռության մեջ լսում էի ժամացույցի սլաքների ձայնը, որն ինձ հիշեցնում էր այն օրը՝ հայրիկի ծննդյան օրը, երբ ես էի միայն ներկա, հիշո՞ւմ եք՝ սլաքները ինչոր բանի մասին էին հիշեցնում. դա կարծես նոր մարդկանց գալուստն էր վկայում:

Ծածկվեցի մինչև կոկորդս, և աչքերս փակեցի: Կապ չունի՝ ամառ է, թե ձմեռ, ես սիրում եմ ծածկված քնել:

39

Հովիտի 28

Արեգակի վառ շողերը ներս էին թափանցել պատուհանից և արթնացնում էին ինձ: Տասն էր: Աչքերս տրորելով գնացի պատուհանի մոտ: Մի թռչուն էր կանգնել և կտցահարում էր պատուհանը:

–Միրո՞ւն թռչնակ, դու մե՞նա՞կ ես այս մեծ աշխարհում,– գրուցում էի նրա հետ:

–Այո՛, մե՞նակ եմ,– ծիծաղելով ասաց Շառլը և մտավ սենյակ:

–Շա՛ռլ,– ծիծաղելով ասացի ես,– դո՛ւրս կորիր:

Գրկեց կոնքերիցս և սեղմեց դեպի իրեն. մե՞նք իրար շատ մոտ էինք: Փորձեց համբուրել շուրթերս, բայց հասցրի ճողոպրել իրենց, չնայած հաճելի էր լինել նրա գրկում:

–Կարո՞ղ եմ լոգանք ընդունել. շատ եմ հոգնել ճանապարհից,– հարցրի ես:

–Քո սենյակի դիմացն է լոգարանը:

Լոգանք ընդունելուց հետո տիկին Նազիկի հետ նախաճաշ պատրաստեցինք: Շառլի հայրն արդեն նախաճաշել և գնացել էր աշխատանքի:

–Հայրիկն աշխատում է գինու գործարանում, մայրս դպրոցում ուսուցչուհի է,– ասաց Շառլը:

–Միշտ ցանկացել եմ մանկավարժ դառնալ, բայց չգիտեմ ինչու լրիվ այլ ուղղությամբ գնացի:

–Ոչինչ, մանկավարժ չես, բայց խելացի քիմիկոս ես և թարգմանչուհի: Պատրաստվիր, որ քիչ հետո գնանք՝ գրոսնելու, քեզ մեր Երևանը ցույց տամ:

–Տիկին Նազիկն էլ կգա՞ մեզ հետ:

–Նա աշխատանքի պետք է գնա:

Երևանը տեսածս բոլոր քաղաքներից այլ է, վարդագույն քարերով նրբաճաշակ քաղաք, որտեղ մարդիկ իրար անծանոթ չեն, բոլորը իրար բարեկամ են, բոլորը իրար քույր ու եղբայր են, այստեղ ժպտում են իրար: Եվրոպայում մարդիկ այնքա՛ն անտարբեր են իրար հանդեպ, այնքա՛ն սառը:

Քաղաքը, իրոք, անհամեմատելի է ցանկացած այլ քաղաքի հետ:

–Կարո՞ղ ենք այս քանի օրը գնալ պապիկիս տուն, այստեղ են ապրում՝ Երևանում:

–Իհարկե, վաղը կգնանք:

–Իսկ Կույբիշև գյո՞ղ:

–Ինչո՞ւ:

–Այնտեղ էլ տատիկ ունեմ, հարազատ չէ, բայց բարեկամացել ենք:

–Նրան էլ կայցելենք. վաղուց ուզում էի պտտվել ամբողջ ՀԽՍՀ-ով: Չեմ եղել այդ կողմերում: Երկար ճանապարհ է, բայց կգնանք:

–Լավ առիթ է այցելելու,– ասացի ես:

Երկու-երեք ժամ քայլում էինք, բայց ընդհանրապես չէի հոգնել, ավելի շատ հաճելի էր քայլել Երևանի փողոցներով:

Երբ արդեն տուն վերադարձանք, պարոն Ավետիքը եկել էր աշխատանքից: Սեղան զցեցի՞նք ընթրիքի համար: Բոլորը նստած էին ընթրիքի, երբ ես վեր կացա ու գնացի խոհանոցից:

–Անգե՛կ, այդ ո՞ւր:

Վերադարձա՝ ձեռքիս մեկ շիշ գինի:

–Սա ֆրանսիական գինի է: Մի քանի ամիս առաջ, երբ մորաքույրս ինձ հյուր էր եկել, սա նվիրեց ինձ և ասաց, որ ամենալավ առիթի դեպքում բացեմ, որոշեցի, երբ գամ Խորհրդային Հայաստան, այդ ժամանակ կբացեմ, այսօր այդ օրն է, այսօր ամենալավ օրն է,– ասացի ես և գինին մեկնեցի Շառլին, որպեսզի բացի:

–Շատ համեղ է, նուան գինի է,– ասաց պարոն Ավետիքը:

Ընթրիքից հետո գրուցում էինք, ճիշտ է Շառլն էր մեզ համար քարզմանում, բայց մեր գրույցը ստացված կարելի էր համարել: Պարոն Ավետիքը և տիկին Նազիկը խոստացան, որ վաղը մեզ հետ կգան պապիկիս տուն ծանոթանալու նրանց հետ: Վաղը աշխատանքից հետո՝ ժամը 5-ից հետո, կգնանք նրանց հյուր:

Նրանց պատմեցի մայրիկիս, հայրիկիս, մորաքրոջս և նույնիսկ տիկին Գայանեի մասին: Տիկին Գայանեին շատ եմ կարոտել, շուտով կայցելեմ, իսկ Մարջին դեռ հեռագիր չեմ ուղարկել: Խնդրեցի թուղթ ու գրիչ:

Հուլիսի 28

«Բարև, Մա՛րջ: Ինչպե՞ս եք: Ես բարեհաջող տեղ եմ հասել, արդեն Շառլենց տանն եմ: Նրա ծնողները ինչ սիրով ընդունեցին, վաղը կայցելենք տատիկին ու պապիկին, պահել եմ քո տված հասցեն: Բարևի՛ր Շուշանին, Մարիամին ու Հարություն:

Ինչ մոտ ամեն ինչ կարգին է, Երևանը հավանել եմ, մարդկանց էլ: Կարոտում եմ ձեզ...

Անգելա Տեր-Բերբերյան»:

–Մարջանի՞ն ես գրել:

–Մարջանն ո՞վ է:

–Մորաքույրդ, նրա անունը այդպես է, մոռացե՞լ ես:

–Իրոք որ, չէի հիշում, այո՛, Մարջին եմ գրել:

–Վաղը փոստով կուղարկենք, բայց ուշ կհասնի, հաշվի՛ առ:

Արդեն տասնմեկն էր, Շառլի ծնողները քնել էին, հյուրասե-
նյակում միայն ես ու Շառլն էինք:

–Գնամ քնելու,– ասացի ես:

–Մի՛ գնա. մնա՛ խոսենք:

–Ինչի՞ մասին:

–Մեր մասին:

Լռում էի, չգիտեի, թե ինչ է ցանկանում լսել ինձնից:

–Երջանի՞կ ես ինձ հետ, թե հարկադրված ես մնում կողքիս,–
ասաց նա:

–Մի՞թե ես հարկադրված ամբողջս կյանքս կկապեմ մի մար-
դու հետ, որին չեմ սիրում: Եթե ես մի մարդու չեմ հավանում, եր-
բեք հարկադրված չեմ շփվի: Մի՞թե չես հասկացել, որ քեզ սիրում
եմ այնքան, ինչքան Արեգակը Երկրին, որ ամեն օր ճիգ է գործադ-
րում ծագել առավոտյան և մայր մտնել ամեն երեկո՝ իր շողերը
տալով Լուսնին: Ես սիրում եմ քեզ...

–Մի՞թե չես հասկացել, որ գիտեմ սիրող մասին:

–Ուրեմն ինչն՞ է ես հարցնում:

–Որ մեջիս ապրող մարդուն ապրեցնեմ: Երբ առաջին անգամ
տեսա քեզ, ես սկսեցի ապրել:

–Իսկ մինչ այդ ինչն՞ է չէիր ապրում:

–Ստացվո՞ւմ է, չէ՞, այսպես դեռ ոչ որի չեմ սիրել: Ու միայն քո
հարցում եմ միշտ վստահ եղել, որ պետք է մինչև խոր ծերություն
ապրեմ քեզ հետ, որ նույնիսկ մահը չկարողանա բաժանել մեզ
իրարից:

Ժպտացի:

–Արի՛ գնանք, քնի՛ր. քունդ տանում է,– ասաց Շառլը՝ շոյելով
վարսերս:

–Չէ՛, ուզում եմ մնանք մինչև առավոտ այստեղ այսպես
նստած:

Գրկել էինք իրար, ես փակել էի աչքերս ու տեսնում էի իդեալական կյանք, այն կյանքը, որն ապրում էի: Էլ ինչպե՞ս են երջանիկ լինում:

40

Հովհան 29

Ժամը առավոտյան ութն էր: Շառլը ինձանից շուտ էր արթնացել, բայց դեռ գրկել էր ինձ, շոյում էր վարսերս:

– Բարի լույս, – ասացի ես և վեր կացա:

– Բարի լույս:

Ներս եկավ պարոն Ավետիքը:

– Արթնացե՞լ եք, բարի լույս, ինչպե՞ս եք, – ասաց պարոն Ավետիքը:

– Լավ ենք, պա՛պ ջան, – ասաց Շառլը, – աշխատանքի՞նք ես գնում:

– Հա, տղե՛հ:

Ժամը երկուսը-երեքը կլինեք, մտած էինք հյուրասենյակում, հանկարծ Շառլը ասաց.

– Պատրաստվե՞ք, գնում ենք տեղ:

– Ո՞ւր, – հարցրի ես:

– Պատրաստվիր կասեմ:

– Իսկ տիկին Նազի՞կը, ասա՛ մա էլ մեզ հետ գա, տանը մենակ չմնա:

– Ասացի. ասում է՝ ընկերուհիներից մեկի տուն պետք է գնա: Դու պատրաստվի՛ր:

– Լավ:

Ավտոբուսով հասանք ինչ-որ տեղ: Սկզբում ոչ մի արտասովոր բան չնկատեցի: Մի քանի քայլ հետո նկատեցի ինչ-որ տաճար:

– Սա ի՞նչ տաճար է:

– Չվարթնոցի տաճարն է, VII դարում է կառուցվել, ուզում էի՝ տեսնեիր, ուզում եմ՝ մեր պատմությունը իմանաս, ուզում եմ՝ իմա-

նաս ինչքան հին, բայց ամուր ազգ ենք մենք: Նայի՛ր այս քարերին, նայի՛ր քանդակներին. ոչ մի երկիր չունի այսպիսի մշակութային կոթողներ:

—Անգին է մեր երկիրը, անասելի գեղեցիկ: Մի ամբողջ կյանք հերիք չի անի, եթե փորձեն բացահայտել այս դրախտավայրը: Ես ծնվել ու ապրել եմ Գերմանիայում, բայց այս երկիրն է իմ սրտինը: Ես Հայաստանում չեմ ծնվել, սակայն Հայաստանը ծնվել է իմ մեջ:

—Դու գեղեցիկ ես խոսում Հայաստանի մասին:

—Այն արդեն ինձ էլ է պատկանում: Սիրեցի նաև մարդկանց:

—Դեռ ավելի շատ կսիրես մեր երկիրը:

Բռնեց ձեռքս, և քայլեցինք առաջ:

Ամուսնացանք այն օրը, երբ որոշել էինք, որ պետք է ամուսնանանք:

Տղաս՝ Ավետիքը, վաղը կգնա դպրոց՝ առաջին դասարան:

Այսքան տարիների ընթացքում շա՛տ փոփոխություններ եղան իմ կյանքում, երբեմն՝ լավ, երբեմն էլ վատ... Սա է կյանքը:

Շատ կարևոր դասեր եմ քաղել, բայց ամենակարևորը, որ ուզում եմ ասել սա է. այն մարդիկ, որոնք թանկ են քեզ համար, ՄԻՇՏ ասա դրա մասին, գրկի՛ր, համբուրի՛ր, որովհետև գուցե վաղն արդեն ուշ լինի...:

Ներիֆ մարդկանց, կյանքը չափազանց կարճ է, որպեսզի ընկնենք ավելորդ սկզբունքների հետևից, այդպես չէ՞:

Ուղղակի սիրի՛ր քո կյանքը և ապրի՛ր, որքան հնարավոր է, արժանապատիվ:

Մայրամուտին ես կգամ՝ լուսաբացներ բերելով...



Լուսիկ Ամիրադյան

Ծնվել է 2003 թ. ապրիլի 21-ին Նոյեմբերյան քաղաքում: 2009-2021 թթ. սովորել է Նոյեմբերյանի ավագ դպրոցում՝ ավարտելով այն բարձր առաջադիմությամբ: 2010-2017 թթ. հաճախել է երաժշտական դպրոցի դաշնամուրի բաժին: Երկու տարի հաճախել է Նոյեմբերյանի «Արմաթ» ինժեներական լաբորատորիան:

2021 թ. ընդունվել է Երևանի պետական համալսարանի ֆիզիկայի ֆակուլտետի «Ֆիզիկա» բաժին: 2022 թ. մարտի 1-ից աշխատում է Ֆիզիկայի կիրառական պրոբլեմների ինստիտուտում որպես լաբորանտ:

«Անկախության սերնդի ձայնը» երիտասարդ ստեղծագործողների հանրապետական ուսանողական մրցույթի գրականության ոլորությամբ «արձակ» անվանակարգում իր աշխատանքների համար զբաղեցրել է երկրորդ պատվավոր հորիզոնականը:

Ամռան օրերից մեկը

Երեկո էր, ամռան վերջին երեկոներից մեկը: Մեղմ փչում էր հովիկը: Քաղաքի փողոցները գրեթե դատարկ էին: Մուգ կապույտ «Ֆորդ» մակնիշի մեքենան, դանդաղեցնելով իր ընթացքը, կանգ է առնում քաղաքի ծայրամասում գտնվող մի փոքրիկ տան դիմաց: Մեքենայից դանդաղ դուրս է գալիս մի երիտասարդ տղամարդ՝ իմ պատմության գլխավոր հերոսը: Առաջ է գալիս, նայում տան խարխուլ պատուհաններին, մի պահ փակում է աչքերը՝ հիշելով այդ տանն անցկացրած իր մանկությունը, ապա բացում է մեքենայի դուռը և հանելով ճամպրուկները՝ մոտենում տան դռանը: Գրպանից հանում է բանալին և բացելով դուռը՝ ներս մտնում: Տան պատերը նրան այնքա՛ն հարազատ թվացին, բայց և միևնույն ժամանակ այնքա՛ն օտար: Չէ՞ որ տասը տարուց ավել էր, ինչ լքել էր փոքրիկ քաղաքն ու մեկնել արտասահման՝ սովորելու: Երկու տարի առաջ նամակ ստացավ մորից. հայրը մահացել էր: Ցանկացավ վերադառնալ, բայց մտածեց, որ հորն այլևս հետ չի բերի, իսկ գործերը կիսատ են: Իսկ մեկ ամիս առաջ ստացավ մոր մահվան գուրբ: Այս անգամ հարվածն ավելի ուժեղ թվաց: Մայրը միայնակ ապրել էր երկու տարի, ի՞նչ իմանար՝ քանի անգամ է բացել հին ալբոմը և իր նկարների վրա արցունք թափել: Սրտում մի բեռ էր ծանրացել: Այլևս չկարողացավ մնալ այդտեղ, որոշեց վերադառնալ հայրենիք և կատարել հոր կամքը: Երբ տասնհինգ տարի առաջ լքեց այս տունը, այն այնքան լեցուն էր, թվում էր՝ ծնողները հավերժ ապրելու են, բայց հեռացան այնքան շուտ, որ նույնիսկ չհասցրեց մի վերջին անգամ գրկել, ասել, որ սիրում է: Հիմա տունը դատարկվել է, այլևս չի լսելու հոր խրատները, այլևս չի տեսնելու մոր սիրով լեցուն աչքե ըրը: Իրեն վատ զգաց, նստեց աթոռին: Երբ հեռացավ դեռ ընդամենը տասնհինգ տարեկան պատանի էր, որի գլուխը լիքն էր ամեն տեսակ խենթություններով, որը ձգտում էր փառքի: Իսկ վերադարձավ, երբ արդեն հասուն տղամարդ է: Մտքերի թելը կտրեց դռան թակոցը: Չարմանքից

քարացավ. ո՞վ կարող էր իմանալ, որ վերադարձել է, ո՞վ է դեռ նրան հիշում: Մտքով մի բան անցավ, ուրախությունից վեր թռավ և վազեց՝ դուռը բացելու: Բայց այդ մեծ ուրախությանը հաջորդեց ավելի մեծ հիասթափություն: Դռան դիմաց կանգնած էր մոտ հիսուն տարեկան մի տղամարդ.

–Բարև Ձեզ:

–Բարև Ձեզ, ինչո՞վ կարող եմ օգնել:

–Տիկին Երանուհին տա՞նն է:

–Տիկին Երանուհին այլևս երբեք տանը չի լինի,– տխուր ասաց նա:

–Ինչ-որ բա՞ն է պատահել:

–Այո՛, նա մահացել է:

–Ինչպե՞ս թե, այդ ե՞րբ:

–Մեկ ամիս առաջ, իսկ Ձեզ նրանից ի՞նչ էր հարկավոր:

–Նա ինձնից պարտքով փող էր վերցրել, հետո ես որոշ ժամանակով հեռացա քաղաքից, երեկ եմ վերադարձել: Շատ տխուր բան ասացիք, իսկ Դուք ո՞վ եք:

Մի քանի լուրջ լռություն տիրեց: Մայրը պարտքով փող էր վերցրել ուրիշից: Իսկ նա ինչի՞նչ համար էր: Բայց չէ՞ որ նա ամեն ամիս գումար էր ուղարկում մորը: Հիշեց՝ վերջին ամիսը չի ուղարկել, որոշել էր նոր գործ սկսել, և ամեն մի դրամը կարևոր էր: Մտածեց, որ մայրն իր թոշակով կապրի այդ մի ամիսը: Տխրեց. ինչքա՛ն փառասեր էր դարձել: Գլուխը բարձրացրեց և տեսնելով իրեն ուղղված հարցական հայացքը՝ ուշքի եկավ.

–Ես Տիգրանն եմ, նրա տղան: Ինչքա՞ն է այդ գումարը, ես կվճարեմ:

Անձանոթին տալով գումարը՝ փակեց դուռն ու արագ ներս մտավ: Նա մեղադրանք կարդաց այդ մարդու հայացքում: Նա իր հանդեպ ուղղված մեղադրանք էր տեսնում նույնիսկ անշունչ առարկաներին մայելիս: Դառն ու տխուր մտքերը շարունակում էին կրծել նրա ուղեղը: Վեր կացավ նստած տեղից: Ավելի լավ է դուրս գա տնից. կքայլի փողոցներով, կհիշի մանկությունը, իսկ

հետո կգա տուն և իրերը կտեղավորի: Միևնույն է, ամենակարևոր բաները չհասցրեց անել, այլևս երբեք չի ուշանա: Դուրս եկավ փողոց: Քայլում էր տխուր՝ ուշադիր նայելով կողքերը, փորձելով բաց չթողնել ոչ մի մանրուք: Նրա եվրոպական ոճով հագուկապը չէր սագում այդ հին, երբեմն կիսաքանդ շենքերի հետ: Ճիշտ է, քաղաքը բավականին բարելավել էին. փողոցները ասֆալտապատել էին, լույսեր էին տեղադրել, բավականին վերականգնել էին շենքերը, կառույցները, բայց նա այնպիսի քաղաքներում էր եղել, որ սա ընդամենը մի փոքրիկ գյուղ էր նրա համար: Նա դեռ երկար կթափառեր՝ հիշելով անցյալը, բայց ամպի ուժեղ որոտը սթափեցրեց նրան: Գլուխը բարձրացրեց և նայեց երկնքին: Սև ամպեր էին կուտակվել ոչ միայն իր սրտում, այլև երկնքում: Լսվեց երկրորդ որոտը, և անձրևի կաթիլները մեծ թափով սկսեցին թրջել քաղաքը՝ հովացնելով ցերեկվա տապից: Եթե սխալ չէր հիշում, մի փոքր հեռվում ավտոբուսի կանգառ կա, այնտեղ ծածկի տակ կսպասի անձրևի դադարին: Մոտ հարյուր մետրից երևաց կանգառը: Չէր սխալվել: Այնտեղ՝ կիսախավարի մեջ, մարդու ուրվագիծ նկատեց, մոտեցավ և արդեն պարզ տեսնելով կանգնած մարդուն՝ բարևեց.

–Բարև Չեզ,– պատասխանեց կանացի մի նուրբ ձայն:

–Հուսով եմ դեմ չեք լինի, եթե Չեզ հետ այստեղ կանգնեմ:

–Իհարկե, ո՛չ,– պատասխանեց նա, և չնայած դեմքը լավ չէր երևում, Տիգրանին թվաց, թե նա կարմրեց: Շուտով վառվեց փողոցային լույսերը, և նա կարողացավ պարզ տեսնել աղջկան: Միջահասակ էր, նիհար, փոքրամարմին, մոտ քսան-քսաներկու տարեկան աղջիկ էր: Դիմագծերը նուրբ ու կանոնավոր էին, աչքերը միջին չափի, մուգ շագանակագույն էին: Նուրբ ու ալ շուրթեր ուներ և երկար ու խիտ մազեր: Նա նման էր ծաղիկի, բայց ոչ թե վարդի, այլ ամենահամեստ երիցուկին: Այո՛, նրան նայելիս Տիգրանը տեսավ պարզ ու գեղեցիկ մի երիցուկ.

–Կարծես թե անձրևը երկար է տևելու,– հանկարծ ասաց նա:

–Երևի, իսկ Դուք հեռո՞ւ եք ապրում այստեղից:

–Ո՛չ, մի փոքր անձրևը դանդաղի, և ես կգնամ:

–Դուք երևի ինձ սխալ հասկացաք. ինձ ավելի հաճելի կլինեք, եթե մնայիք,– աղջիկը շիկնեց: Կրկին լռություն տիրեց: Հինգ րոպե անց նա նորից խոսեց.

–Անձրևն արդեն կամաց է գալիս. ես տուն գնամ:

–Գիտե՞ք՝ ես բավականին հեռու եմ բնակվում այստեղից, մի-գուցե ինձ հրավիրեիք թեյելու,– հարցրեց Տիգրանը՝ զգալով, որ եթե տուն վերադառնա, հիշողություններն ուղղակի կույ կտան իրեն: Աղջիկը մի պահ տատանվեց, սպա ասաց.

–Համեցե՛ք: Իսկ ես կարո՞ղ եմ իմանալ իմ հյուրի անունը:

–Դե իհարկե: Ես Տիգրանն եմ, իսկ Դո՞ւր:

–Իմ անունը Սոնա է,– ժպտալով պատասխանեց աղջիկը, ու նրանք շարժվեցին դեպի Սոնայի բնակարանը: Տասնհինգ րոպե անց նրանք արդեն նստած վայելում էին տաք թեյը:

–Մենա՞կ եք ապրում,– հարցրեց Տիգրանը:

–Այո՛, մայրս մահացել է, երբ հինգ տարեկան էի, իսկ հայրս՝ անցած տարի:

–Ներեցե՛ք:

–Բան չկա: Ես սովորել եմ մենակությամբ:

–Քանի՞ տարեկան եք,– Սոնան զարմացած նայեց Տիգրանին,– կներեք ուղղակի հետաքրքիր էր. կարող եք չպատասխանել:

–Քսաներկու տարեկան եմ,– անվրդով ասաց նա:

–Եվ միշտ այս քաղաքո՞ւմ եք բնակվել:

–Այո՛, ինչո՞ւ եք հարցնում:

Տիգրանը կարծես չսեց նրա հարցը: Ուրեմն Սոնան ընդամենը յոթ տարեկան է եղել, երբ նա հեռացել է այս քաղաքից: Հեռացել էր փնտրելու փառք, հարստություն, հաջողություն, որի մեջ նա տեսնում էր երջանկությունը, մինչդեռ միայն կորցրեց այն: Սոնան նկատեց, որ նա ընկել է մտքերի հետևից, և որպեսզի ուշքի բերի նրան, բարձր հագաց.

–Երևի մրսեցիք կանգառում,– ասաց Տիգրանը:

–Ամեն-ինչ կարգին է, իսկ Դուք այս քաղաքի՞ց եք:

–Կյանքիս կեսն անց եմ կացրել այստեղ, մյուս կեսը՝ արտասահմանում: Կիսով չափ այս քաղաքին եմ պատկանում:

–Մարդ կարող է հարյուրավոր կիլոմետրերով հեռու ապրել իր հայրենիքից, բայց հոգով ու սրտով նրան պատկանել:

–Իսկ ինչո՞վ եք զբաղվում,– ցանկանալով փոխել թեման՝ հարցրեց Տիգրանը:

–Երկու օրից կաշխատեմ դպրոցում որպես գրականության ուսուցչուհի,– գոհ ժպիտով ասաց Սոնան,– իսկ Դո՞ւք:

–Ես այսօր եմ վերադարձել: Վաղվանից կսկսեմ աշխատանք փնտրել:

–Ծնողների՞ հետ եք ապրում:

–Ո՛չ, ես էլ եմ նրանց կորցրել:

–Ուրեմն մենք մման ենք իրար:

Տիգրանը նայեց Սոնային: Նա մտածեց, որ ավելի շատ տարբեր են, քան նման: Սոնան երբեք չէր թողնի իր ծնողներին ու հեռանա: Համենայն դեպս Տիգրանին այդպես թվաց: Մի քիչ էլ գրուցեցին, ապա տեսնելով, որ անձրևը դադարել է, հրաժեշտ տալով Սոնային՝ Տիգրանը հեռացավ: Հասավ տուն, նայեց ժամացույցին: Արդեն տասն անց էր: Վաղը կդասավորի իրերը: Պառկեց իր հին մահճակալին և չնայած տանջող մտքերին՝ հոգնածությունից քուն մտավ:

Արևի վառ շողերը ջերմացնում էին վշտից տանջված դեմքը: Բացեց աչքերը: Մի պահ չհասկացավ, թե որտեղ է, հետո հիշեց անցյալ օրվա անձրևը, այն անձանոթին, չղասավորված իրերը, հիշեց Սոնային: Հիշեց, որ դեռևս չի այցելել ծնողների գերեզմանին: Տիգրանի դեմքին տաք մի արցունք երևաց, որը զլորվելով կաթեց անկողնու վրա: Նայեց ժամացույցին: Իսկ ժամացույցն ի՞նչ էր ցույց տալիս, օրվա ժա՞նը, թե՞ կորցրած տարիները:

ՆԱ, ՈՎ ԶԿԱ

Հոգնած ու դանդաղ ոտքերս քարշ եմ տալիս դեպի տուն: Աշուն է, աշնան մի մռայլ ու մշուշոտ օր: Քայլում եմ մայթով՝ նայելով փողոցով արագ սլացող մեքենաներին ու զգալով, որ սառել եմ. սկսում եմ երազել, քանզի այլ բան չի մնում՝ դեպի տուն տանող այդ երկար ճանապարհը կարճացնելու համար: Մի պահ փակում եմ աչքերս՝ զգալով քամու սառը շունչը դեմքիս և ընկնում երազանքներիս գիրկը: Շուտով կլսեմ արգելակող մեքենայի ձայն և կտեսնեմ կողքիս կանգնած մի մեքենա: Կցանկանամ առաջ գնալ՝ մտածելով, որ այն ինձ համար չէ կանգնել: Բայց շուտով կլսեմ անունս, կշրջվեմ ու կտեսնեմ նրան: Նա կմոտենա ու կառաջարկի ինձ տուն տանել՝ պատճառաբանելով, որ եղանակը շատ ցուրտ է, իսկ ես կիրաժարվեմ: Բայց նա ձեռքը կդնի կարմրած դեմքիս, որը նրա հպումից ավելի կկարմրի ու կասի, որ ես սառել եմ պարզապես, կպնդի առաջարկը: Ես այս անգամ կտատանվեմ՝ չցանկանալով որ գյուղում շշուկներ տարածվեն: Նա կնայի աչքերիս ու կժպտա, քանի որ կհասկանա մտահոգությանս պատճառը: Հետո կբռնի ձեռքիցս ու կտանի դեպի մեքենան: Ես կնստեմ առաջին՝ նրա կողքին: Ու մենք դանդաղ կշարժվենք: Տեսնելով, թե ինչպես են մեքենաները գալիս ու անցնում մեզնից առաջ, կնկատեմ, թե ինչքան դանդաղ ենք ընթանում մենք: Նա փորձում էր երկարացնել այդ ճանապարհը, ես կժպտամ նրա մտքի վրա: Իսկ նա հաճախ գլուխը կթեքի, որ տեսնի ինձ: Կզգամ նրա հայացքն ինձ վրա ու մոռանալով հայուհուն հատուկ ամաչկոտությունը՝ կբարձրանցնեմ գլուխս ու կնայեմ նրան: Ես՝ նրան, նա՝ ինձ: Երևի կանցնեն բուպեներ, որովհետև կզգամ, որ մեքենան գրեթե կանգնել է: Կիջեցնեմ հայացքս, և կշարունակենք ճանապարհը: Ես հպարտ կլինեմ, որ նստած եմ նրա կողքին, որ այդ մի փոքր ժամանակը նրա հետ եմ եղել և այդպես հպարտ կնայեմ անցնող մեքենաներին ու անցորդներին՝ ցանկանալով, որ նրանք

Էլ ինձ տեսնեն, տեսնեն, որ ես նրա կողքին եմ: Նա երգ կմիացնի: Ես կլսեմ այն, բայց չեմ կարողանա հասկանալ բառերը, որովհետև ուղեղս կանջատվի, երբ կլինեմ նրա կողքին: Հետո՝ ապագայում, հազար անգամ կլսեմ այդ երգը: Մենք կրիայի նման կզնանք և այդ երեք թույն տևողությամբ ճանապարհը կանցնենք տասը թույնում: Ես չեմ խոսի, նա նույնպես կլռի, քանզի մեզ հերիք է այն, որ իրար կողքի ենք, և ամեն մի բառ կփչացնի այդ լռությամբ, մեր փոխարեն կխոսեն մեր սրտերը: Կհասնենք իմ տուն, նա շրջադարձ կկատարի, որպեսզի ժամանակը երկարացնի մի քանի վայրկյանով, և ես գոհ կլինեմ: Հետո կկանգնի տան մոտ: «Շնորհակալ եմ շատ»,– կասեմ ես, որովհետև «ապրես» բառը շատ կարճ է: «Խնդրեմ»,– կպատասխանի նա՝ մտքում արագ փնտրելով, թե ինչ կարող է ասել, որպեսզի ավելի երկար մնամ: Բայց նա շատ կուշանա, իսկ ես այդքան սպասել չեմ կարողանա, կբացեմ դուռը, կամաց դուրս կգամ, և հանկարծ միտքս կփայլի, ու կասեմ. «Լիլիթին կբարևես»: «Անպայման»,– կինչի պատասխանը: Նա կժպտա՝ հասկանալով միտքս: Ես նույնպես կժպտամ, մենք կհասկանանք իրար, իսկ քսանմեկերորդ դարում դա չհանդիպող երևույթ է: Ինձնից գոհ կբացեմ դարպասն ու ներս կմտնեմ: Նա կհեռանա, ու ես մինչև վերջին վայրկյանը կհետևեմ նրան: Նա ուրախ կլինի, ես՝ նույնպես: Նա կարողացավ այդքան ժամանակ անցկացնել ինձ հետ, ես կարողացա գտնել մի կետ, որտեղից կկախվենք՝ հետագայում իրար տեսնելու համար:

Իսկ հետո ես կզարթնեմ երազանքներից ու կվերադառնամ իրականության: Կտեսնեմ, որ վաղուց հասել եմ տուն ու առաջ անցել, բայց այդպես էլ ոչ ոք չի կանգնել: Կշրջվեմ ու կզնամ տուն: Իսկ նա չկա: Չէ, չմտածեք ոչ մի վատ բան: Նա չի մահացել, նա պարզապես երբեք էլ չի եղել: Կմոտենամ վառարանին և կտաքացնեմ սառած մարմինս: Ու կերագեմ, որ մի ձմռան օր՝ տուն մտնելուց հետո, չեմ վազի վառարանի մոտ, քանի որ մրսած չեմ լինի:

ՄԵՐ ՄԻՐՈՑ ՏԱՆԳՈՆ

Դա ... թվականի ամռանն էր՝ հուլիս ամսին: Գործի բերումով մի քանի օրով մեկնեցի Փարիզ. գրքերիցս մեկը թարգմանվել էր ֆրանսերեն, և ես մեկնել էի ներկա լինելու հրատարակմանը: Գրքիս թարգմանիչը մի ֆրանսիացի հայագետ էր՝ Ալֆրեդ դը Կլերմանը. մոտ հիսուն տարեկան տղամարդ էր, բայց բավականին լավ պահպանված էր: Ամեն ինչ լավ անցավ, թարգմանությունը շատ լավ էր կատարված և արժանացավ քննադատների ուշադրությանը: Ավարտեցինք երեկոյան ժամը ութին: Ալֆրեդն ինձ հրավիրեց իր տուն.

–Շնորհակալ եմ, բայց դեռ պետք է հյուրանոց գտնեմ՝ գիշերելու համար:

Նա պնդեց առաջարկը.

–Եկեք մի քիչ կզրուցենք: Տանը ես ու կինս ենք լինում, կառաջարկեի՝ մեր տանը գիշերեք, բայց երեկ քրոջս տղան եկավ իր ընկերուհու հետ, և տանն ազատ սենյակ չմնաց,– արդարանալով ասաց նա:

–Լավ, կգամ,– ասացի ես՝ երկրորդ անգամ չկարողանալով մերժել ֆրանսիացի բարեկամիս:

Միասին դուրս եկանք:

Երեկոյան Փարիզը շլացուցիչ էր: Իզուր չէ՝ այն սիրո քաղաք կոչվում. փողոցները լիքն էին սիրահար զույգերով:

Տան դուռը բացեց Ալֆրեդին հասակակից մի կին:

Ծանոթացանք:

Ալֆրեդի կինն էր:

Բավականին սիրալիկ էին թե՛ Ալֆրեդը, թե՛ իր կինը՝ Սիլվիան: Ներս անցանք հյուրասենյակ: Այնտեղ բազմոցին երկու երիտասարդ էին նստած:

–Ահա քրոջս տղան և իր ընկերուհին, որոնց մասին պատմել էի:

Երիտասարդները արագ ոտքի ելան՝ ինձ տեսնելով:

–Ստեֆանն է,– ասաց Ալֆրեդը:

–Շատ հաճելի է,– ասաց Ստեֆանը՝ ձեռքը պարզելով ինձ:

–Ես Աննան եմ,– բռնելով նրա ձեռքից՝ ասացի ես: Մենք ժպտացինք իրար: Նա ամուր բռնել էր ձեռքս, և ես գրեթե ուժով այն հետ քաշեցի:

–Նա էլ Դիանան է,– շարունակեց Ալֆրեդը: Մենք կրկին ձեռք սեղմեցինք, բայց առանց ժպիտի: Տեղավորվեցինք սեղանի շուրջ: Տիկին Սիլվիան երևի տեղյակ էր գալստյանս մասին, նա շատ արագ սեղանը լցրեց տարատեսակ ուտելիքներով: Ալֆրեդը շարունակ շատախոսում էր՝ երբեմն դեմքի միմիկայով կնոջն ինչ-որ բաներ հասկացնելով:

–Իսկ ի՞նչ է Ձեր գրքի վերնագիրը,– հարցրեց Դիանան:

– «Մարդը և նրան սահմանափակող աշխարհը»,– ասացի ես:

–Հետաքրքիր վերնագիր է,– ասաց Սիլվիան:

–Հետաքրքիր՞ր: Ես բոլորիդ խորհուրդ կտամ կարդալ այն: Ես մեկը բերել եմ ինձ հետ,– ասաց Ալֆրեդը:

–Ես հաճույքով կկարդայի,– ասաց Ստեֆանը:

Ալֆրեդը վեր կացավ տեղից, պայուսակից համեց գիրքը և մեկնեց քրոջ որդուն:

–Ըհը, խնդրեմ:

Ստեֆանն այն շատ զգույշ վերցրեց, կարծես կարող էր կոտրվել:

–Ուրեմն գրող ե՞ք,– հարցրեց նա:

–Այո՛, արվեստագետ եմ,– ինչ-որ տարօրինակ հպարտությամբ ասացի ես:

–Ուտաբոբի՞կ եք,– գրեթե ծղրտաց Սիլվիան,– չէ՞ որ ես Ձեզ հողաթափեր տվեցի:

Բոլորը նայեցին ոտքերիս:

–Այո՛, պարզապես կոշիկ հագնել չեմ սիրում:

–Իսկ ինչո՞ւ,– հարցրեց Ստեֆանը: Դիանան մի խեթ հայացք ձգեց նրա վրա:

–Պարզապես դրանք մեզ ինչ-որ շրջանակների մեջ են գցում՝ խլելով մեր ազատության մի մասը:

–Իսկ հագուստը՞, միզուցե առանց դրա էլ ավելի ազատ լինե՞ք,– հեզմական և մի քիչ էլ բարկացած տոնով ասաց Դիանան: Բոլորը շփոթված նրան նայեցին:

–Ո՛չ, հագուստը ծածկում է մեր անբարո մտքերն ու կեղտոտ հոգիները,– հանգիստ ասացի ես:

Ստեֆանը կարծես գոհ մնաց իմ պատասխանից: Նա ժպտաց, ապա հարցրեց.

–Իսկ պարել սիրո՞ւմ եք:

Ես մի պահ հանկարծակի շփոթվեցի հարցից, հետո պատասխանեցի.

–Այո՛, չնայած հիմա՝ XXI դարում, ամեն մի շարժում պար են անվանում:

–Իսկ Դուք ո՞րն եք սիրում:

–Ես նախընտրում եմ տանգոն:

–Կպարե՞ք ինձ հետ տանգո:

–Դե եթե Ձեր ընկերուհին դեմ չէ,– ասացի ես՝ նայելով Դիանային:

–Դեմ չեմ:

–Դեմ չէ:

Միաժամանակ ասացին Դիանան ու Ստեֆանը:

–Դեմ չեմ, իհարկե,– ասաց Ալֆրեդը՝ Ստեֆանին գլխով անելով: Նա ձեռքը դեպի ինձ պարզեց, ես ժպտացի և բռնեցի ձեռքից: Հետո մի երաժշտություն միացրեց, որի քաղցր հնչյունները ես այդպես էլ չմոռացա: Մենք կանգնեցինք սենյակի մեջտեղում: Ես բարձրացա և կանգնեցի թաթերիս վրա:

–Իսկ դա ինչի՞՞ համար,– կամաց հարցրեց նա:

–Ձեր աչքերին ավելի մոտիկից նայելու համար:

Երաժշտությունը սկսվեց, մեր շարժումները՝ նույնպես:

–Իսկ ինչպիսի՞ն են իմ աչքերը:

–Ձեր աչքերն ինձ ծով են հիշեցնում, փոթորկոտ, բայց շատ գեղեցիկ ծով:

Ստեֆանը ժպտաց ինձ: Մենք մեկ քայլ աջ արեցինք, մեկ քայլ՝ առաջ, հետո՝ պտույտ, նա բարձրացրեց և պտտեց ինձ:

–Իսկ Ձե՛ր աչքերը,– ասաց նա,– Ձեր աչքերը նման են երկնքի, աստղազարդ երկնքի:

Ես հարցական հայացք գցեցի նրա վրա, և նա շարունակեց.

–Ինչքան երկար եմ նայում երկնքին, այնքան շատ եմ շփոթվում աստղերի բազմազանությունից: Այդպես էլ ինչքան նայում եմ Ձեր աչքերին, այնքան ավելի է խառնվում հոգիս:

Մի պահ կանգ առանք՝ նայելով իրար աչքերին, ապա շարունակեցինք պարել: Նրա ձեռքն իմ մերկ մեջքին էր, և ամբողջ մեջքս այրվում էր: Թվում էր՝ ամբողջ մարմինս դողում է: Հանկարծ մի չիսկոց լսվեց. ամեն ինչ կորավ, անհետացավ, ամբողջ աշխարհը փուլ եկավ: Մնացինք միայն ես, նա և այն մագնիտոֆոնը, որը երգում էր մեզ համար: Կարծես այս կյանքում ամեն ինչ եղել էր հենց սրա համար, այս թույլների: Կարծես իմ կյանքի միակ նպատակը այս պարն է եղել, կարծես միշտ նրան եմ փնտրել, միշտ նա է պակասել, միշտ նրան եմ սպասելիս եղել: Երբ առանց պատճառի տխրել եմ կամ ուրախացել, հենց նրա պատճառով է եղել: Կարծես հենց նա է եղել կյանքի գաղտնիքը, որ պիտի բացահայտել: Մեր պարը շարունակվում էր, իսկ սենյակում կարծես մութ լիներ: Իմ սև զգեստը, նրա սև հագուստը, մեր ձեռքերը, մեր շարժումները, մեր ամեն ինչը..., կարծես մենք մի մարմին դառած լինեիք: Ես կրկին պտտվեցի, նա բռնեց գոտկատեղիցս և իջացրեց ինձ ներքև՝ գլուխն իջեցնելով դեպի ինձ: Ես ուշադիր նայում էի նրա աչքերին, նա՝ իմ: Նա այնքան իջեցրեց գլուխը դեպի ինձ, որ թվաց մի պահ մեր շուրթերը դիպան իրար: Ամեն ինչ կորել էր, կորել էր Ալֆրեդը, նրա կինը, վերջինիս պատրաստած ուտելիքները, կորել էր նաև Դիանան, և ամեն, ամեն ինչ...: Այդ թույլները հանկարծ դարձան կյանքիս ամենասպաս-

ված և ամենատեղափոխելի բույսերը: Մագնիտոֆոնը կամաց ցած-րացրեց իր ձայնը և շուտով ընդհանրապես լռեց: Լսվեցին ծափահարություններ:

–Ես պարզապես հիացած եմ, հրաշալի պար էր,– ասաց Ալֆրեդը:

–Շնորհակալություն,– պատասխանեցի ես: Հետո նստեցինք մեր տեղերը, և գրույցը շարունակվեց: Արդեն կեսգիշեր էր, մենք դեռ գրուցում էինք ամենատարբեր թեմաներից, և ես անընդհատ Ստեֆանին էի նայում: Չնայած զգում էի Դիանայի ծանր հայացքը վրաս, բայց, միևնույն է, ես չէի կարողանում աչքերս նրանից հեռացնել: Կարծես անգոր էի դարձել ինչ-որ մի բանի առաջ, որը չգիտեի՝ ինչ է: Մեր գրույցն ավարտվեց, կամ ավելի ճիշտ ավարտվեց ժամանակը: Ես վեր կացա տեղիցս և շնորհակալություն ու բարի գիշեր մատթեցի բոլորին: Ստեֆանը տաքսի կանչեց ինձ համար: Հետո նա և Ալֆրեդը ինձ ճանապարհեցին մինչև բակ, որտեղ հրաժեշտ տվեցինք միմյանց: Ես ձեռքս մեկնեցի Ստեֆանին, իսկ նա մոտեցրեց շուրթերին և ջերմորեն համբուրեց: Մենք երկար իրար նայեցինք: Նայեցինք վերջին անգամ: Նայեցի երկար՝ նրա դեմքը երբեք չմոռանալու համար: Ես մեքենա նստեցի և հեռացա այն հյուրանոցը, որն Ալֆրեդն առաջարկեց: Հաջորդ առավոտյան ես նստեցի Հայաստան վերադարձող ինքնաթիռն ու հավերժ հրաժեշտ տվեցի ֆրանսիացի բարեկամներին: Ես այլևս երբեք չտեսա Ստեֆանին: Չփնտրեցի նրան, նա էլ՝ ինձ: Չնայած մենք սիրեցինք իրար հենց այդ երեկո, հենց առաջին վայրկյանին, երբ Ալֆրեդը ծանոթացրեց մեզ, և մեր սերը տևեց մի երեկո, մի փարիզյան ամառային տաք երեկո: Մենք չխոսեցինք մեր զգացմունքներից և չասացինք իրար ամենակարևոր բառերը: Բայց ես երբեք չմոռացա նրան, և իմ կյանքի ամենատեղափոխելի օրը եղավ հենց այդ երեկոն՝ մեր տանգոյի այդ մի քանի բույսերը: Ես այլևս երբեք չկարողացա գտնել նրան և այլևս երբեք չտեսա նրան...



Էլեն Խաչատուրյան

Ծնվել է 2002 թ. հուլիսի 30-ին մայրաքաղաք Երևանում: Սովորում է Հայ-ռուսական համալսարանի իրավագիտության ֆակուլտետում: Բացի իրավագիտության ոլորտի հետաքրքրություններից՝ սիրում է զբաղվել նաև պարով, գեղանկարչությամբ, սպորտով ու լողով:

Ստեղծագործել սկսել է դեռ վաղ տարիքից, գրչի միջոցով կարողանում է ուրախանալ, մտածել, անհանգստանալ, հուզվել, ստեղծել և պարզապես վայելել ակնթարթը:

«Անկախության սերնդի ձայնը» երիտասարդ ստեղծագործողների հանրապետական ուսանողական մրցույթի գրականության ոլորությամբ «արձակ» անվանակարգում իր աշխատանքների համար զբաղեցրել է երրորդ պատվավոր հորիզոնականը:

ԱՆՎԵՐՆԱԳԻՐ

Հին բուխարու բոցկլտացող կայծերից ջերմացած, անխախտ լռությունը կոտրելու անգուսպ համարձակությունից զրկված՝ դեմ դիմած նստած էին անհագ զգացմունքով երկու քարացած երիտասարդ:

Յուրաքանչյուրն օժտված անեզր լռությունը ցրելու երկյուղով՝ ճաշակում էին հազիվ հայթայթած թուփերը՝ վառ բուխարու առջև տոկուն միայնության մեջ գտնվելու:

Մանր անձրևի մեղմ կտկտոցները ժամանակ առ ժամանակ թակում էին մութ պատուհանները՝ փորձելով սարսել պողպատյա լռության ամրակուռ մասնիկները:

Բուփեր անց շփոթահար աղմուկ թափանցեց և ճեղքեց խորունկ լռությունը: Թեթև կարկուտի վերածված խիտ անձրևը քարացած այդ երկուսին ստիպեց համարձակել և վերջապես միայնության ակնթարթները համակել հազիվ նշմարվող շշուկով:

Երագելի գրուցի սկզբում սևաթույր պատանու շուրթերից հանդարտ հնչյուններ լսվեցին բուխարու բոցավառ կայծերից սովորականից ավելի ջերմացած այդ ամայացած փոքրիկ սենյակում: Երիտասարդների ամփոփ գրույցից սենյակի տաքուկ պատերը կարծես ավելի անչար ու ասպնջական էին դառնում: Այդ երկուսի հնչեցրած ամեն տող վաղուց արդեն սպասված ու կարոտագին էր:

Երիտասարդների շաղախված հոգիներում կարծես միալար հանգստություն իջավ այդքան ցանկալի գրույցի ավարտին:

Երկուսն էլ միատեղ դեռ վաղուց փնտրում էին հետքն այսպիսի մի հակիրճ, բայց և ակնբախ ու պարզ գրույցի, որը վեր կհաներ հոգիներում համակած անհանգստությունը և հաճելի անդորր կսփռեր: Բախտի բերմամբ այս երկու դեռատի սրտերը գիտակցեցին փոքրիկ գրույցների և նաև միասին լռելու կարևորությունը:

Եվ աշխարհում այս հանկարծական,

Եվ կյանքում այս անակնկալ

Յուրաքանչյուր թեմա ունի վճիռ,
Եվ յուրաքանչյուր վճիռ պարտավոր է ունենալ կնիք:

Ու հաճախ լռությունը՝ միայն թանձր ու խորին,
Կարող է լինել վճիռ հարցվածին,
Ու հաճախ աննշան գրույցը վերջին
Կլինի կնիք որոշվածին:

ՄԱՅԻՍՅԱՆ ՕՐ

Լեռնային պարզ հով խոստացող արևածագ էր, բարձրահնչյուն փողի զրնգուն երանգները արթնացրին գարնան նորած, դեղնականաչ խոտին բարակ վերմակով թիկնած արյունեռանդ հերոսներին:

Հակոբի ջահել կինը, վարակված ամուսնու ու ջոկատի մարտիկների անգուսպ անվախությամբ, հերոսների զարթնելուն պես իր ջլուտ ու մարտնչող ոտքերով այս ու այն կողմ քայլելով, բաժակ առ բաժակ հյուրասիրում էր լեռնային, տաք թեյ՝ մաղթելով հաղթանակած մայիսյան օր: Ներքին խաղաղություն էր պատել Հակոբի կնոջը, դեռ անցած մայրամուտին Հակոբին հաջողվել էր հուսադրող խոսքերով հանդարտեցնել անհանգստացած և վտանգի զգացումով տոգորված կնոջը: Հույս էր ներշնչել, որ դեռ չեն պատրաստվում մեկնել մարտի և նաև հարակից շրջանից մեծ ուժով օգնության են սպասում, իսկ դրա առկայության դեպքում սպասվելիք մարտում պարտությունն անհարին է:

Բազում մեծ ու փոքր կռիվներ էր տեսել վանեցի Հակոբը: Իր լավագույն ջոկատը շատ հաղթական կռիվներ էր մղել և, իհարկե, հաջողել: Սիրում էր կրկնել, որ հաղթում են նրանք, ովքեր մարտնչում են: Գնահատում և գիտակցում էր շարքային յուրաքանչյուր կռվողի կարևորությունը: Առանց սովորական մարդկանց չեն լինում մեծագույն մարդիկ:

Անցկացրին մայիսյան այդ երեկոն՝ վերապատրաստվելով ու միմյանց հետ կիսվելով անձնական կյանքի հետաքրքիր ու զվար-

ճալի դրվագներով: Արևամուտին բոլորն արդեն պատրաստ էին եկող օրերի վճռական ու որոշիչ մարտերին, մանավանդ, երբ տեղեկացվել էին, որ օգնությունը լեռնային վարար գետի երկայնքով ճանապարհ է ընկել և մոտենում է:

Գիշերն անցավ խաղաղ ու բարեհաջող: Արշալույսը չբացված՝ քաջերն արդեն ոտքի էին: Լայն ու բարձրաբերձ արոտավայր էր նրանց դիմաց, որի վերջնամասին նշմարվեց ուժգին, դեպի ջոկատի կողմ սլացող հետևակագործի որոշ մաս: Իջևանած ուժը մի պահ լիաթոք շունչ քաշեց, կարծես հեռվից եկող հայրենի ոգիները իրենց ողջ գործությունն ու ուժն ավանդեցին գորընկերներին:

Հանկարծ անշարժացան, աղմկածայն գորքի սլացքը թշնամական թվացող հարձակման էր նմանվում: Շուտով նկատվեցին օտարականները, հակառակորդի խորհրդանիշն ու խորթ մարտիկները:

Հայ կորովի մարտիկներն անմիջապես կողմնորոշվեցին և մարտական դիրք բռնեցին մինչև թշնամու հասնելը: Հակորքի կիներ, շփոթված վազվզելով, փորձում էր օժանդակել ռազմիկներին և ապահովել անհրաժեշտ զինամթերքով:

Կատաղի մարտը սկսվեց: Մարտի երկրորդ կեսին կանաչ դաշտավայրի հյուսիսային ծայրամասում երևաց առավել գորեղ ու մեծաքանակ գորաբանակ: Վստահ էին այս անգամ քաջերը. օժանդակ ուժն է իրենց հասել:

Մայիսյան օրվա ցերեկային վառվռուն արևի տակ հայ գորականները միահամուռ ուժերով լիակատար պարտության հասցրին թշնամու գորայիններին:

Հայ ազգին հաղթանակներ պարզևած ավետաբեր մայիս ամիսը նոր սերունդների արտերում էլ սրբագրված է հայ քաջորդիների ու նրանց սխրագործությունների վառ հիշատակման շրջան, որոնք պարարտ հող են պատրաստել նոր սերունդների խիզախության ու արիասարտության դրսևորման խոստումնալից աշխատանքի համար:

ՇՆՈՐՀԱԿԱԼ ԵՆՔ:

ՀԻՇՈՒՄ ԵՄ

Հիշում եմ, երբ առաջին անգամ ուղղեցի փողկապղ: Դա քեզ դուր չեկավ. դա էլ եմ հիշում: Երկրորդ, երրորդ անգամ դու զայրացար... հինգ, վեց, ինքը էիր անում: Մենք բաժանվեցինք: Հիշում եմ՝ ամիսներ անց եկար, խնդրեցիր՝ ուղղեմ փողկապղ: Դու զարմացար... Մի՞թե կռահել էիր, որ պատճառն այն չէր, որ չէր ստացվում: Դու կռահեցիր՝ իմ ձեռքերն էին սառել դեպի քեզ, սիրտս այժմ քարացել էր անսպառ անտարբերությունից ու քո քշտությունից: Գիտե՞ս՝ օրերս սեր էին բուրում: Խավար, անգույն օրերս ծաղկել էին, ծաղկում էին, գունանում:

Փոթորկվել էի, սակայն խաղաղվել էր հոգիս, սիրտս ու միտքս, անբիծ լագուր բռած, շնչում էին քո սիրով, քո ջերմացած սիրով, երջանկացած... . Որքա՞ն եմ ստել քեզ իմ մութ օրերին, որքա՞ն եմ սիրել քեզ իմ ծաղկուն օրերին:

Բայց...

Բայց ո՞ր ես դու հիմա...

Իսկ դու լսո՞ւմ ես իմ ձայնը, որ կարոտից այս ուժասպառ՝ քեզ եմ կանչում ես հիմա: Ամեն վայրկյան ես տենչում էի ժամացույցի սլաքների վազքի մասին, որոնք ինձնից խլում էին կողքիդ լինելու ակնթարթները, ստիպում էին կարոտել: Չէ՛, չեմ ուզում խոստովանել, որ կոկորդս դեռ սեղմում է քո կարոտը, վաղուց մարած իմ բոցը, որ սերն էր քո: Անուժ է հիմա ամենը կարոտիս դեմ, քո ուշացած զոջումը քեզ մի փխրուն, անհաս երազ կթվա:

Քո պիղծ հոգուց կարողացա վերջապես հետ բերել իմ արժանիքները, որոնք դու խլել էիր ու թողել ինձ ճախրանքի ճանապարհին: Վստահ եղիր՝ ես կվերաշինեմ իմ կոտրված, մասնատված թևերը, բայց քեզ արգելված կլինի ոտք դնել իմ հորինված երազներում:



Մարգարիտա Ղազարյան

Ծնվել է 2003 թ. փետրվարի 2-ին Լոռու մարզի Դոճկան գյուղում: Սովորել է տեղի Գոռ Խոտիկնյանի անվան միջնակարգ դպրոցում: Ստեղծագործել սկսել է 8 տարեկանից: Գրականությունն իր համար ապրելակերպ է: Սիրում է կարդալ տարբեր ժանրերի գրքեր և այդ գրքերի միջոցով բացահայտել և՛ աշխարհը, և՛ ինքն իրեն: 2019 թվականից թղթակցում է «17.am»-ին, որտեղ և հրապարակվում են իր հոդվածները: Սովորում է ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետում: Նվիրական երազանքներից մեկն է, որ մի օր էլ ընթերցասեր մարդկանց ձեռքին հայտնվի իր գիրքը, և այդ գրքի շնորհիվ նրանց կյանքում թեկուզ փոքր, բայց նկատելի փոփոխություն կատարվի դեպի բարին, դեպի լույսն ու սերը...

«Անկախության սերնդի ձայնը» երիտասարդ ստեղծագործողների հանրապետական ուսանողական մրցույթի գրականություն ուղղությամբ «արձակ» անվանակարգում իր աշխատանքների համար զբաղեցրել է երրորդ պատվավոր հորիզոնականը:

ՄԵԿ ՏԱՐԻ ԱՌԱՋ

Մեկ տարի առաջ պատերազմ անունով մի դաշույն խրվեց մեզնից յուրաքանչյուրի սրտում ու արնաքամ արեց բոլորիս, շատերին ֆիզիկապես սպանեց, իսկ մեզ՝ ընկածների կորստի ծանր վիշտը կրողներին՝ հոգեպես: Մեկ տարի առաջ շատերի կյանքն ասարտվեց հանուն մեզ, և մեր սրտերն էլ քանի՛ անգամ կանգ առան նրանցից ամեն մեկի մահվան լուրը լսելիս: Բայց մեզ հերոսներ պե՞տք էին:

Մեկ տարի առաջ մենք հայրեր, եղբայրներ ու որդիներ կորցրինք, կորցրինք ծանոթ-անծանոթ հարազատների, որոնցից ամեն մեկի մահվան պատճառը հենց մեզ ենք համարում, ամեն մեկի առաջ մեզ մեղավոր ու պարտավորված ենք զգում: Պատերազմը կյանքը, հայրենիքը, սիրելիներին կարևորելու դասեր տվեց, իսկ փոխարենը կյանքեր վերցրեց, այն էլ ինչպիսի՛ կյանքեր: Ա՛խ, անտանելի բան է պատերազմը:

Տարիներ անց պատմության գրքերում կգրվի այս պատերազմի մասին, վերջում էլ երևի էլի բարոյական հաղթանակ կլինենք տարած: Աշակերտներից ոմանք նույնիսկ չեն էլ կարդա այդ դասը, կմտածեն, որ անցած դասին են պատասխանել, իրենց չի հարցնի ուսուցիչը, գուցե կմտածեն՝ հերթական հեքիաթն է, չսովորեն էլ, մեծ բան կորցրած չեն լինի, կլինեն երեխաներ, որ անգիր կանեն՝ բաց չթողնելով ոչ մի բառ, բայց հնարավոր է, որ հաջորդ օրն այդ դասից ոչինչ էլ չիլշեն, կլինեն աշակերտներ, որոնք դասը միայն դասարանում կարդալով սովորած կհամարեն ու պատմելիս էլ կկմկման, կլինեն նաև այնպիսիները, որ շատ լավ կսովորեն այդ դասը, կսովորեն՝ չպատկերացնելով, որ այն մեզ սովորեցրել է հենց կյանքը՝ ամենախստապահանջ ուսուցիչը:

Եվ երանի գալիք սերնդին, որ այս անիծյալ պատերազմը չի ընկալի այնպես, ինչպես մենք: Երևի ժամանակին էլ մեզ են այսպես երանի տվել... Երանի՛, երանի՛ մեզնից հետո եկող սերունդ-

ները չզգամ այն, ինչ մենք ենք զգացել, չտեսնեն մեր տեսածը, չկրեն մեր հոգու ցավը:

Մեկ տարի առաջ մենք կորցրինք արևներ, որոնք անգամ չհասցրին տեսնել կյանքի, աշխարհի գույներն ու լույսերը: Մեկ տարի առաջ շատ տներում սեղաններին դրվող ավստների քանակը փոխվեց, լույսեր մարեցին, սևագգեստ կանայք շատացան: Մեկ տարի առաջ մենք այդ անտանելի աղմուկից խլացանք և... շատերի ձայները այլևս երբեք չլսեցինք: Մեկ տարի առաջ երկինքը հարստացավ, ու մենք դատարկվեցինք, մեր հոգիներն ու տները ամայացան:

Ասում էին՝ պատերազմը կավարտվի, ամեն ինչ կմոռացվի, շատերի համար այս ամենը գուցե շատ ավելի վաղուց է փակված էջ համարվում, բայց Եռաբլուրն արդեն շատ է լիացել, և փողոցում հանդիպող հաշմանդամ տղաներն էլ քիչ չեն, որոնցից ամեն մեկին նայելիս հասկանում ես, որ պատերազմը միայն զենք-զինամթերքով պայքարելը չէ, և այն մեզ հետ դեռ երկար ժամանակ է քայլելու: Չէ՛, պատերազմը չի լքում...

Մեկ տարի առաջ քառասունչորս օրում մեզնից յուրաքանչյուրը մեծացավ մի քանի տարով, իսկ մեր եղբայրներից շատերը չբողբեցին նույնիսկ քսանը: Նրանք ընկան, որ մենք կարողանանք կանգնած ապրել, չծնկենք, բայց մենք մինչ օրս էլ տերևի նման երերում ենք, քամիները մեզ ամեն կողմից են հրում. հայի ճակատագիրն է սա: Ճակատագիրը միայն հերոսների առումով է շռայլ գտնվել մեր նկատմամբ, բայց երանի նրանք բոլորն էլ ողջ լինեին... Մեզ միայն ողջ ու առողջ հերոսներ են հարկավոր:

Մեկ տարի է անցել, բայց մենք էլի կախված ենք օդից, սրտներումս վախ է՝ այս ամենը նորից տեսնելու: Արդեն մեկ տարի է անցել, և շատ տարիներ կանցնեն, բայց մեր սերունդը ամեն անգամ հետ նայելիս խորը հոգոց կհանի ու կլռի, փոխարենը մեր աչքերը կխոսեն: Եվ մեր ներսում դեռ էլի կշարունակվի այն կռիվը,

որ հայրենի հողի կորստի ու եղբայրների անմահացման սև պատճառ է դարձել:

Խոցված ենք, զրկված, բայց կրկին ապրելու հսկա տենչը բեռարած և անասհման շնորհակալ այն տղաներին, որոնք այլևս չկան, որ մենք լինենք...

Ջրկված կամ փրկված

Մեզ զրկում են մեր երազանքներից ու մեր տարիներով փայփայած երազանքների վրա աջ ու ձախ կողմից քարեր են նետում: Մեկ քար... Երկու քար... Երեք... Չորս... Էլի ու էլի: Ամեն անգամ ավելի մեծ քար, ավելի ցավոտ ու անանց: Բայց, չէ՛, մեզ չեն զրկում մեր երազանքներից, այլ մեր երազանքներին՝ մեզմից: Ու մեր որբ ու անտեր մնացած երազանքներին կորդեգրի՞ ինչ-որ մեկն արդյոք:

Գուցե... Ու ինչպես ծնողն է ցավով տեսնում, թե ինչպես է իր զավակը մեկ ուրիշին մայր կամ հայր կոչում, այնպես էլ մենք կտեսնենք մեր երազանքները իրականացնողներին, ու մի խորը կսկիծ կպատի մեր հոգուն:

Մարդիկ կոտրելու սովորություն ու մեծ ներուժ ունեն... կկոտրեն ամենն ու ամենքին, առաջին իսկ հանդիպածին՝ երբեմն նույնիսկ չգիտակցելով իրենց կոտրելու թողած հետևանքները: Ու որոշներն էլ մի ամուր սոսինձ կվերցնեն ու բոլոր փշուրները հավաքել կցանկանան, արդյունքում իրենք էլ հաստատ կարյունոտվեն... Բայց կոտրված ոչ մի բան անհետք չի մնում, ամեն մեխ հանելուց հետո անգամ իր հետքն է թողնում, այդպիսին են նաև մարդկանց նետած քարերը:

Անկասկած, կոտրված որոշ բեկորներ հատակին կմնան, ու ամեն անգամ քայլելիս կցավեցնեն ոտքդ, կստիպեն ախ քաշել, մի պահ դադար առնել ու ցավդ զգալ: Իսկ դրա համար մի նոր, բարձր կոշիկ պիտի գնես, որ ազատվես ցավից էլ, հուշերից էլ...

Մնաս բարովի արվեստը

Հրաժեշտները միշտ էլ ցավոտ են, լինեն ժամանակավոր թե ընդմիշտ: Որ կողմից ուզում ես նայիր, ինչպես ուզում ես շուտ տուր, ամեն մի հրաժեշտ քեզնից մի բան պոկում, տանում է, ներսունդ մի դատարկություն է գոյանում, որի չափերը որքան էլ փոքր լինեն, միևնույնն է, իրեն զգացնել է տալիս և ցավ պատճառում:

Օրագիրը, որը Ձեզ հիմա կներկայացնեմ, հրաժեշտի մասին մի փոքրիկ հուշագրություն է և ուրիշ գուցե ոչինչ... Ահա այն:

Վերջին անգամ հետ նայեց, ոչինչ չասող հայացքը հառեց աչքերիս, դեմքին մի անհիմանալի ժպիտ նկարեց և գնաց... Այդ վերջին ժպիտն էլ երևի ողորմություն թողեց առ այն, որ միշտ խնդրում էի՝ հաճախ ժպտա, գիտեր, որ իր այտերի փոսիկները ինձ խենթացնում են: Ժպտաց, որ ողջ կյանքում այդ ժպիտը իր կողմից իբրև մի սուրբ հիշատակ պահեմ իմ սրտում:

Սա անհրաժեշտ հրաժեշտ էր: Մի սառը, անտարբեր հաջողություն էր՝ գուրկ մարդկային բոլոր տեսակի զգացմունքներից: Եվ թե ինձ հարցնեին, թե ինչ կուզեի հետ բերել այդ օրվանից ներկա, ես երևի թե միայն այն պիջակա հետ կբերեի, որն այսօր շատ ավելի նորածն է, բայց ես դեմ նետեցի այն:

Իսկ եթե անկեղծ... Գրողը տանի, այսպիսի հրաժեշտներն ամենացավոտն են, երբ գիտակցում ես, որ այն լավագույն տարբերակն է երկուսիդ համար էլ, բայց սիրտդ ուզում է դուրս թռչել ներսիցդ, ցանկանում ես վազել և ընկնել նրա գիրկը, խնդրել, որ չհեռանա: Իսկ որտե՞ղ է արժանապատվությունը, հպարտությունը: Ո՛չ, գնացողների հետևից չեն վազում, չեն խնդրում նրանց վերադարձը և ոչ էլ մուրում են նրանց ներկայությունը:

Ես չգիտեմ՝ այդ օրը աշխարհում ով և ում է կորցրել կամ գտել, բայց ես վստահեցնում եմ ձեզ՝ կորցրի կարևոր մեկին և գտա մեկ ուրիշ կարևորին: Ես կորցրի նրան, այո՛, կորցրի, չէ՞ որ մենք միշտ էլ հակված ենք կորցնելուն, կարծես կորցնելն էլ է նորածն դարձել, և դա մարդկային ողբերգություն է, ուրիշ ոչինչ: Բայց նրան կորցնելուց հետո ես գտա ավելի վստահելի մեկին, ես

ինձ գտա: Չգիտեմ՝ գտածս արժե կորցրածիս թե ոչ, բայց երբ քեզնից հեռանում են, դու շատ ավելի պետք է կարևորես անձո: Եթե մի օր էլ հանկարծ վերադառնան, կտեսնեն, որ կարողացել ես դիմակայել իրենց հրաժեշտի ցավին, կարողացել ես մոռանալ այն կիսահեզման, ապտակելու աստիճան ազդեցիկ ժպիտը: Եվ ոչինչ, որ դու երկար ժամանակ բարձիղ չորանալու ժամանակ չես տվել, ոչինչ, որ մինչ օրս էլ հոգուդ խորքում պատրաստ ես նրան կրկին ընդունել, ներել, սիրել... Իսկ գիտե՞ս՝ երբ կգան հեռացողները. այն ժամանակ, երբ կիմանան, որ կարողանում ես ապրել առանց իրենց, այն ժամանակ, երբ կհասկանան, որ գուցե քեզ պես շատերը կան, բայց քեզանից էլ չկա, ու քեզ փոխարինողները չեն արդարեցնի իրենց դերը:

Հիմա, երբ ինքնաթիռով վերադառնում եմ մեր կիսատ թողած պատմության քաղաք, առաջնահերթ ինձ են համարում հեռացող, մինչդեռ ես չեմ լքել ոչ ոքի, ոչ ոքի ցավ չեմ պատճառել իմ ժամանակավոր հեռացումով, ես պարզապես իմ նոր ես-ի որոնումները ուրիշ հողի վրա էի ցանկանում իրականացնել: Բայց մենք միշտ էլ վերադառնում ենք, միշտ վերադառնում ենք այն կետին, որտեղ ավարտել էինք ժամանակին: Դե երկրագունդը կլոր է, չէ՞, իզուր չէ ասված: Ես երկրագնդի պտույտին ծանոթ չեմ, բայց քո պտտման համակարգն անգիր գիտեմ: Գիտեմ, որ ուր որ է տեսնելու եմ քեզ, և հոգեպես պատրաստ եմ դեմքիս հեզմանակա ժպիտ հագնելուն, այժմ իմ հերթն է: Այո՛, վերադառնում եմ մեզնից գնացողների գոնե մի մասը, բայց նրանցից միայն ընտրյալներն են ներվում, ախր իրենց գնալուց մեր մեջ այնքան մեծ դատարկություն են թողել, որ ինքնընտանիքային այդ դատարկությունը անտարբերության ջրերով է լցվել: Ինքնաթիռը վայրէջք կատարեց: Վերադարձա: Անհագորեն շնչում էի օդը, այնպիսի տպավորություն էր, որ առաջին կամ վերջին անգամ էի այստեղ և եկել էի մի անծանոթ, բայց և անենահարազատ էակի մոտ: Մի երիտասարդի ժպիտ ինձ հեռացրել էր այդ հարազատից, հեռացրել էր իմ հող ու ջրից: Բայց... ես վերա-

դարձա: Շնչառական համակարգս լարված օդը ներծծում էր իր մեջ, մի ծանոթ բույր էի զգում, այն ամենասիրելին, ամենահաճելին. նրա օծանելիքի բույրն էր... Գլուխս կոցրած չորս կողմս էի նայում, ես նրան էի փնտրում, հասկանո՞ւմ եք: Բայց նա չկար, չկար, չկար: Գրողը տանի, սերը չի մարում, ինչ էլ, որ անես: Նա այստեղ չէր, այդ բույրն էլ ուղղակի խաբեություն էր, ինքնախաբեություն: Չգիտեմ՝ ուրախանա՞մ, որ նա այստեղ չէր, թե՞ տխրեմ, որ օտար հողն էլ ինձ չօգնեց մոռանալ նրան, իմ ոչ մի օրը առանց նրա, առանց մեր հուշերի չանցավ, կարծես գիտակցված ինքնապանություն էի գործում, ինքս ինձ դատապարտում էի տանջանքների, ախր հենց սկզբից պետք է հասկանայի, որ սերը միայն այն քաղցր հորինված հեքիաթը չէ, որտեղ արքայազնը փրկում է աղջնակին, և նրանք հավերժ ապրում են միասին և երջանիկ: Իրական կյանքում սերը երբեք քեզ մենակ չէ հյուր գալիս, նա իր անբաժանալի ընկերներն ունի՝ ցավ, կարոտ, հիասթափություն, անքուն գիշերներ, սպասում... Ես նույնացրել էի սերս ու հայրենիքս: Երկուսից էլ հեռացել էի, երկուսից էլ հիասթափված էի: Սիրո կորուստը ինձ ստիպեց ատել իմ սիրելի քաղաքի այն փողոցները, որտեղ մի ժամանակ քայլել եմ նրա ձեռքը բռնած, ամեն փողոց, ամեն ծառ, ամեն արձան, ամեն մի փոքր և ուրիշների կողմից անուշաղբության մատնված բան մեր թվացյալ սիրո լուռ վկաներն էին դարձել, ամեն ինչ նրան էր հիշեցնում, և իմ այդտեղ մնալն արդեն անկարելի էր: Հիմա ես կրկին այստեղ եմ, ահա այն փողոցը, որտեղ առաջին անգամ գրկեց ինձ, այն այգին, որտեղ առաջին անգամ ինձ սեր խոստովանեց: Այս ծառին էլ մենք մի անգամ մեր անվան առաջին տառերն ենք գումարել՝ չմոռանալով վերջում մեր սերն ու միությունը հաստատող մի սրտիկ նկարել: Այն ժամանակ ծառի վրա մեր սիրո բանաձևը գրելուց հետո մեր ձեռքերը միասին նրա վրա դրեցինք, այդ ժամ մեզ համար այդ ծառը, մեր անվան առաջին տառերը, այդ մի փոքրիկ սրտիկը աշխարհում ամենակարևորն էին, ամենագեղեցիկն ու ամենաարժեքավորը:

Հիմա ձեռքս միայնակ եմ դնում մեր գլուխգործոցի վրա, իսկ մյուս ձեռքիս առաքելությունն էլ այտերիս առաջացած հոսող աղբյուրը դադարեցնելն էր: Սիրտս անորոշ հուզմունքով թրթռում էր, ծառի վրա գտնվող ձեռքս էլ սկսեց դողալ, միանգամից հետ շրջվեցի և գլխակորույս վազեցի անհայտ ուղղությամբ: Կարևոր չէ՝ ուր: Միայն թե հեռու այն ամենից, ինչը ինձ հիշեցնում էր նրան, ինչը սրտումս հիմ կրակն էր բորբոքում: Երևի մեկ ուրիշ սիրահար գույգ, նույն անվան առաջին տառերն ունեցող, եկած կլինի այս ծառի մոտ, ուրախացած կլինի, որ իրենց անվան առաջին տառերն են գրված, երանի, թե իրենք էլ իրենց ձեռքերը չդնեն մեր գրածի վրա, այն կիսատ թողած պատմության մի պատառիկ է, և պետք չէ, որ նրանց սերն էլ մեր սիրո նման կորստյան դատապարտվի: Թող իրենց համար նորը գրեն, նորը ստեղծեն, և այլևս ոչ մեկ ինձ պես միայնակ չկանգնի իր նախկին սիրո ապացույցի առջև: Աշխարհին նոր, մաքուր, հաղթանակած սեր է հարկավոր, իսկ սիրո համար էլ՝ մի փոքր մարդկայություն, անկեղծություն և սիրելու կարողություն: Բոլորը չէ, որ կարող են սիրել, բայց սիրվելու պահանջ բոլորն ունեն: Ես սիրեցի, սիրեցի այնպես, ինչպես ֆիլմերում սիրում են գլխավոր հերոսուհիները, բայց մեր պատմությունը ֆիլմերի նման բարի ավարտ չունեցավ, կամ գուցե բարին հենց սա էր: Հանգիստ ապրելու լավագույն միջոցը կյանքումդ կատարված ամեն ինչ բնական և նույնիսկ անհրաժեշտ համարելն է: Եթե այսպես եղավ, ուրեմն հենց սա էր ամենաճիշտ տարբերակը:

Որքա՜ն կարոտ կա հոգումս... Կարոտը սիրո ամենագեղեցիկ դրսևորումն է, առանց կարոտի սեր լինել չի կարող, առանց սիրո էլ՝ կարոտ: Գուցե հենց կարոտն է ինձ հետ բերել, հենց կարոտն է հիմա ինձ ստիպում խելագարի նման չափփակ բոլոր այն փողոցները, որտեղ անցել ենք միասին՝ հույս ունենալով, որ գուցե շատ պատահական էլի կհանդիպեմ նրան: Տարիներ են անցել, երևի փոխված կլինի, արդեն ավելի հասուն, հավասարակշռված: Երևի արդեն մեր միասին կազմած պլանները իրականացրել է ուրիշի

հետ, դե այդքան երազանք հո կիսատ չէ՞ր մնա: Երջանիկ՝ առանց ինձ:

Նա վերջին հանդիպման ժամանակ էլ չէր ուզում ինձ ցավեցնել, բայց դա անհնար էր: Ասաց, որ իր սերը մարել է, բայց իսկապես սիրել է ինձ, ասաց, որ շնորհակալ է մեր լավ օրերի համար, բայց արդեն ուրիշը կա իր կյանքում: Ես ոչինչ չասացի, անկարող էի, հավատացե՛ք: Բայց աչքերս ինչպե՞ս լռեին: Ես ընդունեցի այն փաստը, որ նրա կյանքում ուրիշը կա, որ ինձ այլևս չի սիրում, թերևս այլևս-ը անիմաստ է: Սերը չի ավարտվում: Իսկ եթե ավարտվում է, ուրեմն չի էլ սկսվել, ուղղակի հետաքրքիր եմ եղել, այդքանը միայն:

Անցել են տարիներ, և արդեն այս հարազատ քաղաքի երկնքի տակ մեր սերը տեղ չունի: Ների՛ր, սիրելի՛ս, ի՞նչ «մեր սեր», ի՞նչ բան, այդ սերը իմն էր միայն և իմն է նաև այսօր, հենց հիմա:

Բայց դու իմ սիրո բանաձևին ծանոթ չես, ինչպես հասկացա: Դու այդպես էլ չիմացար, որ ես քո աչքերի մեջ ողջ տիեզերքն էի տեսնում ու սիրում, չիմացար, որ քո գրկի ջերմությամբ էի աշխարհի եղանակներն ընկալում, քո ժպիտի գերին լինելով էի աշխարհում միայն բարին նկատում, միայն բարին ու գեղեցիկը: Չէ՛, դու չիմացար: Չուզեցիր իմանալ:

Վերադառնալուցս երկար ժամանակ անցավ, բայց ես կարոտս չառա իմ քաղաքից, գուցե քաղաքս հիմա նաև քո կարոտն էր իր մեջ ամփոփել, իսկ ես ինչ-որ կերպ այն պետք է լրացնեի: Ոտքի տակ էի տալիս քաղաքի բոլոր անկյունները, բոլոր հիշյալ ու անհիշելի թաղամասերը, ուշադիր նայում էի բոլոր դեմքերին ու քեզ փնտրում: Եվ այդ ժամանակ ես այդքան պարզ զգացի իմ կամքի թուլությունն ու իմ սիրո ուժը: Ա՛խ, այդ անիծյալ սերս փոխադարձ լիներ, և ես այդ ուժով միայն կկարողանայի հպարտանալ, աշխարհի երջանիկը լինել: Բայց հիմա այդ ուժը տապալում է ինձ և իմ ինքնությունը:

Քայլում էի փողոցում և մի փոքրիկ աղջնակ տեսա, իհարկե, այս օրերի ընթացքում ինձ շատ երեխաներ են հանդիպել, բայց այս աղջնակի աչքերը դեռ հեռվից նկատեցի ու քարացած կանգնեցի: Որքա՛ն անհոգ էր, երջանիկ, այս ու այն կողմ էր վազում, երբ ինձ նկատեց, չգիտեմ՝ ինչու, կամաց քայլերով մոտեցավ ինձ: Նայում էր աչքերիս ու իր հրաշամանուկի չքնաղ աչուկներով մոռացնել տալիս ողջ ցավս: Ձեռքով դիպավ իմ ձեռքին և երեխային բնորոշ քաղցրությամբ ասաց.

–Քույրիկ, դու ինչո՞ւ ես տխուր: Նայի՛ր՝ ինչ սիրուն ծաղիկներ են:

Ժպտացի... Ժպտացի անկեղծ ու երևի այսքան ժամանակ այսպես անկեղծ չէի ժպտացել:

–Արփի՛, ո՞ր գնացիր, արի՛,տուն ենք գնում:

Արփի... Իմ անունն ուներ այս հրաշալիքը: Հայացքս ուղղեցի ձայնի ուղղությամբ: Նա էր... Իր սիրուն ընտանիքը... Այդ աչքերը... Արփի...

Երևի իրեն մեղավոր չզգալու համար է անունս դրել:

Հրաժեշտներ կան, որ անհրաժեշտ են, օղի պես պետք, երևի ամեն հրաժեշտի մեջ էլ մի լուսավոր բան կա, բայց հրաժեշտների պատճառած ցավն այնքան մեծ է լինում, որ մենք որևէ լուսավոր բան նկատել չենք կարողանում: Ես մեր հրաժեշտի մեջ գտա այդ լուսավորը... Այն հրաշք Արփին՝ իր աչքերով: Մա իմ գտած արդարացումն է կամ փախուստը ցավից: Պետք է կարողանանք գիտակցել, որ ամեն մարդու երջանկություն մի տեղ է թաքնված, նա իմ մեջ չգտավ այն, և նա էլ մեղավոր չէ: Միակը մեղավորը իմ սերն է և այս օրագիրը: Բայց սերը մեղավոր լինո՞ւմ է...

፪፱፱፫



Լաուրա Սեկոյան

Ծնվել է 2001 թ. մայիսի 11-ին Կոտայքի մարզի Սողակ գյուղում: Մանկության 4 տարիներն ապրել է ՌԴ Սանկտ Պետերբուրգ քաղաքում: 2008-2020 թթ. սովորել է Սողակ գյուղի միջնակարգ դպրոցում: 2016 թվականից «17.am» կայքի թղթակից է: Մասնակցել է «Մանանա» կենտրոնի մեդիադասերին և Սևանում անցկացվող մեդիաճամբարին: Բացի «17.am» կայքից՝ լավագույն հոդվածները տպագրվել են նաև «Խարաբբզիկ» ամսագրում: 2017 թ. հոկտեմբերին և 2018 թ. մարտին նյութերը կայքի կողմից առաջարկվել են ընթերցողներին՝ որպես գյուղական կուլտուրա լավագույնս ներկայացնող նյութեր: 2020 թ. սեպտեմբերից սովորում է ԵՊՀ-ի արևելագիտության ֆակուլտետի «Արաբագիտություն» բաժնում: ԵՊՀ Շառլ Ազնավուրի անվան մշակույթի կենտրոնի սան է: Երգում է կենտրոնի երգչախմբում և «YSU band»-ում: 2022 թ. մայիսից որպես լրագրող ու թղթակից աշխատում է «TV ալիք» թերթում: Հոդվածների մի մասը տպագրվում է թերթի հարցազրույցների, մյուս մասը՝ «Շավիղ+» երիտասարդական խմբագրության բաժնում:

«Անկախության սերնդի ձայնը» երիտասարդ ստեղծագործողների հանրապետական ուսանողական բիենալեի գրականության մրցույթի «Էսսե» անվանակարգում զբաղեցրել է առաջին պատվավոր հորիզոնականը:

ՃԱՄՊՐՈՒԿԱՅԻՆ ՏՐԱՄԱԿՐՈՒԹՅՈՒՆ

Մենք տրամադրությունը վերագրում ենք երկրագնդիս վրա բանականությանը օժտված միակ էակին՝ մարդուն: Բայց տրամադրության մեխանիկան այլ բան է թելադրում: Մեզ շրջապատող ամեն բան ենթարկվում է կյանքի տրամադրությանը. շնչավորից անշունչ, կենդանիից անկենդան հպատակվում են այդ տրամադրությանը՝ անկախ իրենց ցանկությունից ու ակնկալիքներից: Սա նույնն է, ինչ ֆիզիկայի օրենքների դեպքում: Ֆիզիկայում գոյություն ունեցող ուժերը անմիջականորեն ազդում են մարդկանց, իրերի, մոլորակների և ընդհանրապես այն ամենի վրա, ինչի վրա հնարավոր է ազդել: Տրամադրության մեխանիկայում ևս նույն տրամաբանությունն է գործում: Այս պարագայում ամեն ինչի վրա ազդող տրամադրությունը կյանքի ճամպրուկային տրամադրությունն է: Այս տրամադրությունը ամենաստաբիլն է, ամենաառական, ամենագոն:

Եթե փիլիսոփայության մեջ լուցկու լույսը կրակի մի դրսևորում է, ապա մեզ հայտնի մնացյալ բոլոր տրամադրությունները ճամպրուկային տրամադրության դրսևորումներ են: Այն ինչ-որ չափով ընդհանրություններ ունի անցողիկության հետ, բայց անցողիկ են այն հայացքները, որոնց ամեն անգամ բախվում ենք փողոցում կամ լուսացույցի կանաչ լույսին սպասելիս դիմացի մայթին կանգնած մի մոլորյալի հայացքին ենք հպվում: Տրամադրությունը ակնթարթ չէ. և՛ շոշափելի է և՛ շոշափելի չէ, և՛ տարածական է, և՛ տարածական չէ: Տրամադրությունը ակնթարթի պես ոչ թե մի, այլ գոնե մի քանի վայրկյանանոց գոյություն ունի: Եվ եթե ակնթարթը անբացատրելի ու աննկարագրելի է, ապա ճամպրուկային տրամադրությունը ինչ-որ առումով օրինաչափ է, ըմբռնելի և գուցե նաև ուսուցանելի է, ո՞վ գիտի...:

...Երանի այնքանով է ուսուցանելի, որ փոքր երեխային կարելի է բացատրել, թե ինչպես է պատահում, որ մուլտֆիլմը

ավարտվում է, կամ որ մանկապարտեզը կարելի է ավարտել: Եվ միայն այնժամ, երբ անգիտակից կյանքը ճամպրուկներն հավաքած կհեռանա իր կյանքից՝ տեղը զիջելով հաստափոք ճամպրուկով գիտակից կյանքին, այդժամ էլ կհասկանա, որ մուլտֆիլմն ու մանկապարտեզը իրեն այցի էին եկել ճամպրուկային տրամադրությամբ:

Օրինաչափ է այնքանով, որքանով որ տարվա չորս եղանակների հերթափոխը կամ սառույց-ջուր-գոլորշի հերթափոխը:

Եվ, ի վերջո, ըմբռնելի է, ինչպես այն ճշմարտությունը, որ մեր կորցրած ամեն մի 24 ժամը այլևս հետ բերել չենք կարող, կամ որ աշխատանքի ընդունվելուց հետո մի օր դուրս ենք գալու այդ աշխատանքից:

Բայց որոշ չափով էլ անհասկանալի, անբացատրելի ու անցանկալի է այս տրամադրությունը. անբացատրելի, թե ինչու սպիացած վերքերի հետքերը չեն վերանում, անհասկանալի, թե ինչպես կարելի է զգալ անշոշափելի, անտարածական ու անտեսանելի զգացմունքը՝ սերը, և ինչպես է, որ սիրո դրսևորումներից միայն մայրական սերը ճամպրուկային տրամադրություն չունի: Եվ այնքա՛ն-այնքա՛ն անցանկալի, անբացատրելի ու անհասկանալի է, որքան մահը, որքան այն հիշողությունը, որ մեծ ցանկության դեպքում չես կարողանում ջնջել, որքան չես կարող կանգնեցնել ծերության գալուստը դեպի կյանք:

Ի վերջո, բոլորս աշխարհ ենք գալիս այդ տրամադրությամբ, մեկը՝ փոքր ճամպրուկով, մեկը՝ միջին, մեկը՝ մի քանի, մյուսն էլ ազահի պես մի քանի ճամպրուկի հետ մի հատ էլ փոքր ձեռքի պայուսակ է իր հետ վերցնում:

Եվ, այո՛, բոլորս էլ կյանքի ճամպրուկային տրամադրության վասալներն ենք:

Տվել է կյանքը մեզ մեր «ճիտին պարտքը»՝ մեր հոգսերի, ուրախությունների, կարոտի ու սպասման ճամպրուկը, ու ասել՝ կրի՛ր:

Ու մենք ապրում ենք հենց այդ ճամպրուկային տրամադրությունը ու վստահ, որ կյանքի պարզևած այդ ճամպրուկը երբեք չի դատարկվի: Ճամպրուկային տրամադրությունը փիլիսոփայական¹ է, արքի²ոճա է՝ չեն կարող ասել: Կարևորն այն է, որ ես գտել, հայտնագործել եմ այն:

Գիտեմ՝ այս կարգի լավ, պիտանի ու մշտագո հայտնագործությունների համար մրցանակ են տալիս, բայց այսօր չեն ուզում. տրամադրություն չունեմ:



Վալտեր Բեբերյան

Ծնվել է 1998 թ. ապրիլի 8-ին Երևանում: Սովորել է ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետում: 2019-2021 թթ. ուսումնառությունը շարունակել է մագիստրատուրայում՝ «Ժամանակակից հայոց լեզու և թարգմանչական գործ», 2019-2022 թթ.՝ «Կրթության կազմակերպում» մասնագիտությամբ, 2021 թվականից սովորում է ասպիրանտուրայում, 2020 թ.՝ «The Anticorruption School of Transparency International Anticorruption Center»-ում, 2021 թ.՝ «The Armenian Institute of International and Security Affairs, Centre for Policy Studies, Institute of Liberal Politicus»-ում: 2021 թ. Վրաստանում մասնակցել է «Environmental Science Education for Sustainable Human Health», իսկ 2022 թ.՝ Ռումինիայում «Overcoming Prejudice (OP)» «Erasmus+» շարժունության ծրագրերին:

Արժանացել է տարբեր պարգևների ու մրցանակների ԵՊՀ օլիմպիադայում, «Մեղու», «Լավագույն գրաբարագետ», «Լավագույն ուսանող», «100 գաղափար Հայաստանի համար», «Հոդվածների մրցույթ 2» (Restart Gyumri - Initiative Centre NGO) մրցույթներում և այլն:

«Անկախության սերնդի ձայնը» երիտասարդ ստեղծագործողների հանրապետական ուսանողական բիենալեի գրականության մրցույթի «Էսսե» անվանակարգում արժանացել է խրախուսական մրցանակի:

ԿՅԱՆՔԸ 2020-ԻՆ

Օ՛, սպասման հիվանդ...

Անվերջ սպասում են այն օրվան, երբ լրահուր թերթելիս այլևս չեն տեսնի այն մահագույժ թվերը, որոնք արտացոլում են վնասված ներկա աշխարհի ցավերն ու մտահոգությունները, անմխիթար տառապանքները: Մարդն այսօր կանգնած է աշխարհի կենտրոնում և ահեղագոչ ճշում է. «Ապրե՛լ են ուզում»: Չայները լսելի են ամենուր, բայց գուցե նրանցից շատերը մատնված են պատասխան լռության, մենության...: Հայտնի թագավարակի անխնա տարածումը, ինչ խոսք, տխրեցրեց յուրաքանչյուրիս: Մշուշապատ, անողոք իրականությունը ստիպեց բոլորիս փակվել տներում՝ կիսատ թողնելով մնացած մեր գործերը, մեկին (գուցե ամենասիրելիին) առերեսվելու ցանկությունը, իբրև փրկություն՝ գրկելու, վերջին խոսք ասելու հնարավորությունը...: Մահախուճապ հուսալքությունը պատեց ամենքիս, մեկ օրում այլափոխվեց ամբողջ աշխարհի սոցիալ-հասարակական ու տնտեսական կյանքը: Եվ հենց այս պահին աշխարհը կարծես վարակվում է երկու հակադիր երևույթներով՝ հիվանդությամբ ու մարդասիրությամբ, որոնց իրարամերժ կռիվն անջնջելի կնիքով է հավերժանալու պատմության մեջ: Ասում են՝ աշխարհը գիրք է, որի էջերը մեր առջև բացվում են ամեն քայլափոխի, և մարդն անգոր է այս առումով: Երբեք չպետք է ընկճվել. չեն լինում գործեր առանց դժվարությունների, և չկա մշուշ, որից որևէ ելք չլինի: Կարևորը համբերությունն է, նաև առաջ շարժվելը: Ժամանակն այնպիսի իմաստուն երևույթ է, որ կորցրած ամեն մի առերեսում, ամեն մի գրկախառնություն, ամեն մի համբույր իր տեղը կզգի:

Թագավարակից անդին մարդիկ են, որոնք շարունակում են գործել և պատրաստ են յուրովսանն ընձեռել իրենց հնարավորությունները: Այն մասին, թե այսօր ինչ իրավիճակում են աշխատում բուժաշխատողները, իսկապես, խոսքերով նկարագրելն անհնա-

րին է: Բժիշկների կողմից հումանիստական ամբարի ակնթարթային բացթողումը ևս մեկ անգամ ընդգծեց, որ նրանք իսկական առաքյալներ են, և այսօր հենց նրանք առաջիններն են, որոնք աներեր կանգնած են առաջնագծում՝ աննշմարելի ցնորքի դիմաց: Հավատարիմ մնալով մարդկային կյանքեր փրկելու առաքելությանը՝ բժիշկները շարունակում են անմնացորդ նվիրումով աշխատել: Երախտապարտ են բուժաշխատողներին, այն մարդկանց, որոնք կարծես մոռացել են իրենց «ես»-ը, որոնք լուռ են, անտրտունջ, բժշկական դիմակներով պարփակված՝ կարոտ են իրենց ընտանիքներին: Այսօր չկա «իմ»-ն ու «քոն»-ը: Գուցե աշխարհը դարեր ի վեր հենց սա է մեզ ավետել, բայց անհաղորդ ենք եղել տարածաժամանակային այս կոչին, և գուցե հենց դա հանգեցրեց այս մղձավանջին: Այսօր արդեն պայքարի ենք դուրս եկել բոլորս՝ բժիշկների առաջնորդությամբ: Նպատակը հետևյալն է՝ ունենալ հնարավորինս քիչ կորուստներ ու մահվան ելքեր: Ես վստահ եմ, որ նպատակասլաց այս ուղին արգասաբեր կլինի: Յուրաքանչյուրիս օրն սկսվում ու ավարտվում է աղոթքով, աղոթք՝ առ Աստված, առ տիեզերք: Վստահում ենք ձեզ, մեր գիտակ բուժաշխատողներ: Թող ձեզ հասնեն մեր սրտի զարկերը ու ձայնի թրթիռները: Իմացե՛ք, որ մենք ձեր կողքին ամուր կանգնած ենք և աջակից ենք ձեզ այս դժվարին ժամանակներում: Զգացե՛ք յուրաքանչյուրիս ներկայությունը ձեր կողքին, քանզի ասավասիկ թռչի՝ քի են դուրս եկել յուրաքանչյուրիս հավատն ու հույսը: Ամո՛ր եղեք և հավատացե՛ք համազգային ամոքիչ այն լույսին, որը շատ շուտով ճառագելու է ամենուր:



Մերի Գևորգյան

Ծնվել է 2002 թ. հոկտեմբերի 14-ին Տավուշի մարզի Դիլիջան քաղաքում: Սովորել է տեղի թիվ 2 հիմնական, այնուհետև՝ ավագ դպրոցում: 2018 թ. ավարտել է Դիլիջանի արվեստի պետական քոլեջի ժողգործիքների քանոնի բաժինը: Ներկայումս ուսումնառությունը շարունակում է ԵՊՀ ժուռնալիստիկայի ֆակուլտետի առաջին կուրսում: 17 տարեկանից զբաղվում է լրագրությամբ, գրում է հոդվածներ, որոնք հրապարակվում են տարբեր կայքերում, ինչպես՝ «HayZinvor.am», «17.am, Dilijan Daily», «JourNews.am» և այլն:

«Անկախության սերնդի ձայնը» երիտասարդ ստեղծագործողների հանրապետական ուսանողական բիենալեի գրականության մրցույթի «Էսսե» անվանակարգում արժանացել է խրախուսական մրցանակի:

*Ամեն մի բռնություն մռայլ
Ու վանող է և վկայում է ոչ
Թե ուժի, այլ նաև*

Բացակայության մասին:

Էմերսոն

ՀՀ ՁԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ ԱՌԿԱ ԽՆԳԻՐՆԵՐԻ ԵՎ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Յուրաքանչյուր քաղաքացի, ըստ ՀՀ Սահմանադրության 14-րդ հոդվածի 3-րդ մասի, պարտավոր է օրենքով սահմանված կարգով մասնակցել ՀՀ պաշտպանությանը:

Հայաստանի Հանրապետությունում պարտադիր զինվորական ծառայության են անցնում 18 տարին լրացած արական սեռի ներկայացուցիչները: Արական ու իգական սեռի քաղաքացիները, սկսած պատանեկության տարիներից, ձեռք են բերում տարատեսակ պատկերացումներ բանակի, բանակային կյանքի մասին:

- Բանակը փակ համակարգ է, սակայն դրա խնդիրների մի մասը բանակային կյանք են տեղափոխվում քաղաքացիական կյանքից. բանակում առկա մի շարք բացասական երևույթներ արտացոլում են հասարակության մեջ առկա կարծրատիպերը: Այս խնդիրներն ու բացասական երևույթները հասկանալու համար անհրաժեշտ է ուսումնասիրել և հաշվի առնել նախագորակոչային տարիքում գտնվող պատանիների մտածելակերպը. «Եթե տեսնեմ, որ ընկերոջս նեղացնում են, չեմ խփի, չեմ ջարդի, կխոսեմ, կբացատրեմ, որ սխալ ա, որ մենք սաղովի ստեղ ախպերներ ենք, իրար հետ պետք ա պոստ պահենք, իրար նեղացնելով կամ իրար փշրելով՝ էլ ի՞նչ միասնական բանակ կունենանք»:

«Ամեն տեղ արդարություն կհաստատեն, բայց կոնկրետ չեմ կարա ասեմ, թե ինչ կանեն, պետք ա ծառայեմ՝ ջոգեմ»:

Սեպտեմբերի 27-ից մինչև նոյեմբերի 10-ը տեղի ունեցած 44-օրյա ինտենսիվ մարտական գործողությունների ընթացքում եղան զոհերի ու վայրագությունների մասին նշանակալի հաղորդումներ բոլոր կողմերից:

Հուլիսի 12-16-ը զոհերի հանգեցրած բախումներ տեղի ունեցան նաև Հայաստանի ու Ադրբեջանի միջազգային սահմանին՝ Տավուշի մոտ: Սեպտեմբերի 27-ի ռազմական գործողությունների սկսվելուն պես կառավարությունը հաստատեց ռազմական դրություն, ըստ որի՝ սահմանափակումներ կիրառվեցին ազատ արտահայտման, հանրահավաքներ անցկացնելու ու ազատ տեղաշարժի իրավունքների նկատմամբ: Սահմանափակումները հանվեցին դեկտեմբերի 2-ին, իսկ տարեվերջի դրությամբ գործում էր միայն գորքերի մասնակի մոբիլիզացման պահանջը:

Մարդու իրավունքների հետ կապված առավել նշանակալի խնդիրները ներառել են խոշտանգումներ, ապօրինի սպանություններ, քաղաքացիական զոհեր, կամայական կալանքներ, ծանր ու կյանքի համար վտանգավոր բանտային պայմաններ:

Ցանկացած տիպի բռնություն հոգեբանական (հոգեկան) բռնություն է:

Բռնությունը կարող է կրել անհատական կամ կոլեկտիվ բնույթ և մշտապես ուղղված է ինչ-որ մեկին ֆիզիկական, հոգեբանական, բարոյական կամ այլ տիպի վնաս հասցնելուն: Բռնի կամ ազդեցիվ վարքը հանցավոր է դառնում միայն այն դեպքում, երբ այդ գերծողություններն օրենքով մեղադրվում են: Հետևաբար միշտ չէ, որ բռնությունն օրենքով պատժելի է:

Հոգեբանական բռնությունը անհետ չի կարող անցնել, այն, որպես կանոն, մարդու հոգում «վերք» է թողնում:

Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ ՀԿ-ն (ՀՔԱՎ) հայտնում էր, որ բանակում կատարված ինքնասպանությունների մասին հաղորդումների թիվը տարվա առաջին կեսին 2019 թվականի համեմատ կրկնապատկվել է:

Հունվարի 30-ին ենթադրաբար ինքնասպանություն գործած գորակոչիկ Վահրամ Ավագյանի ընտանիքի անդամներն ու ծանոթները փորձեցին փետրվարի 2-ին նրա դիակը բերել Երևան և փակեցին Երևան–Արմավիր ճանապարհը՝ բողոքելով քննչական մարմնի այն հայտարարության դեմ, որ Ավագյանի մահը եղել է ինքնասպանություն: Ազգականները գյուղ վերադարձան թաղում կատարելու միայն այն բանից հետո, երբ այն ժամանակվա պաշտպանության նախարար Դավիթ Տոնոյանը հավաստիացրեց, որ տեղի կունենա պատշաճ քննություն, և մեղավորները կպատժվեն: Նույն օրը Քննչական կոմիտեն ծանր հետևանքների հանգեցրած կանոնակարգային խախտումների համար ձերբակալեց Ավագյանի երեք ծառայակիցներին՝ Դավիթ Մովսիսյանին, Խաչիկ Գասպարյանին, Մպարտակ Ավետիսյանին:

«Ես չեմ թողնի, որ իմ ծառայակից ընկերը ինքնասպան լինի, հետը կխոսես, կփորձես հասկանալ իրա հոգեբանությունը, հո չե՞մ թողի՝ գնա, կործանվի»:

Բանակ գորակոչվող տղաներին սպասում են միջավայրային կտրուկ փոփոխություններ: Փոխվում են մտածելակերպը, առօրյան, ուսուցման մեթոդները: Հարկ է նշել, որ ուսուցումը կարևոր դեր է խաղում զինված ուժերում, և այդ ամենին օգնում է «Նախնական զինվորական պատրաստություն» առարկան: Առարկան նախապատրաստում է պատանիներին ծառայությանը, բանակային կյանքին ու հիմունքներին:

«Ռազմագիտություն անցել եմ: Ձենք քանդել-հավաքել սովորել եմ, բայց դաս կարդալ չեմ սիրել. անիմաստ եմ համարել: Մեկ ա, բանակում ամեն ինչ էլ սովորում ենք: Մենակ մի բան չենք սովորել դպրոցում, թե հոգեբանական ճնշման ենթարկվածին ոնց հանենք վատ իրավիճակից: Սաղս էլ տեղեկացվում ենք, թե ինչքան ինքնասպանության դեպքեր են եղել բանակում, բայց դա, կարծում եմ, մենակ ծառայությունից չի գալիս, դա գալիս ա տնից, դպրոցից, սոցիալական վիճակից»:

Ապագա զինծառայողների համար առաջնային մտորումների առիթ չեն դառնում ծառայողական դժվարությունները: Սրա հիմնական պատճառը բանակային կյանքի վերաբերյալ ստացվող լուրերն են:

«Ընկերներս պատմել են իրենց ծառայությունից, բայց մինչև չծառայեմ, չեն կարա պատկերացում կազմել բանակի մասին»:

«Բանակը մեզ կոփում ա, բանակից հետո հասուն կյանք ենք մտնում: Ծառայելով տարբեր մտածելակերպ ունեցող տղերքի հետ՝ հասկանում ենք, որ մարդիկ շատ տարբեր են, ու մեր մոտեցումը իրանց նկատմամբ արդեն հասկանալի ա դառնում»:

«Բանակում մենք միավորվում ենք, դառնում ենք մի ընտանիք: Մեզ մոտ չի եղել ծեծելով կամ գոռալով հարց լուծել, իրար հասկացել ենք, իրար թև-թիկունքի ենք կանգնել: Մի անգամ հիշում եմ՝ շարայինի ժամանակ տղերքից մեկը ոչ տեղին բան ասեց, ու օֆիցերը սաղ վաշտին պատժեց, բայց հետո մենք չեն նեղացրել կամ վիրավորել էդ տղուն»:

Բանակային կյանքում բռնության հիմնական դրսևորումներն են վերբալ բռնությունը, ֆիզիկական բռնությունը և հալածանքը: Բանակային կյանքում առկա բարբերին վերաբերող խնդիրները հրատապ լուծման կարիք ունեն:

Անհրաժեշտ է իրականացնել վերապատրաստումներ, դասընթացներ՝ «Կյանքի իրավունք» թեմայով՝ միջազգային չափանիշներին համապատասխան, այդ թվում՝ ՉՈՒ հրամանատարների, ռազմական ոստիկանների, քննիչների, դատախազների, դատավորների, փաստաբանների ու քրեակատարողական ծառայությունների ծառայողների համար, ինչի արդյունքում կապահովվի «Կյանքի իրավունք» թեմայով տարբեր ոլորտներում իրականացված արարքների առնչությամբ տրվող իրավական աջակցությունը՝ և՛ պետական, և՛ մասնավոր մակարդակով:

ՄԵԿ ՊԱՅՔԱՐ, ՄԵԿ ՃԱԿԱՏԱԳԻՐ

Այս գիշեր չեմ ուզում ինձ մոտենան իմ հին ոսկե անուրջները, չեմ ուզում սլանալ գալիքի անհայտ ուղեծրերով: Այս գիշեր ես ուզում եմ հոգուս ձայնով խոսել միայն ձե՛զ հետ, հայտնի՝ ու անհայտ անուններ, տեսնել ձեր դեմքերը, լսել ձեր աղեկտուր ճիչն ու հառաչանքը, քայլել ձեզ հետ դեպի դժոխք ու կառափնարան և հարություն առնել ձեզ հետ: Անթիվ տապալված հերոսներ, դուք ընկաք մարտի ահեղ դաշտում սրով ու սրտով պայքարելիս:

Արցունքները չեն կարող արյունից սրբել այն մեծ գոհասեղանը, որ ճակատագիրը տվել է մեզ: Խոսքը չի կարող պատմել այն պատմությունը, որ եղավ ու անցավ:

Ձեր հիշատակը հրեղեն սյան պես կանգնած է մեր երթի քառուղում, և ինչքան մենք քայլում ենք, մեզ հետ քայլում է ձեր հիշատակի հրեղեն սյունը:

Ձեր ոգին դարձել է բոց և այրվում ու փողփողում է մեր հայրենի ակութներում:

Ձեր անունը դարձել է երդում մեր շուրթերի վրա:

Թող քամիները երբեք չավերեն և չծածկեն ձեր անունները:

Թող վառ մնա ձեր հոգու մշտնջենական կրակը մեր սրտերում:

Թող ձեզ վրա հավերժ սուսափեն հայրենի վարսաթափ ուռիները:

Հերոսներ, դուք ծնվել եք ճիշտ ժամանակին ու պատմության կոչով: Եվ դուք պատասխանատու եք ձեր ժամանակի համար և պատմության առաջ: Եթե չլինեի հայ ժողովրդի գլխին կուտակված ամպը, չէր շողա ձեր հարվածի ուժը:

Ժողովուրդը երգ ու գրույց է հորինում միայն իր հարազատ որդիների մասին, որպեսզի նրանք օրինակ դառնան լավի, ճշմարիտի, գեղեցկության, քաջության:

Ասում են՝ երջանկության պահերը չպետք է մռայլել տխուր անցյալի հուշերով: Սակայն հայ ժողովրդի նկատմամբ մոտեցումն ու չափանիշն այլ են: Պատմության խորթ զավակը (ինչպես կոչում էին հայ ժողովրդին), մեկ ոտքն անդունդի մեջ, դուրս եկավ, ապաքինվեց և սկսեց հերկել այն հողը, որ հազարամյակներ շարունակ եղել է իր պապերի համար գերեզման, իր համար՝ օրորոց: Բայց ահա, այդ հպարտ հայ ժողովուրդը սգում է իր նահատակների հիշատակը: Լավ է աչքով կույր լինել, քան մտքով՝ չտեսնելու համար այն իրականությունը, որ երեկ միայն տոսկալի երազ էր, իսկ այժմ՝ անողոք եղելություն:

Մարդ, հիրավի, ուզում է հայացքը սուզել բաց կապույտ երկնքի խորքը, տեսնել լույսերից ցնծացող գիշերները, մտնել հայ օջախները, համբուրել այն տատիկի ոսկրոտ ձեռքը, որը, բռնած իր որբերի դաստակը, փրկեց նրանց արհավիրքից, ապա՝ ընկել ոչ միայն սուրբ նահատակների ողորմաբասը, այլև ողջ հայ ժողովրդի կենաց բաժակը:

ԴԻԼԻՉԱՆ

Դիլիջանն ինքն ամեն բանից առաջ և ամեն բանից շատ անարատ ու չքնաղ բնություն է, որի մասին պետք է գրել առաջին հերթին: Եվ, անշուշտ, այդ երազային բնության հմայքն է պատճառը, որ մարդիկ մեր գողտրիկ քաղաքի անունը տալիս են հիացմունքով ու կարոտով՝ այն նույնացնելով բնության հետ:

Լիտվացի լրագրող Ալրոնա Շմիգելսկին իրենց հանրապետության «Տրեստ» թերթում գրել է. «Լինելով Դիլիջանում՝ ուզում ես անկեղծորեն հավատալ հետևյալ խոսքերի ճշմարտությանը. «Եթե դրախտում կան անտառներ, լեռներ և առվակներ, ապա այն պետք է նման լինի Դիլիջանին»: Տեսնո՞ւմ եք, նույնիսկ դրախտը պետք է նման լինի Դիլիջանին, և ոչ թե հակառակը»:

Նրանք, ովքեր մեր քաղաքում եղել են զարմանը, երբեք չեն մոռանա, որ Դիլիջանի զարունը զարթնող երազների, խենթացնող բույրերի ու թավիչ կանաչի գլխապտույտ հեղեղ է, որ խուժում է մարդկանց հոգիները՝ նրանց տանելով ծաղկաերազ զարունների երկիր:

Դիլիջանի կիրճի օրոցքի մեջ, Աղստև գետի օրորի տակ քնած չքնաղ հովիտը շատերին է հմայել, և շատերն են հիացական կարծիքներ ու բանաստեղծություններ ձոնել նրան: 1928 թվականին մեր քաղաքում է եղել պրոլետարական մեծ գրող Մարսին Գորկին: Այն փողոցը, որով անցել է սիրելի գրողը, այժմ կրում է նրա անունը: Երախտավոր ուսուցիչ Հովհաննես Շաքարյանի մանկավարժական լուսավոր ճանապարհը ևս սկսվել է Դիլիջանից և ձգվել է մինչև Երևան, Բաքու ու Դոնի Ռոստովի Խաչեր հայկական գյուղը: Այս գյուղում նրա աշակերտն է եղել ապագա հեղափոխական մեծ գործիչ Ալեքսանդր Մյասնիկյանը: 1923 թվականին արդեն սովետական Հայաստանի կառավարության նախագահ Ալեքսանդր Մյասնիկյանը լինում է Դիլիջանում: Այսօր Դիլիջանի կենտրոնական փողոցը կոչվում է լենինյան բոցաշունչ

Ալեքսանդր Մյասնիկյանի անունով: Դիլիջանի հանդեպ մշտական սեր ու գործվանք էր պահպանում նաև Գուրգեն Մահարին: Հատկապես հուզիչ էր նրա կյանքի վերջին գարունը, որի մասին ահա թե ինչ է գրել բանաստեղծի այրին՝ Անտոնինա Մահարին. «Դա 1969 թվականի ապրիլի վերջն էր: Չնայած Մահարին ծանր հիվանդ էր, բայց մեծապես ոգևորված էր Դիլիջան մեկնելու առթիվ և իր ուրախությունը հաղորդում էր ինձ:

–Ա՛յ կտեսնես, Անտոնինա՛, ինչպիսի դրախտային վայր է Դիլիջանը, ինչպիսի հեքիաթային վայր,– մեկնելուց առաջ ասում էր ինձ:

Վերջապես եկավ օրը, և մենք հյուրընկալվեցինք «Դիլիջան» հյուրանոցում: Մեզ դիմավորեցին ջերմորեն և անում էին ամեն ինչ, որ հիվանդ պոետը իրեն զգար մխիթարված ու ուրախ: Բայց, ավա՛ղ, Մահարու առողջությունը գնալով վատանում էր: Չնայած դրան՝ Գուրգենը ցանկացավ տեսնել իր այդքան հարազատ քաղաքը, ծանոթ վայրերը, և մենք մեքենայով շրջեցինք Դիլիջանի փողոցներով: Մահարին ինձ ցույց տվեց մանկատան շենքը, որտեղ անցել էին նրա տխուր մանկության օրերը, դպրոցը, որտեղ սովորել էր նա, և անտառի այն հատվածը, որտեղ հաճախակի եղել, երազել կամ գրել էր ոտանավորներ: Դառը ժպիտը տանջված դեմքին՝ նայում էր Գուրգենը հնատճ պատշգամբներով շենքերին և ասում. «Այո՛, Անտոնինա՛, Դիլիջանն ամենևին չի փոխվել. այն մնացել է այնպես մախմուր, գեղեցիկ և առեղծվածային, ինչպես հիսուն տարի առաջ էր»:

Բովանդակություն

Ողջույնի խոսքեր 3

ԳՐԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Քանասարեղծություն

Գոհար Գրիգորյան 13

Աիդա Հարությունյան 26

Ալբերտ Սաֆարյան 40

Արձակ

Սոֆյա Մարտիրոսյան 55

Լուսինյ Ամիրադյան 207

Էլեն Խաչատուրյան 220

Մարգարիտա Ղազարյան 225

Էսսե

Լատրա Սեկոյան 237

Վալտեր Բերբերյան 242

Սերի Գևորգյան 245

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՍԵՐՆԴԻ ՉԱՅՆԸ

Գրական ստեղծագործությունների
ժողովածու

Համակարգչային շարվածքը՝ Տ. Թիլիքյանի
Համակարգչային ձևավորումը՝ Կ. Չալաբյանի
Կազմի ձևավորումը՝ Ա. Պատվականյանի
Հրատ. խմբագրումը՝ Մ. Հովհաննիսյանի

Շապիկի վրա օգտագործված է Էլինե Պողոսյանի
«Հին դուռը» գեղանկարը:

Ստորագրված է տպագրության՝ 10.03.2023:
Չափսը՝ 60x84 1/16: Տպ. մամուլը՝ 16:
Տպաքանակը՝ 100:

ԵՊՀ հրատարակչություն
ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
www.publishing.am



ԿՐԱՏՈՐԱԿՆՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 2023
publishing.ysu.am